



ԷՎ ԱՏՈՎԵՅԱՆԻ ԱՐՎԱՐ ՀԱՅԿԱԿՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՍՏԱՆՔԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 KHACHATUR ABOVIAN ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԻ ՏՄԻՈՒԼՏԵՏ
 FACULTY OF EDUCATION PSYCHOLOGY AND SOCIOLOGY
 ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏՉ ՍԱԶՄԱՆՅԱՆԻ ԱՐՎԱՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
 ACADEMICIAN MKRTICH MAZMANYAN CHAIR OF PSYCHOLOGY

ԵՐԵՎԱՆԻ Ա. ԶԵՐԱՅՈՒ ԱՐՎԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԲԺԺԳՈՒԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
 YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER M. HERATSI
 DEPARTMENT OF MEDICAL PSYCHOLOGY

ՀՀ ԱՐ ՀԱՐԿԱԳԻՐ ԿՍԱՐՈՒՄԻՆ ԱՄԱՀՈՎՈՂ ԵՄԱԽԵՈՒԹՅՈՒՆ
 ՈՉ ԳՈՒԹՅԱՆ ԲՈՒԹԹԻ ԿՍԱՐՈՒՄԻՆ ՎԱՐՈՒՅՈՒՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻ
 MINISTRY OF JUSTICE OF THE RA COMPULSORY ENFORCEMENT SERVICE
 SPECIAL DEPARTMENT OF NON-PROPERTY ENFORCEMENT PROCEEDINGS

**ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
 ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ
 II ՀԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
 FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE: THEORY
 AND PRACTICE
 THE 2nd REPUBLICAN SCIENTIFIC-PRACTICAL CONFERENCE**

**ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
 MATERIALS OF INTERNATIONAL CONFERENCE**

ԵՐԵՎԱՆ, YEREVAN 25. 04. 2024

ՀՏԴ 340.6(082)
ԳՄԴ 56.148g43
Դ 250

Երաշխավորված է տպագրության Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական
խորհրդի կողմից

Դ 250 Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա:
2-րդ գիտագործնական գիտաժողովի նյութեր: - Եր.: ՀՊՄՀ, 2024. – 243 էջ:

ՀՏԴ 340.6(082)
ԳՄԴ 56.148g43

ISBN 978-99941-69-83-2

© Հեղինակային խումբ, 2024
© «Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ», 2024

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգյան Ս.Ռ. հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
Պետրոսյան Ռ.Հ. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության
հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
Սարգսյան Լ.Կ. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս
Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի վարիչ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Գևորգյան Ս.Ռ. հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
Իսախիրյան Մ.Մ. մ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ ուսումնագիտական
գծով պրոռեկտոր
Պետրոսյան Ռ.Հ. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության
հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
Սարգսյան Լ.Կ. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս
Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի վարիչ
Մկրտումյան Մ.Պ. հ.գ.դ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ
Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր
Վարդանյան Կ.Ե. հ.գ.դ., կիրառական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, Խ.
Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի տնօրեն
Գասպարյան Խ.Վ. հ.գ.թ., դոցենտ, Երևանի Մ. Հերացու անվան պետական
բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ
Ղազարյան Գ.Հ. հ.գ.թ., Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական
համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի դոցենտ
Մելիքբեկյան Վ.Ա. ՀՀ ԱԴ ԴԱՀԿ Ոչ գույքային բնույթի կատարողական
վարույթների հատուկ բաժնի պետ, արդարադատության մայրո
Լաչինյան Լ.Լ. հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ
Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դոցենտ
Կաթունյան Ա.Ս. հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ
Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դասախոս
Ավետիսյան Մ.Ս. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կիրառական
հոգեբանության ամբիոնի վարիչ
Խաչիկյան Գ.Ա. հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Սոցիոլոգիայի և
սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան
հոգեբանության ամբիոն, 708 կաբինետ (Երևան, ՀՀ), հեռախոս: +374-10-59-
70-42, +374-77-45-76-94

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաքելյան Ս.Հ. Աֆեկտի փորձագիտական գնահատման դժվարությունները (Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)7

Ավագիմյան Հ.Ռ.¹, Մխիթարյան Ս.Ս.² Քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիայի սոցիալ-հոգեբանական դրսևորումները դատահոգեբանական փորձաքննության ընթացքում (հ.գ.թ., դոցենտ¹, ՎՊՀ, ք. Վանաձոր, ՀՀ)16

Առաքելյան Ա.Դ. Ամուսնաբնական կոնֆլիկտներին առնչվող հոգեբանական փորձաքննություններում երեխաների հուզական վիճակի և վարքի դրդապատճառների գնահատումը (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)26

Ասատրյան Զ.Դ.¹, Ալեքսանյան Ս.Մ. Զինծառայողների դեստրուկտիվ վարքի սոցիալ-հոգեբանական պատճառների փորձագիտական ուսունասիրություն (հ.գ.թ., դոցենտ¹, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)36

Աղուզումցյան Ռ.Վ. Դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները (հ.գ.թ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ԵՊՀ, Երևան, ՀՀ)43

Ավագիմյան Հ.Ռ.¹, Դավլաթյան Ա.Հ. Հուզական վիճակների դատահոգեբանական փորձաքննության հոգեբանական առանձնահատկությունները (հ.գ.թ., դոցենտ¹, ՎՊՀ, ք. Վանաձոր, ՀՀ)49

Ավագյան Ա.Ս. Հոգեբանական փորձաքննության գործընթացում ծնողների նկատմամբ երեխայի վերաբերմունքի ախտորոշման առանձնահատկությունները «Ես մայրիկի և հայրիկի մոլորակում» հեղինակային տեխնիկայի կիրառման օրինակով (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)60

Ավետիսյան Ս.Ս.¹, Գրիգորյան Ս.Ս. Անչափահասների դեղիկվենտ վարքի առանձնահատկությունները դատահոգեբանական փորձաքննության գործընթացում (հ.գ.թ., դոցենտ¹, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)66

Գասպարյան Խ.Վ.¹, Մաթևոսյան Եվ.Ս.² Համալիր դատահոգեբանա-հոգեֆիզիոլոգիական փորձաքննության առանձնահատկությունները (հ.գ.թ. դոցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ¹, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ², Երևան, ՀՀ)76

Գաբրիելյան Ա.Կ., Համբարձումյան Մ.Վ., Մամյան Տ.Ս., Շահվերդյան Գ.Դ. Դատահոգեբանական փորձաքննությունների առանձնահատկությունները գործնականում (ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, ՀՀ)	86
Գաբրիելյան Ա.Հ. Քրեական գործերով անձի դատահոգեբանական փորձաքննության յուրահատկությունները (ՊԵԿ, Մաքսանենգության դեմ պայքարի վարչության Սյունիքի տարածաշրջանային բաժնի Մեղրիի բաժանմունք, Ագարակ, ՀՀ)	96
Ժամկոցյան Ռ.Ս. Ամուսնալուծության գործընթացում երեխայի լավագույն շահի ապահովման հոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)	103
Խուրդյան Ա.Ս. Դայրոցում հոգեբանական բռնության դեպքերի փորձագիտական հետազոտություն (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)	112
Կաթունյան Ա.Ս. Անձի գործիքային հետազոտման հիմնախնդիրը դատահոգեբանական փորձաքննության ընթացքում (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)	119
Հարությունյան Ն.Ս. Երեխաների հանդեպ բռնության հոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները եվ մեթոդական փաթեթը (Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)	127
Համբարձումյան Մ.Վ. ՀՀ-ում զինծառայողների ինքնասպանությունների, ինքնասպանության փորձերի առնչությամբ փորձաքննությունների առանձնահատկությունների վերլուծությունը (ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, ՀՀ)	137
Ղազարյան Գ.Հ. ¹ , Հարությունյան Ն.Ա. ² Ընտանեկան բռնության հարցերով դատահոգեբանական փորձաքննության անցկացման առանձնահատկությունները (հ.գ.թ., դոցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ ¹ , հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ² , Երևան, ՀՀ)	148
Ղազարյան Գ.Հ. ¹ , Տեր-Ստեփանյան Ա.Հ. ² , Եղիազարյան Ա.Ա. ³ Ավիապատահարների դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները (հ.գ.թ., դոցենտ, Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ ¹ , հ.գ.թ., Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ ² , Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ ³ , Երևան, ՀՀ) ...	157

Մկրտումյան Մ.Պ. Սոցիալական լարվածության պայմաններում դեռահասների վարքագծի ձևափոխման հիմնախնդիրը հոգեբանական փորձաքննությունների համատեքստում (հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)168

Մկրտումյան Լ.Յու. Ընտանիքում բռնության ենթարկված կանանց անձնային առանձնահատկությունների գնահատումը դատահոգեբանական փորձաքննության մեջ (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)178

Մելիքբեկյան Վ.Ա. ՀՀ-ում երեխայի դատահոգեբանական փորձաքննության արդի հիմնախնդիրները (ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, արդարադատության մայրը, Երևան, ՀՀ)186

Պետրոսյան Ռ.Հ.¹, Խաչիկյան Գ.Ա.² Հանցակազմի ուսումնասիրության անհրաժեշտությունը դատահոգեբանական փորձաքննություններում (հ.գ.թ., դոցենտ¹, հ.գ.թ., դոցենտ², Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, ՀՀ) 197

Սարգսյան Լ.Կ.¹, Ստեփանյան Ա.Ս.² Քրեադատավարական պրակտիկայում հանդիպող դաժանությամբ դեպքերի դատահոգեբանական փորձաքննության յուրահատկությունները (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ¹, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն², Երևան, ՀՀ)206

Սարգսյան Լ.Կ.¹, Չիթախյան Կ.Դ.² Անչափահասների սեռական բռնության դատահոգեբանական փորձաքննության յուրահատկությունները (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան¹, Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ, Վանաձոր², ՀՀ)215

Վարդանյան Կ.Ե. Սուիցիդների դատահոգեբանական փորձաքննությունների յուրահատկությունների մասին (հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)225

Վարդանյան Լ.Թ.¹, Սարգսյան Վ.Ժ.² Ընտանեկան փոխհարաբերությունների հարցերով դատահոգեբանական փորձաքննությունների մեթոդաբանական խնդիրների վերլուծություն (հ.գ.թ.¹, հ.գ.թ., դոցենտ², Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)234

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Դատհոգեբանական փորձաքննությունը հանցարարքների, իրավախախտումների քննության, քրեական և քաղաքացիական գործերի դատաքննության կարևորագույն գործընթացներից է: Ամեն տարի քաղաքացիական և քրեական վարույթներում աճում է հատուկ հոգեբանական գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից անձի դատահոգեբանական փորձաքննությունների հիմնախնդրով գիտագործնական գիտաժողովը նախատեսված է վեր հանել, քննարկել և վերլուծել անձի դատահոգեբանական փորձաքննության մեթոդաբանական, ընթացակարգային խնդիրները, ախտորոշման և կիրառական հիմքերը, ինչպես նաև նպատակ է հետապնդում ուսումնասիրելու և վերհանելու քրեադատավարական մարմինների և հոգեբանական ակադեմիական համայնքի միջև համագործակցության հիմնական ձևերն ու ոլորտները, հոգեբանական փորձաքննությունների ոլորտում գիտական հետազոտությունների խթանման մեխանիզմները:

Գիտաժողովի կազմակերպումը կարևորվում է տեսական և կիրառական գիտելիքների արդիականացման, միջազգային փորձի ուսումնասիրման և փորձագետ-մասնագետների հմտությունների կատարելագործման տեսանկյունից՝ նրանց որակավորման նկատմամբ անընդհատ աճող պահանջների պայմաններում: Ուստի, գիտաժողովի ընթացքում քննարկվող խնդիրները կարող են նպաստել օրենսդրության և սոցիալական միջավայրի փոփոխության համատեքստում փորձագետների գործունեության նորարարությունների վերաբերյալ նոր գիտելիքների ձեռքբերմանը և մասնագիտական աճին: Գիտագործնական գիտաժողովը նաև հնարավորություն կտա մասնակիցներին բարձրացնել ինչպես հոգեբանական փորձաքննությունների իրականացման հմտությունները, այնպես էլ փորձագիտական գործունեության հարակից բնագավառներում՝ քրեաբանական, դատաբժշկական, հոգեբուժական, սեռաախտաբանական, փորձաքննության ժամանակակից հետազոտություններին ծանոթացմանը, համալիր փորձաքննությունների իրականացմանը:

Գիտագործնական գիտաժողովը մասնակիցներին հնարավորություն կտա ներկայացնելու ինչպես սեփական մասնագիտական փորձառությունը, այնպես էլ նոր գիտելիքներ ձեռք բերելու դատահոգեբանական փորձաքննության արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունների վերաբերյալ, ներկայացնելու հիմնախնդիրների վերաբերյալ սեփական տեսլականը, առաջարկելու դրանց լուծման նոր եղանակներ, վեր հանելու կիրառական այս բնագավառում ուսումնասիրությունների հետ կապված խնդիրներ, ինչպես նաև հետաքրքրող թեմաների շուրջ համագործակցելու ոլորտի այլ մասնագետների հետ, դուրս բերել դատահոգեբանական փորձաքննությունների հետազոտական արդի թեմաներ:

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ Ս.Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ԱՖԵԿՏԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելյան Ս.Հ. (Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)

sirinaarakelyan@yahoo.fr

Ամփոփագիր. Դատահոգեբանական փորձագիտական աշխատանքներն ընդհանրապես հոգեբանական աշխատանքի բարդ, ոչ մակերեսային, յուրահատուկ խորը վերլուծություններ պահանջող, պատասխանատու ոլորտ են: Այս ամենն հատկապես ավելի ցայտուն է երևում, երբ փորձագետն առնչվում է սպանությունների դեպքերով հարուցված քրեական գործերում առկա փաստերի, դրվագների և մեղադրյալի /կասկածյալի/ հոգեբանական առանձնահատկությունների վերլուծության հիման վրա աֆեկտի փորձագիտական հիմնավորման կարևորագույն խնդրին:

Սույն հոդվածում մանրակրկիտ անդրադարձ է կատարվել դատահոգեբանական փորձագիտական աշխատանքների ընթացքում հանդիպող ամենաբարդ հարցերից մեկին՝ աֆեկտի փորձագիտական հիմնավորման դժվարություններին: Հոդվածում առանձնացվել և ներկայացվել են այն հիմնական խնդիրները, որոնց գիտական հիմնավորմամբ լուծումները հնարավորություն կստեղծեն առավել դյուրին և արդյունավետ դարձնելու աֆեկտի փորձագիտական հիմնավորումները: Հոդվածում վերլուծվել են աֆեկտի և այլ հոգեկան վիճակների նմանությունները, ապա նկարագրվել են աֆեկտին բնորոշ այն դրսևորումները, որոնց հիման վրա հնարավոր է դառնում աֆեկտի ախտորոշումը: Մասնավորապես անդրադարձ է կատարվել աֆեկտի և այլ հոգեկան հուզական վիճակների տևականությանը, աֆեկտի ազդեցությամբ սպանությունների և առանձնակի դաժանությամբ սպանությունների յուրահատկություններին, աֆեկտի տարբեր տեսակների դեպքում տիպիկ և ատիպիկ դրսևորումներին և այլն: Հոդվածի կարևոր նպատակներից մեկն էլ դեռահասության տարիքում աֆեկտի դրսևորման յուրահատկությունների վերհանումն է: Հուզական վիճակների տարիքային և գենդերային առանձնահատկությունների վերլուծությունը ևս նպաստում է դեռահասության տարիքում աֆեկտի դրսևորման յուրահատկություններն ավելի հստակ պատկերացնելուն:

Հիմնաբառեր. աֆեկտ, ուժեղ հոգեկան հուզումնաբ. տարբերակիչ ախտորոշում, հույզերի հակասականություն, կուճուրյացիա, ասթենիա:

Դատահոգեբանական փորձաքննությունների իրականացման ընթացքում հաճախ են հանդիպում գործեր, որոնց ընթացքում անհրաժեշտ է հիմնավորել կամ ժխտել աֆեկտի առկայության փաստը: Աֆեկտի և այլ խնդիրների գնահատման, տարբերակիչ ախտորոշման հարցերը

հոգեբանական փորձաքննությունների ընթացքում հանդիպող ամենաբարդ հարցերից են, որոնց ընթացքում մասնագետների առջև ծառանում են մի շարք խնդիրներ: Աշխատանքն առավել դժվարանում է, երբ քրեական գործը դատահոգեբանական փորձաքննության է ուղարկվում ուշացումով: Երբեմն անհրաժեշտ է լինում փորձաքննություն անցկացնել 2-3 տարի անց, իսկ այս դեպքում բոլոր փորձաքննությունների համար բնորոշ մի շարք այլ դժվարություններից բացի, աֆեկտին բնորոշ համարվող էպիզոդիկ կամ լրիվ մոռացման գործընթացի վերաբերյալ օբյեկտիվ տվյալների հավաքագրումը փորձագետի կողմից շատ է դժվարանում՝ երբեմն դառնալով գրեթե անհնար:

Աֆեկտի փորձագիտական հիմնավորման կարևոր հարցերից մեկը հենց «աֆեկտ» հասկացության էության, սահմանների, տեսակների հստակեցմանը և աֆեկտն այլ հոգեկան հուզական վիճակներից տարբերակելուն է առնչվում: Այս առումով մասնագիտական գրականության մեջ մոտեցումները բավական տարբեր և հակասական են: Այսպես, Վ. Վ. Նազանը նույնացնում է «ֆիզիոլոգիական, հուզական աֆեկտ» և «ուժեղ հոգեկան հուզումնք» հասկացությունները [6]: Մ.Մ. Կոչենովը նույն հարցի վերաբերյալ արտահայտում է հետևյալ կարծիքը. ««Ֆիզիոլոգիական, հուզական աֆեկտ» և «ուժեղ հոգեկան հուզումնք» հասկացությունների հարաբերությունները պայմանականորեն կարելի է պատկերել երկու հատվող շրջանակների տեսքով, որոնց մակերեսի մեծ մասը համընկնում է» Համաձայն հեղինակի՝ օրենսդրության մեջ «ուժեղ հոգեկան հուզումնք» հասկացությունը շրջանականների հատման տարածքն է, որն ըստ էության հենց աֆեկտն է [6, էջ 44]: Ի.Ա. Ֆումանովը ևս նույնացնում է այս երկու հասկացությունները [6, էջ 20]:

Այս առումով կարող ենք նշել, որ բացի այլ նշաններից, աֆեկտի՝ այլ հուզական վիճակներից տարբերակման կարևոր կետերից է դրա տևականությունը: Վերջինիս վերաբերյալ Վ. Ենգալիչևը և Ս. Շիպչինը հիմնականում ընդգծում են դրա կարճատև ընթացքը /վայրկյաններ, առավելագույնը՝ քիչ րոպեներ/: Օրինակ, հոգեկան հուզումնքի վիճակը 15 և ավելի րոպեներ տևելը մեղմ ասած չափազանցում է կամ բոլորովին այլ հոգեկան վիճակ:

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն կարող են համարվել փսիխոմոտոր հզոր փոփոխությունները: Այսպես, մի շարք քրեական գործերում աֆեկտի վիճակում հզոր ֆիզիկական ուժի գործադրման դրվագներ են ֆիքսվել ոչ միայն ուժեղ կամ միջին մարմնակառուցվածքով, այլ նաև շատ թույլ մարմնակառուցվածքով անձանց կողմից: Վ. Ենգալիչևը և Ս. Շիպչինը նշում են, որ աֆեկտի վիճակում մեղանիտիկ խառնվածքով ասթենիկ մարդը կարող է մեկ հարվածով տապալել կաղնեփայտից դուռը, ուժի տեսանկյունից իրեն նշանակալիորեն գերազանցող մրցակցին կարող է ոչնչացնել [1]:

Կարևոր հարցերից է նաև այն, որ աֆեկտը հաճախ կարող է դիտարկվել որպես առանձնակի դաժանությամբ սպանություն: Պատճառն այն է, որ աֆեկտի վիճակը ուղեկցվում է ստերեոտիպ մոտորային /շարժողական/ ակտիվությամբ, ինչի արդյունքում տուժողի մոտ բազմաթիվ վնասվածքների առկայություն է գրանցվում: «... Շարժողական ակտիվության կտրուկ ուժեղացման արդյունքում մարդը կատարում է բազմաթիվ ավելորդ ու անկանոն շարժումներ, բազմաթիվ հարվածներ հասցնելով գոհին /վնասումների թիվը կարող է տասնյակների հասնել/... Սա վկայում է այն մասին, որ անձի մոտ աֆեկտի վիճակում հոգեկան գործընթացների ընթացքի որակը կտրուկ անկում է ապրում, պրիմիտիվանում է» [1, էջ 88]: Միևնույն ժամանակ ստերեոտիպային գործողությունները ընթանում են արագ, հաճախ անկանոն ավտոմատիզմների տարբերով. մեծ թվով կրակոցներ, որոնց միջև ժամանակային ինտերվալը փոքր է, դանակի բազմակի հարվածներ, որոնց մի մասը կարող է հետմահու հասցված լինել, մեծաքանակ հարվածների ու վերքերի ցրված լոկալիզացիան /տեղակայումը/: Աֆեկտի վիճակում դիտարկվում են նաև վեգետատիվ բնույթի փոփոխություններ՝ շնչառության, սրտի աշխատանքի արագացում, մաշկի գունատում կամ կարմրում, բերանի լորձաթաղանթի չորացում, ձայնի փոփոխություն [1, էջ 88]:

Աֆեկտի առկայությունը կամ դրա բացակայությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է անդրադառնալ թե՛ աֆեկտի առաջացման, թե՛ դրա ավարտի, երրորդ փուլի առանձնահատկություններին: Ըստ առաջացման մեխանիզմների մասին դասական պատկերացումների, տարբերակվում են կուռույսատիվ և ֆիզիոլոգիական աֆեկտների տեսակները, քանի որ «կուռույսատիվ և ֆիզիոլոգիական աֆեկտի երկրորդ և երրորդ փուլերը սկզբունքորեն չեն տարբերվում իրենց դրսևորմամբ, տարբեր է միայն առաջացման մեխանիզմը. կուռույսատիվի դեպքում անհրաժեշտ է տևական, ժամանակային առումով ձգվող հոգետրավմատիկ իրադրություն, որով պայմանավորվում է մեղադրյալի մոտ հուզական լարվածության կուտակումը՝ պայմանավորված անձի անհատական առանձնահատկություններով: ... Աֆեկտի բռնկումը կարող է վրա հասնել նույնիսկ աննշան իրադարձությունից՝ «վերջին կաթիլից» հետո [6, 9]:

Ինչ վերաբերում է աֆեկտի ընթացքի առանձնահատկություններին, ապա հարկ է նշել, որ դրանց հիման վրա տարանջատվում են «աֆեկտի տիպիկ /որի ժամանակ դասական պատկերացումներով եռափուլ դրսևորում է դիտարկվում՝ ընկալման, գիտակցության և գործունեության փոփոխություններին բնորոշ երևույթներով/ և ատիպիկ, որի ժամանակ դիտարկվում է փուլերի բովանդակության և դինամիկայի որակական ձևափոխություն. վերջինս վերաբերում է մասնավորապես կուռույսատիվ աֆեկտին, որի ընթացքը ևս կարող է լինել ինչպես տիպիկ, այնպես էլ

ատիպիկ: Ընդ որում, կուսույաստիվ աֆեկտի դեպքում լիցքաթափումը կարող է տեղի ունենալ ինչպես լարվածության, այնպես էլ գրգռման ձևով: Վերջինս էլ հենց կուսույաստիվ աֆեկտի ատիպիկ ձևն է» [7, էջ 49]:

Աֆեկտի ատիպիկ բնույթը առավել ցայտուն դրսևորվում է հատկապես վերջին փուլում: Այս մասին նշում են բազմաթիվ հեղինակներ. «Ատիպիկ աֆեկտի դեպքում պետք է հաշվի առնել ընթացքի տարբեր առանձնահատկությունների շարքում հետաֆեկտային փուլի բազմաբնույթ լինելը» [7, էջ 50]: Հետաֆեկտային փուլում տիպիկ է թուլացման ռեակցիան, սակայն ասթենիկ վիճակից բացի, գրականության մեջ նշվում են նաև այնպիսի ապրումներ, ինչպիսիք են կատարվածի աստիճանաբար գիտակցումը, որն ուղեկցվում է զոջման, շփոթվածության և տուժածի նկատմամբ խղճահարության ապրումները: Հաճախ «մեղադրյալները փորձում են օգնություն ցույց տալ, կատարվածի մասին տեղյակ են պահում իրավապահ մարմիններին, ավելի հազվադեպ՝ փախչում են հանցագործության վայրից, սակայն հանցագործության հետքերի քողարկման փորձ չեն անում» [9, էջ 23]:

Աֆեկտի փորձագիտական հիմնավորման համար հավելյալ դժվարություններ են ի հայտ գալիս, երբ դեպքերն առնչվում են դեռահաս տարիքին: Այս տարիքը հոգեբանության մեջ հայտնի է որպես անձի ձևավորման համար ամենամեծ քանակությամբ փոփոխություններով, հուզական և անձնային այլ ոլորտների անկայունությամբ: Անձնային գծերն այս տարիքում դեռևս ձևավորման ընթացքում են, դրանց դրսևորումները՝ անկայուն, տարբեր և իրավիճակային, ինչի հիմքում շատ հաճախ կենսաբանական-հորմոնալ փոփոխություններն են: Հոգեբանական գիտական գրականության մեջ բազմաթիվ են անդրադարձերը դեռահասության տարիքին, ինչպես նաև այս տարիքում հուզական վիճակներին, դրանց առանձնահատկություններին /Լ.Ս. Վիգոտսկի, Ս.Լ. Ռուբինշտեյն, Լ.Ի. Բոժովիչ, Ս.Ս. Խուրոյան, Ա.Ս. Լեոնտև, Պ.Վ. Սիմոնով, Պ.Ս. Յակոբսոն, Պ.Կ. Անոխին, Բ.Ի. Դոդոնով, Կ.Է. Իզարդ և այլք/։ Տարբեր հեղինակների կողմից առանձնացվել են դեռահասների հուզական ոլորտին բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Վերջիններիս վերլուծությունների հիման վրա մեր հոդվածի համատեքստում կարելի է ընդգծել դեռահասության տարիքում հուզական ոլորտի ու դրա դրսևորումների, նաև դրանց հետ կապված վարքային առանձնահատկությունների վերաբերյալ հետևյալ պնդումները.

- ✓ Դեռահասության տարիքին բնորոշ են ուժեղ հույզերը:
- ✓ Դեռահասության որոշակի շրջանին բնորոշ են հատկապես բացասական հույզեր վախ, տագնապ, զայրույթ, անհարմարություն, ամոթ, ապաթիա, ձանձրույթ և այլն:

✓ Դեռահասության տարիքին բնորոշ են բարձր հուզական դյուրագրգիռությունը, բռնկունությունը, որը պայմանավորված է ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիոլոգիական մեխանիզմներով: Եթե դեռահասները «զգան ամենափոքր անարդարություն իրենց կամ իրենց ընկերների հանդեպ, նրանք պատրաստ են «պայթելու». այս ժամանակ դեռահասները նմանվում են ժամացույցի մեխանիզմով ռումբի» [2, էջ 185]:

✓ Դեռահասության տարիքին բնորոշ է հուզական ոլորտի անկայունությունը. դեռահասի տրամադրության կտրուկ փոփոխությունները անկանխատեսելի, շատ հաճախ բևեռային ու հակադիր են՝ անզուսպ ուրախությունից մինչև հուսահատ տխրություն, ուժեղ լավատեսությունից մռայլ հոռետեսություն առանց բավարար պատճառների [5, 6]: «Զգացմունքայնությունն ու չորությունը, հիվանդագին ամաշկոտությունն ու անկաշկանդությունը, ուրիշների կողմից գնահատված լինելու ձգտումն ու ցուցադրական անկախությունը, հեղինակությունների դեմ պայքարն ու կուռքերի աստվածացումն ապրում են» դեռահասի մեջ կողք-կողքի:

✓ Այս ամենին զուգահեռ դեռահասներին բնորոշ է նաև հուզական ապրումների բարձր կայունությունը՝ տևականությունը, մասնավորապես, դեռահասը երկար ժամանակ չի մոռանում վիրավորանքները [5]:

✓ Այս շրջանում ընկերության, հուզական վերաբերմունքների հիմքում արդեն ոչ թե խաղն է, այլ հետաքրքրությունների ու բարոյական զգացմունքների ընդհանրությունները: Ընդ որում հասակակիցների հետ հարաբերություններն առավել կարևոր են փոփոխվող ինքնագիտակցության և դեռևս անկայուն ինքնագնահատականի ձևավորման հարցում, քան ծնողների կամ ուսուցիչների հետ հարաբերությունները: Հասակակիցների կողմից տրվող գնահատումների առումով կարող է սրված լինել դեռահասի տազնապայնությունը [4]:

Այս առումով պետք է նշել, որ կան նաև որոշակի գենդերային տարբերություններ.

✓ Նույնասեռ անդամներով խմբերի ներսում շփումը տարբեր բնույթ է կրում տղաների և աղջիկների դեպքում. տղաներն ավելի մեծաթիվ խմբերով են շփվում, ընդ որում այս խմբերի ներսում հաստատում են կտրուկ հիերխիկ հարաբերություններ՝ ուղղակի ֆիզիկական կամ վերբալ բնույթ կրող չափանիշներով ու միջոցներով: Իսկ որոշ հեղինակների պնդմամբ այս տարիքում բռնությամբ հանցագործությունների բազմաթիվ դեպքեր հրահրվել են հենց անձի և նրա դիրքի հանդեպ «ոչ հարգալից վերաբերմունքի, արհամարհանքի կամ ստորացման վրեժի պատճառով» [2, էջ 174]:

✓ Բազմաթիվ հեղինակների կարծիքով դեռահասության տարիքին ընդհանրապես բնորոշ է կոնֆլիկտայնությունը: Ինչ վերաբերվում է

ագրեսիվ վարքին, ապա դեռահաս տղաներն առավել շատ են հակված ագրեսիվ վարքային դրսևորումների, ռիսկի, բռնության, ինչը բացատրվում է նրանով, որ էվոյուցիայի ընթացքում ավելի բարձր դիրք, իշխանություն, շատ երեխաներ ունենալու հավանականությունն ավելի մեծ է եղել հենց նման դրսևորումների արդյունքում [2, էջ 174]:

Այսպիսով, դեռահասության տարիքին առնչվող վերոնշյալ բոլոր հանգամանքներն էլ հավելյալ դժվարություններ են հարուցում դեռահասության տարիքում աֆեկտի փորձագիտական հիմնավորուման համար, քանզի այս տարիքն ինքնին իր հուզական ու վարքային դրսևորումներով օրինաչափորեն այնպիսին է, որ հիմքում կամ առնչվում է գերուժեղ հույզերի հետ կամ գոնե նման տպավորություն է թողնում: Այս առումով «աֆեկտի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ ժամանակակից պատկերացումների, տեսամեթոդական վերլուծությունների ընդլայնման արդյունքում պարզ է դառնում, որ դեռահասների մոտ աֆեկտի դրսևորումները յուրատիպ են, ինչը բարդացնում է փորձագետների աշխատանքը՝ աֆեկտի ախտորոշման հարցում, քանի որ այս հարցում հստակություն և միանշանակություն այլևս չկա» [7]:

Մի շարք հեղինակների պնդմամբ դեռահասության տարիքում բավական հազվադեպ երևույթ է աֆեկտը. օրինակ, 2015-2019 թ.թ. ՌԴ բոլոր քրեական գործերի թվում ֆիքսվել է այս տարիքային շրջանի միայն մեկ աֆեկտի դեպք [10]: Կարևոր է նաև այն, որ բազմաթիվ հեղինակների պնդմամբ «անչափահաս մեղադրյալների /կասկածյալների/ դեպքում աֆեկտը, որպես կանոն, կրում է կումուլյատիվ բնույթ, այսինքն, աֆեկտի հոգեկան վիճակն առաջանում է դեռահասի մոտ ոչ թե մեկանգամյա եզակի ազդեցության հետևանքով, այլ երկարաձգված տրավմատիզացնող ազդեցությամբ իրավիճակի արդյունքում (բռնություն, դաժան վերաբերմունք ընտանիքում, հասակակիցների կողմից պարբերական բնույթ կրող նվաստացումներ, ստորացումներ են), որը կառուցողական լուծում չի գտնում» [10, էջ 18]: Ընդ որում, նման դեպքերում այդ տևական դեստրուկտիվ ազդեցությունները երբեմն փաստագրված-արձանագրված են լինում տարբեր հաստատությունների կամ կառույցների կողմից. ասենք, սոցիալական ծառայությունը կարող է գրանցած լինել ընտանիքը որպես անբարենպաստ, առկա են լինում տարիներ տևող հարբեցողության և համակախվածության դրվագներ, ոստիկանությունում լինում են մեղադրյալների կամ կասկածյալների նկատմամբ բռնության կրկնվող դեպքերի արձանագրություններ և այլն: Ընդ որում, այս ամենին զուգահեռ հուզական լարվածության կուտակմանը՝ կումուլյացիային կարող է նպաստել նաև այնպիսի անհատական առանձնահատկությունների առկայությունը, ինչպիսիք են կոնվենցիոնալ՝ էթիկական, իրավական կամ բարոյական սկզբունքների պահպանմանը նպաստող վարքի առկայությունը (ամոթ է և

այլն), կոնֆլիկտներից և ագրեսիայից երկար խուսափելու հակումը, շրջապատի ակնկալիքներն արդարացնելու դեռահասի ձգտումը (ինձանից նման բան չեն սպասում), կոնֆորմիզմը, հույզերի արտահայտման դժվարությունները և այլն:

Յուրահատկություններ են նկատվում նաև դեռահասության տարիքում աֆեկտի փուլերի առումով: Այսպես, եթե մեծերի դեպքում նախաաֆեկտային և աֆեկտային փուլերում մեծ մասամբ դիտվում է ֆիզիկական և հոգեբանական ասթենիա, ապա նույնը չենք կարող ասել դեռահասների դեպքում. այստեղ արդեն ամենից հաճախ արձանագրվում է «հոգեկանի և դրա վարքային դրսևորումների անկազմակերպություն /դեզօրգանիզացիա/» [10, էջ 18]: Այսպես, դեպքերից մեկի ժամանակ դեռահասը աֆեկտի վերջին փուլում տարել թաղել է սպանվածի մարմինը՝ կտրել-առանձնացնելով սպանվածի թևերից մեկը: Մյուս դեպքում դեռահաս մեղադրյալը սպանությունից հետո՝ աֆեկտի երրորդ փուլում վազել է իրենց ավտոտնակ, վառել լույսը, միացրել ծորակի ջուրը, ապա նստել զուգարանակոնքին ու նստած դիրքով քնել մինչև լույս, արթնանալուց հետո նկատել է, որ ջուրն ու լույսը միացված են, ապա փախել է ավտոտնակից անհայտ ուղղությամբ ու մի քանի օր անցկացրել դրսում:

Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա կարող ենք նշել, որ աֆեկտի փորձագիտական գնահատումը և հիմնավորումն իսկապես բարդ հոգեբանական հետազոտական և վերլուծական աշխատանք է ենթադրում, քանի որ առնչվում է մի շարք այլ հոգեկան վիճակների, և դրանց դրսևորումները շատ հաճախ նման են, երբեմն՝ գրեթե նույնական: Սակայն, փորձագետի աշխատանքն այնուամենայնիվ կարող է հիմնվել աֆեկտի առաջացման, տարբեր փուլերում դրա դրսևորման, տարբեր տարիքային փուլերում աֆեկտի տեսակների ու դրա դրսևորման որոշակի առանձնահատկությունների վրա: Միայն այս դեպքում կարող է իրականացվել աֆեկտի հիմնավորված փորձագիտական տարբերակիչ ախտորոշում:

Գրականություն

1. Енгалычев В.Ф., Шипшин С.С. Судебно-психологическая экспертиза. Методическое руководство. Калуга: Обнинск. М.: Стр. 1997. – 146-152.
2. Игнатович С.С., Магдалинова Ю.Д., Мамбеталина А.С. Психологические особенности эмоциональной сферы и психических процессов в подростковом возрасте. Педагогика: история, перспективы. Том 6 № 1-2 2023. – стр. 170-191.
3. Ильин Е.П. Эмоции и чувства. – СПб. 2001. – 752 стр.
4. Лебедева Е.И. Эмоциональные и личностные особенности младших подростков с различным социометрическим статусом.

- <https://cyberleninka.ru/article/n/emotsionalnye-i-lichnostnye-osobennosti-mladshih-podrostkov-s-razlichnym-sotsiometricheskim-statusom>, 15.01.24
5. Личко А.Е. Психопатии и акцентуации характера у подростков. – СПб.: СПб НИПНИ им. В.М. Бехтерева. 2010. – С. 8. – 256 с.
 6. Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: - М.: Закон и право, 2000. – Стр. 43-47.
 7. Сафуанов Ф.С., Савина О.Ф., Морозова М.В., Исаева И.В. Критерии Судебно-психологической экспертной оценки юридически релевантных эмоциональных состояний у обвиняемых: методические рекомендации. Теория и практика судебной экспертизы. N 3 /43/, 2016. стр. 46-58.
 8. Сафуанов Ф.С., Метлицкий И.Е. Судебно-психологическая экспертиза в уголовном процессе. - М., научно-практическое пособие. Москва: Гардарика: Смысл. 1998. – 192 с.
 9. Фурманов И.А. Судебно-психологическая экспертиза. Минск. БГУ, 2014. – 78 с.
 10. Шиншина Н.Н., Сазонова Т.А., Патер С.А., Дулатова К.И., Антропова И.М. Об особенностях комплексной оценки аффекта у несовершеннолетних обвиняемых. Омский психиатрический журнал. 2 (25): 2020. – 17-21.

ТРУДНОСТИ ЭКСПЕРТНОЙ ОЦЕНКИ АФФЕКТА

Аракелян С.О. (АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

sirinaarakelyan@yahoo.fr

Аннотация: Судебно-психологическая экспертиза – сложная, не поверхностная, уникальная и ответственная область психологической работы, требующая уникального глубокого анализа. Все это особенно наглядно проявляется, когда эксперт занимается важным вопросом экспертного обоснования аффекта на основе фактов, эпизодов и личностного психологического анализа обвиняемого/подозреваемого/ в уголовных делах, возбужденных по делам об убийствах.

В данной статье подробно рассмотрен один из наиболее сложных вопросов, возникающих в ходе судебно-психологической экспертизы, - трудности экспертного обоснования аффекта. В статье выявлены и представлены основные проблемы, решение которых позволит облегчить, сделать более эффективным экспертное обоснование аффекта. В статье проанализированы сходства аффекта с другими психическими состояниями, затем описаны характерные для аффекта проявления, на основании которых становится возможной диагностика аффекта. В частности, указывались продолжительность аффекта и других психических эмоциональных

состояний, особенности убийств, вызванных аффектом, и убийств с особой жестокостью, типичные и нетипичные проявления разных видов аффекта и т. д. Одной из важных целей статьи является выявление особенностей проявления аффекта в подростковом возрасте. Анализ возрастных и гендерных особенностей эмоциональных состояний также способствует более четкому пониманию особенностей проявления аффекта в подростковом возрасте.

Ключевые слова: аффект, сильное психическое возбуждение, дифференциальный диагноз, конфликт эмоций, кумуляция, астения.

ISSUES OF FORENSIC PSYCHOLOGICAL ASSESSMENT OF THE AFFECTS

Arakelyan S.H. (Khachatur Abovian ASPU, Yerevan, RA)

sirinaarakelyan@yahoo.fr

Abstract: The forensic psychological examination is a complex, non-superficial, unique and responsible area of psychological work that requires a unique deep analysis. All this is especially evident when the expert deals with the important issue of expert assessment of affect based on facts, episodes and personal psychological analysis of the accused /suspect/ in criminal cases initiated in murder cases.

In this article, one of the most difficult issues that arise in the course of forensic-psychological examination is considered in detail - difficulties in expert substantiation of affect. In the article, the main problems are identified and presented, the solution of which will facilitate and make more effective the expert substantiation of the affect. In the article, the similarities of the affect with other mental states are analyzed, then the characteristic manifestations of the affect are described, on the basis of which the diagnosis of the affect becomes possible. In particular, the duration of affect and other mental emotional states, especially murders caused by affect, and murders with special cruelty, typical and atypical manifestations of different types of affect, etc., were indicated. One of the important goals of the article is to cover the features of the manifestation of affect in adolescence. The analysis of age and gender characteristics of emotional states also contributes to a clearer understanding of the characteristics of the manifestation of affect in adolescence.

Keywords: affect, strong mental excitement, differential diagnosis, conflict of emotions, cumulation, asthenia.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 07.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 18.03.2024*

**ՔՆՆԻՉԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Ավագիմյան Հ.Ռ. (հ.գ.թ., դոցենտ, ՎՊՀ, ք. Վանաձոր, ՀՀ)
avagym@mail.ru

Մխիթարյան Մ.Ս. (ՎՊՀ, մագիստրոս, ք. Վանաձոր, ՀՀ)
milena.mkhitaryan00@mail.ru

Ամփոփագիր: Հոդվածում անդրադարձել ենք քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիայի սոցիալ-հոգեբանական դրսևորումներին դատահոգեբանական փորձաքննության ընթացքում, որտեղ քննարկվում է քննիչի և փորձագետի փոխհարաբերությունների, մասնագիտական դեֆորմացիայի և մի շարք այլ խնդիրների հետ կապված հարցեր:

Մեր համոզմամբ, դատահոգեբանական փորձաքննությունը, որը դիտարկվում է որպես հատուկ գիտելիքների օգտագործման անհրաժեշտ և արդյունավետ ձև, չի կարող կայանալ առանց քննիչի նշանակման և իրագործման: Դրա հետ միաժամանակ պետք է հաշվի առնել այն կարևորագույն փաստը, որ դատահոգեբանական փորձաքննության ընթացքում պետք է բացառել քննիչի անմիջական ներգործությունը փորձագետի վրա, քանի որ հենց դա էլ կարող է էապես աղավաղել փորձագիտության արդյունքները և խախտել արդար դատավարության գործընթացը: Քննիչի նման միջամտությունը, երբեմն պայմանավորված է նրա մասնագիտական դեֆորմացիայով, և բավականին էապես խանգարում է նախաքննության օբյեկտիվ ընթացքին:

Խոսելով քննիչի մասնագիտական գործունեության մասին, հարկ ենք համարել նաև անդրադառնալ այն հիմնարար դասակարգումներին և տեսակետներին, որոնք թվարկում են անձնային տարբեր հատկանիշներ, հաղորդակցական և կազմակերպչական ունակություններ, որոնք պայմանավորում են քննության հաջողությունը, արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև քննիչի մասնագիտական անկախությունը:

Հիմնաբառեր. մասնագիտական այրում, նախաքննություն, հուզական հակադրում, հաղորդակցական և կազմակերպչական ունակություններ:

Հոգեբանական գիտելիքների կիրառությունը նպաստում է հանցագործությունների բացահայտման և հանցագործություն կատարած անձանց վերադաստիարակության խնդիրների արդյունավետ լուծման: Դատահոգեբանական գիտելիքները իրավապահ գործունեության մեջ խաղում են կարևոր դեր, այդ թվում նախաքննության մարմինների աշխատակիցների համար, ապահովելով անձի ճիշտ ախտորոշումը,

անհատական մոտեցումը մարդու նկատմամբ, իրադրությանը առավել համապատասխանող մարտավարական հնարքների ու որոշումների ընտրությունն ու կիրառություն: Սակայն հանցագործությունների հետաքննության և քրեական գործերով դատաքննության ընթացքում առանձին դեպքերում առաջանում են հարցեր, որոնց լուծման համար անբավարար են քննիչի, դատավորի մասնագիտական գտելիքները և պահանջվում են հատուկ գիտելիքներ հոգեբանության ոլորտում: Դա հիմնականում վերաբերվում է վկաների, տուժողների, կասկածյալների հոգեկան գործունեության առանձնահատկությունների, հուզական հակազդումների, հոգեկան հատկանիշների և վիճակների ուսումնասիրության: Նշված առանձնահատկությունների ուսումնասիրության համար նշանակվում է դատահոգեբանական փորձաքննություն:

Դատահոգեբանական փորձաքննության ուսումնասիրության օբյեկտ է նորմայի սահմաններում մարդու հոգեկան դրսևորումները: Դատահոգեբանական փորձաքննության օգնությամբ կարելի է ստանալ իրավական բնույթի եզրակացությունների համար կարևորություն ունեցող տվյալներ, որոնք թույլ կտան հասկանալ և ճիշտ գնահատել մարդկանց հոգեկան գործունեության առանձնահատկությունները և դրսևորումները:

Հոգեբանական փորձագիտության առական է ոչ թե կասկածյալների, վկաների ու տուժողների ցուցմունքների հավաստիության հաստատումը, այլ ապացուցման ենթակա փաստերի վերաբերյալ տեղեկությունները հոգեկան գործընթացների անհատական առանձնահատկություններով պայմանավորված հարցաքննվող անձի կողմից դրանք համարժեք ընկալելու, հիշողության մեջ պահպանելու և վերարտադրելու հնարավորությունների բացահայտումը:

Նախաքննության ընթացքում երբեմն առաջանում է հոգեբանական գիտելիքների կիրառության անհրաժեշտություն և դատահոգեբանական փորձաքննությունը բավականին հաճախ է օգտագործվում քննիչների կողմից:

Փորձաքննության նշանակման և իրագործման ընթացքում կարևոր դեր են խաղում փոխհարաբերությունները քննիչի և փորձագետի միջև: Քննիչի և փորձագետի փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխադարձ հարգանքի, գործնական համագործակցության և վստահության վրա:

Սակայն լինում են դեպքեր, երբ քննիչը ներգործում է փորձագետի վրա իր համար ցանկալի արդյունքներ ստանալու նպատակով: Քննիչի նման ներգործությունը փորձագետի վրա կարող է էապես աղավաղել փորձագիտության արդյունքները և խախտել արդար դատավարության գործընթացը: Փորձագետի վրա ներգործության ձևերը կարող են լինել.

1. Սեփական կարծիքի պարտադրում: Քննիչը կարող է փորձել ներգործելու փորձագետի վրա, արտահայտելով իր կարծիքը փորձագիտության արդյունքի վերաբերյալ կամ կանխակալ ձևով մեկնաբանել տվյալները, ինչը կարող է ազդել փորձագետի մասնագիտական անկախության վրա:

2. Հոգեբանական ճնշում: Քննիչը կարող է օգտագործել իր ծառայողական դրությունը փորձագետի վրա հոգեբանական ճնշում գործադրելու համար, օրինակ, սպառնալով որոշակի տհաճ հետևանքներով նրա պահանջները չկատարելու դեպքում կամ ներկայացնելով պահանջներ հրամայական ձևով:

3. Մեթոդաբանությունը փոխելու կամ գործընթացն արագացնելու պահանջ: Քննիչը կարող է փորձագետից պահանջել կիրառել ուսումնասիրության ավելի պարզեզված մեթոդներ կամ էլ կրճատել փորձագիտության իրագործման ժամկետները: Դա կարող է բացասական ազդեցություն ունենալ փորձագետի աշխատանքի որակի վրա և հանգեցնել արդյունքների աղավաղման:

Քննիչի այդ տեսակի ներգործությունները կարող են պայմանավորված լինել նաև նրա մասնագիտական դեֆորմացիայով, որը դրսևորվում է արագ ցանկալի արդյունքներին հասնելու ձգտման, սեփական իրավացիության վստահության և բարոյական ու իրավական նորմերի նկատմամբ ցածր պատասխանատվության մեջ:

Գոյություն ունի «մարդ-մարդ» մասնագիտությունների մի մեծ խումբ, որը ներառում է նաև քննիչի մասնագիտությունը: Քննիչը պետք է ունենա առանձնապես ծանր պայմաններում զրույց վարելու արտասովոր ունակություններ: Քննիչի գործունեությունը բնութագրվում է իշխանական լիազորությունների, հետաքննության միջոցների և ժամկետների դատավարական կանոնակարգվածությամբ, գործնական օպերատիվությամբ, շահագրգռված անձանց հնարավոր հակազդեցության հաղթահարումով, ընդարձակ հատուկ կոմունիկատիվությամբ, որն ուղեկցվում է բարձր նյարդահոգեկան լարումով [8]:

Քննիչի դատավարական անկախությունը նրանից պահանջում է բարձր նախաձեռնողականություն, կազմակերպվածություն և սոցիալական պատասխանատվություն: Նյարդահոգեբանական ծանրաբեռնվածությունը հաղթահարելու համար նա պետք է ունենա հուզակամային կայունություն, հանգստություն, սառնասրտություն, համառություն, սեփական աշխատանքի նկատմամբ անսպառ հավատ: Բացի դրանից՝ ֆիզիկական դիմացկունությունը, հարմարվողականության զարգացած հնարավորությունները անհրաժեշտ են բարդ, հաճախ նաև «դաշտային» պայմաններում աշխատելու, ցանկացած իրավիճակում անհետաձգելի քննչական գործողություններ իրականացնելու համար:

Քննիչի կարևոր հոգեֆիզիոլոգիական հատկությունները ներառում են՝

- ✓ զգայունություն-արտաքին ազդեցությունների նկատմամբ նյարդահոգեբանական զգայունության բարձրացում,
- ✓ իմպուլսիվության և գործունեության օպտիմալ հարաբերակցությունը,
- ✓ հուզական կայունություն,
- ✓ մտավոր գործընթացների ճկունություն,
- ✓ ինքնատիրապետման մակարդակի իջեցում-վտանգավոր իրավիճակներում չափավոր հուզական գրգռվածություն,
- ✓ դիմադրություն արտաքին և ներքին պայմաններին, որոնք խոչընդոտում են սկսված գործունեության իրականացմանը,
- ✓ հանդուրժողականություն - դիմադրություն նյարդահոգեբանական գերլարմանը [11]:

Ի.Ն. Սորոկոտյագին և Դ.Ա. Սորոկոտյագինան իրենց աշխատանքներում ընդգծում են քննիչի մասնագիտական գործունեության մի քանի հիմնական բլոկներ: Այս բլոկներից մեկը քննիչի գործունեության հոգեբանական բնութագրերն են, որոնք ներառում են նրա կառուցվածքը կազմող այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ հանցագործության հետաքննության պլանավորման և վարկածների առաջ քաշման հոգեբանական հիմքերը, քննիչի և հոգեբանի միջև փոխգործակցության հոգեբանական, մարտավարական և բարոյական կողմերը, ինչպես նաև հատուկ քննչական գործողությունների հոգեբանությունը [12]:

Այսպիսով, հիմք ընդունելով քննիչի աշխատանքային գործունեության վերաբերյալ տարբեր տեսակետներն ու դասակարգումները, կարող ենք ասել, որ գոյություն ունեն անձնային տարբեր հատկանիշներ, հաղորդակցական ունակություններ, որոնք պայմանավորում են քննության հաջողությունը և արդյունավետ աշխատանքը:

Մարդու կողմից մասնագիտության յուրացումը անխուսափելիորեն ուղեկցվում է նրա կառուցվածքի փոփոխություններով, երբ մի կողմից տեղի է ունենում գործունեության հաջող իրականացմանը նպաստող որակների ամրապնդում և ինտենսիվ զարգացում, իսկ մյուս կողմից այս գործընթացին չմասնակցող կառույցների փոփոխություն, ճնշում և նույնիսկ ոչնչացում: Այդ փոփոխությունները լինելով բացասական, խեղաթյուրում են անձի ամբողջականությունը, նվազեցնում նրա հարմարվողականությունն ու կայունությունը: Եվ որպես այդպիսին, կարող ենք առանձնացնել մասնագիտական այրումն ու մասնագիտական դեֆորմացիան [9, էջ 131]:

Անձի մասնագիտական դեֆորմացիան անհատականության որակների փոփոխությունն է (ընկալման կարծրատիպեր, արժեքային կողմնորոշումներ, բնավորություն, հաղորդակցման ձևեր և վարք), որոնք

տեղի են ունենում մասնագիտական գործունեության երկարատև կատարման ազդեցության տակ [4]:

Մասնագիտական դեֆորմացիան՝ նեգատիվ սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն արտահայտվում է տարբեր անձնային վարքային դրսևորումների տեսքով, որոնք դեստրուկտիվ ազդեցություն են մասնագիտական գործունեության գործընթացի և արդյունքի վրա: Մասնագիտական դեֆորմացիան այնպիսի վիճակ է, որի ընթացքում մասնագետը փոխանցում է մարդկանց որոշակի խմբի պատկերը բոլորի վրա, օրինակ՝ բժիշկը բոլոր մարդկանց համարում է հիվանդ, բանտի հսկիչը՝ կալանավոր, քննիչը՝ հանցագործներ (կասկածյալներ) [6]:

Մասնագիտական դեֆորմացիայի առաջացմանը նախորդում է ոչ միայն միջանձնային հարաբերությունների հաճախականությամբ միջնորդավորված աշխատանքի առանձնահատկությունները, այլև սոցիալական սթրեսը, սոցիալ-տնտեսական անկայունությունը և աշխատաշուկայում մրցակցությունը: Բազմաթիվ պատճառներ նպաստում են հուզական այրման, հետևաբար նաև մասնագիտական դեֆորմացիայի առաջացմանը, ինչը հանգեցնում է մասնագիտական գործունեության արդյունավետության նվազմանը [2, էջ 223]:

Իրավապահ համակարգի աշխատակիցները ավելի շատ են ենթակա մասնագիտական դեֆորմացիայի: Ոչ օրինապաշտ քաղաքացիների հետ ինտենսիվ շփումը հանգեցնում է այնպիսի անբարենպաստ հետևանքների, ինչպիսիք են ընտանեկան և աշխատանքային հարաբերությունների խախտումները: Աճում է կոնֆլիկտային իրավիճակների ռիսկը: Այս իրավիճակում իրավապահ մարմինները հաճախ դիմում են փոխգործակցության ոչ արդյունավետ և ոչ կառուցողական մեթոդների, ինչն էլ ավելի է խորացնում ներկա իրավիճակը [2, էջ 221]:

Մասնագիտական դեֆորմացիայի կառուցվածքում առավել համոզիչ է Է.Ֆ. Ջեյերի և Է.Է. Միմանյուկի տեսակետը, որն արտահայտվում է դրանց դրսևորման մակարդակով.

1. Ընդհանուր մասնագիտական դեֆորմացիաներ: Իրավապահ մարմինների աշխատողների մոտ՝ ցանկացած քաղաքացու նկատմամբ կասկածանքի տեսքով՝ որպես հավանական խախտող:

2. Հատուկ մասնագիտական դեֆորմացիաներ: Քննիչների մոտ՝ կասկածանք, փաստաբանի մոտ՝ հնարամտություն, դատախազի մոտ՝ մեղադրողականություն, թերապևտների մոտ՝ ախտորոշումը չափազանցելու միտում:

3. Մասնագիտական-տիպաբանական դեֆորմացիաներ: Դրանք զարգանում են որպես մասնագիտական և անձնապես որոշված բարդույթներ. մասնագիտական կողմնորոշման դեֆորմացիաներ (արժեհամակարգի վերակառուցում, հոռետեսություն, թերահավատություն

նորարարությունների նկատմամբ), ինտելեկտուալ, կազմակերպչական կարողությունների դեֆորմացիաներ (ուռճացված ինքնագնահատական, նարցիսիզմ, գերազանցության բարդույթ), բնավորության գծերի դեֆորմացիաներ՝ իշխանության ցանկություն, գերակայություն:

4. Անհատական դեֆորմացիաներ: Դրսևորվում են որպես անհատական հատկություններ և որակներ, որոնք հիպերտրոֆիկ զարգացում են ստացել մասնագիտական գործունեության արդյունքում (գերպատասխանատվություն, գերազնվություն, աշխատանքային մոլեռանդություն և այլն) [3]:

Մասնագիտական դեֆորմացիան ազդում է էմպատիկ հատկությունների նվազման վրա, արտահայտվում է՝ խստասրտությամբ, մարդասիրության և գթասրտության բացակայությամբ, առաջանում է հաղորդակցվելու ցանկության բացակայություն, նվազում է նրբանկատությունը, նվազում է պատասխանատվությունը [5]:

Քննիչը ստիպված է փոխգործակցել կասկածյալների, հանցավոր աշխարհի հետ, որոնք բացասաբար են անդրադառնում նրա հոգեկանի վրա, ինչը անդրադառնում են հոգեհուզական լարվածության և ֆիզիկական ծանրաբեռնվածության ավելացման վրա, ինչը կարող է հանգեցնել մասնագիտական դեֆորմացիայի առաջացման [7]:

Մ.Ի. Ենիկելը գրում էր. «Քննիչի իշխանական լիազորությունները կարող են առաջացնել և ամրապնդել անձնային բացասական հետևյալ հատկանիշները՝ ամբարտավանություն, գոռոզություն, խստասրտություն: Քննիչի գործունեության դատավարական կանոնակարգվածությամբ պայմանավորվածությունը կարող է հանգեցնել ռիզիկոյան, ոչ ճկունության, շաբլոնային որոշումների հակվածության, ձևամոլության; ասոցիալ երևույթների հետ մշտական առընչությունը՝ ձևավորել կայուն կասկածամտություն, կողմնակալություն, մեղադրական թեքման հակվածությունը իր գործունեության մեջ: Հաճախ առաջացող ժամանակի սղությունը կարող է հանգեցնել առանձին դատավարական պահանջների նկատմամբ շտապողականության, մակերեսայնության, արհամարհանքի դրսևորման: Անձնային-մասնագիտական դեֆորմացիայի նշված հնարավոր դրսևորումները պետք է վերացվեն քննիչի զարգացած կայուն վերահսկողության միջոցով [1]:

Քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիան, որը հոգեբանության մեջ հայտնի է նաև որպես «քննիչի համախտանիշ», հոգեբանական և հուզական փոփոխությունների համախումբ է, որոնք կարող են առաջանալ քննիչների մոտ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման արդյունքում, որն իր մեջ ընդգրկում է հանցագործությունների հետաքննությունը, շփումները տուժողների և հանցագործների հետ, նաև աշխատանքը բարձր սթրեսայնության պայմաններում [10]:

Քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիայի նշված առանձնահատկությունները, կարող են բացասական մեծ ազդեցություն ունենալ դատահոգեբանական փորձագիտության գործընթացի և հանգեցնել լուրջ հետևանքների: Վերջինս տվյալ գործընթացի վրա կարող է ունենալ հետևյալ ազդեցությունները.

1. Կանխակալությունը փորձաքննության ընթացքում: Մասնագիտական դեֆորմացիայի ազդեցության տակ քննիչը կարող է իր նախնական դիրքորոշումների կամ ենթադրությունների ապացույցներ որոնել փորձագիտության արդյունքներում և հաշվի առնել միայն դրանք հաստատող փաստերն ու եզրահանգումները: Դա հանգեցնում է փաստերի ընկալման աղավաղման և խթանում է քննիչին ազդել փորձագետների վրա որոշակի որոշման օգտին եզրակացություն կայացնելու համար: Դրա վրա կարող է ազդել իր կանխակալ վերաբերմունքը կասկածյալի նկատմամբ, աշխատանքի նախորդ փորձը կամ հասարակական նախապաշարմունքները:

2. Ճնշման գործադրում փորձագետների վրա: Մասնագիտական դեֆորմացիայի հետևանքով քննիչները կարող են ճնշում գործադրել փորձագետների վրա, այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք կհաստատեն նրանց նախնական պատկերացումները կամ կօգնեն մեղադրանքը առաջ քաշելու համար:

3. Ինֆորմացիայի հասանելիության սահմանափակում: Քննիչը կարող է սահմանափակել փորձագետի հասանելիությունը անհրաժեշտ ինֆորմացիային կամ տրամադրել թերի տվյալներ, ինչը կարող է դժվարացնել փորձագիտության համարժեք իրականացման և հանգեցնել ոչ հստակ եզրակացությունների:

4. Փորձագիտության տվյալների օգտագործումը մանիպուլյատիվ նպատակներով: Քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիայի բացասական հետևանքներից է նաև փորձագիտության արդյունքների կիրառությունը հասարակական կարծիքով մանիպուլյացիա կատարելու կամ դատական որոշման վրա ներգործելու նպատակով:

Ընդհանուր առմամբ քննիչի անձի մասնագիտական դեֆորմացիան լրջորեն խաթարում է դատահոգեբանական փորձագիտության օբյեկտիվությունը և անկախությունը, ինչն իր հերթին բացասական ազդեցություն կարող է ունենալ դատավարական գործընթացի վրա:

Գրականություն

1. Еникеев М.И. Юридическая психология. М.: «Издательство НОРМА» 2000. 640 с.
2. Змановская Е.В. Девиантное поведение личности и группы: Питер, 2010. – 352 с.

3. Зеер Э.Ф., Сыманюк Э.Э. Психология профессиональных деструкций: уч. Для вузов. – М.: Академич. проект, 2005. – 240 с.
4. Логинова А.В. Профессиональная деформация личности педагога и пути ее преодоления - Молодой ученый. 2015. No 11., 1751 с.
5. Подвойский В.П. Теоретические основы исследования профессиональной деформации //Сборник научных трудов «Профессиональная деформация и проблемы профессионализма», 2001, №2.
6. Пунанова Ю.В. Профессиональная деформация: понятие и условия возникновения. //Сборник научных трудов «Профессиональная деформация и проблемы профессионализма», 2000, №1.
7. Романов В.В. Юридическая психология. М.: ИД Юрайт 2010. – 525 с.
8. Столяренко А.М. Прикладная юридическая психология. М.: ЮНИТИ-Д, 2000. 473 с.
9. Шойгу Ю.С. Психология экстремальных ситуаций для спасателей и пожарных: Издательство «Смысл», 2007. – 161 с.
10. Douglas J.E., Burgess A.W., Burgess A.G., & Ressler R.K. 1992. Crime classification manual: A standard system for investigating and classifying violent crimes. Wiley.
11. Чернышева Е.В., Злоказов К.В. Полицейская психология. Екатеринбург, 2016. <http://yurpsy.com/files/ucheb/police/012.htm>
12. Мукайлов Д.М. Профессионально важные качества сотрудников следственных органов /Д.М. Мукайлов. – Текст: непосредственный //Молодой ученый. – 2019. <https://moluch.ru/archive/255/58372/>

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕФОРМАЦИИ ЛИЧНОСТИ СЛЕДОВАТЕЛЯ В ПРОЦЕССЕ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Авагимян А.Р. (к.п.н., доцент, ВГУ, г. Ванадзор, РА)

avagym@mail.ru

Мхитарян М.С. (ВГУ, магистрант, г. Ванадзор, РА)

milena.mkhitaryan00@mail.ru

Аннотация: Следователи, постоянно борющиеся с преступностью, имеют большой опыт объективного расследования причин и условий, способствующих совершению преступления, чему также оказывает содействие и судебная психология.

В нашей статье мы обратились к рассмотрению социально-психологических проявлений профессиональной деформации личности следователя при проведении судебно-психологической экспертизы, в которой

обсуждаются вопросы, связанные со взаимоотношениями следователя и эксперта, профессиональной деформации и вопросы, связанные с рядом других проблем.

По нашему мнению, судебно-психологическая экспертиза, которая рассматривается как необходимый и эффективный способ применения специальных знаний, не может осуществляться без ее назначения и осуществления следователем. Вместе с этим, необходимо учитывать следующее важнейшее обстоятельство: при проведении судебно-психологической экспертизы следует исключить непосредственное влияние следователя на эксперта, поскольку это может существенно исказить объективные результаты экспертизы и нарушить справедливое проведение судебного процесса. Такое вмешательство следователя иногда вызвано его профессиональной деформацией и существенно мешает объективному ходу предварительного следствия.

Говоря о профессиональной деятельности следователя, мы сочли необходимым также обратиться к основополагающим классификациям и точкам зрения, перечисляющим его различные личностные характеристики, коммуникативные и организаторские способности, обуславливающие успех проведения следствия, его эффективную работу, а также его профессиональную беспристрастность.

Ключевые слова: профессиональное выгорание, предварительное следствие, эмоциональное противодействие, коммуникативные и организаторские способности.

SOCIAL-PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF PROFESSIONAL DEFORMATION OF AN INVESTIGATOR DURING FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATION

Avagimyan H.R. (Ph.D., associate professor, VSU, Vanadzor city, RA)

avagym@mail.ru

Mkhitaryan M.S. (VSU, Vanadzor city, RA)

milena.mkhitaryan00@mail.ru

Abstract: Investigators, who are constantly fighting crime, possess extensive experience in objectively investigating the causes and conditions contributing to the commission of a crime, which is also facilitated by forensic psychology.

In this article, we discuss the socio-psychological manifestations of professional deformation on the investigator's personality during forensic psychological examinations. Here, some issues related to the relationship between investigators and experts, professional deformation, and various other issues are discussed.

From our perspective, forensic psychological examination, which is considered a necessary and effective use of specialized knowledge, cannot proceed without the involvement of the investigator. However, it is crucial to consider that during forensic psychological examinations, direct influence by the investigator on the expert should be excluded to prevent significant distortion of the examination results and to uphold the fairness of the trial process. Such intervention by the investigator is sometimes caused by professional biases and significantly interferes with the objective conduct of the preliminary investigation.

When discussing the professional role of the examiner, it is also important to mention the fundamental classifications and perspectives that outline different personal traits, communication skills, and organizational abilities crucial for the success of the examination and effective performance, while also ensuring the professional independence of the examiner.

Keywords: professional burnout, investigation, emotional reaction, communication and organizational skills.

*Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 02.02.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 27.02.2024*

**ԱՄՈՒՍՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՀՈՒՉՍԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՎԱՐՔԻ ԴՐՊԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**
Առաքելյան Ա.Դ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
araqelyananna23@aspu.am

Ամփոփագիր. Հոդվածը նվիրված է ամուսնաընտանեկան կոնֆլիկտներին առնչվող հոգեբանական փորձաքննությունների բնագավառում երեխաների հուզական վիճակի և վարքի դրդապատճառների գնահատման հարցերին: Հոգեբանական փորձաքննությունների իրականացման փորձի ամփոփմամբ հոդվածում վերլուծված են ամուսնաընտանեկան կոնֆլիկտներում երեխաների հուզական վիճակների, վարքի դրդապատճառների հետազոտություններում և գնահատումներում առկա խնդիրներն ու բարդությունները:

Հոդվածում ներկայացվում են հոգեբանական փորձաքննություններում երեխաների հուզական վիճակների և վարքի դրդապատճառների առանձնահատկությունների գնահատման մեթոդաբանական ցուցումներ ու սկզբունքներ: Երեխաների հուզական վիճակի և վարքի դրդապատճառների փորձագիտական հետազոտություններում կարևորվում է տարբեր տարիքի երեխաների հուզական ոլորտի առանձնահատկությունների, հուզական խաթարումների և դրանց ձևավորման վրա ազդող գործոնների մասին իմացությունը: Առանձնացվել են ամուսնաընտանեկան կոնֆլիկտներում երեխաների հուզական վիճակների և վարքի դրդապատճառների դրսևորման հիմնական միտումներն ու առանձնահատկությունները, դրանց վրա ազդող գործոնները:

Հիմնաբառեր. Հոգեբանական փորձաքննություն, հուզական վիճակ, վարքի դրդապատճառներ, հուզական վերաբերմունք, հուզական հակազդումներ, հուզական անկայունություն

Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների, ամուսնալուծությունների ընթացքում և դրա արդյունքում երեխաների բնակության վայրի սահմանման, նրանց խնամատարության և ծնողական իրավունքի իրացման հարցերով նշանակվող դատահոգեբանական փորձաքննություններում առաջնային խնդիրներից է երեխայի հոգեկան վիճակի և վարքի դրդապատճառների առանձնահատկությունների պարզաբանումը: Խնդրի կարևորությունը պայմանավորվում է նրանով, որ այն սերտորեն առնչվում է երեխաների կողմից իրենց գործողությունների ղեկավարման հարցադրման մեկնաբանմանը:

Հուզակամային ոլորտի առանձնահատկությունների ուսումնասիրությունն անձի հոգեբանության հիմնախնդիրների լուծման, անձի ինքնակառավարման և վերահսկման մեխանիզմների հասկացման ու կարգավորման համար տեսական և գործնական մեծ նշանակություն ունի: Այն հատկապես կարևորվում է անձի գործունեության և հաղորդակցման արդյունավետության բարձրացման, միջանձնային հարաբերությունների կարգավորման տարբեր խնդիրներ լուծելիս:

Հոգեբանական փորձաքննություններում հոգեկան վիճակների և դրանց հետ կապված վարքի դրդապատճառների առանձնահատկությունները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ մեխանիզմները.

✓ Հոգեկան վիճակները՝ որպես ժամանակի որոշակի հատվածում անձի հոգեկան ակտիվության ու գործունեության բնութագրիչներ, աչքի են ընկնում ծայրահեղ բազմազանությամբ և բևեռայնությամբ:

✓ Հոգեկան վիճակները հոգեկան գործընթացների և հատկությունների հետ սերտ փոխկապվածության մեջ են, ինչն էլ պայմանավորում է յուրաքանչյուր դեպքում անհատական յուրատիպությունների դրսևորումներ:

✓ Հույզերի դրսևորման առանձնահատկությունները մի կողմից տարիքային բնութագրեր ունեն, մյուս կողմից՝ պայմանավորված են անձնային այլ առանձնահատկություններով և սերտի կապի մեջ են անձի դրդապատճառային համակարգի բաղադրամասերի հետ:

✓ Հոգեկան վիճակները մի կողմից ունեն համեմատական կայունություն, մյուս կողմից՝ հոգեկան վիճակների շարժունությունը դրսևորվում է ընթացքի փուլերով:

✓ Հոգեկան վիճակները կարող են հանդես գալ գիտակցվածության տարբեր աստիճաններով:

✓ Ընթացման ժամանակով պայմանավորված՝ հոգեկան վիճակները կարող են լինել կարճատև, հետաձգված, երկարատև:

Երեխայի հոգեկան վիճակի առանձնահատկությունների գնահատումը հատկապես առանցքային է ծնողներից որևէ մեկի հետ տեսակցել և շփվել չցանկանալու ու խիստ հուզական հակազդումների պարզաբանումների դեպքում: Ամուսնաընտանեկան կոնֆլիկտներին առնչվող քրեական և քաղաքացիական գործերով դատահոգեբանական փորձաքննություններում կարևոր հարցադրում է համարվում հոգեկան զարգացման մակարդակի հաշվառմամբ երեխայի՝ իր գործողությունների նշանակության լիովին գիտակցման և վերջիններիս ղեկավարման պարզաբանումը:

Ամուսնաընտանեկան կոնֆլիկտներին առչվող հոգեբանական փորձաքննությունների իրականացման փորձը թույլ է տալիս առանձնացնել այս ոլորտի հետազոտություններում հանդիպող հետևյալ խնդիրներն ու բարդությունները.

1. Ծնողների նկատմամբ երեխաների վերաբերմունքի, հուզական հակազդումների փոփոխականություն, այդ թվում՝ հակասականություն, ամբիվալենտություն:

2. Ծնողներից որևէ մեկի հետ բնակվելու, շփվելու և տեսակցելու ցանկության բացակայության, ակնհայտ մերժման դեպքում վերջիններիս իրական դրդապատճառների բացահայտման դժվարություններ, որովհետև այն իրապես գիտակցված չէ, առկա է մեծահասակների ակնհայտ կամ անուղղակի, քողարկված ազդեցություններ՝ մեծահասակների կողմից ներշնչանքների, նրանց վարքի նմանակման, ընդօրինակման, հուզական վարակի տեսքով:

3. նտանեկան կոնֆլիկտներին առչվող փորձաքննություններում առկա են երեխաների հուզական վիճակի և վարքի դրդապատճառների վրա ազդեցության կոնկրետ ցուցանիշների, գործոնների առանձնացման ու չափելիության դժվարություններ, միանշանակ գնահատման բարդություններ, հստակ մեթոդական ապարատի բացակայություն:

4. Փաստացի ինֆորմացիայի ճշտության և օբյեկտիվության գնահատման խնդիրներ: Այսպես, փորձագիտական զրույցի ընթացքում պարզվում է, որ ծնողների մոտ առկա են տեսանյութեր, որոնք ցույց են տալիս ծնողի նկատմամբ երեխայի վարքի, հուզական վիճակի և հակազդումների դրսևորումներ: Նման ինֆորմացիան փաստական ինֆորմացիա չի կարող համարվել, քանի որ այն ստուգված կամ քրեական գործում արձանագրված փաստ կամ ապացույց ներկայացված չէ, որպեսզի հոգեբանական վերլուծության ենթարկվի: Մինևույն ժամանակ, հայտնի չէ, թե ինչ իրադրության մեջ և պայմաններում, նախորդող ինչպիսի հանգամանքների արդյունքում է կատարված այդ տեսաձայնագրությունը:

Երեխաների հուզական վիճակի և վարքի դրդապատճառների փորձագիտական հետազոտության կազմակերպման և արդյունքների մեկնաբանման ժամանակ անհրաժեշտ է հենվել մեթոդաբանական և մեթոդական հետևյալ ցուցումների և սկզբունքների վրա.

1. Տարիքային յուրաքանչյուր շրջան բնութագրվում է հույզերի և զգացմունքների զարգացման և դրսևորման առանձնահատկություններով [3, էջ 390-404, 6]: Հուզական և ինտելեկտուալ ոլորտների զարգացումը սերտորեն կապված է:

2. Տվյալների վերլուծության և մեկնաբանման համար կարևոր է ոչ միայն տարբեր տարիքի երեխաների հուզական ոլորտի առանձնահատկությունների, այլ նաև տվյալ տարիքում հուզական խաթարումների, դրանց ձևավորման վրա ազդող գործոնների ու պայմանների մասին իմացությունը:

3. Փորձագիտական տվյալների մեկնաբանության ժամանակ հուզական, կամային և մոտիվացիոն ոլորտների հետազոտության

արդյունքները վերլուծել համադրության մեջ՝ հաշվի առնելով դետերմինանտների բազմազանությունը:

4. Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս պահպանել վերջիններիս կիրառման տարիքային սահմանները, հաշվի առնել սահմանափակությունները, իրականացման պայմանները, վերլուծության և մեկնաբանության կարգը:

5. Հարցարանների կիրառման ժամանակ նկատի ունենալ, որ հուզական վիճակների և իրական դրդապատճառների վերաբերյալ օբյեկտիվ ինֆորմացիայի խեղաթյուրման հավանականությունը մեծ է: Այդ իսկ պատճառով, հուզական և մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունները ուսումնասիրել նաև պրոյեկտիվ մեթոդներով՝ համադրելով տարբեր մեթոդների կիրառումից ստացված տվյալներն ու արդյունքները:

Երեխաների հոգեկան վիճակի գնահատումներում կարևոր է հուզական ոլորտի տարիքային փոփոխությունների միտումների իմացությունը: Պետք է նշել, որ տարիքի հետ փոխվում են այս կամ այն հույզերին տրվող կամային հակազդումն ու հակազդման եղանակները, ինչպես նաև կոնկրետ հույզերն ակտիվացնող ազդակների նշանակությունը: Հայտնի է, որ տարիքի հետ լավանում է ըստ դեմքի արտահայտության հույզերի ճանաչումը [5, էջ 390-392]:

Նախադպրոցական տարիքի երեխաները, մասնավորապես մինչև 4 տարեկան հասակը, բավականին թույլ են գիտակցում սեփական անձնային որակները և ի վիճակի չեն իրենց վարքին ճիշտ գնահատական տալ: Հետևաբար, մինչև 4 տարեկան երեխաների անձնային և վարքային հոգեդիագնոստիկ մեթոդները չպետք է ներառեն այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են սեփական անձային որակների գիտակցված, արտաքին գնահատական [7, էջ 59]:

Երեխաների հուզական վիճակներն ու վարքի դրդապատճառները հետազոտելիս գնահատման մեծ հնարավորություններ ունեն պրոյեկտիվ, նկարչական բնույթի և գունային ախտորոշման մեթոդիկաները՝ [4, էջ 137-172] բացառելով երեխաների վրա տարբեր ներգործությունների ազդեցությունը: Նշված մեթոդիկաների խումբը հնարավորություն է տալիս ոչ խոսքային եղանակներով պարզել երեխայի վերաբերմունքները, հուզական վիճակներն ու վարքի դրդապատճառները, կատարել գիտակցված և չգիտակցված միտումների համեմատություն, համադրություն՝ խոսքային մեկնաբանությունների ու գնահատումների հետ:

Գունային զուգորդությունների, վերջիններիս հոգեբանական իմաստի մեկնաբանության, կերպարների տարածական տեղորոշման և բովանդակային վերլուծությամբ բացահայտվում են երեխայի համար նշանակալի անձինք, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ երեխաների վարքի դրդապատճառների վրա, ինչպես նաև ընտանիքի այն

անդամները, որոնք երեխայի կողմից ընկալվում են ագրեսիվ, կոնֆլիկտային կամ օտարացած ու մերժող, ինչով էլ պայմանավորվում է վերջիններիս նկատմամբ դրսևորվող բացասական հուզական հակազդումներն ու համարժեք վարքը [1, 2, էջ 96-99, 3]:

Ամուսնաընտանեկան կոնֆլիկտներին առչվող հոգեբանական փորձաքննությունների մեր փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել երեխաների հուզական վիճակների ու վարքի դրդապատճառների դրսևորման որոշակի միտումներ:

Փորձագիտական հետազոտության տարբեր մեթոդների կիրառման արդյունքներում երբեմն արձանագրվում են հակասական տվյալներ, վերաբերմունքների հակասականություն, ամբիվալենտ (երկակի) զգացումներ, կապվածությունների անկայունություն ու ոչ հաստատունություն, ինչով էլ պայմանավորվում է երեխաների վարքի փոփոխականությունը: Նման դեպքերում երեխաների վարքի և դրդապատճառների միանշանակ գնահատումը լրջորեն դժվարանում է, պահանջվում է լրացուցիչ մեկնաբանություններ: Այդ իսկ պատճառով ծնողներից որևէ մեկի հետ բնակվելու կամ շփվելու, տեսակցելու ցանկության բացակայության դրդապատճառներն անհրաժեշտ է մեկնաբանել՝ ելնելով հուզական, կամային և մոտիվացիոն տարբեր գործոնների և իրադրային հանգամանքների փոխներգործության տեսանկյունից:

Այսպես օրինակ, հետազոտության արդյունքներով երեխայի ընկալումներում ծնողի կերպարը մի դեպքում զուգորդվում է ագրեսիվ, վիրավորանքներ ու սպառնալիքներ ներկայացնող անձի հետ, երեխայի և ծնողի միջև առկա է որոշակի չգիտակցվող կոնֆլիկտ, մյուս կողմից փորձագիտական հանդիպման ժամանակ երեխայի և ծնողի շփումը հարթ է ընթանում, երեխան անկաշկանդ, սիրով և մեծ ակտիվությամբ նրա հետ խաղային իրադրության մեջ է մտնում, գրկում, համբուրում, հաճույքով պատմում դասերից, դպրոցից, դպրոցական միջոցառումից: Դիտման արդյունքներում ևս արձանագրվում է ծնողի նկատմամբ դրական հուզական վերաբերմունքի դրսևորումներ(ծնողին տեսնելով երեխան վազում է նրան ընդառաջ, գրկախառնություն): Ակնհայտ է, որ անկաշկանդ պայմաններում, երբ հարազատներից որևէ մեկի միջամտություն և ազդեցություն չկա, երեխայի վարքում ծնողի հետ շփման որևէ խոչընդոտ չի արձանագրվում, նրա հետ չշփվելու, հուզական մերժման խոսքային կամ վարքային դրսևորումներ չեն նկատվում, այսինքն՝ հստակորեն կարելի է արձանագրել, որ երեխայի մոտ ծնողի նկատմամբ ֆիզիկական, հուզական շփման ձևերի ակնհայտ մերժում չկա:

Ամուսնաընտանեկան մեկ այլ կոնֆլիկտի պարագայում փորձագիտական հանդիպման հետազոտության ընթացքում երեխան գրեթե կրկնեց այդ միտքը, որ եթե մայրիկը գա իրենց տուն, պապիկը կգայրանա:

Երեխայի ընկալումներում մայրիկը մի կերպար է, ով զայրացնում է իրեն հարազատ, նշանակալի, իր հիմնական խնամքն ու հոգատարությունն իրականացնող անձանց, նա այդ տանն անցանկալի կերպար է: Վերաբերմունքային այս պատկերը երեխայի պատկերացումներում հակասության մեջ է մտնում իր իսկ հուզական վերաբերմունքների հետ և ներքին կոնֆլիկտների ձևավորման պատճառ է դառնում: Երեխան չի կարող այն հասկանալ, վերլուծել և համարժեք գնահատական տալ: Իր համար սիրելի ու հարազատ մարդկանց միջև առաջացող նման կոնֆլիկտում երեխայի վարքը չի կարող այլ կերպ լինել, քան հակասական, ամբիվալենտ ու փոփոխական:

Փորձագիտական աշխատանքի մեկ այլ օրինակում երեխան հայրիկին մի կողմից ընկալում էր նշանակալի մարդ, «հույս և հենարան» կերպար, ում կողքին ունի հանգստության և պաշտպանվածության զգացում, նրա հետ երեխան համատեղ յուրատիպ դերային խաղեր է խաղում(ինչի մասին պատմում էր թե՛ ինքը, թե՛ մայրիկը), ունի նրանից սպասումներ, հայրիկը նրա ցանկությունները կատարողն է: Մինևույն ժամանակ, երեխան հայրիկին ընկալում է ագրեսիվ, վիրավորանքներ ու սպառնալիքներ ներկայացնող անձ: Երեխայի մոտ ֆիզիկական, հուզական շփման ձևերի ակնհայտ մերժում չկա, բայց նա թույլ չի տալիս հայրիկին գրկել, համբուրել իրեն, ինչն արձանագրվել է նաև մեր փորձագիտական հանդիպման ժամանակ:

Փորձագիտական հետազոտության այլ դեպքում երեխայի վարքի դրդապատճառներում գիտակցված ցանկությունների, վերաբերմունքի և ուսումնասիրության ոչ խոսքային, սիմվոլիկ արդյունքների միջև են բացահայտվել հակասություններ: Այն դեպքում, երբ երեխան պնդում է, որ ցանկանում է ապրել հայրիկի հետ և ակնհայտորեն մերժում է մայրիկին, նրա վերաբերմունքային համակարգի ոչ խոսքային և չգիտակցված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հոր նկատմամբ վերաբերմունքում ևս առկա են հուզական հեռավորություն, չհասկացվածություն և անտարբերություն, թաքնված կոնֆլիկտներ ու դժվարություններ երեխայի և տվյալ ծնողի միջև հարաբերություններում, հոր որպես թույլ, պասիվ, չեզոք կերպարի ընկալումներ:

Մեկ այլ պարագայում երեխայի վարքում ծնողի նկատմամբ տեսնում ենք հուզական կապերի ու մտերմության բացակայություն, հուզական հեռավորություն, մինևույն ժամանակ՝ երեխայի ընկալումներում մայրիկի կերպարը զուգորդվում է նրա նկատմամբ հետաքրքրության հետ, ում հետ կոնֆլիկտներ ունենալն անցանկալի է:

Այսպիսով, ի մի բերելով հակասությունների տարբեր դրսևորումները, կարելի է ասել, որ երեխաների փոփոխական վարքը, վերջինիս դրդապատճառները կարող են պայմանավորված լինել մի կողմից՝ միասին բնակվող նշանակալի ծնողի և նրա ընտանիքի անդամների հետ ունեցած

հուզական կապվածությամբ, խնամքի, հոգատարության ու դաստիարակության համակարգում նրանց գերակայմամբ, մյուս ծնողի հետ երեխաների հաստատուն, խորը և կայուն հուզական կապերի բացակայությամբ: ազդեցությամբ: Ամուսնաընտանեկան շարունակական կոնֆլիկտների արդյունքում ծնողներից մեկի նկատմամբ հարազատների մոտ ձևավորված վերաբերմունքները, դիրքորոշումներն ու հուզական բացասական գնահատումները չեն կարող ազդեցություն չունենալ երեխաների հուզական վիճակի ու վարքային հակազդումների վրա:

1. Արտահայտված միջանձնային կոնֆլիկտների դեպքում երեխաների մոտ արձանագրվում է չհիմնավորված տագնապներ ու վախեր, տրամադրության հաճախակի տատանումներ, իսկ միջանձնային կոնֆլիկտներ ունեցող երեխաներն առանձնանում են բարձր հուզական զրգովողականության, նյարդայնության և ագրեսիվության դրսևորմամբ: Եվ ներաձնային, և միջանձնային կոնֆլիկտներով երեխաների մոտ դիտարկվող հուզական անկայունությունը, նյարդայնությունն ու ագրեսիվությունը համադրվում են նեղացկոտության, տագնապայնության, կասկածամտության հետ:

2. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտներում ընդգրկված երեխաների հոգեկան վիճակին բնորոշ է հուզական անկայունություն, արտահայտված հուզական փոխանցելիություն և փոփոխականություն, ընդ որում՝ ապրումները խորը չեն, իսկ կապվածություններն անկայուն են ու ոչ հաստատուն:

3. Ամուսնաընտանեկան ակտուալ բախումների առանձին սուր դեպքերում երեխաների դրդապատճառա-պահանջմունքային ոլորտն ամբողջովին գտնվում է ներընտանեկան կոնֆլիկտային, տրավմատիկ և սթրեսային իրադրության ազդեցության տակ:

4. Երեխաների ընդհանուր հոգեկան վիճակի անգամ դրական գնահատման դեպքում երեխայի և շրջապատող մարդկանց միջև կոնկրետ փոխհարաբերություններում, ընտանիքում ապրվող բնորոշ հուզական հակազդումներում տագնապայնության ցուցիչն արտահայտվածության բարձր մակարդակում է, դիտարկվում են սթրեսի նշաններ: Վերջիններս առաջանում են երեխայի մտադրությունների, անկախության և ազատության պահանջմունքի սահմանափակության արտաքին խոչընդոտներով:

5. Երեխաների վարքում դիտարկվում է հուզական դրսևորումների զսպմամբ, զգացմունքների ճնշմամբ և վերահսկմամբ պայմանավորված լարվածություն: Նման դեպքերում ուշադրության է արժանանում այն փաստը, որ միջանձնային կոնտակտներում արտահայտված ընտրականությունն ու արտաքին ազդեցությունների նկատմամբ զգայունակությունը թելադրում են ինքնահսկողության ակտիվացման անհրաժեշտություն:

Այսպես, փորձագիտական դեպքերից մեկում ծնողներից մեկի նկատմամբ արտաքուստ դրսևորվող հուզական սառնությունն ու մերժումը համադրվում էին նրա նկատմամբ դրսևորվող հույզերի ճնշման ու վերահսկման հետ: Ապրվող լարվածությունն ու քողարկված տազնապայնությունը երեխայի մոտ կարող է դրսևորվել անզամ հոգեմարմնային խնդիրների տեսքով:

Ամուսնարնտանեկան կոնֆլիկտներին առնչվող հոգեբանական փորձաքննությունների մեր փորձառության արդյունքների համադրումը թույլ է տալիս առանձնացնել երեխաների հուզական վիճակների ու վարքի դրդապատճառների դրսևորման հետևյալ առանձնահատկությունները և դրանց վրա ազդող գործոնները.

1. Երեխաների ապրումները հիմնականում կենտրոնացած են ծնողների փոխհարաբերությունների վրա: Նրանք հասկանում և գիտակցում են ծնողի հուզական վիճակը, տրվում է «ծնողական» կերպարի հուզական վերաբերմունքի ու հակազդման օրինաչափ մեկնաբանություն:

2. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքներում երեխաներն իրենց հարազատների հուզական վիճակները որոշելու ունակություն ունեն, նրանց մոտ կարող է դրսևորվել նաև այս կամ այն հույզերի սպասումը կամ կանխատեսումը, որոնք էլ կարող են էական ազդեցություն ունենալ երեխաների վարքի դրդապատճառների վրա:

3. Երեխաների վարքի և դրա դրդապատճառների փոփոխությունները պայմանավորվում են շարունակական ամուսնարնտանեկան կոնֆլիկտներով, ամուսնալուծության հետևանքով ծնողների միջև պարբերաբար առաջացող հակասություններով ու խնդիրներով: Ծնողների միմյանց նկատմամբ դրսևորող վերաբերմունքները, դիրքորոշումներն ու հուզական գնահատումները չեն կարող ազդեցություն չունենալ երեխայի վարքի դրդապատճառների և հուզական վերաբերմունքների վրա:

4. Երեխաների խնամքի և դաստիարակության համակարգում նշանակալի մեծահասակների դիրքորոշումներն ու վերաբերմունքներն անուղղակիորեն ազդում են երեխաների հուզական հակազդումների և վարքի դրդապատճառների վրա, վերջիններիս կողմից յուրացվում ներշնչման կամ ընդօրինակման ուժով:

5. Ծնողների նկատմամբ երեխաների վարքային և վերաբերմունքային փոփոխությունները, նրանց վարքի շարժառիթները պայմանավորվում են մի կողմից ծնողներից մեկի ու նրա ընտանիքի անդամների հետ ունեցած հուզական կապվածություններով, երեխաների խնամքի, հոգատարության և դաստիարակության համակարգում նրանց գերակայությամբ, մյուս կողմից՝ մյուս ծնողի նկատմամբ դրսևորվող հակասական, ամբիվալենտ(երկակի) զգացումներով, վերաբերմունքների փոփոխականությամբ, ինչպես նաև

երեխայի՝ վերջինիս հետ հաստատուն, խորը և կայուն հուզական կապերի բացակայությամբ:

6. Երեխայի վարքի դրդապատճառներում առանցքային դեր կարող են ունենալ ամուսնալուծության հետևանքով ծնողների միջև պարբերաբար առաջացող հակասություններն ու անհամաձայնությունները, այդ թվում՝ երեխայի դաստիարակության ու խնամքի հարցերում փոխզիջումների և համագործակցության բացակայությունը, երկու ծնողների մոտ ադապտացիայի և միջանձնային հարաբերությունների դժվարությունները:

7. Ընտանեկան շարունակական անհամաձայնությունների մթնոլորտում մեծացող երեխան իրեն բավարար հոգեբանական անվտանգության և ապահովության մեջ զգալ չի կարող, հետևաբար խաթարված է անվտանգության և պաշտպանվածության հիմնային պահանջմունքների բավարարման գործընթացը:

Գրականություն

1. Велиева С.В. Практикум по психодиагностике. Диагностика психических состояний детей дошкольного возраста - СПб.: 2007. – 240 с.
2. Веркаса А.Н. Индивидуальная психологическая диагностика дошкольника. -2-е изд., доп.-М.: МОЗАИКА-СИНТЕЗ, 2018. – 144 с.
3. Дерманова И.Б. Диагностика эмоционально-нравственного развития./ Методика «Цветовой тест отношений» (ЦТО) – СПб. 2002. – с. 41-42
4. Заика Е.В., Зимовин А.И. Методики исследования эмоциональной сферы человека: учебно-методическое пособие, Харьков: ПромАрт, 2018. -260 с.
5. Ильин Е.П. Эмоции и чувства. СПб, Питер, 2001. – 752 с.
6. Немов Р.С. Психология. Кн. 2. М. «Владос», 2004. – 606 с.
7. Немов Р.С. Психология кн.3.: Психодиагностика. М. Изд. Центр ВЛАДОС,2007. – 631 с.

ОЦЕНКА ЭМОЦИОНАЛЬНОГО СОСТОЯНИЯ И МОТИВОВ ПОВЕДЕНИЯ ДЕТЕЙ В ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗАХ, СВЯЗАННЫХ С БРАЧНО-СЕМЕЙНЫМИ КОНФЛИКТАМИ

Аракелян А.Д. (к.пс.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
aragelyananna23@aspu.am

Аннотация: Статья посвящена вопросам оценки эмоционального состояния и мотивов поведения детей в сфере психологических экспертиз, связанных с брачно-семейными конфликтами. Обобщая опыт проведения психологических экспертиз, в статье анализируются проблемы и сложности исследования и оценки эмоциональных состояний и мотивов поведения детей в брачно-семейных конфликтах. В статье так же представлены

методологические указания и принципы оценки особенностей эмоционального состояния и мотивов поведения детей при психологической экспертизах. В экспертных исследованиях эмоционального состояния и мотивов поведения детей важное значение имеет знание особенностей эмоциональной сферы детей разного возраста, эмоциональных нарушений и факторов, влияющих на их формирование.

Автор выделил основные тенденции и особенности эмоциональных состояний и мотивов поведения детей в семейных конфликтах, а также факторы, влияющие на них.

Ключевые слова: психологическая экспертиза, эмоциональное состояние, мотивы поведения, эмоциональное отношение, эмоциональные реакции, эмоциональная неустойчивость.

ASSESSMENT OF CHILDREN'S EMOTIONAL STATE AND BEHAVIORAL MOTIVES IN PSYCHOLOGICAL EXPERT EXAMINATIONS RELATED TO MARITAL-FAMILY CONFLICTS

Arakelyan A.D. (Ph.D in Psychology, Associate Professor, Kh. Abovyan ASPU, Yerevan, RA)
araqelyananna23@aspu.am

Abstract: The article is devoted to the issues of evaluation of children's emotional state and behavioral motives in the field of psychological expert examinations related to marital - family conflicts.

Summarizing the experience of conducting psychological expert examinations, the article analyzes the problems and complications in the research and evaluation of the emotional states of children in marital and family conflicts, motives of behavior. The article presents methodological instructions and principles for evaluating the features of children's emotional states and behavioral motives in psychological expert examinations. In psychological expert examinations of the emotional state and motives of children's behavior, knowledge of the characteristics of the emotional sphere of children of different ages, emotional disorders and factors influencing their formation is important.

The author has singled out the main trends and characteristics of children's emotional states and behavioral motives in marital conflicts, and the factors affecting them.

Keywords: Psychological examination, emotional state, motives of behavior, emotional attitude, emotional reactions, emotional instability.

*Հոդվածը ներկայացվել է և ուղարկվել է գրախոսման՝ 06.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 18.03.2024*

**ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՎԱՐՔԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ**

Ասատրյան Զ.Դ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
asatryanzarand23@aspu.am

Ալեքսանյան Ս.Ս. (Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
silvik.alexanyan2@mail.ru

Ամփոփագիր: Քրեական գործերի փորձագիտական ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են զինծառայողների շրջանում վարքի դեստրուկտիվ հակումների ձևավորման սոցիալ-հոգեբանական որոշ պատճառները: Համեմատական վերլուծությամբ ներկայացվում է զինծառայողների դեստրուկտիվ վարքի ձևավորման անձնային գործոնների, ոչ կանոնադրային հարաբերությունների փոխադարձ կապը, որոնք պարաստ հող են ստեղծում քրեական ենթամշակույթ պարունակող գաղափարների ազդեցությամբ զինծառայողների միջև ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, զրպարտանքների, նվաստացումների կիրառման համար:

Հիմնաբառեր. հոգեբանական փորձաքննություն, դեստրուկտիվ վարք, ինքնաագրեսիա, ինքնավնասումներ, ինքնասպանություններ, կարգապահական խախտումներ, քրեածին վարք:

Զինված ուժերում բարձր մարտունակության ցուցանիշներ ունենալու կարևոր նախապայմաններից է պատշաճ կարգապահության ապահովումը: Զինծառայողների շրջանում գիտակցված կարգապահության հաստատումը, հրամանատարական կազմի գլխավոր նպատակներից է՝ որպես արդունավետ գործունեության ապահովման հիմնական երաշխիք: Բազմաթիվ հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ զինվորական ստորաբաժանումներում անձնակազմի ցածր կարգապահությունը դառնում է զինծառայողների դեստրուկտիվ վարքի հիմնական պատճառներից մեկը: Դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում բազմաթիվ քրեական գործերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինծառայողների շրջանում վարքի դեստրուկտիվ հակումների ձևավորման դեպքում գերակա են, ինչպես անձնային գործոնները, այնպես էլ զինվորական անձնակազմի անարդյունավետ կառավարումը: Ուսումնասիրել ենք 2008-2023 թվականների թվով 30 քրեական գործեր և կոնկրետ դեպքերին նախորդող ու հաջորդող իրադարձությունների նկարագրությունների հիման վրա բացահայտել զինծառայողների դեստրուկտիվ վարքի բնույթը, գործունեության ուղղվածությունը, ինչպես նաև դեստրուկտիվ վարքի դրդապատճառները և այլ հանգամանքներ: Ընդ որում, քրեական գործերում առկա տեղեկույթը

վերլուծվել է ոչ միայն բացահայտ նկարագրությունների հիման վրա, այլև փորձ է արվել վերլուծել իրադարձությունների ազդեցության և դեստրուկտիվ վարքի ձևավորման սոցիալական պատճառները: Քանակական ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա կատարվել են նաև սոցիալ-հոգեբանական որակական վերլուծություններ:

Դեստրուկտիվ վարքի բնութագրումը: Դեստրուկտիվ վարքագիծը լատիներենից թարգմանաբար նշանակում է ոչնչացնող կամ կործանարար վարքագիծ: Դեստրուկտիվ վարքի խնդիրը մշտապես գտնվել է գիտնականների ուշադրության կենտրոնում: Այս խնդիրը ուսումնասիրել են հոգեբանության, իրավագիտության, սոցիոլոգիայի, քրեագիտության և այլ բնագավառների գիտնականներ: Դեստրուկտիվությունը անխուսափելիորեն կարող է դրսևորել ցանկացած անհատ և սովորաբար այն, որպես կանոն, դրսևորվում է կյանքի կրիտիկական իրավիճակներում: Այս ուղղությամբ հետազոտությունները հիմնականում վերաբերում են նրա առավել տարածված ու ծայրահեղ դրսևորումներից մեկին՝ ինքնասպանությանը, կամ սուիցիդալ վարքին [2]:

Դիտարկելով ինքնասպանություն երևույթը՝ պետք է անդրադառնալ նաև ինքնագրեսիվ վարքի վերլուծություններին: Օրինակ՝ Կ. Վարդանյանը նշում է, որ. «Ըստ ժամանակակից հոգեբանական տեսությունների՝ ինքնագրեսիվ վարքը իր անձի վրա ազդեսիայի պրոյեկցիան է: Ընդունված է համարել, որ ազդեսիան և ինքնագրեսիան ունեն ծագման ու ձևավորման միատեսակ մեխանիզմներ: Ինքնագրեսիան դրսևորվում է այն ժամանակ, երբ ազդեսիվ միտումներն ուղղվում են ոչ թե շրջապատին, այլ իր անձին: Ինքնագրեսիան տարբեր հոգեվիճակներում (հարաբերական հանգիստ, սահմանային, ախտաբանական), տարբեր նպատակներով (ավանդության, ծիսական, ինքնապատժում) իր անձի դեմ իրագործված տարբեր խորությամբ (մակերեսային, քրոնիկական, ընդհուպ մինչև մահ) ազդեսիայի այնպիսի դրսևորում է, որի բնույթն ու աստիճանը կախված են սովյալ անձնավորության դիրքորոշումներից, օրգանիզմի անհատական կենսաբանական հակազդումներից, կոնկրետ իրադրային պայմաններից, պաշտպանական մեխանիզմներից» [1, էջ 111-112]:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև, որ անձի դեստրուկտիվ վարքագիծը համարվում է կործանարար վարքագիծ, որը շեղում է սոցիալական և հոգեբանական նորմերից, ինչը հանգեցնում է մարդու կյանքի որակի խախտմանը, վարքի քննադատության նվազմանը, տեղի ունեցող իրադարձությունների ընկալման և ըմբռնման ճանաչողական աղավաղումների, ինքնագնահատականի նվազման և հուզական խանգարումների, ի վերջո այն հանգեցնում է անհատի սոցիալական դեզադապտացիայի, ընդհուպ մինչև նրա լիակատար մեկուսացում [3]:

Փատաթղթերում առկա տվյալների փորձագիտական ուսումնասիրություն:

2008-2023 թվականների քրեական գործերից դուրս են բերվել զինձառայողների դեստրուկտիվ վարքի վերաբերյալ հետևյալ տվյալները՝

1. Դեստրուկտիվ վարքի են դիմել 18-ից 25 տարեկան թվով 29 պարտադիր ժամկետային և 1 պայմանագրային զինձառայող: Ըստ ուսումնասիրված քրեական վարույթների՝ այդ դեպքերի 80 %-ը ինքնասպանություններ էին, իսկ 20 %-ը ինքնավնասման աուտոդեստրուկտիվ վարքի մանիպուլյատիվ և սիմուլյատիվ տեսակներ: Այն զինձառայողները ովքեր կատարել են դեստրուկտիվ վարքի մանիպուլյատիվ և սիմուլյատիվ տեսակներ, միտված են եղել ցուցադրական բնույթի ինքնավնասման գործողությունների, որոնց առաջնային նպատակը զինվորական պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելը կամ վերջնականապես հրաժարվելն էր, ինչպես նաև հրամանատարական կազմին մոլորեցնելը: Ինքնավնասումներ կատարած զինձառայողների 100%-ը կատարել են բազմակի ինքնավնասումներ՝ աճելիի մրջոցով նախաբազկային շրջաններում և ապակու միջոցով մարմնի տարբեր հատվածներում անդամախեղումներ: Այն զինձառայողները, ովքեր կատարել են կրկնակի ինքնավնասումներ, ունեցել են ֆիզիկական և հոգեբանական ադապտացիայի դժվարություններ: Չկարողանալով հաղթահարել դրանք, ձառայության դժվարություններից խուսափելու նպատակով դրսևորել են խիստ նյարդային լարվածություն, արտահայտված տագնապայնություն ու վախի զգացողություն, ինչը միակ էլքը եղել է ինքնավնասումը:

2. Զինձառայողների 60%-ը դեստրուկտիվ վարք է դրսևորել ինքնաձիգի միջոցով՝ ստանալով կյանքի հետ անհամատեղելի վնասվածք, վնասվածքները եղել են՝ կզակի, գլխի, կրծքավանդակի, ճակատային և բերանային հատվածներում: Աձելու միջոցով դեստրուկտիվ գործողություններ իրականացրած զինձառայողները են 17 % էին, կախվելու միջոցով 10 %-ը, ինքնավնասումների, մասնավորապես՝ սիմուլյատիվ վարքի հիմնական միջոցը անդամախեղումներն էին՝ 7%, բարձր լարման հոսանքի միջոցով ինքնասպանություն է կատարել զինձառայողների 3 %-ը, անզուշության հետևանքով ինքնասպան է եղել 3%-ը: Հարկ է նշել, նաև որ ինքնասպանության հիմնական գործիք հանդիսացող ինքնաձիգներն օգտագործվել են մարտական հերթապահությունների և զորավարժությունների ժամանակ, այսինքն՝ տվյալ պարագայում ինքնաձիգը հասանելի միջոց է եղել ինքնասպանություն գործել ցանկացող զինձառայողի համար: Աձելու և կախվելու միջոցով ինքնասպանություններն իրականացվել են հիմնականում զինձառայողների օրվա ռեժիմում սահմանված հանգստի ժամանակահատվածում:

3. Քրեական վարույթի նյութերում արձանագրված տվյալների հիման վրա դեստրուկտիվ վարքի ձևավորման դրդապատճառների ամենաբարձր սանդղակում է հարաբերություններում ենթակայության խախտումը՝ 40%: Դա ուղեկցվել է պաշտոնական դիրքի չարաշահումների պատճառով, հիմնականում գերակա են եղել անօրինական գործողությունները, զինձառայողներին շահագործման, հոգեբանական և ֆիզիկական բռնությունների ենթարկման դեպքերը, ինչը դարձել է զինձառայողների դեստրուկտիվ վարքի ձևավորման պատճառ:

4. Գրեթե նույն մակարդակի վրա են գտնվում զինձառայողների միջև փոխհարաբերությունների կանոնադրային հարաբերությունների խախտումները, ինչի հետևանքով ձևավորված դեստրուկտիվ վարքի դրդապատճառային ցուցանիշները կազմել են 40%: Այս պարագայում՝ զինձառայակիցների ճնշումները, ծաղրածանակի ենթարկվելը, շահագործվելը, ֆիզիկական և հոգեբանական բռնությունները, մեղադրանքները, պարբերական բնույթ կրող միջանձնային կոնֆլիկտները, ինչպես նաև քրեական ենթամշակույթային բարքերը արժանապատվության ոտնահարումը ստեղծել են <<բարենպաստ>> պայմաններ զինձառայողների դեստրուկտիվ վարքի ձևավորման և իրագործման համար:

Վեր թվարկված դրդապատճառների պայմանների ազդեցությամբ զինձառայողների շրջանում ձևավորվում է դեզադապտացիա, հոգեբանական դիսկոմֆորտ, անկայունություն, հուսահատություն, տագնապայնություն, ֆրուստրացիա, հուզական բարձր լարվածություն, վախի զգացում, ճնշվածություն, սեփական «Ես»-ի և սոցիալական դերերի խաթարում, ներտրիկ հակազդումներ, դեսպրեսիվ վիճակ, կյանքի իմաստի կորուստ, խոր ներանձնային կոնֆլիկտներ, ցածր ինքնագնահատական, որոնք առաջացնում են իրավիճակից դուրս գալու անելանելիություն, ինչն էլ հանգեցնում է դեստրուկտիվ վարքի (աուտոագրեսիայի)՝ որպես իրավիճակից դուրս գալու միակ ելք:

Ընդ որում, պետք է նշել, որ պարտադիր զինվորական ծառայությունից և պարտականություններից խուսափելու նապատակով միայն զինձառայողների 17%-ը դիմում դեստրուկտիվ գործողությունների: Նման զինձառայողները աչքի են ընկնում ցուցադրական և սիմուլյատիվ վարքով, սակայն այստեղ հարկ է նշել, որ զինձառայողները վախենում են զինվորական ծառայության ընթացքում առաջացած դժվարություններից, խուսափում են իրենց վրա պատասխանատվություն վերցնելուց, ռիսկային են, համարձակ, ձգտում են անկախության, չեն գիտակցում և կանխատեսում իրենց արարքի բուն հետևանքները: Այս պարագայում շատ հաճախ զինձառայողները չունեն բավարար գիտելիքներ ՀՀ ՔՕ զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների մասին, թերևս նրանք կարծում են, թե

իրենց արարքը կդիտվի որպես հոգեկան հիվանդության դրսևորում, և կխուսափեն ծառայությունից:

Բացի վեր թվարկված դրդապատճառներից, ուշադրության կենտրոնում պետք է պահել զինվորական ծառայության ընթացքում առաջացած ընտանեկան և անձնական խնդիրների հետևանքով առաջացած ինքնավնասումներն ու ինքնասպանությունները, որոնք մեր ուսումնասիրած փաստաթղթերում 7 % են: Այստեղ մեծ նշանակություն ունեն սոցիալական և ֆինանսական վիճակը, ներընտանեկան հարաբերությունները, ընտանիքում ձևավորված հոգեբանական մթնոլորտը, ժառանգական հիվանդությունները, ընտանեկան դիրքորոշումները, կրոնական որևէ խմբի ներկայացուցիչ լինելը, անձնական կյանքում տեղ գտած կարևոր իրադարձությունները, որոնք նախապայման կարող են լինել դեստրուկտիվ վարքի ձևավորման համար:

Քրեական գործերում առկա տվյալների սոցիալ-հոգեբանական վերլուծություն

Մինչև բուն վերլուծությանն անդրադառնալը անհրաժեշտ է նախ նշել, որ քրեական գործերի փորձագիտական հետազոտության ժամանակ բացահայտվեցին հոգեբանական առումով հետևյալ թերությունները, նախ մակերեսային էին ներկայացվում գործով անցնող անձանց հոգեկան առանձնահատկությունները և հոգեկան վիճակները, կիրառվող հոգեբանական տերմինների ընտրությունը ոչ միշտ էր ճշգրիտ կատարված, դեպքերի հոգեբանական նկարագրությունները հիմնականում ունեին ստանդարտ ձևակերպումներ: Անշուշտ դրանք լրացուցուցիչ դժվարություններ էին ստեղծել սոցիալ-հոգեբանական վերլուծության ժամանակ:

Կարծում ենք՝ պարտադիր ժամկետային զինծառայողների դեստրուկտիվ վարքը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական հատկություններով՝ տարիքով, սոցիալական դերերով և այլ գործոններով: Դեստրուկտիվ վարքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է շարունակում ունենալ քրեական սուբկուլտուրա երևույթը: Քրեական սուբկուլտուրայի բնութագրիչ նշան է համարվում հասարակայնորեն ընդունելի արժեքների և նորմերի նկատմամբ հստակ արտահայտված ցինիկ, դաժան վերաբերմունքը: Ընդհանուր առմամբ նարնց բնորոշ է եսասիրական վերաբերմունքը, մարդկային մտքի անգնահատելի արժեքների ջախջախումը և այլն: Սոցիալական նորմերի մակարդակում արմատավորված այդ բացասական երևույթն ավելի վտանգավոր է դառնում, երբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն այն ներթափանցում է բանակ: Առավել ևս, եթե հրամանատարական կազմը օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չի կարողանում միասնական պայքար կազմակերպել այդ երևույթի դեմ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեստրուկտիվ

վարքի ձևավորման և դրսևորման համար պարատ հող է ստեղծում քրեական ենթամշակույթը:

Պարտադիր ժամկետային զինծառայողների սոցիալական որակներում արտացոլվող քրեածին գործոնների շարքն են դասվում՝ զինծառայողների շրջանում արական սեռի բացարձակ գերակշռությունը, զինծառայողների երիտասարդ տարիքը, գիտելիքների համեմատաբար ցածր մակարդակը, դաստիարակչական ներգործությունների նկատմամբ բացասական դիրքորոշումները:

Ըստ փորձագիտական գնահատման զինծառայողների քրեածին որակների շարքից առանձնացվում են համոզմունքները, բացասական սովորությունները և այլն: Օրինակ՝ դեստրուկտիվ վարք դրսևորած կամ դրան դրդած զինծառայողներին բնորոշ են՝

✓ եսակենտրոնություն ձևավորող համոզմունքը, անպատժելիության զգացումը,

✓ հոգեբանական պաշպանության և ինքնարդարացման մեխանիզմի տարր հանդիսացող այն համոզմունքը, որ բոլոր մարդիկ պարբերաբար թույլ են տալիս անարդար, անազնիվ արարքներ և որ որոշ մարդկանց (որոնք արժանի են դրան) կարելի է վնաս պատճառել,

✓ ֆիզիկական ուժին՝ որպես տարբեր կոնֆլիկտներ լուծելու եղանակին դիմելու սովորությունը, հակումը ակոռոյի նկատմամբ,

✓ իր արարքների հեռավոր (աննկատ) հետևանքները կանխատեսելու, ինքնատիրապետելու, իմպուլսիվ պոռթկումները զսպելու անկարողությունը, այլ անձանց բացասական ազդեցությանը դիմադրելու անկարողությունը և այլն:

Այսպիսով՝ զինծառայողների դեստրուկտիվ վարքի ձևավորման պատճառներից են ոչ միայն անձնային գործոնները, այլև ստորաբաժանումներում ոչ կանոնադրային հարաբերությունները, որոնք պարատ հող են ստեղծում զինծառայողների միջև ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, զրպարտանքների, նվաստացումների քրեական ենթամշակույթ պարունակող գաղափարների կիրառման համար:

Գրականություն

1. Վարդանյան Կ.Ե. Զինծառայողների ինքնախելիչ վարքի կանխարգելման ուղիները: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2014 հմ. 3-4. էջ 111-112:
2. Клейберг Ю.А. Психология девиантного поведения: учебник и практикум для вузов /Ю.А. Клейберг. – 5-е изд., перераб. и доп. – Москва: Издательство Юрайт, 2022. – 290 с.
3. Bartlett R., Holditch-Davis D., Belyea M. Problem behaviors in adolescents. *PediatrNurs.* 2007. N 33 (1). P. 13-18.

ЭКСПЕРТНОЕ ИЗУЧЕНИЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ПРИЧИН ДЕСТРУКТИВНОГО ПОВЕДЕНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ

Асатрян З.Д. (к.п.с.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

asatryanzarzand23@aspu.am

Алексян С.М. (АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

silvik.alexanyan2@mail.ru

Аннотация: На основе экспертного изучения криминальных дел вычисляются некоторые социально психологические причины образования тенденций к деструктивному поведению у военнослужащих. С помощью сравнительного анализа представляется взаимосвязь между личностными факторами и неуставными отношениями, которые создают благоприятные условия для возникновения физического и психологического насилия, клеветы и унижений между военнослужащими, находящимися под влиянием идей криминальной субкультуры.

Ключевые слова: психологическая экспертиза, деструктивное поведение, аутоагрессия, членовредительство, самоубийство, дисциплинарные нарушения, преступное поведение.

EXPERT STUDY OF SOCIO-PSYCHOLOGICAL CAUSES OF DESTRUCTIVE BEHAVIOR OF MILITARY SERVICEMEN

Asatryan Z.D. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan

ASPU, Yerevan, RA)

asatryanzarzand23@aspu.am

Aleksanyan S.M. (Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)

silvik.alexanyan2@mail.ru

Abstract: Based on the expert study of criminal cases, we have revealed the socio-psychological reasons for the formation of destructive behaviour tendencies among servicemen. The comparative analysis shows the interconnection between the personal factors and non-statutory relationships in the formation of servicemen's destructive behaviour. These create fertile ground for physical and psychological violence, slander and humiliation among servicemen under the influence of ideas containing criminal subculture.

Keywords: psychological examination, destructive behavior, self-aggression, self-injuries, suicides, disciplinary violations, criminal behavior.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 10.03.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 20.03.2024

ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Агузумцян Р.В. (к.пс.н., профессор, Национальное бюро экспертизы НАН РА, Ереванский государственный университет, Ереван, РА)
rvaghuzumtsyan@list.ru

Аннотация: В статье обсуждаются проблемы и особенности судебно-психологической экспертизы. Предлагается система, которая может обеспечить эффективную и надежную этапность профессиональной деятельности психологов-экспертов. Рассматривается система подготовки и переподготовки специалиста судебно-психологического эксперта. Обсуждаются трудности и сложности процесса становления профессионала и предлагаются определенные пути решения этих проблем. Среди выевленных проблем особое внимание уделяется проблеме методик психологических исследований, связанных с упущениями при разработке языковых методик.

Подробно представлены перечень различных психологических характеристик и качеств, на основе анализа соответствующих профессиограмм и психограмм, которые необходимо формировать для успешной деятельности психолога-эксперта. Предлагается ряд мероприятий для повышения эффективности и надежности деятельности психолога-эксперта.

Ключевые слова: профессиограмма, психограмма, профессиональные качества, психологические методики, особенности судебно-психологической экспертизы.

Судебно-психологическая экспертиза является одним из сложных трудоемких видов экспертиз. Это связано и с особенностями профессиональной подготовки, переподготовки и с специфическими методами и методиками проведения процесса экспертизы, а также со сложностями субъективного и изменчивого фактора объекта исследования. В первую очередь необходимо уточнить какие знания, умения и навыки должны формироваться у будущиь судебно-психологических экспертов. Указанные психологические характеристики развиваются в психологических специализациях ВУЗ-го обучения. Практический многолетний опыт указывает, что ВУЗ готовит психологов определенных областей (труд, развитие, педагогика и т.п.), что является недостаточным для специалиста психолога эксперта. Данная проблема определяется многогранностью деятельности эксперта. Часто это связано с необходимостью проведения экспертизы совместно с экспертами других направлений (медиков, лингвистов, психиатров, генетиков, искусствоведов и т.д.), что требует наличия определенных знаний и особенностей этих областей> Так как экспертиза это в первую очередь исследовательская, экспериментальная

деятельность, то от эксперта психолога требуется глубокие фундаментальные знания, умения и навыки экспериментатора соблюдающего все закономерности экспериментальной психологии, где большое значение отводится нравственным и этическим нормам [4, 7, 12]. К сожалению до настоящего времени при обучении психолога не уделяется достаточного внимания для практического коммуникативного навыка общения с субъектом экспертизы (особенно в уголовных делах).

Следующей трудностью и особенностями является скудность психологического инструментария (методики на армянском языке, которые требовали все правила психодиагностики). В настоящее время данная проблема является одной из значимых и важных для обоснованного и грамотного проведения психологической экспертизы.

Исследования и анализ деятельности психологов – экспертов на основе составленных разными специалистами их профиограмм и психограм показывают на многогранность и универсальность тех психологических характеристик, которые необходимы для научной организации и проведения эффективной и надежной экспертизы.

Эти характеристики относятся:

✓ к качествам определяющим успешность профессиональной деятельности;

✓ к качествам мешающим профессиональной деятельности.

К качествам успешности деятельности относятся: высокий уровень развития познавательных процессов: характеристики и особенности внимания;

✓ к особенностям и видам памяти;

✓ развитое логическое и образное мышление;

✓ коммуникативные способности;

✓ вербальные способности;

✓ психоэмоциональная стабильность;

✓ умение слушать;

К личностным качествам относятся;

✓ личностная ответственность;

✓ креативность;

✓ обучаемость;

✓ целеустремленность и настойчивость;

✓ тактичность;

✓ умение сопереживать;

✓ умение хранить тайну;

✓ эрудированность;

✓ находчивость.

К качествам мешающим к профессиональной деятельности относятся:

- ✓ агрессивность;
- ✓ замкнутость;
- ✓ нерешительность;
- ✓ ригидность мышления;
- ✓ невысокий интеллектуальный уровень;
- ✓ психическая неуравновешенность;
- ✓ безответственность и неаккуратность;
- ✓ отсутствие склонности к исследовательской работе.

Безусловно изменения жизни, науки и техники, появление новых законов и требований могут изменить сложную систему иерархий психических характеристик и качеств. Такие изменения потребуют новые подходы к отбору, обучению и переподготовке специалистов психологов и необходимо уже сегодня восполнить допущенные ошибки и пропуски в деле решения кадров политики психологов экспертов [5, 9].

Определенные сдвиги в психологической науке имеются, например, при профессиональном отборе могут считываться не только положительные параметры, но и те которые могут мешать эффективному восполнению профессиональной деятельности. К профессиональной деятельности психологов, которая относится к системе “человек-человек”, предъявляются особые и разнообразные требования, в которых нет мелочей и вторичных по причине сложности человека, но деятельность судебно- психологических экспертов часто значимыми могут быть требования непрофессионального характера и по этому важен не только профессионализм но личностные, человеческие качества.

Литература

1. Агузумцян Р.В., Папоян В. Р., Галстян А.С., Мурадян Е.Б., Саргсян Д.Ю., Амирян Ц.С. Психологическая безопасность личности в профессиональной деятельности, Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики. Выпуск 8 /Под ред. А.А. Обознова, А.Л. Журавлева. М., Изд-во Институт психологии РАН, 2018. – 568 с., С. 191-214.
2. Агузумцян Р.В., Повышение эффективности обучения специалистов с использованием обратной связи, Социальный мир человека. Вып. 8. Материалы VII Международной научно-практической конференции «Человек и мир: мирозидание, конфликт и медиация», под ред. Н.И. Леонова. Ижевск: ERGO, 436 с. (Серия «Язык социального»). 2018. С. 50-52, 2 с.
3. Агузумцян Р.В., Мурадян Е. Б., Рассмотрение феномена духовности в контексте психологической безопасности личности, Развитие личности в

- контексте профессионального самоопределения, Коллективная международная монография, Белгород : ООО «Эпицентр, 216 с. С. 13-20, 7 с.
4. Агузумцян Р.В., Психологические принципы проектирования системы профессионального обучения, Դատական փորձարկումային և քրեագիտության հայկական հանդես N 6, 2021. 80-86 էջ, 6 էջ:
 5. Агузумцян Р.В., Шахвердян Г.Д. Особенности судебно-психологической экспертизы психологического насилия, “Теорія та практика судової експертизи і криміналістики: зб. наук. пр.”, Харків: Право, вип. 24, 2021. С. 4-19., 15 с.
 6. Агузумцян Р.В., Амбарцумян М.В., Габриелян А.К., Мамян Т.С., Шахвердян Г.Д., Современные проблемы деятельности частного эксперта в республике Армении, Материалы Международной научно-практической конференции. – Москва. 2022. – 3-9 с.
 7. Агузумцян Р.В., Особенности психологической экспертизы, IX Московский юридический форум «Legaltech: Научные решения для профессиональной юридической деятельности, (Круглый стол с международным участием «Новые научные решения в судебной экспертологии и их применение в практической юридической деятельности)», Москва. Сборник материалов конференции, 2022. – С. 37.
 8. Агузумцян Р.В., Амбарцумян М.В., Габриелян А.К., Мамян Т.С., Шахвердян Г.Д., Экстремальный характер деятельности психолога-эксперта, "Актуальные проблемы развития личности в условиях современных реалий": Сборник материалов 3 Международной научно-практической конференции, Ереван. – 2022. С. 37.
 9. Агузумцян Р.В. Пути повышения эффективности судебно-психологической экспертизы, Материалы 5-ой Международной научно-практической конференции, посвященной 100-летию профессора Г.Л. Грановского, Российский государственный университет правосудия, Москва, 2023. С. 6.
 10. Աղուզումցյան Ռ.Վ., Խաչատրյան Ա. Ապագա կառավարիչների սթրեսակայունության և կամային ինքնակարգավորման դրսևորման առանձնահատկությունները և փոխազդանալիցությունը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսուրցիումի գիտական հանդես, Երևան., N 1, 2018. էջ 134-143, 9 էջ:
 11. Աղուզումցյան Ռ.Վ., Սարգսյան Դ. ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա. պատմական ակնարկ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման

ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի կուրթեր, Երևան, 2019. – 580 էջ, էջ 401-408, 8 էջ:

12. Aghuzumtsyan R.V., Shahverdyan G.D., Mamyat T.S., Hambardzumyan M.V., Gabrielyan A.K. Системные особенности психологической экспертизы/ Systemic Features of Forensic and Legal Psychological Expertise/, Edited by Yuri Chernov, Marie Anne Nauner. HIS BOOKS. Handwritting Research. Forensics & Legal. 2023. 22.

ՂԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղուզումցյան Ռ.Վ. (հ.գ.թ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ԵՊՀ, Երևան, ՀՀ)
rvaghuzumtsyan@list.ru

Ամփոփագիր. Հողվածում քննարկվում են դատահոգեբանական փորձաքննության խնդիրներն ու առանձնահատկությունները: Առաջարկվում է այն համակարգը, որը կարող է ապահովել հոգեբան-փորձագետների քայլ առ քայլ արդյունավետ և հուսալի մասնագիտական գործունեությունը: Դիտարկվում է դատահոգեբանական փորձագետի պատրաստման և վերապատրաստման համակարգը: Քննարկվում են պրոֆեսիոնալ դառնալու գործընթացի դժվարություններն ու բարդությունները և առաջարկվում այդ խնդիրների լուծման որոշակի ուղիներ: Դուրս բերված խնդիրների շարքում հատուկ ուշադրություն է դարձվում հոգեբանական հետազոտական մեթոդներին՝ կապված լեզվական մեթոդների մշակման բացթողումների հետ: Մանրամասն ներկայացված են հոգեբանական տարբեր բնութագրերի և որակների ցանկը՝ հիմնված համապատասխան պրոֆեսիոգրամների և պսիխոգրամների վերլուծության վրա, որոնք պետք է ձևավորել հոգեբան-փորձագետի հաջող գործունեության համար: Հոգեբան-փորձագետի գործունեության արդյունավետությունն ու հուսալիությունը բարձրացնելու համար առաջարկվում են մի շարք միջոցառումներ:

Հիմնաբառեր. Պրոֆեսիոգրամա, պսիխոգրամա, մասնագիտական որակներ, հոգեբանական մեթոդիկաներ, դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկություններ:

PECULIARITIES OF FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE

Aghuzumtsyan R.V. (Ph.D Psychology, Professor, “National Bureau of Expertises” of NAS SNPO RA, YSU, Yerevan, RA)
rvaghuzumtsyan@list.ru

Abstract: The article discusses the problems and peculiarities of forensic psychological expertise. The system which can provide step-by-step effective and reliable professional activity of psychologists-experts is suggested. The system of training and retraining of forensic-psychological expert is considered. The difficulties and complexities of the process of becoming a professional are discussed and certain ways of solving these problems are suggested. Among the problems highlighted, special attention is paid to the problem of methods of psychological research related to the omissions in the development of language methods. The list of various psychological characteristics and qualities is presented in detail, based on the analysis of the corresponding professionograms and psychic profile, which should be formed for the successful activity of a psychologist-expert. A number of measures are proposed to improve the efficiency and reliability of the psychologist-expert's activity.

Keywords: professionogram, psychic profile, professional characteristics, methods of psychological research, peculiarities of forensic psychological expertise.

Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 09.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 20.03.2024

**ՀՈՒԶԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴՍՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ավագիմյան Հ.Ռ. (հ.գ.թ., դոցենտ, ՎՊՀ, ք. Վանաձոր, ՀՀ)

avagym@mail.ru

Դալլաքյան Ա.Հ. (Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ)

alkadallaqyan2017@gmail.com

Ամփոփագիր. Հուզական վիճակների դատահոգեբանական փորձաքննությունն իրագործվում է դատաիրավաբանական գործընթացների շրջանակներում մարդու հուզական վիճակի գնահատման նպատակով: Փորձաքննության այս տեսակը կարող է կիրառվել քրեական գործերի, ընտանեկան վեճերի, քաղաքացիական գործերի և այլ իրավական իրադրությունների համատեքստում:

Հուզական վիճակների դատահոգեբանական փորձագիտությունը դատական գործընթացի մասնակիցների հուզական դրսևորումների և վիճակների գնահատման ու վերլուծության կարևոր գործիքներից է արդարադատության ոլորտում: Փորձագիտության այս տեսակը թույլ է տալիս հոգեբանության և իրավագիտության ոլորտի մասնագետներին բացահայտել մարդու վարքի ու որոշումների վրա ազդող գործոնները՝ պայմանավորված անձի ներքին վիճակներով և միջավայրի ազդեցությամբ:

Փորձագիտության արդյունքները կարող են օգտագործվել դատական պրոցեսներում վճռի կայացման, վկաների ցուցումների նկատմամբ վստահության կամ ամբաստանյալների հոգեբանական կոմպետենտությունը որոշելու համար:

Հուզական վիճակների դատահոգեբանական փորձաքննության ընթացքում ուսումնասիրվում է անձի հուզական վիճակների կարգավորման կամաձին ընդունակությունը, սեփական վարքը հասարակության մեջ ընդունված նորմերի հետ համաձայնեցնելու հնարավորությունները: Չնայած նրան, որ արդարադատության մարմիններին հետաքրքրում է կոնկրետ հուզական վիճակի, օրինակ, աֆեկտի, ֆրուստրացիայի և այլ վիճակների առկայության կամ բացակայության վերաբերյալ հարցը: Հոգեբան-փորձագետը պետք է ուշադրություն դարձնի փորձաքննության ենթարկվողի անձի վրա որպես տվյալ իրադրության մեջ ձևավորված հարաբերությունների ամբողջական կազմավորում:

Հիմնաբառեր. աֆեկտ, հոգեկան լարվածություն, հոգետրավմատիկ իրավիճակ, սթրես, ֆրուստրացիա:

Հուզական վիճակների դատահոգեբանական փորձաքննությունը հոգեբանական գիտության կարևոր ոլորտ է, որը զբաղվում է դատական

գործընթացի մասնակիցների հուզական վիճակների վերլուծությամբ և ըմբռնմամբ: Ոլորտը զգալի ազդեցություն ունի արդարադատության տարբեր ասպեկտների վրա, ներառյալ հանցագործությունների հետաքննությունը, մեղադրյալների ողջամտության և հոգեկան առողջության որոշումը ու ընտանեկան վեճերում ծնողների պիտանիության հարցերի լուծումը: Հուզական վիճակների ըմբռնումը առանցքային դեր է խաղում դատավարության մեջ, քանի որ դրանք կարող են ազդել մասնակիցների վարքի և որոշումների վրա:

Մարդը մշտապես գտնվում է սոցիալական և բնական միջավայրի տարբեր ազդեցությունների տակ, որոնց նա պետք է հարմարվի: Արդյունավետ ադապտացիան թույլ է տալիս մարդուն պահպանել կենսունակությունը և կատարողականությունը, գիտակցել իր ներուժը և զգալ բարեկեցություն: Հուզական վիճակները առաջանում են մարդու շրջապատող աշխարհի և իր հետ ունեցած հարաբերությունների փորձի արդյունքում: Դրանք բնութագրվում են շրջակա միջավայրի ազդանշանների արձագանքների որակական և քանակական պարամետրերի փոփոխություններով [2, էջ 310]:

Մենք կփորձենք ընդհանուր պատկերացում տալ անձի հուզական վիճակների մասին, որոնք կարող են հանդիպել քրեական գործերը քննելիս՝ հաշվի առնելով սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Հոգեբանության մեջ առանձնացնում ենք հետևյալ հուզական վիճակները՝ ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակ, սթրես (հոգեկան լարվածություն) և ֆրուստրացիա: Այս վիճակները բնութագրվում են մեծ հաճախականությամբ և լարվածությամբ:

Ֆիզիոլոգիական աֆեկտը «պայթուցիկ» բնույթի, ուժեղ և կարճատև հուզական վիճակ է, որն ուղեկցվում է ընդգծված շարժողական և վեգետատիվ դրսևորումներով:

Ըստ Մ.Մ. Կոչենովայի, աֆեկտի առաջացման երեք մեխանիզմ կա: Առաջինը պայմանավորված է նրանով, որ աֆեկտը առաջանում է հոգեկանում բացասական հուզական փորձառությունների կուտակման արդյունքում: Այս դեպքում աֆեկտիվ վիճակի զարգացման «ձգանման մեխանիզմը» կարող է լինել աննշան բացասական ազդեցությունը, որը, պատկերավոր ասած, դառնում է «վերջին կաթիլը»: Երկրորդ մեխանիզմը շատ ուժեղ գրգռչի (վիրավորանք, սպառնալիք, բռնություն) միանգամյա գործողության արձագանքն է: Երրորդը կապված է գրգռման նախկինում ձևավորված հետքերի վերածննդի հետ, երբ աֆեկտ առաջացնող գրգռի կրկնվող գործողությունը, կարծես, հետաձգվել է մի քանի ընթացքի մինչև մի քանի տարի [6]:

Դասական ֆիզիոլոգիական աֆեկտը բաղկացած է երեք փուլից: Առաջին փուլը սովորաբար տեղի է ունենում մեղադրյալի մոտ՝ ի

պատասխան տուժողի անօրինական գործողությունների, բնութագրվում է առկա իրավիճակից սուբյեկտիվ հուսահատության զգացումով, ինչպես նաև աֆեկտի առաջացման սուբյեկտիվ հանկարծակիությամբ: Երկրորդ փուլը բնութագրվում է երկու հիմնական հատկանիշներով՝ գիտակցության մասնակի նեղացում (ըմբռնման պատրանքայնությամբ և ապրումների նշանակալից գերիշխումով) և գործունեության կարգավորման խախտումներ (հսկողության նվազում, գործողությունների միջնորդավորվածության կորուստ, ընդհուպ մինչև շարժողական ստերեոտիպություն): Աֆեկտիվ պայթյունն իրենից ներկայացնում է էներգետիկ պարպում, որը կարող գուգակցվել շարժումների, խոսքի, վեգետատիվ նյարդային համակարգի փոփոխությունների նկատելի արտաքին դրսևորումներով: Երրորդ փուլը հետաֆեկտիվ է, որի հիմնական առանձնահատկությունը հոգեկան և ֆիզիկական ասթենիայի (ուժասպառության) առկայությունն է [4, էջ 87-90]:

Ֆիզիոլոգիական աֆեկտը պաթոլոգիական հուզական վիճակ չէ (ինչպես պաթոլոգիական աֆեկտը), քանի որ այն առաջացնում է գիտակցության նեղացում և ոչ թե մթազնում, այն չի վերացնում գիտակցված վերահսկողությունը գործողությունների և վարքի նկատմամբ, այլ արգելակում է այն և զգալիորեն նվազեցնում դրա մակարդակը: Պատկերավոր ասած՝ ֆիզիոլոգիական աֆեկտը, մինչև որոշակի ժամանակ, «թողնում է հետք, որին կարելի է բռնել»: Ինչպես տեսնում ենք, մարդն ի վիճակի չէ «չեղարկել» արդեն իսկ առաջացած աֆեկտը, բայց ընդունակ է շտկել դրա ընթացքը և ուղղորդել ագրեսիայի ուղղությունը: Այնուամենայնիվ, դա հնարավոր է մինչև որոշակի ժամանակ և կախված է մեծ թվով գործոններից (անձնական ուժ, հուզական-կամային ոլորտի առանձնահատկություններ, ինքնատիրապետման մակարդակ և այլն) [3, էջ 77-78]:

Գոյություն ունեն նաև հուզական վիճակների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ կուտակային աֆեկտը, աֆեկտը ալկոհոլային թունավորման ֆոնի վրա: Կուտակային աֆեկտը տարբերվում է դասական ֆիզիոլոգիական աֆեկտից նրանով, որ դրա առաջին փուլը, որի ընթացքում զարգանում է երկարատև հոգետրավմատիկ իրավիճակ, որը մեղադրյալի մոտ առաջացնում է հուզական սթրեսի կուտակում, երկարաձգվում ժամանակի ընթացքում: Դրան կարող են նպաստել նաև անհատական հոգեբանական բնութագրերը: Երկրորդ և երրորդ փուլերը սկզբունքորեն չեն տարբերվում ֆիզիոլոգիական աֆեկտից:

Ալկոհոլային թունավորման ֆոնի վրա ազդեցությունը բնութագրվում է նրանով, որ ալկոհոլային թունավորման ազդեցությունը աֆեկտի ընթացքի վրա կարելի է հետևել հուզական ռեակցիայի առաջացման առաջին փուլում, երբ իրադարձությունները դիտվում են ավելի «սպառնալից» ձևով: Երկրորդ և երրորդ փուլերում փոփոխություններ չեն նկատվում: Վ.Ֆ. Ենգալիչևը և Ս.Ս.

Շիփշինը գրում են, որ այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ իրական ֆիզիոլոգիական ազդեցությունը չի կարող առաջանալ ալկոհոլային թունավորման վիճակում, քանի որ ալկոհոլն ինքնին առաջացնում է մարդու մտավոր գործունեության անկազմակերպություն, այսինքն, «Աֆեկտոզեն իրավիճակ-ֆիզիոլոգիական աֆեկտ» պատճառահետևանքային շղթայում հայտնվում է նոր օղակ՝ ալկոհոլային թունավորում: Մի կողմից, դա հեշտացնում է աֆեկտիվ կամ այլ ծայրահեղ վիճակի առաջացումը, քանի որ տեղի է ունենում ընկալման և մտածողության գործընթացների անկազմակերպում: Մյուս կողմից, ալկոհոլային անկազմակերպությունն ազդում է հուզականային ոլորտի վրա, մարդու հույզերն ու գործողությունները կառավարելու ունակության վրա, առաջացնում է շարժողական խանգարում, որն իր հերթին խորացնում է վիճակների բացասական ազդեցությունը գիտակցության և մտավոր գործունեության վրա: Ըստ Ի.Ա. Կուրյավցևի, ալկոհոլային թունավորման ֆոնի վրա ազդեցությունը աննորմալ աֆեկտի տեսակ է, քանի որ ալկոհոլային թունավորումը ենթադրում է մարդու գործունեության փոփոխություններ կենսաբանական և հոգեբանական մակարդակներում, ինչը հենց այդ «աննորմալ հոդ» է ծառայում [3, էջ 78-80]:

Դատահոգեբանական փորձաքննություն անցկացնելիս նպատակահարմար է հաշվի առնել այն հանգամանքը, որ հանցագործության կատարման պահին կասկածյալը կարող էր գտնվել այնպիսի հոգեվիճակում, որն իր վարքագծի վրա իր անկազմակերպ ազդեցությամբ չի հասել խորության, սակայն բացասաբար է ազդել հանցագործի սեփական գործողությունների գիտակցված կարգավորման վրա: Նման հուզական վիճակները ներառում են սթրեսը և ֆրուստրացիան: Հոգեկան լարվածությունը մի պայման է, որը տեղի է ունենում մարդու մոտ էքստրեմալ (անսովոր, նոր կամ սպառնացող) իրավիճակում: Նրա ազդեցությունը մտավոր գործունեության վրա միանշանակ չէ և կախված է սթրեսային իրավիճակի առանձնահատկություններից և անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններից: Որոշ մարդկանց մոտ հոգեկան լարվածությունը մոբիլիզացնող ազդեցություն ունի, իսկ մյուսները, ընդհակառակը, զգում են այս վիճակի անկազմակերպ ազդեցությունը:

Հոգեկան լարվածության պատճառ կարող են լինել արտաքին և ներքին սթրեսային գործոնները: *Արտաքին գործոնները* ներառում են ազդեցության *անսպասելիության* աստիճանը, *ազդեցության ինտենսիվությունը* գերազանցում է անձի անհատական հոգեբանական հնարավորությունները, իրավիճակը գնահատելու, որոշում կայացնելու և այն իրականացնելու *ժամանակի բացակայություն, իրավիճակի անորոշությունը*: Գործոնների մեկ այլ խումբ՝ ներքին, ներառում է, առաջին հերթին, ազդեցության սուբյեկտիվ գնահատումը որպես վտանգավոր, սպառնացող

առողջությանը, կյանքին, սոցիալական կարգավիճակին, վարքագծի առաջատար շարժառիթներին և անձի արժեքային համակարգին: Երկրորդ, անձի սուբյեկտիվ զգայունությունը սթրեսի գործոնի կամ, այլ կերպ ասած, ազդեցության անձնական նշանակության նկատմամբ: *Երրորդ*, սթրեսորի մոտիկությունը սուբյեկտիվ «հաճելի-տհաճ» սանդղակի ծայրակետերին: *Չորրորդ* սթրեսորի ազդեցության տեղողությունը՝ պահպանելով նրա անձնական նշանակությունը: Վերջապես, *հինգերորդը*, հակասական ընտրություն վարքի հակառակ շարժառիթների միջև [9, էջ 27-29]:

Ակնհայտ է, որ հոգեկան լարվածության վիճակի առաջացումը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները համընկնում են աֆեկտ առաջացնողների հետ: Ո՞րն է հոգեկան լարվածության վիճակի առանձնահատկությունը, որն այն տարբերում է աֆեկտից: *Առաջին հերթին*, առաջացման դինամիկայի մեջ. ի տարբերություն աֆեկտի, հոգեկան լարվածության աճը կարող է համեմատաբար երկար լինել, իսկ անկումը ոչ այնքան արագ: Եթե աֆեկտը ակնհայտորեն առաջացնում է մտավոր գործունեության զգալի անկազմակերպություն, ապա հոգեկան լարվածությունը կարող է ոչ միայն կործանարար ազդեցություն ունենալ մտավոր գործունեության վրա, այլև բարելավել դրա որակը, այսինքն հնարավոր է հարմարվել բացասական ազդեցություններին (սակայն, հարկ է նշել, որ հարմարվողական սինդրոմի հնարավորություններն անսահմանափակ չեն, և վաղ թե ուշ կհետևի մտավոր գործունեության անկազմակերպումը): Հոգեկան լարվածությունը ազդում է *ըմբռնման, ուշադրության, հիշողության գործընթացների վրա: Դրան հաջորդում է մտքի ակտիվության նվազումը, մտածողության ճկունության կորուստը, գիտակցության մեջ հուզական բաղադրիչների գերակայությունը ռացիոնալից, որոշումներ կայացնելու դժվարություններ, երբ գիտակցությունը ֆիքսում է իրավիճակի սթրեսային բնույթը: Վարքագծային մակարդակում դա արտահայտվում է գրգռիչներին ոչ ադեկվատ արձագանքմամբ, իմպուլսիվությամբ, վարքի անճկունություն, արձագանքման և՛ ակտիվ (այդ թվում՝ ֆիզիկական ագրեսիայի տեսքով), և՛ պասիվ ձևերի հնարավորությամբ և այլն:* Այսինքն, որպես կանոն, հոգեկան լարվածության վիճակում մտավոր գործունեության անկազմակերպումը չի հասնում աֆեկտի ժամանակ նկատվող մակարդակին: Մինևույն ժամանակ, անօրինական արարքը գնահատելիս չի կարելի անտեսել այս հուզական վիճակի ազդեցությունը անձի վարքի վրա:

Վ.Ֆ. Ենգալիչևը և Ս.Ս. Շիպչինը առանձնացնում են հիասթափության վիճակը կամ ֆրոուստրացիան: Այն բնութագրվում է խթանված կարիքի առկայությամբ, որը չի գտել իր բավարարումը: Վրդովմունքի պատճառները խոչընդոտներն են, որոնք բացառում են նպատակին հասնելու հնարավորությունը (նվաստացում, վիրավորանք պայմանավորված

դրդապատճառներով գործելու անհնարինության (իրական կամ սուբյեկտիվ) ընկալման պատճառով, հիասթափություն ինքն իրենից և այլն):

Սուբյեկտիվ փորձառությունները ֆրուստրացիայի վիճակում, ինչպես աֆեկտում, հիմնականում կապված են զայրույթի հույզերի հետ: Զայրույթն առաջացնում է ինտենսիվ լարվածություն, ինքնավստահության բարձրացում և ագրեսիայի պատրաստակամություն՝ ուղղված հիասթափության աղբյուրին: Միննույն ժամանակ, զայրույթը արագացնում է ագրեսիան, քանի որ զայրույթի փորձի ուժգնությունը ուղղակիորեն կապված է ֆիզիկական գործողությունների անհրաժեշտության մեծության հետ: Նաև այս վիճակում, զզվանքի և արհամարհանքի զգացումներն են զգացվում:

Ֆրուստրացիան առաջացնում է մտավոր գործունեության զգալի անկազմակերպություն: Սա արտահայտվում է գիտակցության ամրագրմամբ՝ նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտի առկայության, ընկալման սխալների, արտաքին սպառնալիքի գերազնահատման մեջ: Այս վիճակում նկատվում է ակտիվացման մակարդակի կտրուկ բարձրացում, հուզական գրգռվածություն: Վարքն իր բնույթով ագրեսիվ է, մեծանում է դրա իմպուլսիվությունը, նվազում է կամային կառավարումը, ինչը զգալիորեն մեծացնում է հարձակման կամ ֆիզիկական ակտիվության պատրաստակամությունը: Ֆրուստրացիայի անհրաժեշտ նշաններն են՝ նպատակին հասնելու անձի ուժեղ մոտիվացիան (զգալի կարիքի բավարարում) և այդ նպատակին հասնելուն խոչընդոտող խոչընդոտի առկայությունը: Հետևաբար, կեղծ հիասթափության պահվածքն առանձնանում է գործողությունների կամ մոտիվացիայի կամ նպատակահարմարության պահպանմամբ: Օրինակ, մարդը, փորձելով հասնել նպատակին, կարող է զայրանալ, բայց նրա պահվածքը մնա համապատասխան: Այլ կերպ ասած, կեղծ հիասթափության վարքագիծը բնութագրվում է միայն կամային գործունեության նկատմամբ վերահսկողության մասնակի կորստով:

Ֆրուստրացիոն պահվածքը տարբերվում է ինչպես աֆեկտիվ, այնպես էլ սթրեսային վարքից: Եթե աֆեկտը միշտ առաջացնում է ագրեսիա և ոչնչացում՝ ուղղված տրավմատիկ ազդեցության աղբյուրին, ապա ֆրուստրացիան կարող է առաջացնել վարքի ավելի մեծ փոփոխականություն: Բացի վերը նշված ագրեսիայից և ոչնչացումից, ֆրուստրացիայի վիճակում կարող է նկատվել աննպատակ շարժողական գրգռվածություն կամ, ընդհակառակը, ապատիա, ռեգրեսիա (վարքային ռեակցիաների պրիմիտիվացում, գործունեության որակի նվազում): Այնուամենայնիվ, կա նաև նմանություն աֆեկտի հետ. սա ֆրուստրացիայի ակնհայտ բացասական ազդեցությունն է մտավոր գործունեության վրա: Բայց հենց այս պահն է, որ տարբերում է այն հոգեկան լարվածությունից [4, էջ 102-107]:

Ֆրուստրացիան նույնպես տարբերվում է աֆեկտից իր դինամիկայով: Հոգեկան լարվածության վիճակի պես, այն կարող է զարգանալ և անկազմակերպ ազդեցություն ունենալ մտավոր գործունեության վրա ավելի երկար ժամանակահատվածում, քան ֆիզիոլոգիական ազդեցությունը: Նաև ֆրուստրացիան, որպես կանոն, չի հասնում գիտակցության և հոգեկանի անկազմակերպության այն աստիճանին, որը նկատվում է կրթի վիճակում:

Հարմարվողական ռեակցիաների խումբը ներառում է նաև կարճաժամկետ և երկարատև դեպրեսիվ ռեակցիաներ (վշտի ռեակցիաներ և այլն), այլ հուզական խանգարումներ (տագնապայնություն, վախ և այլն)՝ վարքային խանգարումների և խառը տիպի ռեակցիաներ: Այսպիսով, հարմարվողական ռեակցիաների հիմնական դրսևորումները հուզական և մտավոր ոլորտների փոփոխություններն են, ապա վարքագիծը [1, էջ 373]:

Հուզական փորձաքննությանը ներկայացվող հիմնական հարցերն են.

1. Արարքը կատարելու պահին մեղադրվող սուբյեկտը գտնվե՞լ է ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում:

2. Արարքը կատարելու պահին մեղադրվող սուբյեկտը հուզական վիճակում էր (հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա և այլն), որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և մտավոր գործունեության վրա: Եթե այո, ապա ինչպե՞ս:

3. Հաշվի առնելով սուբյեկտի հոգեվիճակը, նրա անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև դեպքի հանգամանքները՝ նա կարո՞ղ էր ճշգրիտ կապել իր պաշտպանական գործողությունները իրավիճակի օբյեկտիվ պահանջների հետ:

Եզրակացությունը, որ մարդը չի կարողացել ճշգրիտ կերպով կապել իր պաշտպանական գործողությունները իրավիճակի օբյեկտիվ պահանջների հետ, երբ նա ունեցել է ծայրահեղ հոգեկան վիճակ, որոշ քննիչներ մեկնաբանում են որպես հակասող, օրինակ՝ սուբյեկտի կարողությունների վերաբերյալ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությանը: Միննույն ժամանակ, նրանք անտեսում են այն փաստը, որ ծայրահեղ հոգեկան վիճակները մարդուն չեն զրկում իր գործողությունների մասին տեղյակ լինելու և դրանք կառավարելու ունակությունից, այլ միայն զգալիորեն սահմանափակում են այն: Արտակարգ իրավիճակը, հանգեցնում է վարքի ճկունության կորստի, նվազեցնում է օբյեկտիվորեն գնահատելու ունակությունը: Հանգամանքները, սահմանափակում է արձագանքման համարժեք ձևեր ընտրելու ազատությունը և նվազեցնում ինքնատիրապետումը: Այսինքն՝ մարդը ժամանակ ու հնարավորություն չունի իրավիճակի համակողմանի վերլուծության ու գնահատման, կամ իրավիճակին ադեկվատ կոնֆլիկտի լուծման ճանապարհ գտնելու համար: Ակնհայտ է, որ մտավոր գործունեության մակարդակի նվազումը

նույնական չէ սեփական գործողությունների իմաստը գիտակցելու և դրանք կառավարելու ունակության կորստի հետ:

4. Սուբյեկտի ո՞ր անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող են էապես ազդել նրա վարքի վրա ուսումնասիրվող իրավիճակում [8, էջ 118-119]:

Մեղադրյալի կամ վկայի հուզական վիճակների որակյալ գնահատումը մեծապես կախված է ոչ միայն հոգեբանի փորձից, այլև քրեական գործի նյութերում հանցագործության սուբյեկտի անձի և վարքագծի վերաբերյալ տեղեկատվության քանակից: Շատ կարևոր է նաև վկաների հետ հարցազրույցն այն մասին, թե ինչպիսի տեսք ուներ մեղադրյալը մինչև դեպքը և հանցագործության կատարման պահին, և ինչ հատկանիշներ են նկատվել դեպքից հետո նրա վարքագծի մեջ: Ամբաստանյալին հարցաքննելու ընթացքում, հատկապես քննչական գործողությունների առաջին փուլերում, քննիչը նրանից պետք է պարզի հետևյալ կետերը. քրոնիկ հոգնածության, ամբաստանյալի և տուժողի միջև միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները (հակամարտությունների առկայությունը, դրանց առանձնահատկությունը և դրանց լուծման մեթոդները), գոհի անհատականության գծերը (խառնվածքի առանձնահատկությունները, բնավորությունը, ընտանիքում հարաբերությունների առանձնահատկությունները և այլն): Վկաներին հարցաքննելիս խորհուրդ է տրվում տալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են. «Ամբաստանյալի արարքը անսպասելի՞ է ձեզ համար» կամ «Արդյո՞ք անձի բնութագրերը համապատասխանում են հետևյալին», «Արդյո՞ք նրա գործողությունները իրական են»: Այս հարցերին վկաների պատասխանները բարձր տեղեկատվական նշանակություն ունեն փորձագետ հոգեբանի համար [5, էջ 131-133]:

Մեղադրյալի հուզական ռեակցիաների և վիճակների դատահոգեբանական փորձաքննության իրավական նշանակությունը որոշվում է հետաքննության կամ դատարանի կողմից որակավորման հնարավորությամբ: Իրավական որակավորումը տեղի է ունենում, երբ փորձագետը հաստատում է սուբյեկտի էմոցիան իրեն մեղադրվող գործողությունները կատարելու պահին և օրինականորեն նշանակալի նշանների առկայությունը, ինչպիսիք են հանցագործության դիտավորյալ կատարումը, ինչպես նաև հույզերի առաջացումը բռնությամբ, ահաբեկելով, ծանր վիրավորանքով կամ տուժողի այլ ապօրինի կամ անբարոյական գործողություններով, ինչպես նաև երկարատև հոգետրավմատիկ իրավիճակով, որն առաջացել է տուժողի անօրինական կամ անբարոյական վարքագծի հետ կապված [7, էջ 64]:

Այսպիսով, հուզական վիճակների առկայության մասին դատաբժշկական փորձագետի եզրակացությունը պետք է հիմնված լինի այդ

հուզական ռեակցիաների հոգեբանական որակավորումների և դրույթների վրա, որոնք էապես սահմանափակում են հանցագործություն կատարելիս մեղադրյալի կարողությունը լիովին հասկանալու իր գործողությունների բնույթն ու նշանակությունը և իրականացնել դրանց կամավոր կարգավորումն ու վերահսկողությունը: Մինևույն ժամանակ, փորձագետ հոգեբանը պետք է դիֆերենցիալ ախտորոշում կատարի աֆեկտի և հուզական ռեակցիաների ու վիճակների միջև, որոնք չեն հասնում աֆեկտի արտահայտման մակարդակին և էական ազդեցություն չունեն գիտակցության և վարքի վրա: Հուզական վիճակների դատահոգեբանական փորձաքննությունը կարևոր դեր է խաղում իրավական գործընթացում՝ դատարաններին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն որոշումներ կայացնելու համար:

Գրականություն

1. Балабанова Л.М. Судебная психология. Д.: Сталкер, 1998. – 432 с.
2. Бандурка А.М., Бочарова С.П., Землянская Е.В. Юридическая психология: – Харьков: Изд-во Нац. ун-та внутр. дел, 2002. – 596 с.
3. Васильева Н.В., Горьковая И.А. Судебная экспертиза и ее клинико-психологические основания Практическое руководство - Санкт-Петербург, 1997. – 163 с.
4. Енгальчев В.Ф., Шипшин С.С. Судебно-психологическая экспертиза. – Калуга: КГУ им. К.Э. Циолковского, 2018. – 190 с.
5. Ипатов А.В. Юридическая психология. Санкт-Петербург: РГГМУ, 2022. – 172 с.
6. Коченов М.М. Судебно-психологическая экспертиза. 1977. <http://yurpsy.com/files/ucheb/spe/06.htm> 02/03/2024
7. Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: - М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000. – 333 с.
8. Сафуанов Ф.С. Судебно-психологическая экспертиза в уголовном процессе: — М.: Гардарики, Смысл, 1998. – 192 с.
9. Фурманов И.А., Метлицкий И.Е. Судебно-психологическая экспертиза. Минск: БГУ, 2014. – 78 с.

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ЭМОЦИОНАЛЬНЫХ СОСТОЯНИЙ

Авагимян А.Р. (к.п.н., доцент, ВГУ, г. Ванадзор, РА)

avagym@mail.ru

Даллакян А.Г. (ВГУ, г. Ванадзор, РА)

alkadallaqyan2017@gmail.com

Аннотация. Судебно-психологическая экспертиза эмоциональных состояний проводится в рамках судебно-правовой деятельности с целью оценки эмоционального состояния человека. Данный вид экспертизы может быть использован при рассмотрении уголовных дел, семейных споров, гражданских дел и других правовых ситуаций.

Судебно-психологическая экспертиза эмоциональных состояний является одним из важных инструментов оценки и анализа эмоциональных проявлений и состояний участников судебного процесса в сфере правосудия. Этот вид экспертизы позволяет специалистам в области психологии и юриспруденции выявить факторы, влияющие на поведение и решения человека, обусловленные внутренними состояниями человека и влиянием окружающей среды.

Результаты судебной психологии могут быть использованы для определения судебных решений, достоверности показаний свидетелей или психологической компетентности обвиняемых.

В ходе судебно-психологической экспертизы эмоциональных состояний изучаются произвольная способность человека регулировать эмоциональные состояния, возможности гармонизации собственного поведения с принятыми в обществе нормами. Несмотря на то, что органы юстиции интересуют вопрос наличия или отсутствия определенного эмоционального состояния, например, аффекта, фрустрации и других состояний. Психолог-эксперт должен обратить внимание на личность испытуемого как полную совокупность отношений, складывающихся в данной ситуации.

Ключевые слова: аффект, психическое напряжение, психотравмирующая ситуация, стресс, фрустрация.

PSYCHOLOGICAL CHARACTERISTICS FORENSIC-PSYCHOLOGICAL EXAMINATIONS OF EMOTIONAL CONDITIONS

Avagimyan H.R. (Ph.D., associate professor, VSU, Vanadzor city, RA)

avagym@mail.ru

Dallaqyan A.H. (VSU, Vanadzor city, RA)

alkadallaqyan2017@gmail.com

Abstract. Forensic psychological examination of emotional states is carried out in the framework of forensic processes for the purpose of evaluating a person's emotional state. This type of expertise can be used in the context of criminal cases, family disputes, civil cases and other legal situations.

Forensic psychological expertise of emotional states is one of the important tools for evaluating and analyzing the emotional manifestations and states of the participants in the judicial process in the field of justice. This type of expertise

allows psychology and law specialists to identify the factors influencing human behavior and decisions, due to the internal states of the person and the influence of the environment.

The results of forensic psychology can be used to determine judgments in court proceedings, the credibility of witness statements, or the psychological competence of defendants.

During the forensic psychological examination of emotional states, a person's voluntary ability to regulate emotional states, the possibilities of harmonizing one's own behavior with the norms accepted in society are studied. Despite the fact that justice bodies are interested in the question of the presence or absence of a specific emotional state, for example, affect, frustration and other states. The psychologist-expert should pay attention to the personality of the subject as a complete set of relationships formed in the given situation.

Keywords: affect, mental tension, psycho traumatic situation, stress, frustration.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 03.03.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 15.03.2024

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑՈՒՄ
ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԵՐԵՒԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՍ ՄԱՅՐԻԿԻ ԵՎ ՀԱՅՐԻԿԻ
ՄՈՒՆՈՐԱԿՈՒՄ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ
Ավագյան Ա.Մ. (հ.գ.թ., Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
avagyanani24@aspu.am**

Անփոփազիր: Հոդվածում հեղինակն անդրադառնում է դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում երեխայի ծնողների նկատմամբ ունեցած վերաբերմունքի և իր նկատմամբ ծնողներից յուրաքանչյուրի վերաբերմունքի հոգեբանական ախտորոշման դժվարություններին: Նշվում է, որ նման ինֆորմացիան հոգեբանական տեսանկյունից բավականին զգայուն է և հաճախ փորձարկվողի կողմից հմտորեն թաքցվում է կամ լիովին չի գիտակցվում: Այսպիսի դեպքերում նպատակահարմար է օգտագործել պրոեկտիվ տեխնիկաներ, որոնք հոգեբանական փորձաքննությունների ընթացքում անփոխարինելի են:

Հոդվածում ներկայացվում է «Ես մայրիկի և հայրիկի մոլորակում» հեղինակային պրոեկտիվ տեխնիկան, դրա կիրառման առանձնահատկությունները, փուլային ընթացքն ու հնարավոր արդյունքները: Մանրամասն ներկայացված է հարցերի այն շրջանակը, որը կարող է կիրառվել ծնողների նկատմամբ երեխայի վերաբերմունքն ախտորոշելու նպատակով: Նշվում է, որ տեխնիկան կարող է կիրառվել ավագաթերապիայի, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում, նաև իզոթերապիայի շրջանակներում:

Հիմնաբառեր: ախտորոշում, ավագաթերապիա, պրոեկցիա, վերբալիզացիա, հուզական կապվածություն:

Հոգեբանական փորձաքննությունների ընթացքում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեսուչների կողմից հոգեբան-փորձագետներին առաջադրվում են այնպիսի հարցեր, որոնք առնչվում են երեխայի և հայր ծնողի, երեխայի և մայր ծնողի հուզական կապվածությանը, երեխայի և ծնողներից մեկի միմյանց հետ չշփվելու շարժառիթների բացահայտմանը, ծնողներից յուրաքանչյուրի երեխայի նկատմամբ ունեցած հոգեբանական ազդեցության ախտորոշմանը, ծնողներից յուրաքանչյուրի կողմից հակառակ ծնողի հետ երեխայի շփման խոչնդոտների առաջացմանը և այն:

Այսպիսի ինֆորմացիան հոգեբանական տեսանկյունից բավականին զգայուն է և հաճախ փորձարկվողի կողմից հմտորեն թաքցվում է: Այսպիսի դեպքերում նպատակահարմար է օգտագործել պրոեկտիվ տեխնիկաներ,

որոնք հոգեբանական փորձաքննությունների ընթացքում անփոխարինելի են:

Այս հոդվածի շրջանակներում ձեռք ենք ներկայացնում մեր կողմից ստեղծված և հոգեբանական պրակտիկայի ընթացքում բազմաթիվ այցելուների հետ աշխատանքում փորձարկված հեղինակային տեխնիկա, որը մենք պայմանականորեն անվանել ենք «Ես մայրիկի և հայրիկի մոլորակում»: Տեխնիկան նախատեսված է առավելապես ավագաթերապիայի շրջանակներում կիրառելու նպատակով, սակայն հայտնի է, որ հաճախ դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում ավագաթերապիա կիրառելու հնարավորություն կարող է չլինել: Մենք հնարավոր ենք համարում տեխնիկան կիրառել նաև իզոթերապիայի, այսինքն՝ նկարելու տեխնիկաների կիրառման միջոցով:

Այս տեխնիկան նպատակահարմար է կիրառել հատկապես այն դեպքերում, երբ երեխայի ծնողներն ամուսնալուծության փուլում են կամ արդեն ամուսնալուծվել են, և անհրաժեշտ է ախտորոշել երեխայի հուզական վերաբերմունքը և դիրքորոշումները ծնողներից յուրաքանչյուրի նկատմամբ, հասկանալ, թե երեխան ինչպես է ընկալում իր նկատմամբ ծնողներից յուրաքանչյուրի վերաբերմունքը, երբ երեխան ստիպված է ծնողներից մեկի հետ բնակվել, կամ պարբերաբար տեղափոխվում է մի ծնողից մյուսի բնակության վայր, ինչը երեխայի մոտ հուզական լարվածության զգացում, սեփական կարգավիճակի հետ կապված անորոշության ապրում և ադապտացիոն դժվարություններ է առաջացնում: Ահաիված յուրաքանչյուր դեպքի յուրահատկությունից՝ կարելի է տեխնիկայի կիրառությունը փոքրիկ փոփոխությունների ենթարկել, հարմարեցնել երեխայի իրավիճակին:

Տեխնիկան երեխային հնարավորություն է տալիս կողքից դիտարկել իր և ծնողներից յուրաքանչյուրի հարաբերությունները, նրանց հետ կապված հուզական ապրումները և ծնողների հետ հարաբերություններում երկուստեք ընդունելի վարքաձևերը: Տեխնիկայի կիրառության արդյունքում երեխան հնարավորություն է ստանում վերանայել իր և ծնողների հարաբերությունները, վերագնահատել իր ընկալումներն ու վարքը:

Տեխնիկային կիրառման ընթացքում առաջ են քաշվում հետևյալ կոնկրետ խնդիրները, որոնց շրջանակը, կոնկրետ դեպքի առանձնահատկություններից ելնելով, կարելի է նաև վերանայել.

- ✓ Ընտանիքին և ծնողներին կողքից նայել,
- ✓ Դիտարկել ծնողների հետ հարաբերությունների որակը, նրանցից հուզական կախվածության աստիճանը:
- ✓ Ծնողների նկատմամբ վերաբերմունքի և նրանց հետ հարաբերությունների փոխակերպում:

Անհրաժեշտ պարագաներ՝ 70X50X8 սմ չափերի ավազի սեղան՝ ներսից երկնագույն ներկված, ավազ, փոքրիկ խաղալիքներ.:

Աշխատանքի ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր այցելուի համար անհատական է:

Կիրառման տարիքային սահմանները՝ 8 և ավելի տարեկան:

Աշխատանքի ձևը՝ անհատական:

Աշխատանքի ընթացքը

I փուլ՝ նախնական գրույց, քննարկում:

Բուն աշխատանքը կատարվում է երեխայի հետ, սակայն դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում հոգեբան-փորձագետը նախապես աշխատանք է իրականացնում երեխայի ծնողների հետ՝ օգտագործելով դիտման, գրույցի, թեստերի, ինչպես նաև հոգեբանական փորձաքննություններում օգտագործվող այլ մեթոդներ՝ ըստ նպատակահարմարության:

II փուլ՝ մոտիվացիոն տեխնիկաների կիրառում. Ենթագիտակցական և անգիտակցական ոլորտների ակտիվացում: Ավագե կոմպոզիցիան ստեղծող մարդու համար կարևոր է սեփական սյուժեն կառուցել, ճանաչել ու բացահայտել իր սեփական ներաշխարհը, իր ենթագիտակցականի բովանդակությունը: Շատ կարևոր է, որ հոգեթերապևտը այդ պահին գտնվի այցելուի տարածության մեջ՝ բացառելով իր սեփականը: Զինկելիչ-Եվստիգնեեվան նշում է. «Ավագե կոմպոզիցիայի հեղինակը ինքն իրեն է կերտում և նրա համար կարևոր է գիտակցել, թե զարգացման տվյալ փուլում իր հետ ի՞նչ է կատարվում՝ ինքն ինչի՞ց է վախենում, ինչի՞ վրա է հույս դնում, ի՞նչ ձգտումներ ունի: Ելնելով այս ամենից, հոգեթերապևտի հիմնական խնդիրն է այցելուին հարցնել ավագի հարթության վրա տեղ գտած կերպարների նշանակության, դրանց փոխհամագործակցության մասին: Բոլոր պատասխաններն այցելուն ինքն է գտնում» [1, էջ 203]: Որպեսզի դա տեղի ունենա, անհրաժեշտ է, որ այցելուի ենթագիտակցական ոլորտն ակտիվ լինի: Այս նպատակով այցելուի հետ անցկացվում են մի քանի մոտիվացիոն տեխնիկաներ, որոնց ընտրությունը հոգեբան-փորձագետը կատարում է ելնելով այցելուի խնդրի առանձնահատկություններից և նպատակահարմարությունից: Մոտիվացիոն տեխնիկաներից դեպի կիրառվող հիմնական թերապևտիկ տեխնիկային անցման ժամանակահատվածը խիստ անհատական է և կախված է այցելուի ենթագիտակցական ոլորտի ակտիվացումից:

III փուլ՝ ավագե պատկերի ստեղծում.

Հոգեբանը մոտիվացիոն տեխնիկաների կիրառումից հետո երեխային առաջարկում է հարթեցնել ավագի մակերեսը, այնուհետև ավագի մակերեսին երկու շրջան գծել և երեխային ասում է. «Մրանք հայրիկի և մայրիկի մոլորակներն են, որոնք դու պետք է կենդանացնես, զարդարես ու բնակեցնես: Այդ նպատակով կարող ես օգտվել փոքրիկ խաղալիքների

պահարանից և բնական քարերի սունդուկից»: Երեխային աշխատանքի համար պետք է բավարար ժամանակ տրամադրել:

IV փուլ՝ ավագե պատկերի վերլուծություն.

Երեխային առաջարկվում է հաջորդաբար պատմել երկու մոլորակների մասին: Կարևոր է ուշադրություն դարձնել, թե երեխան ո՞ր մոլորակի մասին է առաջինը պատմում, խոսելիս ի՞նչ հույզեր ու ապրումներ է ունենում, ինչպե՞ս է այդ ամենը արտահայտվում նրա դիմախառնի վրա: Հոգեբանփորձագետի կողմից այցելուին մի շարք հարցեր են տրվում, որոնց միջոցով քննարկվում են ավագի սեղանի մակերեսը, դրա վրա հայտնված կերպարները, նրանց տեղակայումը ավագի սեղանի վրա, նրանց մտքերն ու զգացողությունները:

Հոգեբանը կարող է այցելուին տալ հետևյալ հարցերը.

- ✓ Մոլորակներն իրարից ի՞նչ հեռավորության վրա են գտնվում:
- ✓ Որքա՞ն ժամանակ պետք է թռչել այդ մոլորակները հասնելու համար:
- ✓ Ի՞նչ է կատարվում յուրաքանչյուր մոլորակում:
- ✓ Ինչպիսի՞ կենդանիներ կամ մարդիկ են ապրում յուրաքանչյուր մոլորակի վրա՝ բարի՞, չա՞ր և այլն:
- ✓ Ինչպե՞ս են այդ կենդանիները կամ մարդիկ իրենց զգում յուրաքանչյուր մոլորակի վրա:
- ✓ Ո՞ր մոլորակը դու կթռչեիր սկզբից:
- ✓ Ինչպե՞ս կանվանես մոլորակները:

Ավագա պատկերի վերլուծության փուլը չափազանց կարևոր է, քանի որ ինչպես նշում է Գալինա Էլը. «Այցելուն բարեհաջող կերպով կմտռանա այն, ինչ իրեն ասել է հոգեբանը, բայց կհիշի, թե ինքն ինչ է ասել: Իր զգայությունները վերբալիզացնելով՝ մարդն անցնում է հուզական լարվածության միջով և այդ ճանապարհին կերտում է իր դեմքը: Մենք չենք կարող փոխել իրադարձությունները, բայց մենք կարող ենք փոխել դրանց նկատմամբ մեր վերաբերմունքը: Փոխելով մեզ, մենք փոխում ենք աշխարհը», - նշում է Գալինա Էլը [2, էջ 43]:

Առաջարկվող հարցերի շրջանակը, կախված կոնկրետ դեպքի առանձնահատկություններից, հոգեբանփորձագետի կողմից կարող է նաև վերանայվել:

V փուլ՝ ավագե պատկերի փոխակերպում.

Հարցեր ռեֆլեքսիայի համար.

- ✓ Ո՞րն էր այս աշխատանքում քեզ համար ամենահեշտ և հաճելի պահը:
- ✓ Ո՞րն էր քեզ համար ամենից դժվար պահը:
- ✓ Կա՞ մի բան, որ մոլորակներից յուրաքանչյուրի վրա քեզ դուր չի գալիս:

- ✓ Ի՞նչ կփոխեիր յուրաքանչյուր մոլորակի վրա:
- ✓ Այսօրվա ավագով աշխատանքի փորձից ի՞նչ իմացար:

Դասավորիր, խնդրում եմ, քո ավագե պատկերը, ազատիր ավագի սեղանը այլ ճանապարհորդությունների համար:

Այստեղ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև տեխնիկայի կիրառության մի դեպք: Այցելուն 9 տարեկան տղա է, որի ծնողներն արդեն մեկ տարի գտնվում են ամուսնալուծության գործընթացում: Այդ ընթացքում երեխան բնակվում է մոր հետ, սակայն հայրը ևս բավականաչափ մասնակցություն է ունենում երեխայի դաստիարակության գործին, ներգրավվում է նրա առօրեային: Տղան պարբերաբար հանգստյան օրերը անցկացնում է հոր հետ, բայց բացարձակ չի ցանկանում ընդունել այն փաստը, որ ծնողներն ամուսնալուծվում են և այլևս միասին չեն ապրելու: Հոգեբանին դիմել է երեխայի հայրը: Հոգեբանին դիմելու հայցն էր հասնել նրան, որ տղան ընդունի այն, որ ծնողներն այլևս միասին չեն ապրելու, բայց նրանք շարունակում են իր ծնողները մնալ և ինքը նրանցից յուրաքանչյուրի հետ կարող է հավասարաչափ շփվել և իր առօրյան նրանց հետ կազմակերպել:

Աշխատանքը իրականացվել է «Ես մայրիկի և հայրիկի մոլորակում» տեխնիկայի միջոցով, որի ընթացքում տղայի ընտրած հերոսը սկսեց հոր մոլորակից պարբերաբար տեղափոխվել մոր մոլորակ և հակառակը: Հերոսի հետ կապված ընդհանուր քննարկման հարցերի ընթացքում մոլորակները երբեմն միմյանց մոտեցան ու հեռացան: Մոտ երեք ամիս աշխատելուց հետո փոփոխություններ սկսեցին նկատվել նաև տղայի վարքում և ծնողների հետ իր փոխհարաբերություններում:

Գրականություն

1. Зинкевич-Евстигнеева Т.Д. Игра с песком. Практикум по песочной терапии. СПб.: Речь, 2020. – 256 с.
2. Эль Г.Н. Человек, играющий в песок. Динамичная песочная терапия. СПб.: Речь, 2010. – С.43

ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕНИЯ ОТНОШЕНИЕ РЕБЕНКА К РОДИТЕЛЯМ В ПРОЦЕССЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ НА ПРИМЕРЕ ПРИМЕНЕНИЯ АВТОРСКОЙ МЕТОДИКИ «Я НА ПЛАНЕТЕ МАМЫ И ПАПЫ»

Авагян А.М. (к.пс.н., АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
avagyanani24@aspu.am

Аннотация: Краткое содержание. В статье автор обращается к трудностям психологической диагностики отношения ребенка к родителям и отношения к

нему каждого из родителей при проведении судебно-психологической экспертизы. Отмечается, что такая информация весьма чувствительна с психологической точки зрения и зачастую умело скрывается или не до конца осознается субъектом. В таких случаях, целесообразно использовать проективные методики, которые незаменимы при проведении психологических обследований.

В статье представлена авторская проективная методика «Я на планете матери и отца», особенности ее применения, фазовый процесс и возможные результаты. Подробно представлен круг вопросов, которые можно использовать для диагностики отношения ребенка к родителям. Отмечается, что методику можно использовать в песочной терапии, а при отсутствии такой возможности – и в изотерапии.

Ключевые слова. диагностика, песочная терапия, проекция, вербализация, эмоциональная привязанность.

**THE CHARACTERISTICS OF DETERMINING THE CHILD'S BEHAVIOR
TOWARDS THE PARENTS WITH THE USAGE OF THE AUTHOR'S ORIGINAL
TECHNIQUE "I AM ON THE PLANET OF MOM AND DAD" IN THE PROCESS OF
CONDUCTING A PSYCHOLOGICAL EXPERIMENT**

Avagyan A.M. (Ph.D in Psychology, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)
avagyanani24@aspu.am

Abstract: In the article, the author observes the difficulties of psychological diagnosis of the child's attitude towards his parents and the attitude of each of his parents towards him during forensic psychological examinations. It is mentioned that such information is quite sensitive from a psychological point of view and is often skillfully hidden or not fully realized by the experiment participant. In such cases, it is preferable to use projective techniques, which are indispensable during psychological examinations.

The article represents the author's projective technique "I am on the planet of mother and father", the features of its usage, the phase process and possible results. The range of questions that can be used to diagnose the child's attitude by parents is presented in details. It is mentioned that this technique can be used in sand therapy, and in the absence of such an opportunity, also in isotherapy.

Keywords. diagnosis, sand therapy, projection, verbalization, emotional attachment.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 14.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 20.03.2024*

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԵԼԻԿՎԵՆՏ ՎԱՐՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ավետիսյան Ս.Ս. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
avetisyanmarianna23@aspu.am

Գրիգորյան Ս.Ս. (Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
gsofi3847@gmail.com

Ամփոփագիր. Հոդվածը նվիրված է անչափահասների դելիկվենտ վարքի առանձնահատկությունների ուսումնասիրմանը, որը նպատակ ունի տալ այնպիսի ձևակերպումներ, որն էլ իր հերթին հնարավորություն կտա առավել ճիշտ ձևակերպել դատահոգեբանական փորձաքննության եզրակացությունը՝ կապված ընդհանուր մասի ձևակերպման հետ, որտեղ փորձագետը պետք է նկարագրի մեղադրյալի ընդհանուր հոգեբանական առանձնահատկությունները: Ուսումնասիրության թեման ներկա ժամանակներում հատկապես արդիական է, քանի որ աշխարհում տեղի են ունենում բազմաթիվ սոցիալական, տնտեսական փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում դեռահասների վարքի վրա, որը նպաստում է անչափահասների դելիկվենտ վարքի դրսևորմանը: Հոդվածում ուսումնասիրվել և ներկայացվել է անչափահասների դելիկվենտ վարքի վերաբերյալ գիտական մոտեցումները, վիճակագրական տվյալները Հայաստանի Հանրապետությունում, դելիկվենտ վարքի սահմանումը, առաջացման պատճառները, հանցավոր վարքի ձևավորման դինամիկան: Հոդվածում ներկայացված է նաև դեպքի նկարագրություն՝ քեյս, որտեղ վերլուծված է անչափահասի դելիկվենտ վարքի ձևավորման ընթացքը, պատճառները, որը նույնպես կարող է նախադեպ հանդիսանալ, թե ինչպես կարելի է անչափահասների դատահոգեբանական փորձաքննության եզրակացության ընդհանուր մասում վերլուծել մեղադրյալի հանցագործության հոգեբանական նկարագիրը:

Հիմնաբառեր. դելիկվենտ վարք, փորձաքննություն, պատճառականություն, գործոններ, հանցածին վարքի դիրքորոշում, հանցավորության դինամիկա:

Անչափահասների կողմից իրականացվող հանցագործությունները իրենց իրականացման եղանակով, ընթացքով և հանցագործության ձևավորման և ազդման գործոններով իրենցից որոշակի յուրահատկություն է ներկայացնում: Այսօր աշխարհում ըստ վիճակագրական տվյալների օր օրի ավելանում են հանցագործությունները, որոնք իրականացվում են անչափահասների կողմից: Աշխարհում տիրող սոցիալ-քաղաքական,

տնտեսական փոփոխությունները նոր մարտահրավեր է հասարակության համար, որի հանդեպ ավելի զգայուն են հատկապես անչափահասները: Նրանք ավելի խոցելի են և դժվար են հաղթահարում բացասական երևույթները, ուստի այս հիմնախնդրի ուսումնասիրությունը այսօր առավել քան արդիական է և պետք է ընդգրկի ինչպես հոգեբանության, այնպես էլ մանկավարժության բնագավառները:

Ըստ վիճակագրական տվյալների Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության 100.000 բնակչության հարաբերակցությամբ գործակիցների համեմատությունը, հնարավորություն է տալիս դիտարկելու, որ 1993 թ.-ի համեմատությամբ 2016 թ.-ին անչափահասների հանցավորությունը աճել է՝ 11.7-ից դառնալով 12.6: Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը, ըստ Հավելված N 1-ի, ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշման ռազմավարական ծրագրի 10-րդ կետում նշվում է, որի անչափահասների հանցագործությունների կանխարգելումը ռազմավարական հիմնախնդիր է, որը իրենից ենթադրում է անչափահասների կողմից կատարված իրավախախտումների պատժառոնների ու պայմանների ուսումնասիրումը և բացահայտումը, ինչպես նաև կանգարգելից աշխատանքների մշակումը [2, էջ 11-14]:

Հիմնախնդրի արդիականությունից ելնելով նպատակ ենք դրել ուսումնասիրել ուսումնասիրել դելիկվենտ վարքի առանձնահատկությունները անչափահասների շրջանում, որը հնարավորություն կտա մեզ խնդրին անդրախառնալ ոչ միայն լոկալ, այլ նաև ընդհանուր պատկերացում կտա անչափահասների բնութագրական վարքային առանձնահատկությունների վերաբերյալ: Վերջինս էլ հնարավորություն կտա փորձագետներին հոգեբանական տեսանկյունից ճիշտ տեղեկատվություն ներկայացնել և լուսաբանել խնդիրը հանրությանը, իրավապահ մարմիններին և դատական գործընթացի մյուս մասնակիցներին: Հիմնախնդրին անդրադարձել են Ս.Ջ. Արզումանյանը, Յ. Անտոնյանը, Մ.Ի. Ենիկենը, Վ.Ֆ. Պիրոժկովը, Յ.Վ. Չուֆարովսկին և այլ հեղինակներ:

Նախքան անչափահասների դելիկվենտ վարքի առանձնահատկություններին անդրադառնալը, ներկայացնենք թե իրենից ինչ է ներկայացնում դելիկվենտ վարքը, այնուհետև անդրադարձ կկատարենք հեղինակների կողմից առաջ քաշված մոտեցումներին:

Դելիկվենտ վարքը ընդգրկում է անձի գործողությունները, որոնք շեղվում են հասարակությունից և տվյալ պահին հաստատված օրենքներից, որոնք բացասաբար են անդրադառնում այլ մարդկանց բարեկեցությանը կամ հակասում են հասարակական կարգին և քրեորեն պատժելի են [8, էջ 84]:

Բազմաթիվ հեղինակներ, ուսումնասիրելով դելիկվենտ վարքի առաջացման պատճառները, առաջ են քաշել տարբեր մտեցումներ: Սոցիոլոգ Է. Դյուրկհեյմը իր տեսական մտեցումներում ընդգծում է, որ կոլեկտիվ կարգի խախտումը, սոցիալական զարգացման անկայունությունը, նորմատիվ համակարգերի քայքայումը մարդկանց ապակոդմնորոշում են, ինչը մեծապես նպաստում է սոցիալական շեղումների և, մասնավորապես, հանցավորության տարբեր ձևերի մակարդակի բարձրացմանը: Հանցագործության մակարդակը զգալիորեն ցածր է այն հասարակություններում, որտեղ կա սոցիալական համերաշխություն և համախմբվածություն: Երբ կործանվում է հասարակության միասնությունը և ձևավորվում է անոմիա, հանցագործությունը և շեղումների, դելիկվենտության մյուս տեսակները զգալիորեն աճում են: Այսինքն, սոցիալական ինստիտուտները համարվում են գործոններ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում հանցագործությունների տարբեր տեսակների դրսևորման և արագ աճի վրա: Սոցիալական զարգացման որոշակի ժամանակահատվածներում ստեղծվում է իրավիճակ, երբ նորմատիվ կարգավորման ուժը կա՛մ բացակայում է, կա՛մ կտրուկ նվազում է: Նման դեպքերում կարող են չկիրառվել սովորական կանոնները, որոնք զսպում են անհատներին սոցիալապես անընդունելի գործողություններ կատարելուց: Սինոմիան նորմերի ու արժեքների համընկնման պայման է, իսկ դրանց ապակարգավորման ու նորմերի բացակայության երեւույթը անոմիա է: Հետեւաբար, լայն իմաստով անոմիան վիճակ է հասարակության, որտեղ խախտվում է անհատների և սոցիալական խմբերի վարքագծի նորմատիվ կարգավորումը, քանի որ նախկինում ընդհանուր ընդունված նորմերը, օրենքները և մշակութային արժեքները կամ չեն համապատասխանում նորերին, կամ նորերը դեռ հասանելի չեն [7, էջ 93-98]:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը դելիկվենտ վարքի ձևավորման հիմնական պատճառը համարում է սոցիալական միջավայրը, միջավայրում տիրող անկարգությունները, այսինքն անոմիան համարվում է դելիկվենտ վարքի ձևավորման հիմնական գործոն ըստ Է. Դյուրկհեյմի:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Արզումանյանը, ով մեծ ներդրում ունի Հայաստանում հոգեբանական մտքի զարգացման մեջ, նշում է Արտասահմանյան հոգեբանության մեջ, իրավախախտ դեռահասների վարքը անվանում են դելիկվենտ վարք, որը ոչ էական իրավախախտումների, մեղքերի, սխալ արարքների համակարգ է և դիտանտ կամ շեղվող վարքի տարատեսակ է, որ պայմանավորված է հանցածին վարքի դիրքորոշմամբ, որն էլ իր հերթին ձևավորում է տարբեր տեսակի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից բացրձիթողությամբ, անդաստիարակվածությամբ, հոգեկան անոմալիաներով, աֆեկտիվ հակազդումների հակվածությամբ [1, էջ 200]:

Այստեղից տեսնում ենք, որ դելիվվենտ վարքը իրենից ներկայացնում է դևիանտ վարքի տեսակ և իր մեջ ներառում է արարքներ, որոնք ի հայտ են գալիս սխալ դաստիարակության, որոշակի հոգեբանական խնդիրների դեպքում:

Հ.գ.դ., պրոֆեսոր Ս. Արզումանյանը նշում է, որ հացագործները մանկական կամ անչափահաս տարիքում ձեռք են բերում ասոցիալ կամ քրեաձիվ վարքի դիրքորոշում, քանի որ այս տարիքում նրանք ընկալունակ են բացասական ներգործությունների նկատմամբ: Այնուհետև պրոֆիլակտիկայի բացակայության պատճառով քրեաձիվ դիրքորոշումները ամրակայվում են անչափահասի անձնական փորձի հիման վրա և տեղի է ունենում քրեականացում: Քանի որ անձի արարքները չեն պատժվում և իր արարքների համար նա դրական հակազդում է ստանում, այս երևույթը ևս նպաստում է նրա մոտ տվյալ վարքագծի ամրապնդմանը [1, էջ 195]:

Քրեագետ, կրիմինոլոգ Յ.Վ. Չուփարովսկին հետևյալ կերպ է մեկնաբանում հանցագործի անձը, որը սոցիալ-հոգեբանական հատկությունների ամբողջություն է, որը որոշակի իրավիճակային հանգամանքներում և նույնիսկ դրանցից դուրս հանգեցնում է հանցագործության կատարմանը [9, էջ 36]: Հեղինակը ընդգծում է, որ անչափահասների շրջանում հանցագործությունները ունեն մեծ արդիականություն, դրանք շատ յուրահատուկ են ներկայումս և ներկա իրավիճակից է կախված ապագայում կատարվող հանցագործությունների տենդենցը: Հանցագործության այս տեսակը ներառում է հանցավոր արարքները, որոնք կատարվել են 14-ից 18 տարեկան անձի կողմից, վերջին տարիներին հանցագործությունների այս տեսակում նկատվում է երիտասարդացում, 14-15 տարեկան անչափահասները ավելի ակտիվ են և արագ աճ է նկատվում, քան 16-17 տարեկան անչափահասների շրջանում: Հանցագործությունների 3/4-ը խմբային են և բաժանվում են երեք տեսակի՝

- ✓ գողություն (65%)
- ✓ կողոպուտ (9-10%)
- ✓ խուլիգանություն (8%)
- ✓ մտածված սպանությունները, մտածված միտումնավոր առողջությանը վնաս հասցնելը, բռնությունները կազմում է յուրաքանչյուր տեսակում 1%

- ✓ Ներկայումս ի հայտ են եկել նոր հանցագործությունների տեսակներ՝ պատանդ վերցնելը, շորթումը, արժույթային խարդախությունը, համակարգչային հանցագործությունները, զենքի և թմրանյութերի վաճառքները և այլ տեսակներ

- ✓ Նկատվում է բարդ խմբային հանցագործություններ (մոտ 65%) [9, էջ 87]:

Այսպիսով, Յ.Վ. Չուփարովակին ուսումնասիրելով հանցագործի անձը, անչափահասների շրջանում հանցագործությունների առանձնահատկությունները, հանգում է հետևյալ եզրակացության, որ դեռահասները արդեն իսկ ավելի վաղ տարիքում են կատարում հանցագործություններ, քան նախկինում, ավելի շատ են խմբային հանցագործությունները, որոնց իրենց ձևավորման յուրահատուկ, և տվյալ տարիքին բնորոշ մեխանիզմներ ունեն

Հոգեբանական գիտությունների դոկտոր Ե.Վ. Չմանովսկայան կարծում է, որ հանցավոր վարքագիծը ենթադրում է ոչ միայն զանցանք և հանցագործություն, այլև այլ իրավախախտումներ: Համաձայն այս սահմանման, հանցավոր վարքագիծը որոշակի գործողություններն են, որոնք շեղվում են տվյալ հասարակությունում և տվյալ պահին հաստատված օրենքներից, որոնք սպառնում են այլ մարդկանց բարեկեցությանը կամ հասարակական կարգին և քրեորեն պատժվող ծայրահեղ դրսևորումներով [6, էջ 99, 4]:

Ամփոփելով վերոգրյալ հեղինակների մոտեցումները, կարող ենք ասել, որ ընտանիքը որպես առաջնային սոցիալականացման միջավայր իր ազդեցությունն է ունենում անչափահասների վարքի վրա: Մեծ հետաքրքրություն է իրենից ներկայացնում ոչ լիարժեք ընտանիքների ազդեցությունը անչափահասների դելիկվենտ վարքի ձևավորման վրա: Նշվում է, որ եթե ծնողներից մեկը, կամ երկուսը վարում են ոչ հասարակական վարք, ապա անհրաժեշտ է դեռահասին հեռու պահել այդ միջավայրից:

Դպրոցը և դպրոցական խմբերը ևս ունեն իրենց բացասական ազդեցությունը անչափահասների դելիկվենտ վարքի վրա, այսպես օրինակ, աշակերտական խմբերը, ովքեր չեն սովորում, հաճախ այս խմբերում են ձևավորվում լուրջ իրավախախտումները:

Անչափահաս հանցագործների դրդապատճառային ոլորտի ուսումնասիրման մեջ մեծ է Յ. Անտոնյանի ներդրումը, ով մեծ ուշադրություն է դարձնում դրդապատճառներին ոլորտին, և առանձնացնում է հետևյալ դրդապատճառները՝

- ✓ Եսասիրական դրդապատճառները
- ✓ նախանձը
- ✓ ձգտում դեպի ինքնահաստատման
- ✓ ինքն իրեն ապացուցելը
- ✓ հաղթահարել թերարժեքության զգացումը
- ✓ հեղինակություն ձեռք բերել շրջապատում
- ✓ Ֆիզիոլոգիական պահանջումների բավարարում [3, էջ 181-190]:

Կարևորություն է նաև անդրադառնալ Մ.Ի. Ենիկենի մոտեցմանը, ով առանձնացնում է դեռահասության տարիքին բնորոշ վարքային հետևյալ կարծրատիպերը.

✓ **Ընդդիմության արձագանքը.** Դա պայմանավորված է դեռահասի գործունեության և վարքագծի նկատմամբ ավելորդ պահանջներով, անհարկի սահմանափակումներով և շրջապատող մեծահասակների կողմից նրա շահերի նկատմամբ անուշադրությամբ: Այս ռեակցիաները դրսևորվում են ուսումնառության, հարբած վիճակում դրսևորելու, տնից փախչելու և երբեմն հակասոցիալական գործողությունների մեջ:

✓ **Իմիտացիոն ռեակցիա.** Դրսևորվում է անձի կամ մոդելի նմանակմամբ: Երբեմն հակասոցիալական «հերոսը» կարող է մոդել դառնալ: Հայտնի է, թե ինչ ազդեցություն ունի «հանցագործ գերմարդու» վեհացումը անչափահասների հանցագործության վրա: Դետեկտիվ «գրականության» վերջին նորաձևությունը կարող է անուղղակի բացասական ազդեցություն ունենալ դեռահասի ինքնագիտակցության վրա:

✓ **Բացասական իմիտացիա.** արձագանքը վարքագիծ է, որը միտումնավոր հակադրվում է պարտադրված «մոդելին»:

✓ **Փոխհատուցման ռեակցիա.** մեկ ոլորտում ձախողումների լրացում մեկ այլ ոլորտում ընդգծված հաջողությամբ: (Ուսումնական ձախողումները կարող են փոխհատուցվել «համարձակ» վարքագծով):

✓ **Գերփոխհատուցման ռեակցիա.** գործունեության ամենադժվար ոլորտում հաջողության հասնելու համառ ցանկություն է: Դեռահասի ներհատուկ ամաչկոտությունը կարող է դրդել նրան գործել հուսահատ և արհամարհական ձևով: Չափազանց զգայուն և ամաչկոտ դեռահասն ընտրում է տղամարդկային սպորտ (բոնցքամարտ, կարատե և այլն):

✓ **Էմանսիպացիոն ռեակցիա.** մեծերի մոլուցքային խնամակալությունից ազատվելու և ինքնահաստատվելու ցանկությունն է: Ծայրահեղ դրսևորումը չափանիշների, ընդհանուր ընդունված արժեքների, օրենքի նորմերի ժխտումն է:

✓ **Խմբավորման ռեակցիա.** հասակակիցների խմբերին միանալու ցանկությունն է: Դեռահասների խմբերն առանձնանում են իրենց միատարր կողմնորոշմամբ, տարածքային ընդհանրությամբ, իրենց տարածքում գերիշխանության համար պայքարով (բակում, իրենց փողոցում) և պարզունակ սիմվոլիզմով (մականուններ և այլն): Խմբի արձագանքը մեծապես բացատրում է այն փաստը, որ հանցագործությունների ճնշող մեծամասնությունը կատարվում է դեռահասների կողմից՝ որպես խմբի մաս:

Հասարակության ապագա անդամի ձևավորումը մեծապես կախված է նրանից, թե ինչ սոցիալական օրինաչափություններ, կադապարներ, նորմեր, վերաբերմունք և սպասումներ է հանդիպում դեռահասը: Այդ իսկ

պատճառով հասարակության համար շատ կարևոր է լիարժեք ուշադրություն դարձնել դեռահասի կյանքին [5, էջ 311-315]:

Մ.Բ. Ենիկեյեվի կողմից առանձնացված այս կարծրատիպերի դուրս բերումը հնարավորություն է տալիս հասկանալ հանցավոր վարքի ձևավորման որոշ պատճառներ, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս դրանք կանխարգելման հնարավոր ուղիներ մշակել:

Անչափահասների դելիկվենտ վարքի ձևավորման գործընթացում կարևորագույն խնդիրներից են սոցիալ-տնտեսական գործոնների ուսումնասիրումը, դրա ազդեցությունը դեռահասի ասոցիալ վարքի վրա: Այստեղ կարևոր է ուսումնասիրել դեռահասի առաջնային սոցիալականացման միջավայրը՝ ընտանիք, դպրոց և այլ: Կանխարգելման լավագույն ուղիներից են նաև կրթությունը, դաստիարակությունը, մասնագիտական ուղին և կրոնը: Ըստ Յ. Անտոնյանի եկեղեցին բարոյական դաստիարակությունը ճանապարհ է: Ցանկացած կրոնի սուրբ տեքստերում, ինչպիսիք են Ղուրանը և Աստվածաշունչը, կան դրույթներ, որոնք կոչ են անում ինչպես բռնության, այնպես էլ բարության, սիրո և բարյականության [3, էջ 196]:

Հիմնվելով նշված հեղինակների հիմնավորումների վրա՝ կարող ենք ներկայացնել ցանկացած անչափահաս իրավախախտի հանցագործ դառնալու դինամիկան և կիրառել դատահոգեբանական փորձաքննության եզրակացության մեջ, հիմնավոր դարձնելով մեր մտահանգումները: Օրինակ՝ հիմնվելով Մ. Արզումանյանի հանցածին վարքի դիրքորոշման տեսության վրա, կարող ենք հիմնավորել, թե ինչպես է տեղի ունեցել անչափահասի քրեականացման գործընթացը, կարող ենք ուսումնասիրել սոցիալական այն օղակը, որը վճռորոշ դեր է կատարել անձի քրեականացման ճանապարհին:

Այժմ ներկայացնենք անչափահաս հանցագործության մեկ քեյս դեպքի օրինակ, որտեղ կդիտարկենք նաև հանցավորության ձևավորման կոնկրետ պատճառ:

Ա.-ն առաջին անգամ հայտնվել է անչափահասների քրեակատարողական հիմնարկում գողություն կատարելու համար, սակայն քանի որ այնտեղ կատարել է որոշ իրավախախտ գործողություններ, նրա ժամկետը երկարացրել են, որից հետո նրան տեղափոխել են նաև մեծերի համար նախատեսված կալանավայր: Ա.ի հետ զրույցի ժամանակ նա պատմեց, որ կալանավայրում ինքնասիրությունը, ինքնահարգանքը պահպանելու նպատակով է կատարել այդ իրավախախտ գործողությունները: Սակայն այս աշխատանքում նպատակահարմար ենք համարում քննարկել, թե ինչպես Ա.ն հայտնվեց անչափահասների քրեակատարողական հիմնարկում: Ա.ն պատմում էր, որ իր ծնողները աշխատում էին առավոտվանից մինչև երեկո, իսկ ինքնը իր եղբոր հետ մեծանում էր գրեթե փողոցում, բակում երբեմն հաց էին ուտում ընկերների

տանը, երբեմն կարող էին խանութից որոշ ուտելիքներ գողանալ, որ սնվեն: Մի քանի անգամ գողություն անելուց հետո և չպատժվելու արդյունքում Ա.ն իր ընկերների ազդեցության տակ պլանավորում է տարբեր գողություններ, բնակարաններից, առանձնատներից, և օրերից մի օր հայտնվում ոստիկանությունում: Ա.ն պատմում էր, որ չկար մեկը իր շրջապատում, որ իրեն ասեր, բացատրեր, թե ինչ հետևանքներ կարող էր դա ունենալ: Դպրոց նույնպես չէր հաճախում, շատ էր բացակայում, իսկ մայրը զբաղվածության պատճառով չէր հետքերը տղաների ուսուցմամբ, միակ բանը Ա.ի կարծիքով, որ ինքը կարողացավ անել դա նա էր, որ պաշտպանեց եղբորը և չնշեց, որ եղբայրը նույնպես հանցավոր մասնակցություն ունի այդ գողություններում: Մեր կարծիքով այս դեպքում անչափահասի հանցավոր վարքի ձևավորման պատճառը մանկավարժական բարձրորդությունն է ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատության կողմից: Եթե այս երկու օղակները դաստիարակելին բարոյական նորմեր, իրավագիտակցություն, ապա կարծում ենք, որ Ա.ն գուցե չընտրեր այդ ուղին, Ա.ն դարձել էր կրկնահանցագործ, դանակահարել էր մեկ այլ կալանավորի և արդյունքում կալանավայրում անցկացրել 10 տարի: Իսկ դուրս գալուց հետո էլ երկար ժամանակ չէր կարողանում ադապտացվել սոցիումին:

Այսպիսով, դատաւիճակային փորձաքննության եզրակացության ընդհանուր մասում, որտեղ մենք ներկայացնում ենք ընդհանուր տեղեկություններ մեղադրյալի վերաբերյալ, ներկայացնում ենք նաև այն գործոնները, որոնք ազդել են անձի հոգեկանի ձևավորման վրա և նպաստել հանցավոր վարքի առաջացմանը: Մեր ներկայացված օրինակը ցույց է տալիս ինչպիսի մեծ դեր ունի սոցիալական միջավայրը, ընտանիքը, դպրոցը որոնք առաջնային սոցիալականացման միջավայրեր են և իրենց բացասական ազդեցությունն են ունենում անձի ձևավորման գործում:

Գրականություն

1. Արզումանյան Ս. Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: Դասագիրք բուհերի համար: Եր., Զանգակ-97, 2004. – 32 էջ:
2. Մարգարյան Ա.Ռ. Անչափահասների հանցավորության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում/; ԵՊՀ - Եր.: – Հայրապետ հրատ., 2017 – 256 էջ:
3. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. – М.: «Логос», 2004. – 448 с.
4. Гартвик Е. В. Психологические факторы делинквентного поведения подростков, Научно-практическая статья, 2021. DOI: 10. 24412/1999-6241-2021-3-86-283-291
5. Еникеев М.И. Юридическая психология. С основами общей и социальной психологии: Учебник для вузов. – М.: Норма, 2005. — 640 с:

6. Змановская Е.В., Рыбников В.Ю. Девиантное поведение личности и группы : учебное пособие. СПб., 2017. – 352 с.
7. Комлев Ю.Ю. Теории девиантного поведения: учебное пособие /Ю.Ю. Комлев. – 2-е изд., испр. и доп. – СПб.: Изд. дом АЛЕФ-ПРЕСС, 2014. – 222 с.
8. Петровский А., Ярошевский М. Краткий психологический словарь /Ростов н/Д, 1999.
9. Чуфаровский Ю.В. Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – Москва: Проспект, 2023. – 144 с.

ОСОБЕННОСТИ ДЕЛИНКВЕНТНОГО ПОВЕДЕНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В ПРОЦЕССЕ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Аветисян М.С. (к.пс.н., доцент, АГПУ имени Х. Абовяна, Ереван, РА)

avetisyanmarianna23@aspu.am

Григорян С.С. (АГПУ имени Х. Абовяна, Ереван, РА)

gsofi3847@gmail.com

Аннотация: Статья посвящена изучению особенностей делинквентного поведения несовершеннолетних, целью которого является дать такие формулировки, которые в свою очередь позволят более правильно сформулировать заключение судебно-психологической экспертизы, в связи с формулировкой общей части, где эксперт должен описать общие психологические характеристики обвиняемого. Тема исследования особенно актуальна в настоящее время, поскольку в мире происходит множество социальных и экономических изменений, которые оказывают влияние на поведение подростков, что способствует проявлению несовершеннолетнего делинквентного поведения. В статье изучены и представлены научные подходы к делинквентному поведению несовершеннолетних, статистические данные в Республике Армения, определение делинквентного поведения, причины возникновения, динамика формирования преступного поведения. Также в статье представлено описание дела, в котором анализируется процесс формирования делинквентного поведения несовершеннолетнего, причины, что также может служить прецедентом для анализа психологического профиля преступления обвиняемого. в общей части заключения судебно-психологической экспертизы несовершеннолетних.

Ключевые слова: делинквентное поведение, экспертиза, причинность, факторы, установка преступного поведения, динамика преступности.

CHARACTERISTICS OF JUVENILE DELINQUENT BEHAVIOR IN THE PROCESS OF FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATION

Avetisyan M.S. (Ph.D in Psychology, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)

avetisyanmarianna23@aspu.am

Grigoryan S.S. (Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)

gsofi3847@gmail.com

Abstract: The article is devoted to the study of the characteristics of delinquent behavior of minors, which aims to give such formulations, which in turn will enable the more correct formulation of the conclusion of the forensic psychological examination, in connection with the formulation of the general part, where the expert must describe the general psychological characteristics of the accused. The topic of study is especially relevant in the present time, because many social and economic changes are taking place in the world, which have an impact on the behavior of adolescents, which contributes to the manifestation of juvenile delinquent behavior. The article studied and presented the scientific approaches to delinquent behavior of minors, statistical data in the Republic of Armenia, the definition of delinquent behavior, the causes of occurrence, the dynamics of criminal behavior formation. The article also presents a description of the case, a case where the process of the formation of the delinquent behavior of a minor, the reasons, is analyzed, which can also be a precedent for how the psychological profile of the accused's crime can be analyzed in the general part of the conclusion of the forensic psychological examination of minors.

Keywords: delinquent behavior, expertise, causality, factors, position of criminal behavior, crime dynamics.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 12.01.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 02.02.2024

**ՀԱՄԱԼԻՐ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱ-ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գասպարյան Խ.Վ. (հ.գ.թ. դոցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)
kvgaspar@yahoo.com

Մաթևոսյան Եվ.Ս. (Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)
jenyamatevosyan@mail.ru

Ամփոփագիր. Հողվածում ներկայացված է պոլիգրաֆի կիրառմամբ հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրությունների գիտական հիմքը: Համալիր դատահոգեբանական փորձաքննությունը զգալիորեն բարձրացնում է փորձաքննությունների ապացուցողական նշանակությունը՝ համեմատած առանձին հոգեբանական կամ հոգեֆիզիոլոգիական փորձաքննությունների հետ: Դիտարկվում են դատահոգեբանական և դատա-հոգեֆիզիոլոգիական փորձաքննության կիրառման հնարավորությունները նրանց վերլուծությունների հուսալիության հիման վրա:

Պոլիգրաֆիկ հոգեֆիզիոլոգիական հետազոտության նորույթը ներկայումս ՀՀ-ում զարգացող պոլիգրաֆիկ թեստավորումների կիրառումն է կադրերի ընտրության հարցում, ինչպես նաև համալիր դատահոգեբանական փորձաքննության միջոցով դեպքերի բացահայտմանն ուղղված փորձաքննությունների անցկացումը: Պոլիգրաֆի կիրառմամբ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել անձի կողմից թաքնված տեղեկությունը՝ հիմնված ֆիզիոլոգիական ռեակցիաների վրա, որոնք մարդը գիտակցորեն չի կարող ղեկավարել: Որոշակի իրավիճակներում այդ ռեակցիաները առաջանում են ինքնաբերաբար՝ անկախ մարդու ցանկությունից: Պոլիգրաֆի միջոցով հստակ արտացոլվում են մարդու ամենաաննշան հուզական վիճակների փոփոխությունները, որոնք վկայում են անձի համար հարցի նշանակալիության վերաբերյալ: Մարդու հոգեֆիզիոլոգիական ռեակցիաները ունեն բարդ բնույթ, իսկ նրա ուսումնասիրությունը անձի կողմից ներկայացվող հավաստիության վերաբերյալ ենթադրում է միաժամանակ մի քանի գիտելիքների իմացություն տարբեր ոլորտներից՝ հոգեբանություն, ֆիզիոլոգիա և կրիմինալիստիկա: Եվ այս ոլորտների համալիր մոտեցումը կարող է հանգեցնել ստացված տվյալների առավել օբյեկտիվության:

Հիմնաբառեր. դատահոգեբանական փորձաքննություն, պոլիգրաֆ, հոգեֆիզիոլոգիա, Վեգետատիվ նյարդային համակարգ (ՎՆՀ):

Վերջին տասնամյակների ընթացքում պոլիգրաֆի միջոցով ստուգումները հանարավորություն են ընձեռնել կուսակետի մեծաքանակ

Էմպիրիկ նյութ, որը վկայում է պոլիգրաֆի գործածման անհրաժեշտության և արդյունավետության մասին: Մինևույն ժամանակ դեռևս շարունակվում են պոլիգրաֆի կիրառմանն ուղված քննարկումները և վեճերը: ՀՀ-ում պոլիգրաֆիկ-հոգեֆիզիոլոգիական հետազոտությունը գործածվում է 1997թթ ինչպես ազգային անվտանգության ծառայության, այնպես էլ արդարադատության նախարարության շրջանակներում:

Պոլիգրաֆի կիրառումը նոր թափ է ստանում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ՀՀ պետական, խոշոր և միջին ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որտեղ սարքի միջոցով իրականացվում են անկախ կադրային աուդիտ և հոգեբանական անվտանգության ապահովում: Վերջին տարիներին ՀՀ-ում լայնորեն զարգանում է պոլիգրաֆի գործունեությունը կադրերի ընտրության շրջանակներում, երբ «սքրինինգային» հետազոտության նպատակը կոմպետենտ, հուսալի և լոյալ աշխատակիցների ընտրությունն է, ինչպես նաև առանձին դեպքերի, չարաշահումների բացահայտումը:

Սուտը սոցիալական երևույթ է, մարդկային էության անբաժան մասը: Ն. Բեխտերևան նշում է՝ մարդու գլխի ճակատային հատվածներում կան հատուկ նեյրոններ, որոնք կողավորում են սուտը որպես սխալ և վերափոխում մարդու վարքը: Վախ, զզվանք, ուրախություն հույզերն առաջանում են ավելի վաղ, նախքան գիտակցելը [5]:

Համալիր դատահոգեբանա-հոգեֆիզիոլոգիական փորձաքննության միջոցով հնարավորություն է ստեղծվում բացահայտել հետևյալ խնդիրները.

✓ խաղամոլություն, թմրամոլություն, կախյալությանն առնչվող այլ դրսևորումներ

✓ կոնֆիդենցիալ ինֆորմացիայի արտահոսք,

✓ թշնամի երկրների հետ համագործակցություն,

✓ խմբակային հանցագործությունների,

✓ կոռուպցիոն ռիսկեր, նախկինում կատարած անօրինական գործողություններ,

✓ դեռահասների նկատմամբ սեռական բռնություն,

✓ խնդրահարույց իրավիճակների փորձագիտական հետազոտություն

[1]:

Ամերիկյան դատահոգեբանական պրակտիկայում դիտարկվում է պոլիգրաֆի հետազոտությունը որպես հետազոտության անկախ տեսակ: Որքան էլ որ հակասական է թվում, նման բարձր գիտական կարգավիճակ և պոլիգրաֆիկ մեթոդիկաների կիրառման մեծ փորձը ունեցող երկրում այնքան էլ զարգացած չեն ստի հայտնաբերման հոգեֆիզիոլոգիական մեթոդների բնական գիտական հիմքերը: Այնուամենայնիվ, ամերիկյան դատական փորձագետների կողմից հոգեֆիզիոլոգիական փորձաքննությունը վերածվել է դատահոգեբանական անկախ ճյուղի և

հնարավորություն տվել ոչ միայն «ստի հայտնաբերման» պոլիգրաֆիկ հոգեֆիզիոլոգիական մեթոդների կիրառման, այլ նաև իրավական պրակտիկայում այլ հոգեֆիզիոլոգիական մեթոդների կիրառման համար [5]:

Համալիր է համարվում այն դատական փորձաքննությունը, որտեղ մասնակցում են տարբեր ոլորտների մասնագետներ:

Մինչ այժմ պոլիգրաֆի կիրառման մասնագիտական ասոցիացիաներում, ովքեր զբաղվում են պոլիգրաֆի կիրառմամբ դատա-հոգեֆիզիոլոգիական փորձաքննությամբ, չկա մեկ ընդհանուր կարծիք փորձաքննության օբյեկտի և առարկայի վերաբերյալ: Կարելի է նշել այս խնդրի լուծման երկու մրցակից մոտեցումների մասին: Համաձայն առաջին մոտեցման՝ դատահոգեբանական փորձաքննության օբյեկտ է հանդիսանում մարդու հիշողությունը՝ որպես նախկին փորձի ինֆորմացիայի նյութական կրող: Իսկ հետազոտության ընթացքում ստացվող ֆիզիոլոգիական ռեակցիաները հանդես են գալիս ոչ թե որպես հետազոտության օբյեկտ, այլ հիշողության պրոցեսների վիզուալիզացիա, ինչպես նաև վերահսկվում է փորձաքննվողի հոգեկան ակտիվությունը, մասնավորապես, որոշվում է հետազոտվողի համապատասխանությունը պոլիգրաֆի կիրառմամբ թեստավորմանը մասնակցելուն: Ըստ Շիպչինի դատահոգեբանական-հոգեֆիզիոլոգիական հետազոտության առարկան կոնկրետ անձի հիշողությունում առկա կամ բացակա այն ինֆորմացիան է, որը քննության կամ դատարանի համար կարևոր նշանակություն կարող է ունենալ [1, 8, 10, 11]: Ըստ մեկ այլ մոտեցման՝ հոգեֆիզիոլոգիական հետազոտության օբյեկտ է հանդիսանում հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական դրսևորումները՝ կապված ընկալման, պահպանման, հետագայում անձի կողմից որևէ իրավիճակի ինֆորմացիայի վերարտադրման հետ: Ընդ որում հետազոտության օբյեկտը կարող է հանդիսանել ինչպես հետազոտվող անձը, այնպես էլ դեպքի նյութերը, իրեղեն ապացույցները: Որպես օբյեկտ է հանդիսանում հոգեկան գործընթացների հիման վրա այն ֆիզիոլոգիական փոփոխությունները, որոնք կապված են ընկալման, հիշողության հետ [7, էջ 125]:

Ֆիզիոլոգիական կայուն ռեակցիաները հստակորեն որոշում են փորձաքննվողի հիշողության մեջ առկա կամ բացակա դեպքի հետ առնչություն ունեցող ինֆորմացիան: Երբ մեր ուղեղը որևէ արտաքին ազդեցություն (հարց) ընդունում է որպես վտանգ, որի բացահայտման դեպքում անձը կարող է ենթարկվել պատասխանատվության, օրգանիզմում ակտիվանում են անհանգստության, վախի հույզեր: Արտագատվում է մեծ քանակությամբ ադրենալին, որը ակտիվացնում է համապատասխան ֆիզիոլոգիական փոփոխություններ:

Համալիր դատահոգեբանա-հոգեֆիզիոլոգիական փորձաքննությունը կոչված է լուծելու հետևյալ խնդիրները՝

✓ Ուսումնասիրել ճանաչողական գործընթացների առանձնահատկությունները (ընկալում, հիշողություն, մտածողություն)

✓ Իրականացնել անհատական հոգեբանական բնութագրերի ախտորոշում

✓ Իրականացնել փորձաքննվողի հուզական վիճակների ախտորոշում

✓ Բացահայտել անձի հետաքննությանը հետաքրքրող տեղեկատվությունը (վարքի մեջ՝ վերբալ և ոչ վերբալ մակարդակներում, հուզական վիճակներում)

✓ Բացահայտել անձի հետաքննությանը հետաքրքրող տեղեկատվությունը հոգեֆիզիոլոգիական և ֆիզիոլոգիական ռեակցիաների մակարդակներում:

Առաջին 4 դրույթները վերաբերում են հոգեբան փորձագետին, իսկ վերջինը՝ պոլիգրաֆի փորձագետին [1, 2]:

Ինչպես գիտենք, պոլիգրաֆի հիմքում ընկած է մարդու վեգետատիվ նյարդային համակարգը, որը գրտակցորեն վերահսկել կամ փոփոխության ենթարկել գրեթե անհնար է: Անհնար է սրտին հրամայել արագ կամ դանդաղ աշխատել, թոքերին՝ չչնչել, աչքերին՝ բիրը լայնացնել կամ նեղացնել: Ողնուղեղը արտադրում է նյարդային իմպուլսներ: Նյարդային համակարգն ընդունված է բաժանել ըստ տեղագրության՝ կենտրոնական և ծայրամասային, ինչպես նաև ըստ գործառույթի՝ մարմնական և վեգետատիվ: ՎՆՀ-ի հիմնական գործառույթն օրգանիզմի ներքին միջավայրի հաստատուն վիճակի պահմանումն է: ՎՆՀ-ն կապված է նաև հումեոստազին անմիջական մասնակցություն չունեցող օրգանների և համակարգերի գործունեության կարգավորման հետ (սեռական համակարգ, ներաչքային մկաններ): ՎՆՀ-ում առանձնացնում են երեք բաժին՝ սիմպաթիկ և ներադիքային բաժիններ: Հոգեֆիզիոլոգիայի համար ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժինները: ՎՆՀ-ի պարասիմպաթիկ բաժինը ղեկավարում է առօրյա կյանքի վեգետատիվ գործընթացները, ապահովում է սրտի նորմալ ռիթմը, ստամոքսի և աղիների կծկումները, մարսողական գեղձերի գործունեությունը: ՎՆՀ-ի սիմպաթիկ բաժինն ապահովում է օրգանիզմի ակտիվացումը: Այն սկսում է գործել, երբ անհրաժեշտ է միավորել օրգանիզմի հատուկ ռեսուրսները՝ լրացուցիչ ակտիվ գործունեությանը պատրաստ լինելու համար: Դա տեղի է ունենում վտանգի ծագման ժամանակ, վտանգավոր իրավիճակներում և այլն: Այստեղից էլ, երբ հետազոտության ժամանակ թեստավորողին տրվում են հարցեր, որոնք անձը համարում է «վտանգավոր», ակտիվանում է ՎՆՀ սիմպաթիկ բաժինը, երբ օրգանիզմը վտանգին պատասխանում է շնչառության հաճախացմամբ, սրտի զարկերի հաճախացմամբ, մաշկի քրտնազեղների ակտիվացմամբ, պաշտպանական համալիր

հակազդումներով: Միմպաթիկ բաժնի և մակերիկամների կեղևի ակտիվացման գումարային ազդեցությունն է արյան բաղադրության մեջթթվածնի, գլյուկոզի և ճարպաթթուների քանակի ավելացումը, սրտային արտամղման մեծացումը, երակների համընդհանուր նեղացումը, մաշկի և ներքին օրգանների զարկերակի նեղացումը, բրոնխների լայնացումը: Այստեղից էլ, երբ հարցաքննվողի այն վարքային ոչ վերբալ դրսևորումներից մեկը, երբ իր համար ոչ բարենպաստ պայմաններում դժվարությամբ է առաջ հակված նստում՝ թթվածնի անբավարարության պատճառով(անընդհատ հոգոցներ, շնչառության կանգ, աթոռին հետ ընկած դիրք): Միմպաթիկ ՎՆՀ-ի ակտիվացումն առաջացնում է բբի լայնացում (վախի, հույզերի ժամանակ), իսկ պարասիմպաթիկ ակտիվացումը՝ բբի նեղացում: Հոգեֆիզիոլոգիական տեսանկյունից՝ սիմպաթիկ բաժնի հիմնական գործառույթն է ամբողջ օրգանիզմի միավորումն արտակարգ հանգամանքների դեպքում (կատաբոլիզմ), իսկ պարասիմպաթիկ բաժնինը՝ օրգանիզմի հիմնական պաշարների պահպանումը (անաբոլիզմ): Միմպաթիկ բաժնի ակտիվացումը բնորոշ է արտակարգ իրավիճակների համար (ֆիզիկական ծանրաբեռնվածություն, սթրես), որի ժամանակ դիտվող միահավաքման երևույթը կապված է հակազդումների մի ամբողջ համալիրի հետ՝ լյարդում գլիկոգենի ձեռքում և արյան մեջ շաքարի քանակի ավելացում, արյան մատակարարման վերաբաշխում: Հույզերի մեծ ուժգնության դեպքում կատեխոլամինների մակարդակը կարող է աճել 10 և ավել անգամ: Ենթադրվում է, որ այս աճը կապված է ենթատեսաթմբի և լիմբիկական համակարգի հետ: Միմպաթիկ ակտիվացումը, սովորաբար ունի տարածված բնույթ, ընդգրկում է ամբողջ մարմինը, իսկ պարասիմպաթիկ ակտիվացումը տեղային է և համեմատաբար կարճ: Լիմբիկական համակարգը հույզերն ապահովող հիմնական ուղեղային համակարգն է [3]:

Հույզերի հետազոտման ընթացքում առավել տեղեկատվական են մաշկագալվանական հակազդման (ՄԳՀ), սիրտանոթային գործունեության ԷՄԳ, արյան ճնշման, շնչառության, աչքերի շարժումների, մկանային ակտիվության և մաշկի շերտերի ջերմաստիճանը:

Կ. Յունզըր առաջին հոգեբանն էր, ով փորձել է օգտագործել ՄԳՀ-ն որպես օբյեկտիվ ֆիզիոլոգիական «գործիք» անգիտակցականն ուսումնասիրելու համար: Հենց Յունզըր 1907թ. առաջին անգամ ցույց տվեց ՄԳՀ-ի և հուզական ապրումների ուժգնության միջև կապը: Որքան ուժեղ է մեզ հուզում այս կամ այն իրադարձությունը, այնքան ուժեղ է արտահայտվում ՄԳՀ-ն: Հուզականորեն նշանակալի խոսքերն առաջացնում են ՄԳՀ: Բացի այդ, հուզական տարբեր իրավիճակներում ՄԳՀ-ի գրանցման հոգեֆիզիոլոգիական փորձերի արդյունքների հիման վրա եզրակացվել է երկու տեսակի վախի գոյության մասին՝ վախ անսպասելիությունից և վախ, որը պայմանավորված է իրավիճակի գնահատականով: Հուզական ուժեղ

ապրումները կարող են հանգեցնել վեգետարնդերային խանգարումների, որոնք ձևավորում են մարմանվեգետատիվ ախտանիշների համալիր՝

✓ Միրտանոթային համակարգի խանգարումներ՝ արագասրտություն կամ դանդաղասրտություն, զարկերակային ճնշման տատանումներ, մաշկային ծածկույթի կարմրություն կամ գունատություն, կապտում, գլխապտույտ, ուշագնացություններ,

✓ Մարսողական համակարգի խանգարումներ՝ սրտխառնոց, փսխում, կերակրափողի անանցանելիության խախտումներ, կլման խանգարումներ, ործկումներ, փորթուլություն, փորկապություն, աղիների փքվածություն, անորեքսիա,

✓ Շնչառական համակարգի խանգարումներ՝ հարթ մկանների կծկանք՝ կոկորդի սեղմման զգացումի ձևով,

✓ Միզասեռական համակարգի խանգարումներ՝ միզարձակման ուշացումներ, դաշտանային ցիկլի և սեռական գործառույթների խանգարումներ [3]:

Միմպաթիկ բաժնի լարվածության գերակայությամբ անձանց բնորոշ են լայն բիբերով փայլող աչքերը, սպիտակ չոր մաշկը, սպիտակ մաշկագրությունը, արագասրտությունը, բարձր զարկերակային ճնշումը, փորկապությունը, նիհարելու հակումը, տագնապալիությունը, բարձր աշխատունակությունը: Պարասիմպաթիկ բաժնի լարվածության գերակայմամբ անձանց բնորոշ է բիբերի նեղացումը, դանդաղասրտությունը, ցածր զարկերակային ճնշումը, շնչառական առիթմիան, կարմիր մաշկագրությունը և այլն: Պոլիգրաֆի միջոցով չափվում են հետազոտվողին առաջադրված հարցերի արձագանք հանդիսացող վեգետատիվ փոփոխությունները: Պոլիգրաֆը չափում է փոփոխությունները, որոնք տեղի են ունենում վեգետատիվ համակարգում: Վեգետատիվ փոփոխությունները հաճախ տեսանելի չեն և կախված են ոչ թե հույզի բնույթից, այլ նրա ուժգնությունից: Մարդը տարբեր ֆիզիոլոգիական զգացողություններ է ունենում վախի կամ զայրույթի ժամանակ:

Ըստ Պ. Էկմանի փորձարարական հետազոտությունների եզրահանգման զայրույթի և զարմաքի ժամանակ ի հայտ են գալիս սիրտ անոթային համակարգի փոփոխություններ՝ մաշկի ջերմաստիճանի հստակ տարբերությամբ: Օրինակ՝ զայրույթի ժամանակ մարմնի ջերմաստիճանը բարձրանում է, իսկ վախի կամ սարսափի, ընդհակառակը՝ նվազում:

Ուսումնասիրելով հույզերի ֆենոմենը՝ հետազոտողները ուշադրություն են դարձրել, որ հուզական ապրումները միշտ ուղեկցվում են որոշակի մարմնական դրսևորումներով:

Օրինակ մարդը, հանդիպելով իրեն վիրավորողին, գունատվում կամ կարմրում է, սեղմում բռունցքները, շփոթվելուց մարդու մոտ կարող է խախտվել շնչառության ռիթմը և այլն: Մթերսի ժամանակ անձի մոտ ի հայտ

են գալիս հետևյալ 3 հոգեկան վիճակները՝ պայքար (սա սուտ է, ես ձեզ չեմ հավատում, ես չեմ անցնի այս հետազոտությունը, այն ինձ վիրավորում է), փախուստ (դիտոցացված վիճակ) և հարձակում (զայրույթ, ագրեսիա, վերբալ, ոչ վերբալ դրսևորումներ): Ըստ պոլիգրաֆի միջոցով թեստավորման վերլուծական տեսության, մարդու ֆիզիոլոգիան դինամիկ է, և ազդակների ներկայացումը փոփոխություններ է խթանում նրա դինամիկայում: Կախված նրանից, թե որքան համակարգված կերպով (ոչ պատահական) են հայտնաբերվում ֆիզիոլոգիական ռեակտիվության փոփոխությունները, որոշվում է ազդակի նշանակալիությունը:

Պոլիգրաֆի մասնագետի առջև հարցերի միջոցով կարող են դրվել հետևյալ խնդիրները՝

✓ Ըստ հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների կարելի է արդյո՞ք եզրակացնել, թեստավորվողը տիրապետում է դեպքի մանրամասնություններին:

✓ Արդյո՞ք փորձաքննվողը անձամբ առնչություն ունի դեպքի հետ:

✓ Արդյո՞ք փորձաքննվողը անձամբ է կատարել և՛ հանցանքը:

✓ Արդյո՞ք անձամբ է կազմակերպել և՛ փորձաքննվող իրավիճակը:

✓ Արդյո՞ք հետազոտվողը որևէ մեկի հետ գաղտնի համաձայնությամբ է եկել:

Կարևոր է հետազոտության ընթացքում հաշվի առնել ազգային առանձնահատկությունները, քանի որ մեկ ազգի ներկայացուցչի մոտ նույն հարցը կարող է մեկ ռեակցիա առաջացնել, իսկ մեկ այլ ազգի մոտ՝ այլ:

Հարկ է նշել, որ հոգեֆիզիոլոգիական փորձաքննությունը անց է կացվում պարտադիր տեսաձայնագրման առկայությամբ և հետազոտվողի կամավոր - գրավոր համաձայնությամբ:

Խնդիրների արդյունավետ լուծման համար քննիչը կարող է նշանակել մի շարք փորձաքննություններ՝ լինգվիստիկական, հոգեբանական, այդ թվում նաև հոգեֆիզիոլոգիական բնույթի պոլիգրաֆի կիրառմամբ:

Այսպիսով, անձի վարքագծի և հոգեվիճակների կայուն անհատական գծերի դրսևորումները մեծ հետազոտական արժեք ունեն պոլիգրաֆով հետազոտողի համար, քանի որ անձի հոգեֆիզիոլոգիական ռեակցիան օբյեկտիվ է: Միևնույն ժամանակ կարևոր է հասկանալ, թե ինչու է այն առաջացել, որն իր հերթին պահանջում է հոգեբանական գիտելիքների կիրառում [1, 2]:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ պոլիգրաֆի կիրառմամբ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների իրականացումը արդյունավետ է համալիր դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում: Այս մոտեցումը թույլ է տալիս ուսումնասիրել փորձաքննվողի հոգեֆիզիոլոգիական ռեակցիաները կոմպլեքս ձևով՝ միաժամանակ գնահատելով փոփոխված հոգեվիճակները և անհատական

հոգեբանական առանձնահատկությունները: Բացի այդ, համալիր մոտեցումն զգալիորեն մեծացնում է ստացված արդյունքների օբյեկտիվությունն ու հուսալիությունը ի տարբերություն առանձին անցկացվող փորձաքննությունների:

Գրականություն

1. Ենգալիչև Վ.Ֆ., Ղազարյան Գ.Հ. Դատահոգեբանական փորձաքննություն: Մենագրություն – Եր.: ԵՊԲՀ, 2017 – 208 էջ:
2. Ենգալիչև Վ.Ֆ., Ղազարյան Գ.Հ. Դատական հոգեբանական փորձաքննության պրակտիկում: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ – Եր.: ՀՀ ԱՆ ԱԱԻ, 2018 – 297 էջ:
3. Գրիգորյան Վ.Հ. Հոգեֆիզիոլոգիա: ԵՊՀ, 2014, 2-րդ վերամշակված հրատ., 464 էջ:
4. Бехтерева Н.П. Магия мозга и лабиринты жизни, Изд-во Аст, 2019.
5. Комиссарова Я.В. Основы полиграфологии: учебник для магистров М.: Проспект, 2016.
6. Баев О.Я. Тактика следственных действий Воронеж. Изд- во ВГУ, 1992.
7. Холопова Е.Н., Макарова О.А. Судебная психофизиологическая экспертиза с использованием полиграфа как самостоятельный вид экспертиз.
8. Шипшин С.С. Судебные психологическая и психофизиологическая экспертизы: по-прежнему врозь? //Сб. материалов междунар. научно-практической конф. специалистов-полиграфологов органов внутренних дел (11-14 октября 2011., г. Сочи). – С. 268-272.
9. Шипшин С.С. Опосредованная ретроспективная диагностика психического состояния //Теория и практика судебной экспертизы. – № 4 (12). – М.: Наука, 2008.
10. Шипшин С.С. К вопросу о предмете и объекте комплексной психолого-психофизиологической экспертизы //Психологическая наука и образование psyedu.ru. 2013. №4. URL: <http://psyedu.ru/journal/2013/4/Shipshin.phtml>
11. Холодный Ю.И. Судебно-психофизиологическая экспертиза с применением полиграфа: период становления. Статья первая /Вестник криминалистики. 2009. Вып. 1.(25). С. 25–33.

ОСОБЕННОСТИ КОМПЛЕКСНОЙ СУДЕБНОЙ ПСИХОЛОГО ПСИХОФИЗИОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Гаспарян Х.В. (к.пс.н.,доцент, ЕГМУ им. М. Гераци, Ереван, РА)

kvgaspar@yahoo.com

Матевосян Ев.С. (ЕГМУ им. М. Гераци, Ереван, РА)

Аннотация: В статье представлены научные основы психофизиологических исследований с использованием полиграфа. Комплексная судебно-психологическая экспертиза существенно повышает доказательную ценность экспертиз по сравнению с отдельными психологическими или психофизиологическими экспертизами. Рассмотрены возможности использования судебно-психологической и судебно-психофизиологической экспертизы с учетом достоверности их анализа.

В настоящее время в Армении развивается тестирования на полиграфе при отборе персонала, а также проведение комплексной судебно-психологической экспертизы, направленных на выявление разных случаев.

Психофизиологическое обследование с использованием полиграфа позволяет выявить информацию, скрытую человеком, на основе физиологических реакций, которые человек не может сознательно контролировать. В определенных ситуациях эти реакции происходят автоматически, независимо от желания человека. С помощью полиграфа четко отражаются изменения самых незначительных эмоциональных состояний человека, которые свидетельствуют о значимости вопроса для человека. Психофизиологические реакции человека имеют сложную природу, и ее изучение на достоверность, предполагает знание нескольких знаний из разных областей: психологии, физиологии и криминологии. А комплексный подход этих направлений может привести к большей объективности получаемых данных.

Ключевые слова: судебно-психологическая экспертиза, полиграф, психофизиология, ВНС.

FEATURES OF COMPLEX FORENSIC PSYCHOLOGICAL- PSYCHOPHYSIOLOGICAL EXAMINATION

Gasparyan X.V. (Ph.D in Psychology, Associate Professor, M. Heratsi ESMU,
Yerevan, RA)

kvgaspar@yahoo.com

Matevosyan Y.S. (M. Heratsi ESMU, Yerevan, RA)

jenyamatevosyan@mail.ru

Abstract: The article presents the scientific basis of psychophysiological research using a polygraph. A comprehensive forensic psychological examination significantly increases the evidentiary value of examinations compared to individual psychological or psychophysiological examinations. The possibilities of

using forensic psychological and forensic psychophysiological examination are considered, taking into account the reliability of their analysis.

Nowadays, polygraph testing is developing in Armenia during the selection of personnel, as well as conducting a comprehensive forensic psychological examination aimed at identifying various cases.

A psychophysiological examination using a polygraph makes it possible to reveal information hidden by a person based on physiological reactions that a person cannot consciously control. In certain situations, these reactions occur automatically, regardless of the person's desire. By means of a polygraph, changes in the most insignificant emotional states of a person are clearly reflected, which testify to the significance of the question for the person. Psychophysiological reactions of a person have a complex nature, and its study on the reliability presented by a person implies the knowledge of several knowledges from different fields: psychology, physiology and criminology. And the complex approach of these areas can lead to more objectivity of the obtained data.

Keywords: forensic psychological examination, polygraph, psychophysiology, VNS.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 10.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 19.03.2024*

**ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱԿԱՆՈՒՄ**

Գաբրիելյան Ա.Կ., Համբարձումյան Մ.Վ., Մամյան Տ.Ս., Շահվերդյան Գ.Դ.
(ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, ՀՀ)
arminegabrielyan999@mail.ru, manuk6503@gmail.com,
tatevik.mamyan.psy@gmail.com, gay.shahverdyan@gmail.com

Ամփոփագիր. Սույն վերլուծական հոդվածում անդրադարձ է կատարվում վերջին տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կազմակերպություն) նշանակված և իրականացված հետևյալ՝ բռնությունների (խոշտանգումների, թրաֆիկինգի դեպքերի) իրավական նշանակություն ունեցող հուզական վիճակների, մասնավորապես՝ աֆեկտի (հոգեկան խիստ հուզմունքի վիճակի), հետմահու, ինչպես նաև անչափահասների հետ կատարվող դատահոգեբանական փորձաքննությունների տեսակներին, դրանց առանձնահատկություններին: Փորձագիտական գործունեության ընթացքում հանդիպած օրինակների միջոցով հոդվածում ներկայացված են վերոգրյալ փորձաքննությունների տեսակների իրականացման ընթացքում առաջացող հիմնական խնդիրները, բարդությունները, խոչընդոտները: Ներկայացվում են փորձաքննության յուրաքանչյուր տեսակով փորձագետի պարզմանն առաջադրվող հիմնական հարցադրումները, դրանց պարզմանն ուղղված գործնական քայլերը, ինչպես նաև նշվում է փորձագետի իրավասության տիրույթում գտնվող գործառույթների շրջանակը, առաջադրվող հարցադրումների համապատասխանությունը փորձաքննության տվյալ տեսակին և բնույթին: Կարևորելով վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցությունը, յուրաքանչյուր տեսակի փորձաքննությանը տիպիկ առանձնահատկությունների վերաբերյալ վերջիններիս իրազեկվածությունը, վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը (եթե այն պարզման ենթակա է փորձաքննության շրջանակներում), և վերջնադրությունքում՝ «Փորձագետի եզրակացության» լիարժեքությունը, հիմնավորվածությունը և ամբողջականությունը, այս հոդվածում քննարկվում են վերոշարադրյալները հնարավոր դարձնելուն միտված Կազմակերպության փորձագետների կողմից մինչ օրս իրականացվող գործնական և թիրախային քայլերը:

Հիմնաբառեր. հոգեբանական փորձաքննություն, անչափահաս, հետմահու ԴՀՓ, հուզական վիճակների փորձաքննություն, բռնություն, թրաֆիկինգ, խոշտանգում:

Ներկայացված հոդվածում անդրադարձ է կատարվում վերջին տարիների ընթացքում Կազմակերպությունում իրականացված հետևյալ՝ բոնությունների/խոշտանգումների/, իրավական նշանակություն ունեցող հուզական վիճակների, մասնավորապես՝ աֆեկտի (հոգեկան խիստ հուզմունքի վիճակի), հետմահու, ինչպես նաև անչափահասների հետ իրականացվող դատահոգեբանական փորձաքննությունների տեսակներին:

Փորձաքննության նշված տեսակներով սույն վերլուծական հոդվածի անհրաժեշտությունն ու արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ մեր իրականությունում առկա է վերոնշյալ դեպքերի և վերջիններիս առնչությամբ նշանակված մեկ ոլորտային՝ դատահոգեբանական կամ համալիր՝ դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների նկատելի աճ, ինչի մասին է վկայում նման դեպքերով հարուցված քրեական վարույթների շրջանակներում համապատասխան մարմինների կողմից նշանակված և Կազմակերպությունում իրականացվող փորձաքննությունների նշանակալի քանակը: Այսպիսով, սույն հոդվածի նպատակն է փորձաքննությունների վերոնշյալ տեսակների իրականացման ընթացքում առաջացող խնդիրների վերհանումը և փորձաքննության արդյունավետության բարձրացմանն ուղղված հնարավոր լուծումների առաջադրումը:

Անդրադառնալով իրավական նշանակություն ունեցող հուզական վիճակների փորձաքննությանը, հարկ է նշել, որ դատավարական գործընթացներում յուրաքանչյուր առանձին դեպքում անձի հուզական վիճակի պարզումը առանցքային դեր և նշանակություն ունի: Նման դեպքերում փորձաքննության *հիմնական* խնդիրն է հանդիսանում հակաիրավական գործողություն կատարելու պահին մեղադրյալի մոտ աֆեկտի, որն ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի 156-րդ և 168-րդ հոդվածներով սահմանվում է որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակ [12], և այլ հուզական վիճակների (հուզական լարվածություն, ֆրուստրացիա, սթրես և այլն) առկայության կամ բացակայության պարզումը, որը/որոնք կարող էին էականորեն ազդեցություն ունենալ տվյալ անձի գիտակցության և վարքի վրա և վերոնշյալի վերաբերյալ հարցադրումն էլ հիմնականում առաջադրվում է նման դեպքերով փորձաքննություններին: Հաճախ տրվող հարցադրումներից մյուսը վերաբերում է մեղադրյալի՝ այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկությունների պարզմանը, որոնք կարող էին էապես ազդել նրա հոգեկան գործունեության և վարքային դրսևորումների վրա: Հաշվի առնելով աֆեկտի եռափուլ դինամիկան և դրա զնահատման համար կարևորելով յուրաքանչյուր փուլին բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը, ԴՀՓ պրակտիկայում առնչվել ենք նաև ներքոնշարադրյալ խնդիրներին:

Արձանագրված դեպքերից մեկով նախաքննական մարմնի կողմից փորձաքննությանը չեն տրամադրվել հանցավոր արարքը կատարելուց անմիջապես հետո մեղադրյալի հետ առնչված անձանց կողմից հայտնված տեղեկություններ: Մեկ այլ դեպքով տուժողին սուր ծակող-կտրող գործիքով մարմնական վնասվածք պատճառելուց հետո մեղադրյալը դեպքի վայրից դիմել էր փախուստի, ըստ վերջինիս՝ անմիջապես հետո նրա ինքնազգացողությունը վատացել էր, փսխել էր, երկար ժամանակ քայլել էր և այլն: Չնայած փորձագետի միջնորդությամբ պահանջվել էր նշվածին համադրելի տեղեկություններ տրամադրել փորձաքննությանը, սակայն այդպիսիք չեն տրամադրվել: Կարևոր հանգամանք է նաև փորձաքննվողի կողմից հետազոտվող իրավիճակում ալկոհոլ և այլ նյութերի օգտագործման վերաբերյալ համապատասխան դատաքիմիական փորձաքննության արդյունքների առկայությունը: Օրինակ՝ փորձաքննվողը փորձագիտական գրույցի ժամանակ հայտնել է հետազոտվող իրավիճակում ալկոհոլ օգտագործած լինելու մասին, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից նման հանգամանքը չի պարզվել: Տվյալ տեսակի փորձաքննության հիմնական խնդրահարույց կետերից է հանդիսանում նաև խնդրո առարկա իրավիճակի վերաբերյալ առկա տեղեկությունների հակասականությունը, օրինակ՝ առաջնային և հաջորդած հարցաքննությունների ժամանակ մեղադրյալի հայտնած տեղեկություններում աֆեկտին բնորոշ դրսևորումների ներառումը, ինչպիսիք նրա կողմից մինչ այդ առաջնային հարցաքննության ժամանակ, չէին հայտնվել: Վերոնշյալ հանգամանքների վերաբերյալ տվյալները նման դեպքերում կարող են փորձագիտական տեսանկյունից էական նշանակություն ունենալ:

Հետմահու դատահոգեբանական փորձաքննությունը հիմնականում նշանակվում և իրականացվում է նախնական իրավական գնահատմամբ ինքնասպանություն որակված դեպքերով և ըստ մեր դիտարկումների՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից նման փորձաքննությունների նշանակումը վերջին ժամանակներում առավել հաճախադեպ է դարձել: Տվյալ տեսակի փորձաքննությունն իրականացվում է հոգեկան վիճակի հետհայաց (ռետրոսպեկտիվ) վերլուծության միջոցով: Կատարվում է տրամադրված քրեական վարույթի նյութերում առկա տեղեկությունների, մասնավորապես՝ սուիցիդենտի անձնային առանձնահատկությունների, ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում վերջինիս ունեցած շփումների, վարքային և հուզական դրսևորումների, նրա վերաբերյալ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև սուիցիդենտի կողմից գրված գրությունների, նամակների, ստեղծագործությունների հոգեբանական հետազոտություն, համադրում և վերլուծություն: Ինքնասպանության վերաբերյալ գործերով հաճախ անհրաժեշտություն է առաջանում փորձաքննությունն իրականացնել այլ,

առավել հաճախ՝ դատահոգեբուժական, դատաձեռագրաբանական ոլորտների հետ համալիր կարգով: Վարույթն իրականացնող մարմինների կողմից ենթադրյալ ինքնասպանության դեպքերով հոգեբանական փորձաքննությունների շրջանակներում հիմնական առաջադրվող հարցերը վերաբերելի են ինքնասպանություն գործած անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների, դեպքին նախորդած ժամանակահատվածում նրա հոգեվիճակի վերհանմանը և սուիցիդենտի վարքի վրա դրանց ունեցած հնարավոր ազդեցությանը: Նման դեպքերում հաճախ անհրաժեշտություն է առաջանում պարզել կոնկրետ անձի գործողությունների և/կամ անգործության և տուժողի՝ ինքնասպանությանը նախորդած ժամանակահատվածում առկա հոգեվիճակի միջև հնարավոր պատճառահետևանքային կապը: Նման դեպքերով պրակտիկայում հանդիպած և հաճախ տրվողներից է նաև «Արդյոք ք ինքնասպանություն գործելու պահին տուժողի մոտ եղել է ֆիզիոլոգիական կամ պաթոլոգիական աֆեկտի կամ այլ հուզական վիճակների առկայություն և դրանք ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել նրա գիտակցության գործունեության վրա» հարցադրումը, ինչի վերաբերյալ հարկ է նշել, որ ֆիզիոլոգիական աֆեկտ հասկացությունը դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում հետազոտման ենթակա է մեկ այլ անձի կամ անձանց կյանքին և առողջությանն ուղղված հանցագործությունների դեպքում, ուստի հետմահու փորձաքննության շրջանակներում այն պարզման ենթակա չէ, իսկ պաթոլոգիական աֆեկտ հասկացության պարզումը դուրս է հոգեբան-փորձագետի իրավասության սահմաններից և ենթակա է պարզման հոգեբույժ-փորձագետի կողմից:

Ըստ մասնագիտական գրականության [2, էջ 15] և մեր ուսումնասիրությունների՝ նման դեպքերում իրավական նշանակություն ունեն հետևյալ՝ «Ինչպիսի՞ հոգեվիճակում է գտնվել տուժողն ինքնասպանությանը (մահվանը) նախորդող ժամանակահատվածում» և «Գոյություն ունի՞, արդյոք պատճառահետևանքային կապ մեղադրյալի գործողությունների և տուժողի հոգեվիճակի միջև ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում» հարցադրումները:

Մեր փորձառությունից ելնելով նշենք, որ կոնկրետ դեպքերով հնարավոր չի եղել պարզել դեպքից առաջ սուիցիդենտի հոգեվիճակը, քանի որ որոշ դեպքերում սուիցիդենտի հետ առնչություն ունեցած անձի կողմից առաջինի հոգեվիճակի վերաբերյալ հայտնվել են էականորեն հակասական տեղեկություններ, այլ դեպքերում փորձաքննությանը տրամադրված նյութերում առկա չեն եղել սուիցիդենտի հոգեվիճակի, վարքային և հուզական դրսևորումների, անհատական-հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ, ինչը նման

դեպքերում խոչընդոտ է հանդիսանում հետմահու փորձաքննությունների շրջանակում ամբողջական և հիմնավոր եզրակացության կազմման համար:

Կազմակերպությունում իրականացվող և բռնության դեպքերով փորձաքննությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ փորձաքննություն նշանակվել է անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների պարզման նպատակով: Սեռական հանցագործություններն անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության, ինչպես նաև անչափահասների բարոյական (արժեքային) և ֆիզիկական զարգացման դեմ ուղղված հանցագործություններն են: Սեռական հանցագործությունների անմիջական օբյեկտ են հանդիսանում սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության առանձին ոլորտները: Ըստ անմիջական օբյեկտի սեռական հանցագործությունները կարելի է բաժանել 2 խմբի, որոնցից 1-ինն անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգություններն են, 2-րդը՝ ոտնձգություններն ուղղված անչափահասների սեռական անձեռնմխելիության, բարոյական և ֆիզիկական առողջության դեմ: Վարույթն իրականացնող մարմինների կողմից բռնության դեպքերով հոգեբանական փորձաքննությունների շրջանակներում հիմնական առաջադրվող հարցերը վերաբերելի են տուժողի անհատական հոգեբանական առանձնահատկությունների, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակի, հոգեվիճակի պարզմանը, հետազոտվող իրավիճակի բովանդակությունը, իր նկատմամբ կատարված գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալուն, դիմադրություն ցույց տալու կարողության, ինչպես նաև հետազոտվող իրավիճակում տուժողի վարքի վրա ազդող վերջինիս անհատական հոգեբանական առանձնահատկությունների պարզմանը:

Բռնության մեկ այլ տեսակ է հանդիսանում հոգեբանական բռնությունը, որի վերաբերյալ դատահոգեբանական փորձաքննության նշանակումները հանդիպում են հազվադեպ, սակայն, հաշվի առնելով անձի ձևավորման, զարգացման և առողջության վրա հոգեբանական բռնության հնարավոր լուրջ բացասական հետևանքները, այս տեսակի փորձաքննության իրականացումները շատ կարևոր են: Այս տեսակի դատահոգեբանական փորձաքննության ժամանակ փորձագետների պարզման համար առաջադրվող հարցերը հիմնականում նույնաբովանդակ են, սակայն հաշվի առնելով հոգեբանական բռնության հետևանքները, հաճախ անհրաժեշտություն է առաջանում պարզել նաև արդյո՞ք անձին պատճառվել է հոգեկան ուժեղ տառապանք, թե՞ ոչ:

Ըստ Մ.Վ. Կրոսի. Ն.Ա. Ռատինովայի և Օ.Ռ. Օնիշենկոյի՝ նմանատիպ ներազդումը կարող է ունենալ ֆոնային բնույթ և այդ դեպքում դրա

արդյունքները կլինեն ոչ նշանակալի և դերակատարում չեն ունենա հանցագործությունների դասակարգման, իրականացման մեթոդների ուսումնասիրման և հետևանքների գնահատման հարցում: Մյուս դեպքում, զոհի նկատմամբ հենց հոգեբանական բռնությունն ու դրա հետևանքներն են հանդիսանում հանցագործության հիմնական բաղադրիչ, որը հանդիսանում է հանցագործի նպատակը [9]:

Հարկ է նշել, որ բռնության տեսակներից է համարվում նաև անձի նկատմամբ իրականացված խոշտանգումը, նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող գործողությունները: Խոշտանգման դեպքերով նշանակված փորձաքննությունների իրականացման բուն խնդիրն է հանդիսանում փորձաքննվողին հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հանգամանքի պարզումը, որի շրջանակներում փորձագետին հիմնականում առաջադրվում են հետևյալ «Արդյո՞ք մեղադրյալի գործողությունների արդյունքում տուժողին հոգեկան տառապանք պատճառվել է, թե՛ ոչ», «Հետագոտվող իրավիճակում և դրանից հետո ի՞նչ հոգեվիճակում է գտնվում տուժողը» հարցադրումները:

ԴՀՓ պրակտիկայում անձին հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու պարզման ժամանակ հաճախ բարդություն է առաջանում այն դեպքերում, երբ փորձաքննությունը նշանակվում է դեպքից տևական ժամանակ անց, երբ արդեն հոգեկանի դինամիկայի արդյունքում հնարավոր չի լինում վերհանել անձի տրավմատիկացիայի հետևանքները, հատկապես այն դեպքերում, երբ քրեական վարույթի նյութերում առկա չեն լինում բավարար քանակի և համադրելի տեղեկություններ խնդրո առարկա ժամանակահատվածում փորձաքննվողի մոտ դրսևորված վարքային և հուզական առանձնահատկությունների, բացասական փոփոխությունների, նրա ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակը փաստող բժշկական փաստաթղթերի վերաբերյալ: Ինչպես նաև այն դեպքերում, երբ մեկ հոգետրավմային ուժեղ գործոնից զատ առկա են նաև այլ գործոններ, որոնք, իրենց հերթին կարող էին նպաստել հետագոտվող իրավիճակում անձի պաշտպանական և հարմարման մեխանիզմների չգործարկմանը: Նման դեպքերում, եթե անձի մոտ հոգեբանական հետագոտության արդյունքում վեր են հանվում հոգեկան ուժեղ տառապանքին բնորոշ դրսևորումներ, խնդիր է առաջանում դրանց առաջացման բուն գործոնների ազդեցության տարանջատման հարցում և այդ հանգամանքները դիտարկվում են որպես նպաստող գործոնների ամբողջություն:

Անդրադառնալով անչափահասների հետ իրականացվող ԴՀՓ-ին, նշենք, որ դրանք ևս հաճախադեպ են և ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները: Դրանց իրականացման ընթացքում առանձնահատուկ կարևորվում են տարիքային նորմատիվային զարգացման և յուրաքանչյուր դեպքով տվյալ անչափահասի անհատական հոգեբանական

զարգացման առանձնահատկությունները: Անչափահաս փորձաքննվողը դատավարական գործընթացներում կարող է հանդես գալ ինչպես որպես մեղադրյալ, այնպես էլ՝ որպես տուժող: Մեռական բնույթի հանցագործությունների դեպքերով որպես տուժողներ կարող են հանդես գալ իգական և արական սեռի անչափահասները: Այստեղ կրկին հետազոտության հիմք են հանդիսանում անհատական հոգեբանական առանձնահատկությունների, տարիքին համապատասխան իմացական ոլորտի զարգացման մակարդակի և իր հետ կատարվածի բնույթը և նշանակությունը գիտակցելու կարողության ուսումնասիրումը, ինչպես նաև դեպքից առաջ, ընթացքում և հետո նրա հոգեվիճակի, դիմադրություն ցույց տալու կարողության պարզումը [5]: Վերջինիս պարզման համար դիտարկվում է անչափահաս փորձաքննվողի տարիքը, անհատական-հոգեբանական, իմացական և հուզականային ոլորտների առանձնահատկությունները, հետազոտվող իրավիճակի բովանդակությունը և իր նկատմամբ կատարված գործողությունների բնույթը և նշանակությունը գիտակցելու, տուժողի՝ ներկայիս հոգեվիճակով պայմանավորված քննչական և դատավարական գործողություններին մասնակցության և վարույթի համար նշանակալի հանգամանքների ճիշտ վերարտադրման կարողությունը, ինչպես նաև անչափահաս տուժողի նկատմամբ իրականացված բռնի գործողությունների արդյունքում նրան հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հանգամանքի պարզումը:

Հարկ է նշել, որ նման դեպքերով ՂՀՓ-ների իրականացման ընթացքում առնչվում ենք այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են սեռական բռնության ենթարկված անչափահասների ծնողների վերաբերմունքը բուն խնդրին և նրանց կողմից երեխայի վրա ներագդեցությունը՝ խնդրի բարձրաձայնման հարցում, տուժողի՝ հնարավոր ստիգմատիզացիայի (խարանավորում) մտավախությամբ պայմանավորված անհրաժեշտ տվյալների թերի հավաքագրումը վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Այսպիսով, համադրելով ՂՀՓ-ի շրջանակներում մեր կողմից վերհանված խնդիրները, դրանց հետագա լուծման առումով կարևորում ենք առանձնացնել հետևյալը. փորձաքննության լիարժեք իրականացման և ամբողջական եզրակացության տրամադրման տեսանկյունից կարևորում ենք ժամանակին նշանակված փորձաքննությունները, ճիշտ ձևակերպված հարցադրումները, որոնք նպաստում են փորձաքննության իրականացման թիրախային լինելուն, միևնույն ժամանակ, խիստ կարևոր է տրամադրված քրեական վարույթի նյութերում նշված հարցադրումներին համապատասխան փորձաքննվողի և խնդրո առարկա իրավիճակի վերաբերյալ ամբողջական և համադրելի տեղեկությունների առկայությունը, ինչից էլնելով, փորձաքննության իրականացման շրջանակներում կարևորելով վարույթն իրականացնող մարմնի տեղեկացվածությունը

յուրաքանչյուր տեսակի փորձաքննության առանձնահատկությունների վերաբերյալ հոգեբանական փորձաքննությունների բաժնի փորձագետների կողմից խնդրի լուծման նպատակով վերամշակվել են վերջիններիս ներկայացվող միջնորդությունների բովանդակային կողմը՝ այն դարձնելով առավել հանգամանալից, համադրելի և թիրախային, որոնք վերջնարդյունքում միտված են առավել հիմնավոր և ամբողջական եզրահանգումներ կատարելուն: Միննույն ժամանակ Կազմակերպությունում պարբերաբար իրականացվում են նաև փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող կառույցների ներկայացուցիչների համար վերապատրաստման դասընթացներ:

Գրականություն

1. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն, Եր., «Զանգակ 97», 2004. - 432 էջ:
2. Գրին Է. Դատահոգեբանական փորձաքննություն. հարցեր, սխալներ, պարզաբանումներ, Երևան 2010. – 16 էջ:
3. Ենգալիչև Վ.Ֆ., Ղազարյան Գ.Հ. «Դատական հոգեբանական փորձաքննության պրակտիկում», ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., ՀՀ ԱՍԻ 2018. – 297 էջ:
4. Համբարձումյան Մ.Վ. Աֆեկտի վիճակի դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները: «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» N 7, Եր. 2022թ., «Գուդ պրինտ» հրատ., էջ 52-60:
5. Մամյան Տ.Ս. Դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում ուսումնասիրվող անչափահասի անձի և վարքի հոգեբանական առանձնահատկությունները: «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» N 7, Եր. 2022թ., «Գուդ պրինտ» հրատ., էջ 69-78:
6. Վարդանյան Կ. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շրջայում, Եր.: 2008. – 360 էջ:
7. Агузумця Р.В., Амбарцумян М.В., Габриелян А.К., Мамян Т.С., Шахвердян Г.Д. Изучение трафика в качестве насилия при проведении судебно-психологических экспертиз, Орենбурги պատվար, Ամսազիր N 14, с. 96-107., 206 с.
8. Агузумця Р.В., Шахвердян Г.Д. Особенности судебно-психологической экспертизы психологического насилия, “Теорія та практика судової експертизи і криміналістики: зб. наук. пр.”, Харків: Право, вип. 24, 2021. – с. 4-19., 15 с.

9. Кроз М.В., Ратинова Н.А., Онищенко О.Р. Криминальное психологическое воздействие. – М.: «Юрлитинформ», 2008. – 166 с.
10. Мамян Т.С. Судебно-психологическая экспертиза несовершеннолетних. Особенности поведения. Изд. “Закон и жизнь”, 2022. 31-34 с., 150 с.
11. Aghuzumtsyan R.V., Shahverdyan G.D., Mamyan T.S., Hambardzumyan M.V., Gabrielyan A.K., (2023), Системные особенности психологической экспертизы/ Systemic Features of Forensic and Legal Psychological Expertise/, Edited by Yuri Chernov, Marie Anne Nauner. HIS BOOKS. Handwriting Research. Forensics & Legal. 22 p.
12. ՀՀ քրեական օրենսգրք:
<https://www.arlis.am/documentView.aspx?docid=153080>

ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ В ПРАКТИКЕ

Амбарцумян М.В., Габриелян А.К., Мамян Т.С., Шахвердян Г. Д., (ГНКО
 “Национальное бюро экспертиз” НАН РА, Ереван, РА)
 arminegabrielyan999@mail.ru, manuk6503@gmail.com,
 tatevik.mamyan.psy@gmail.com,
 gay.shahverdyan@gmail.com

Аннотация: В данной аналитической статье рассматриваются следующие виды и особенности судебно-психологических экспертиз, таких как, насилия (физическое насилие, истязание, случаи трафикаинга людьми), юридически значимых эмоциональных состояний, в частности аффекта (состояния крайнего психического возбуждения), посмертных, а также судебно-психологических экспертиз проводимых с несовершеннолетними, назначенных и осуществляемых за последние годы в НАН РА «Национальное бюро экспертиз» (далее Организация) за последние годы. В статье на примерах, встречающихся в ходе экспертной деятельности, представлены основные проблемы, сложности и препятствия, возникающие при проведении вышеуказанных видов экспертиз. Представлены основные вопросы, поставленные перед выяснением эксперта по каждому виду экспертизы, а также практические действия, направленные на их выяснение, в том числе представлены юридические рамки компетенций и функций эксперта, соответствие поставленных вопросов по каждому виду и характеру экспертизы. Подчеркивая сотрудничество с органами, ведущими следствие, ихнюю осведомленность о типичных особенностях по каждому виду экспертизы, выяснение обстоятельств, имеющих значение для следствия (если они подлежат выяснению в рамках экспертизы), и в конечном итоге подчеркивая обоснованность и целостность «Экспертного заключения», в

данной статье рассматриваются возможные практические и целенаправленные шаги предпринятые экспертами Организации для осуществления вышеуказанного.

Ключевые слова: Судебно-психологическая экспертиза, несовершеннолетний, посмертная судебно-психологическая экспертиза, экспертиза эмоциональных состояний, насилие, граффитинг, пытка.

CHARACTERISTICS OF FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISES IN PRACTICE

Gabrielyan A.K., Hambarzumyan M.V., Mamyant.S., Shahverdyan G.D.,
("National Bureau of Expertises" of NAS SNPO RA, Yerevan, RA)
arminegabrielyan999@mail.ru, manuk6503@gmail.com,
tatevik.mamyant.psy@gmail.com,
gay.shahverdyan@gmail.com

Abstract: In this analytical article the following types and characteristics of forensic-psychological expertises are considered, such as violence (physical violence, torture, cases of human trafficking), legally significant emotional states, in particular, affect (state of extreme mental excitement), post-mortem, as well as forensic-psychological expertises conducted with minors, assigned and carried out in "National Bureau of Expertise" SNPO (hereinafter referred to as the Organization) in recent years. The article presents the main problems, difficulties and obstacles encountered in the course of the expert activity, using the examples encountered in the course of the above-mentioned types of expertise. The main questions posed to the expert for each type of expertise are presented, as well as practical actions aimed at their clarification, including the legal framework of competences and functions of the expert, compliance of the questions posed for each type and nature of expertise. Emphasising cooperation with the investigating authorities, their awareness of the typical features of each type of expertise, clarification of circumstances relevant to the investigation (if they are to be clarified within the framework of the expertise), and ultimately emphasising the validity and integrity of the "Expert Report", this article discusses the possible practical and purposeful steps taken by the experts of the Organisation to implement the above.

Keywords: forensic psychological expertise, minor, post-mortem forensic psychological expertise, expertise of emotional states, violence, trafficking, torture.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 06.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 18.03.2024*

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՁԻ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գաբրիելյան Ա.Հ. (ՊԵԿ, Մաքսանենգության դեմ պայքարի վարչության
Սյունիքի տարածաշրջանային բաժնի Մեղրիի բաժանմունք, Ագարակ, ՀՀ)
anigabi1996@mail.ru

Ամփոփագիր. Սույն աշխատանքը նվիրված է՝ քրեական գործերով անձի դատահոգեբանական փորձաքննության յուրահատկություններին, քրեական գործերով դատահոգեբանական փորձաքննության նշանակման և կատարման կարգին, դրանց արդյունքում դատավարական գործնական հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանը: Վերլուծական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել դատահոգեբանական փորձաքննության համակարգի գործունեությունը և նրա դերը քրեական գործերի ապացուցողական համակարգում: Առաջադրված նպատակին հասնելու համար, որպես խնդիրներ են սահմանվել ուսումնասիրել՝ աֆեկտի ազդեցության տակ, սեռական անձեռմխելիության դեմ կատարված և սեքսուալ բռնությունների գործերը, ինչպես նաև՝ անչափահասների դատահոգեբանական փորձաքննության և այլ հարցերը: Կատարված դիտարկումների հիման վրա, հեղինակը առաջարկել է՝ մշակել և ընդունել «Փորձագիտական գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենք և ներդնել փորձագիտական եզրակացությունների կատարման ժամանակակից մեթոդներ:

Հիմնաբառեր. անձ, քրեական գործ, հոգեբան, փորձաքննություն, հոգեկան վիճակ, եզրակացություն:

Դատահոգեբանական փորձաքննությունը, որպես ինքնուրույն փորձագիտական հետազոտության առանձին տեսակ, անցել է զարգացման բարդ ճանապարհ՝ իր մեջ ներառելով փորձարարական հոգեբանության տվյալները իրավաբանության խնդիրներին հարմարացնելը և դատահոգեբանական փորձաքննության տեսության ստեղծումը, որը շարունակվում և կատարելագործվում է մինչ օրս [1]: Դատական փորձաքննությունը, որպես ապացուցողական գործընթացի մաս, հանդիսանում է քրեական գործի համար իրավաբանական նշանակալի հանգամանքերի ձեռքբերման և հաստատման միջոց:

«Փորձաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն «expertus» բառից, որը նշանակում է՝ փորձառու, իրազեկ [2, էջ 30]: Փորձաքննությունը առանձին գիտական հետազոտության իրականացումն է, որը քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան կատարվում է քրեական գործերով փաստական տվյալների բացահայտման նպատակով,

այդ բնագավառում հատուկ գիտելիքների տիրապետող անձի կողմից: Դատական փորձաքննությունն ապացուցման գործուն միջոց է, քանի որ այն վարույթն իրականացնող մարմնին հաղորդում է գիտահետազոտական բնույթի տեղեկատվություն: Այս առումով փորձագետի եզրակացությունը ապացույց է, քանի որ այն ձևավորվում է փորձագետի մասնակցությամբ՝ նրա հատուկ գիտելիքների կիրառմամբ և գործի նյութերի օգտագործմամբ: Հիմք ընդունելով սրա կարևորությունը, հողվածում ուսումնասիրել ենք փորձագիտական հետազոտության ընթացքում կիրառվող հատուկ գիտելիքների հասկացությունն ու բովանդակությունը, ինչպես նաև՝ փորձաքննության նպատակը և խնդիրները:

Փորձաքննության վերաբերող հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) 32-րդ գլխում [11]: Համապատասխան օրենսգրքին փորձագետը համարվում է վարույթի օժանդակող անձ: ՀՀ ՔԴՕ 59-րդ հոդվածի համաձայն փորձագետը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որը հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ օժանդակում է վարույթին: Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների: Դատական փորձաքննության տեսության և իրավաբանական գիտությունների մեջ «հատուկ գիտելիքներ» հասկացությունը տարբեր ընկալումների պատճառ է դարձել: Մասնագիտական գրականության մեջ, մեկնաբանելով տվյալ հասկացությունը, նշվում է որ դրանց մեջ չեն մտնում իրավաբանական գիտելիքները [4, 5, 6]: Որոշ հեղինակներ «հատուկ գիտելիքներ» և «հատուկ իմացություն» եզրույթները դիտարկում են համարժեք՝ նշելով, որ դրանք վկայում են փորձագետի բազմակողմանի մասնագիտական զարգացվածության մասին [9, 17 էջ]: Դա հիմք է տալիս փաստելու, որ հատուկ գիտելիքները իրավաբանական գիտելիքների շրջանակից դուրս են, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին Հայաստանի Հանրապետության իրավունքի կամ միջազգային իրավունքի հարցերով փորձագետ չի ներգրավվում» [11]:

Այն դեպքում, երբ քրեական գործով էական հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հատուկ հոգեբանական գիտելիքների կիրառման, նշանակում են դատահոգեբանական փորձաքննություն: Դատահոգեբանական փորձաքննությունը նշանակվում է այն դեպքում, երբ փորձաքննության ուղղարկվող անձանց հոգեկան առողջությունը կասկած չի առաջացնում քննչական մարմինների ներկայացուցիչների մոտ կամ էլ հաստատված է դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ [1, էջ 309]: Այստեղ հատկանշական է, որ դատահոգեբանական փորձաքննությունը չպետք է կատարվի

դատահոգեբուժական փորձաքննությունից առաջ, մինչդեռ կարող է կատարվել միաժամանակ: Դատահոգեբանական փորձաքննության միջոցով ստացված տվյալները, հնարավորություն են ընձեռնում հասկանալ և հավաստի գնահատական տալ անձի հոգեկան գործունեության և անհատական առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք կարևոր նշանակություն ունեն փորձագետի կողմից տրված եզրակացությունների համար: Նշված հանգամանքը միանշանակ օրինաչափ է, քանի որ դատահոգեբանական փորձաքննության օբեկտը հոգեկան հիվանդությամբ չտառապող անձն է:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ փորձագետի եզրակացությունը համարվում է ապացույց, շատ կարևոր է դրա հստակ բովանդակությունն ու գիտական հիմնավորվածության պարզաբանումը: ՀՀ ՔԴՕ-ի հոդված 259-ը սահմանում է փորձագետի եզրակացության բովանդակության վերաբերյալ դրույթները: Եզրակացության գրավոր ձևը պարունակում է փորձագետի կողմից կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը, որտեղ անհրաժեշտ է նշել օգտագործված այն հատուկ մեթոդները, որոնք հնարավորություն կընձեռեն դատական մարմիններին՝ գնահատել, թե որքանով են դրանք թույլատրելի փորձաքննվողի առողջությունը չխաթարելու համար և բացառել դրանց հակասությունը մարդու իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքներին [1, էջ 309-311]: Փորձագետի եզրակացությունը պետք է լինի՝ արժանահավատ, որպեսզի քննչական մարմնի կողմից դիտարկվի թույլատրելի գործի էական հանգամանքների ապացուցման համար: Այս առումով կարևորվում է Վճռաբեկ դատարանի նախադեպային գործելակերպը: Օրինակ՝ Արայիկ Խաչատրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք [12]: Նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ, որին զուգահեռ կամ հաջորդաբար կարող է նշանակվել նաև դատահոգեբանական փորձաքննություն:

Դատահոգեբանական փորձաքննությունը նշանակվում է մի շարք հանցագործությունների բացահայտման ընթացքում, որոնք հնարավոր է կատարված լինեն հոգեկան ներգործուն ազդեցության տակ: Իրավաբանական պրակտիկայում, դրանք գերակշիռ մաս են կազմում, օրինակ՝ աֆեկտի ազդեցության տակ, սեռական անձեռնմխելիության դեմ կատարված և սեքսուալ բռնությունների գործերով, անչափահասների

մասնակցությամբ կատարված և այլն: Նման դեպքերում դատահոգեբանի փորձաքննության ընթացքում վերջինիս նպատակն է՝ որոշել անձի կողմից հանգամանքներն ըմբռնելու և դրանց մասին ճիշտ ցուցմունքներ տալու ընդունակությունը, անչափահաս մեղադրյալների իրենց գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու ընդունակությունը, ինքնասպանությանը նախորդած հոգեկան վիճակի պարզաբանումը, մեղադրյալի այնպիսի առանձնահատկությունների պարզաբանումը, որոնք կարող էին նպաստել հակաօրինական գործողությունների կատարմանը [1]:

Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածը սահմանում է «Հոգեկան ներգործությունը», այն է՝ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առնանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը, իսկ համապատասխան հոդվածի 2-րդ մասով սահմանվում է նախատեսված արարքի կատարման շրջանակը: Նշված դեպքերում քննիչի կողմից նշանակվում են դատահոգեբանական փորձաքննություն: Օրինակ, եթե ՀՀ ՔՕ 194.1 հոդվածով նախատեսված արարքը կատարվել է անչափահասի նկատմամբ [10], քննիչի որոշմամբ ՀՀ ՔԴՕ հոդված 212-ի հիմքով նշանակվում է դատահոգեբանական փորձաքննություն: Այս առումով հատկանշական է ՀՀ ՔԴՕ 212.3 ամրագրված այն դրույթը, որը սահմանում է, որ հոգեբանի առաջարկությամբ և անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով քննչական գործողությունը կատարվում է այնպիսի պայմաններում, որորնք թույլ կտան առավելագույնս երաշխավորել նրա լավագույն շահերը: Հոդվածի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ անչափահաս անձի կամ հոգեկան առողջության խանգարում ունեցող անձի մասնակցությամբ կատարվող դատահոգեբանական և քննչական գործողությունները առավելապես ապահովում են վերջիններիս իրավունքների համակողմանի պաշտպանությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով իրավաբանական պրակտիկան և մասնագիտական գրականությունը, կարող ենք փաստել, որ դատահոգեբանական փորձաքննությունը ունի իր ուրույն տեղը ապացուցողական գործընթացում, քանի որ վերջինս հնարավորություն է ընձեռում հանցագործության սուբեկտիվ կողմի ամբողջական հետազոտման համար, ինչպես նաև տուժողների, վկաների, մեղադրյալների ցուցմունքների արժանահավատությունը պարզելու համար: Միաժամանակ հարկ ենք

համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա փորձագիտական գործունեության վերաբերյալ առանձին օրենք և այն իր կարգավորումը ստանում է դատավարական օրենսդրությամբ: Կարծում ենք, եթե փորձագիտական գործունեությունը ստանա հստակ օրենսդրական կարգավորում, համակողմանի կուսումնասիրվեն և հնարավոր կլինի լուծել այս ոլորտի խնդիրները: Այս հարցում կարելի է ուսումնասիրել արտասահմանյան երկրների փորձաքնությունների իրավական կարգավորման պրակտիկան՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Ավստրալիայի և այլն: Բացի այդ քրեաիրավական պրակտիկայում դատահոգեբանական փորձաքնությունը անհրաժեշտ է կատարել գիտական և հոգեբանական ժամանակակից մեթոդների համադրմամբ: Կատարված ուսումնասիրության հիման վրա առաջարկում ենք.

✓ մշակել և ընդունել «Փորձագիտական գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենք,

✓ ներդնել փորձագիտական եզրակացությունների կատարման ժամանակակից մեթոդներ, որոնցից է՝ թեստերի և ժամանակակից տեխնիկայի համադրումը:

Նշված երկու առաջարկությունների իրագործումը, անշուշտ բազմակողմանի կդարցնի դատահոգեբանական փորձաքնությունը և կբարձրացնի փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը և արժեհավատությունը:

Գրականություն

1. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2004. – 344 էջ:
2. Ենգիբարյան Վ., Հովսեփյան Ա. Դատական փորձաքնությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները գիտագործնական ձեռնարկ, Երևան, 2020. – 331 էջ:
3. Չախոյան Ա. Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները, Երևան, 2013. – 198 էջ:
4. Аверьянова Т., Россинской Р. Энциклопедия судебной экспертизы, Под ред. Москва, 1999. – 551 с.
5. Белкин С. Криминалистическая энциклопедия, М.: 2000. – 334 с.
6. Додин Е. Доказывание и доказательства в правоприменительной деятельности органов советского государственного управления, Киев; Одесса, 2008. – 185 с.
7. Сафуанов С. Судебно-психологическая экспертиза в уголовном процессе М.: 1998. – 118 с.

8. Лисиченко К., Циркаль В. Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987. – 914 с.
9. ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 2015 թ. դեկտեմբերի 22:
10. ՀՀ Քրեական օրենսգիրք, ընդունված՝ 2022 թ. հունիսի 9:
11. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 2021 թ. հունիսի 30:
12. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրոշում: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=100079>

СУДЕБНАЯ ПСИХОЛОГИЯ ЛИЦ С УГОЛОВНЫМИ ДЕЛАМИ ХАРАКТЕРИСТИКИ ОПЫТА

Габриелян А.Г. (КГД, Мегринское отделение Сюникского областного
управления
по борьбе с контрабандой, Агарак, РА)
anigabi1996@mail.ru

Аннотация: Данная работа посвящена особенностям судебно-психологической экспертизы лица по уголовным делам, порядку назначения и производства судебно-психологической экспертизы по уголовным делам, выявлению и решению практических процессуальных проблем в результате их проведения. Целью аналитической работы является изучение функционирования системы судебно-психологической экспертизы и ее роли в системе доказывания уголовных дел. Для достижения поставленной цели были поставлены задачи изучения дел о сексуальном насилии, совершенном в отношении половой неприкосновенности под влиянием аффекта, а также судебно-психологической экспертизы несовершеннолетних и другие вопросы. На основании сделанных наблюдений автор предложил разработать и принять Закон РА «О регулировании экспертной деятельности» и внедрить современные методы выполнения экспертных заключений.

Ключевые слова: человек, уголовное дело, психолог, экспертиза, психическое состояние, заключение.

FEATURES OF THE FORENSIC PSYCHOLOGICAL EXPERIENCE OF A PERSON IN CRIMINAL CASES

Gabrielyan A.H. (SRC, Meghri Department of the Syunik Regional Department of
the Anti-Smuggling Department, Agarak, RA)
anigabi1996@mail.ru

Abstract: This work is dedicated to the peculiarities of the forensic psychological examination of a person in criminal cases, the order of appointment

and execution of the forensic psychological examination in criminal cases, the identification and solution of practical procedural problems as a result of them. The purpose of the analytical work is to study the functioning of the forensic psychological examination system and its role in the evidence system of criminal cases. In order to achieve the set goal, problems were set to study the cases of sexual violence committed against sexual integrity under the influence of affect, as well as the forensic psychological examination of minors and other issues. Based on the observations made, the author proposed to develop and adopt the RA Law "On the Regulation of Expert Activity" and to introduce modern methods of performing expert conclusions.

Keywords: person, criminal case, psychologist, examination, mental state, conclusion.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 22.01.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 05.02.2024

**ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՇԱՀԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժամկոցյան Ռ.Ս. (հ.գ.թ., Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
Ruzanna_rom84@mail.ru

Ամփոփագիր: Հռոկվածում ներկայացված են ամուսնաընտանեկան վեճերի, ամուսնալուծությունից հետո առաջացած խնդիրների և երեխայի տեսակցության հետ կապված դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում փորձագետ-հոգեբանին առաջադրվող կարևորագույն հարցադրումները, ինչպես նաև ամուսնաընտանեկան կոնֆլիկտների և չավարտված ամուսնալուծությունների հետևանքները երեխաների վրա, երեխայի լավագույն շահն ապահովելու համար ծնողների կողմից իրականացվող ցանկալի միջոցները:

Ամուսնալուծությունը որպես սոցիալ-հոգեբանական իրավիճակ, տրավմատիկ ազդեցություն ունի ընտանիքի անդամների, հատկապես երեխաների վրա, ինչը կարող է հանգեցնել երեխաների մոտ տազնապայնության բարձրացման, ներքին կոնֆլիկտների, բաժանման վախերի առաջացման, մերժվածության և դավաճանված լինելու զգացողության, ագրեսիվության, ծնողներին կորցնելու վախի, մեղքի զգացման և այլն:

Ամուսնալուծության փաստը մեծ սթրես է երեխաների համար, և տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ երեխաները յուրովի են ընկալում իրավիճակն ու արձագանքում ամուսնալուծության հետևանքներին և ընտանիքում փոփոխությանը: Նոր իրավիճակին երեխայի հարմարման վրա մեծ ազդեցություն ունեն երեխայի ծնողների՝ միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունները: Կոնֆլիկտային ամուսնալուծությունների արդյունքում երեխաները հաճախ ստիպված են լինում հեռու լինել ծնողներից մեկից, փոխել իրենց ապրելակերպը և սոցիալական կապերը:

Ֆունկցիանալ կամ ավարտված ամուսնալուծությունների դեպքում վստահելի կապվածությունն ոճ ունեցող երեխաներն ավելի հեշտ և առանց հետևանքների են հարմարվում նոր իրավիճակին: Իսկ դիսֆունկցիոնալ ամուսնալուծությունները, ծնողների կոնֆլիկտային հարաբերությունները, երեխայի ներկայությամբ կոնֆլիկտները, ծնողներից մեկի հետ հանդիպման դժվարություններն ու խոչընդոտները մեծացնում են երեխայի մոտ տարանջատման տազնապի և տազնապային խանգարումների առաջացման հավանականությունը:

Հիմնաբառեր. ֆունկցիանալ և դիսֆունկցիոնալ ամուսնալուծություններ, կապվածություն, տարանջատման տազնապային խանգարում:

Ամուսնարնտանեկան վեճերի, ամուսնալուծությունից հետո առաջացած խնդիրների, երեխայի տեսակցության և երեխայի բնակության վայրի սահմանման հետ կապված դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում փորձագետ-հոգեբանին առաջադրվող կարևորագույն հարցադրումներից են երեխայի հոգեբանական վիճակի, երեխայի՝ ծնողներից յուրաքանչյուրի հետ ունեցած հուզական կապվածության որոշման, ինչպես նաև երեխայի լավագույն շահի ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցներին վերաբերվող հարցերը:

Առաջադրված հարցերի պարզաբանման համար նպատակահարմար է ուսումնասիրել առհասարակ ամուսնալուծության ազդեցությունը երեխաների հոգեհուզական զարգացման վրա: Ամուսնալուծությունը ամբողջ ընտանեկան համակարգի, այդ թվում երեխաների համար տրավմատիկ իրավիճակ է, որը ենթադրում է ընտանիքի կազմի, կենսակերպի, գործառույթների փոփոխություն: Ամուսնալուծությունը, որպես սոցիալ-հոգեբանական իրավիճակ, կարող է հանգեցնել երեխաների մոտ տազնապայնության բարձրացման, ներքին կոնֆլիկտների, բաժանման վախերի առաջացման, մերժվածության և դավաճանված լինելու զգացողության, ագրեսիվության և մեղքի զգացման և այլն:

Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ այսօր ընտանեկան համակարգում ամուսնալուծությունը համարվում է նորմատիվ ճգնաժամերից մեկը, տարանջատման մեխանիզմ, որը անհրաժեշտ է ճիշտ հաղթահարել: Երեխայի վրա ամուսնալուծության ազդեցությունը նույնպես միանշանակ չի դիտարկվում հոգեբանների կողմից: Առանձնացվում են ամուսնալուծության բացասական և նորմալ ազդեցություններ, որոնք կապված են հիմնականում ծնողների փոխհարաբերությունների ընթացքի հետ: Ըստ Գ. Ֆիզդորի՝ երեխայի վախը, գայրույթը, իմպուլսիվությունը անմիջապես ամուսնալուծությունից հետո ախտաբանական դրսևորումներ չեն, այլ փոփոխվող աշխարհին առողջ արձագանքներ են [3]:

Կ. Ահրոնսը գտնում էր, որ ընտանիքը որպես համակարգ, արձագանքում է ցանկացած փոփոխության, այդ թվում ամուսնալուծությանը: Ըստ Կ. Ահրոնսի՝ ամուսնալուծության նկատմամբ արձագանքը կարող է լինել ֆունկցիոնալ և դիսֆունկցիոնալ: Ֆունկցիոնալ կամ ավարտված ամուսնալուծությունները, որն Կ. Ահրոնսը անվանում էր «լավ ամուսնալուծություններ», տարբերվում են դիսֆունկցիոնալից նրանով, որ նախկին ամուսինները միմյանց նկատմամբ չեզոք վերաբերմունք ունեն, հարմարվել են ամուսնալուծության փաստին, երբ վրդովմունք, ամուսնու

նկատմամբ թաքնված կամ բացահայտ քննադատություն, երեխայի հետ շփվելու արգելք և խոչընդոտ չկա: Չկա նաև հետաքրքրություն նախկին ամուսնու անձնական կյանքի նկատմամբ: Նախկին ամուսինները համագործակցում են որպես ծնողներ, միասին որոշում երեխայի հետ ժամանակ անցկացնելու ժամանակահատվածները՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Նման ամուսնալուծությունների արդյունքում պահպանվում են երեխայի հետ ծնողների ջերմ հարաբերությունները, հուզական կապը, հոգեկան առողջությունը, ի տարբերություն այն ընտանիքների, որտեղ ծնողներն ամուսնալուծված չեն, բայց կոնֆլիկտային հարաբերություններ ունեն [5]:

Ա. Վարզան առանձնացնում էր հուզական առումով ավարտված և չավարտված ամուսնալուծություններ: Ըստ Ա. Վարզայի՝ հուզականորեն չավարտված ամուսնալուծությունների դեպքում ամուսինները փաստացի ամուսնալուծվել են, սակայն դեռ շարունակում են միմյանց նկատմամբ բացասական հույզեր ունենալ՝ ինչպես բուն կոնֆլիկտի ժամանակ: Սովորաբար նման հուզական չավարտված ամուսնալուծությունները բացասական հոգեբանական ազդեցություն են ունենում երեխաների վրա, քանի որ ծնողները երեխայի ներկայությամբ վիճում են, երեխաների վրա բացասական հոգեբանական ներգործություն ունենում, նրան տրամադրում իրար դեմ, կամ երեխային դարձնում ագրեսիայի տեղափոխման օբյեկտ [1, էջ 14]:

Հուզական առումով ավարտված ամուսնալուծությունների պարագայում, ինչպես Կ. Ահրոնսի ֆունկցիոնալ ամուսնալուծությունների դեպքում, նախկին ամուսինները ուժեղ բացասական հույզեր չունեն միմյանց նկատմամբ, երեխայի դաստիարակության և խնամքի հարցում համագործակցում են:

Ամուսնալուծության փաստը երեխաների համար մեծ սթրես է, և երեխաները, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, յուրովի են ընկալում իրավիճակն ու արձագանքում դրան, ամուսնալուծության հետևանքներին և ընտանիքում փոփոխությանը: Նոր իրավիճակին երեխայի հարմարման վրա մեծ ազդեցություն ունեն երեխայի ծնողների՝ միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունները: Կոնֆլիկտային ամուսնալուծությունների հետևանքով երեխաները հաճախ ստիպված են լինում հեռու լինել ծնողներից մեկից, փոխել ապրելակերպը և սոցիալական կապերը:

Տարբեր հոգեբանական տեսություններ են անդրադառնում երեխաների վրա ծնողների ամուսնալուծության հետևանքներին և ամուսնալուծվող ծնողների հոգեբանական վիճակին: Օբյեկտային հարաբերությունների տեսության ներկայացուցիչներից Ջ. Բոուլբին առաջ է քաշել կապվածության՝ որպես մարդու էվոլյուցիոն պահանջմունքի գաղափարը: Ըստ նրա՝

կապվածությունը հանդես է գալիս որպես երեխայի պաշտպանական գործառույթ: Կապվածությունն առաջանում է նշանակալի մեծերի, հիմնականում ծնողների, խնամողների նկատմամբ: Չ. Բոուլբին առանձնացնում է վստահելի և ոչ վստահելի կապվածության ձևերը, որոնց հիման վրա ձևավորվում է երեխայի վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ: Երեխայի թերի խնամքը, երկար բաժանումը կամ նշանակալի մարդու կորուստը ձևավորում են անվստահելի կապվածություն: Վստահելի կապվածության ձևավորման արդյունքում երեխան շփվող է, կիրառում է հաղթահարման կառուցողական ռազմավարություններ, կարողանում է կառավարել բացասական հույզերը [6, էջ 417-431]:

Ֆունկցիանալ կամ ավարտված ամուսնալուծությունների դեպքում վստահելի կապվածություն ռճ ունեցող երեխաներն ավելի հեշտ և առանց հետևանքների են հարմարվում նոր իրավիճակին: Վստահելի կապվածության ռճի դեպքում երեխայի մոտ օբյեկտի մշտականության զգացում է ձևավորվում, նա հասկանում է, որ ծնողները շարունակում են գոյություն ունենալ և սիրել իրեն, նույնիսկ, եթե նրանք շրջապատում չեն: Իսկ դիսֆունկցիոնալ ամուսնալուծությունները, ծնողների կոնֆլիկտային հարաբերությունները, երեխայի ներկայությամբ կոնֆլիկտները, ծնողներից մեկի հետ հանդիպման դժվարությունները ու խոչընդոտները մեծացնում են երեխայի մոտ տարանջատման տագնապի և տագնապային խանգարումների առաջացման հավանականությունը:

Հուզական կապի բարձր մակարդակի դեպքում ծնողից բաժանման արդյունքում տարանջատման տագնապը բնորոշ վարքային դրսևորում ունի: Բաժանման պահին երեխան լաց է լինում, տագնապում ու անհանգստանում: Չավարտված ամուսնալուծությունների երկար ընթացքը երեխաների մոտ տագնապային խանգարումների առաջացման պատճառ կարող է դառնալ:

Նշանակալի մեծահասակից կամ կապվածության օբյեկտից բաժանման չափազանց մեծ վախն ու տագնապը առանձին դասակարգված է ՀՄԴ 11-ի 6B05 դասում՝ որպես Տարանջատման տագնապային խանգարում և ունի ախտորոշման հստակ ցուցումներ: Բաժանման հետ կապված տագնապը կարող է դրսևորվել հետևյալ կերպ.

ա) կայուն անիրատեսական, ճնշող անհանգստություն կապվածություն ունեցող նշանակալի մեծահասակի հնարավոր վնասի մասին կամ վախ, որ նրանք կթողնեն իրեն և չեն վերադառնա:

բ) անիրատեսական, ճնշող անհանգստություն, որ ինչ-որ դժբախտ դեպք կբաժանի երեխային այն մարդուց, ում նկատմամբ մեծ կապվածություն ունի, օրինակ՝ երեխան կկորի, կառնանգվի, կընկնի հիվանդանոց կամ կապանվի:

զ) համատ դժկամություն կամ դպրոց գնալուց հրաժարվելը բաժանվելու վախից (և ոչ այլ պատճառներով, օրինակ, որ դպրոցում ինչ-որ բան տեղի կունենա):

դ) մշտական ոչ ադեկվատ վախ մենակությունից կամ առանց կապվածության օբյեկտի օրվա ընթացքում տանը մնալու վախ:

զ) բաժանման մասին կրկնվող գիշերային մղձավանջներ:

ե) կրկնվող ֆիզիկական ախտանիշների ի հայտ գալը (օրինակ՝ սրտխառնոց, որովայնի ցավ, գլխացավ, փսխում և այլն), երբ բաժանվում են այն անձից, ում նկատմամբ կապվածություն ունեն, օրինակ՝ երբ պետք է գնալ դպրոց:

ը) կրկնվող չափազանց անհանգստության դրսևորումը (անհանգստությամբ, լացով, գրգռվածությամբ, տառապանքով, անտարբերությամբ կամ սոցիալական հեռացումով), երբ զգում է, որ շուտով պիտի բաժանվի այն անձից, ում հետ կապված է, նրանից բաժանվելու ժամանակ կամ անմիջապես հետո [2, էջ 121]:

Հաճախ հոգեբանական փորձաքննությունների ընթացքում հանդիպում ենք իրավիճակների, երբ երեխան հերթական տեսակցության օրն ուղղակի հրաժարվում է ծնողի հետ հանդիպումից, սակայն հոգեբանական փորձաքննության արդյունքները ցույց են տալիս, որ երեխան ծնողի հետ ունի հուզական կապ, իսկ ծնողն, ում հետ ապրում է երեխան, չի խոչընդոտում երեխայի հետ չապրող ծնողի հետ հանդիպումներին: Խոչընդոտների և երեխաների նկատմամբ հոգեբանական ազդեցությունների բացակայության դեպքում՝ նման դրսևորումները հիմնականում պայմանավորված են լինում ծնողների միջև բարդ ու կոնֆլիկտային հարաբերությունների ընթացքի և դիսֆունկցիոնալ ամուսնալուծությունների հետ:

Նման հարաբերությունները սովորաբար բացասաբար են ազդում երեխայի և նրա հետ չապրող ծնողի փոխհարաբերությունների վրա: Մի կողմից երեխան վախ է ունենում կորցնել նաև երկրորդ ծնողին և մնալ մենակ, մյուս կողմից՝ դիսֆունկցիոնալ ամուսնալուծությունների դեպքում հիմնականում երեխային կամ չեն բացատրվում կամ սխալ են մեկնաբանում ամուսնալուծության հետևանքները, որի արդյունքում երեխան սկսում է մտածել, որ իր հետ չապրող ծնողը ցանկություն չունի հանդիպել և այլևս չի սիրում իրեն: Նման հարաբերություններում երեխայի մոտ կարող են դրսևորվել իրավիճակի տրավմատիկությունը հաղթահարելու երեք պաշտպանական մարտավարություն:

1. Հեռացած ծնողից հրաժարվելը, որն արտահայտվում է երեխայի կողմից ծնողի հետ հանդիպումներից հրաժարվելով, նրա նշանակալիության կամ ծնողի՝ իր նկատմամբ վերաբերմունքի արժեզրկմամբ, որն օգնում է երեխային հաղթահարել տագնապը: Երբեմն երեխան կարող է միավորվել իր հետ ապրող ծնողի հետ ընդդեմ երեխայի հետ չապրող ծնողի:

2. Եսասիրական դրսևորումներ, որոնք արտահայտվում են ծնողների, հատկապես իր հետ չապրող ծնողի՝ իր նկատմամբ վերաբերմունքի նկատմամբ անտարբերությամբ: Երեխան ստեղծված իրավիճակն օգտագործում է իր ցանկությունները բավարարելու պահանջներով, փորձում է «փոխհատուցում» ստանալ իր հետ չապրող ծնողից իրեն լքելու համար, որը հիմնականում նյութական պահանջների բավարարման տեսքով է լինում: Նման մարտավարության արդյունքում երեխան կարող է մանիպուլացնել ծնողներին, որը նոր կոնֆլիկտների առիթ կարող է հանդիսանալ ծնողների միջև:

3. Ներքին կոնֆլիկտների հաղթահարման երրորդ տարբերակը երեխայի կողմից սեփական անձի արժեզրկումն է: Ծնողների կոնֆլիկտային հարաբերությունների, չավարտված ամուսնալուծությունների ընթացքում ծնողները հաճախ երեխաներից սպասում են, որ պետք է իրենց կողմն ընտրեն, պաշտպանեն իրենց, մեղադրեն երեխայի հետ չապրող ծնողին: Երեխան սկսում է թաքցնել իր հետ չապրող ծնողի նկատմամբ զգացմունքները, սերը, որպեսզի չվիրավորի կամ չնեղացնի իր հետ ապրող ծնողին, հասկանում, որ չի արդարացնում ծնողի սպասումները: Արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է անլիարժեքության զգացում, որն իր տրավմատիկ ազդեցությունը թողնում է անձի հետագա կյանքի վրա:

Ամուսնաընտանեկան հարցերով հոգեբանական փորձաքննությունները և ամուսնալուծված ծնողների հետ հոգեբանական աշխատանքը ցույց է տալիս, որ երեխաների լավագույն շահի ապահովման և երեխաների վրա ամուսնալուծության հետևանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով անհարժեշտ են.

1. Ծնողներին բացատրել ամուսնաընտանեկան կոնֆլիկտային հարաբերությունների և չավարտված ամուսնալուծությունների հետևանքները երեխաների հոգեբանական վիճակի վրա, նրանց հուզական նորմալ և ախտաբանական դրսևորումները, ապրումներն ու հուզական արձագանքների օրինաչափությունները: Անհրաժեշտ է տեղեկացնել ծնողներին կախվածության և տարանջատման տազնապի դրսևորումների մասին, ինչպես նաև երեխայի ընկալման ու արձագանքների մասին՝ կապված ծնողների և այլ մարդկանց կողմից յուրաքանչյուր ծնողին ուղղված մեղադրանքների և վիրավորանքների հետ:

2. Նվազագույնի հասցնել երեխայի սոցիալական կապերում փոփոխությունները: Հաճախ ամուսնալուծությունների դեպքում ծնողները փոխում են երեխայի դպրոցը, մանկապարտեզը, փոխվում է բակն, ու երեխան գրկվում է ընկերների, նշանակալի հասակակիցների և մեծահասակների հետ հանդիպումներից, որը, արդեն իսկ կոնֆլիկտային ամուսնալուծության ու փոփոխությունների դեպքում, հավելյալ սթրես է երեխայի համար:

3. Ծնողների կողմից ամուսնական և ծնողական դերերի տարանջատում, որը հնարավորություն կտա առկա կոնֆլիկտային հարաբերությունները կարգավորել: Ծնողական դերերի հստակ գիտակցումը և ամուսնաընտանեկան հարաբերություններից տարանջատումը կնպաստի ծնողների միջև առողջ համագործակցությանը, երեխայի հետ հանդիպումներն առանց կոնֆլիկտի, լարվածության, հոգեբանորեն առողջ միջավայրում կազմակերպմանը, ինչպես նաև սեփական կյանքի ինքնուրույն տնօրինմանը [4]:

Այսպիսով, ամուսնալուծության տիպը մեծ ազդեցություն ունի ընտանիքի յուրաքանչյուր անդամի, հատկապես երեխաների, հոգեբանական վիճակի վրա: Երեխայի վրա ամուսնալուծության հետևանքների ազդեցությունը պայմանավորող գործոններից են երեխայի և ծնողների միջև կապվածության ոճը, ամուսնաընտանեկան հարաբերությունների բարդ ընթացքը, ամուսնալուծության հուզականորեն ավարտված կամ չավարտված լինելը և ծնողների կողմից՝ երեխայի հոգեբանական առանձնահատկությունների, հուզական դրսևորումների մասին տեղեկացվածությունը:

Գրականություն

1. Варга А.Я., Драбкина Т.С. Системная семейная психотерапия. Краткий лекционный курс. СПб.: Речь, 2001. – 144 с.
2. МКБ-11. Глава 06. Психические и поведенческие расстройства и нарушения нейropsychического развития. Статистическая классификация /Под редакцией Г.П. Костюка. М.: "КДУ", "Университетская книга". 2021. – 432с.
3. Фигдор Г. Дети разведенных родителей: между травмой и надеждой. Санкт-Петербург: Питер. 2021. – 376 с.
4. Якимова Т.В. Психология семьи: учебник и практикум для академического бакалавриата /Т. В. Якимова. – М.: Издательство Юрайт. 2020. – 345 с.
5. Ahrons C. The Good Divorce: Helping Families Reorganize. Invited Lecture Presented at The Master Therapist Series. Farmington, CT: University of Connecticut Health Center. 1992.
6. Cohn D.A., Cowan P.A., Cowan C.P., Pearson J. Mothers' and fathers' working models of childhood attachment relationships, parenting styles, and child behavior. Development and Psychopathology, 4, 1992. P. 417–431.

ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ НАИЛУЧШИХ ИНТЕРЕСОВ РЕБЕНКА В БРАКОРАЗВОДНОМ ПРОЦЕССЕ

Жамкоцян Р.С. (к.пс.н., АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

Аннотация: В статье представлены важнейшие вопросы, которые ставятся перед экспертом-психологом в рамках судебно-психологической экспертизы, связанные с супружескими спорами, проблемами, возникающими после расторжения брака и посещения ребенка. Представлены также последствия супружеских конфликтов и эмоционально незавершенных разводов на детей и желательные меры, принимаемые родителями для обеспечения наилучших интересов ребенка.

Развод как социально-психологическая ситуация оказывает травмирующее воздействие на членов семьи, особенно на детей, что может привести к повышенной тревожности детей, внутренним конфликтам, страху разлуки, чувствам отторжения и предательства, агрессивности и вины и т. д.

Факт развода является большим стрессом для детей, и дети в зависимости от возраста по-разному воспринимают ситуацию и реагируют на нее, на последствия развода и изменения в семье. На адаптацию ребенка к новой ситуации большое влияние оказывают отношения родителей ребенка друг к другу. В результате конфликтных разводов детям часто приходится находиться вдали от одного из родителей, менять образ жизни и социальные связи.

При функциональных или завершенных разводах дети с безопасным стилем привязанности легче и без последствий адаптируются к новой ситуации. А дисфункциональные разводы, конфликтные отношения между родителями, конфликты в присутствии ребенка, трудности и препятствия во встрече с одним из родителей повышают вероятность сепарационной тревоги и тревожных расстройств у ребенка.

Ключевые слова: функциональные и дисфункциональные разводы, привязанность, сепарационное тревожное расстройство.

THE FEATURES OF PSYCHOLOGICAL EXPERTISE TO ENSURE THE BEST INTERESTS OF THE CHILD IN DIVORCE PROCESS

Zhamkotsyan R.S. (Ph.D in Psychology, Kh. Abovyan ASPU, Yerevan, RA)

Ruzanna_rom84@mail.ru

Abstract: The article presents the most important questions posed to an expert-psychologist within the framework of forensic psychological expertise related to marital disputes, problems arising after divorce and visiting a child, as well as the consequences of marital conflicts and emotionally incomplete divorces on children, desirable measures taken by parents to ensure the best interests of the child.

Divorce as a socio-psychological situation has a traumatic effect on family members, especially children, which can lead to increased anxiety in children, internal conflicts, fear of separation, feelings of rejection and betrayal, aggressiveness and guilt, etc.

The fact of divorce is a great stress for children, and depending on their age, children perceive the situation differently and react to it, to the consequences of divorce and changes in the family. The child's adaptation to a new situation is greatly influenced by the relationship of the child's parents to each other. As a result of high-conflict divorces, children often have to stay away from one of their parents and change their lifestyle and social connections.

In functional or completed divorces, children with a secure attachment style adapt to the new situation more easily and without consequences. And dysfunctional divorces, conflictual relationships between parents, conflicts in the presence of a child, difficulties and obstacles in meeting one of the parents increase the risks of separation anxiety and anxiety disorders in the child.

Keywords: functional and dysfunctional divorces, attachment, separation anxiety disorder.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 12.02.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 28.02.2024

**ԴՊՐՈՑՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Խուրոյան Ա.Ս. (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
khudoyanani24@aspu.am

Ամփոփագիր: Աշխատանքը նվիրված է դպրոցում հոգեբանական բռնության դեպքերի հետազոտման փորձաքննության առանձնահատկություններին: Ներկայացված են հիմնական և ավագ դպրոցներում իրականացված բռնության դեպքերի բացահայտմանն ուղղված հոգեբանական փորձաքննության, հետազոտության ընթացքը և արդյունքները: Նկարագրված են կրթական միջավայրում՝ աշակերտների, ծնողների, ուսուցիչների հետ իրականացվող հոգեբանական փորձագիտական հետազոտության գործիքակազմի ընտրության սկզբունքները, ինչպես նաև, մինչ այսօր մեր կողմից իրականացված փորձագիտական հետազոտությունների արդյունքների ամփոփ վերլուծությունը, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել դպրոցում աշակերտների կողմից իրականացվող հոգեբանական բռնության տարիքային առանձնահատկություններին, բռնության տեսակների վերաբերյալ:

Ընդհանրացնելով հետազոտական աշխատանքի ընթացքում իրականացված վերլուծությունները՝ կարող ենք ասել, որ հոգեբանական բռնությունն ընկած է բռնության հիմնական տեսակների հիմքում, տարիքային տարբեր փուլերում, ինչպես նաև կախված սեռային առանձնահատկություններից՝ դպրոցում հոգեբանական բռնության ձևերի դրսևորումները կարող են փոփոխվել, իսկ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս դուրս բերել բռնության դեպքերի հոգեբանական փորձաքննության կազմակերպման, իրականացման և վերլուծության մասնագիտական, հոգեբանական գիտելիքներ ու հմտություններ:

Հիմնաբառեր: Հոգեբանական բռնություն, անտեսում, մեկուսացում, խոսքային ագրեսիա, ֆիզիկական բռնություն, կիբերբուլինգ, սոնտեսական բուլինգ, հոգեբանական փորձաքննություն:

Հոգեբանական բռնության երևույթը գրականության մեջ հաճախ տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում: Վ. Մոլոդնիկովը, մասնավորապես, նշում է, որ «Հոգեբանական բռնությունը դա բռնության այն տեսակն է, որի արդյունքում տարբեր մեթոդների միջոցով անձի հոգեկանի վրա ազդելու քայլեր են ձեռնարկվում, որոնց նպատակն է ստիպել անձին հրաժարվել սեփական իրավունքներն ու հետաքրքրություններն պաշտպանելու կամքից» [3]: Ե. Իյինը հոգեբանական կամ հուզական բռնությունը մեկնաբանում է տևական

Ժամանակահատվածում մարդու վրա բացասական հոգեբանական ներգործություն ունենալու տեսանկյունից, ինչի արդյունքում կարող է առաջանալ հոգեկան տրավմա, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել պաթոլոգիկ հատկությունների ձևավորման կամ անձի զարգացման խաթարման: Ե. Վոլկովը սահմանում է հոգեբանական բռնությունը որպես սոցիալ-հոգեբանական ներգործության տեսակ, որի դեպքում անձին ստիպում են դրսևորել իր կամքին հակառակ վարք, ինչի արդյունքում խախտվում են վերջինիս անձնական սահմանները, անձի հոգեբանական անվտանգությունը՝ վերջինիս սոցիալական, հոգեբանական, ֆիզիկական մակարդակում վնաս պատճառելով [2]:

Կրթական միջավայրում բռնության դրսևորման երևույթի ուսումնասիրությամբ զբաղվել են Դ. Օլվեուսը, Ե. Ռոլանդը, Դ. Լեյնը և այլք: Ս. Կրիվցովայի հետազոտությունների համաձայն, դպրոցում առավել հաճախ կիրառվող բռնության տեսակներն են՝ վիրավորանքը, մականուններ դնելը, բամբասանքը, չարախոսությունը, երեխային օտարացնելը, խմբից առանձնացնելը, ֆիզիկական ագրեսիան՝ հարվածել, հրել, գողություն անել և այլն: Բռնարար վարքը կարող է լինել, ինչպես նախապես ծրագրավորված, այնպես էլ՝ սպոնտան բնույթ կրող: Երկու դեպքում էլ, վարքի հիմքում հիմնականում ընկած են այլ անձանց նկատմամբ գերակայության հասնելու, կամ վերջինիս նվաստացնելու անձի ցանկությունները: Մինևույն ժամանակ, կարևոր է նշել, որ բռնության ցանկացած տեսակի դրսևորումները կարող են պայմանավորված լինել անձնային և իրավիճակային գործոններով. մշակույթային, դաստիարարական առանձնահատկություններով, անձի կրթվածության մակարդակով, մանկական տրավմաներով, սոցիալական միջավայրով և այլն:

Դ. Օլվեուսը նշում է, որ կրթական միջավայրում հոգեբանական բռնության կիրառման գործընթացում մեծ ազդեցություն ունի խմբի հոգեբանությունը, խմբի անդամների կողմից ցուցաբերվող՝ երևույթի դրսևորումներն ընդունող կամ ժխտող վարքը: Կրթական միջավայրում բռնության կիրառման գործընթացքում մասնակիցների դերն ընդգծել է նաև Ե. Ռոլանդը. հեղինակը նկարագրում է բռնության մասնակիցների շղթան, որտեղ առանձնացնում է զոհին, դիտողներին և հետապնդողին: Ըստ հեղինակի՝ նրանցից յուրաքանչյուրն իր տեսակետն ունի տեղի ունեցողի վերաբերյալ:

Բացի այդ, ըստ Ե. Ռոլանդի, շատերի մոտ սխալ պատկերացում կա այն մասին, որ բռնության կիրառման գործընթացում դիտողների կամ ակնատեսների վրա հուզական առումով երևույթը որևէ կերպ չի ազդում, սակայն վերջինիս հետազոտությունների համաձայն, ակնատեսների մեծ մասն ունենում է ուժեղ մեղքի զգացում [1]: Կրթական միջավայրում հոգեբանական բռնության դրսևորման մեխանիզմները հաճախ

պայմանավորված են խմբային ներգործության ազդեցությամբ, որն ըստ Ռ. Լիֆտոնի, հանգեցնում է անձի գիտակցության դեստրուկտիվ վերահսկման: Գիտակցության դեստրուկտիվ վերահսկումը տեղի է ունենում այն դեպքում, երբ սկսում են դրսևորվել հեղինակի կողմից առանձնացված հետևյալ գործոնները.

✓ Միջավայրի կառավարում - խումբը սկսում է կառավարել դրանում ներգրավված անձանց շփման օղակը

✓ Մանիպուլյացիա - խմբի անդամները մանիպուլյատիվ վարք են դրսևորում միմյանց նկատմամբ, հոգեբանական ճնշման միջոցով փորձում ստիպել դիմացինին կատարել սեփական ցանկությունները

✓ Անձի մոտ մեղքի և մեղավորության զգացման առաջացման խթանում

✓ Անձի սահմանների քայքայում - երբ անձին ստիպում են կիսվել խմբի հետ իր կյանքում ունեցած հուզական, վարքային և մտավոր բոլոր փորձառություններով՝ այդ կերպ վերահսկելով վերջինիս

✓ Խմբային նորմերին ենթարկվել - երբ անձը հարկադրված է ենթարկվել և բացարձակ ճշմարտություն համարել խմբային նորմերը և այլն:

Խմբային մակարդակում անձի վրա հոգեբանական բռնության գործադրման գործընթացին անդրադառնալով Ս. Հասսենն ընդգծում է, որ ամբողջ գործընթացը տեղի է ունենում BITE մոդելի միջոցով (Behavior - վարք, Information - տեղեկատվություն, Thoughts - մտածողություն և Emotions - հույզեր): Մոդելը ենթադրում է, որ անձի նկատմամբ խմբի կողմից իրականացվող բռնության գործընթացը տեղի է ունենում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ վարքի կառավարում (ում հետ կարելի է շփվել, ում հետ չի կարելի, ինչ կարելի է անել, ինչ ոչ, ինչ կարելի է հագնել, ինչ չի կարելի և այլն), ինֆորմացիոն կառավարում (որ բնույթի տեղեկատվությանը կարելի է հավատալ, որին՝ ոչ), մտածողության, մտքերի կառավարում (խմբի կողմից ընդունելի, անընդունելի գաղափարներ, որոնց անձը ևս պետք է վերաբերվի համապատասխան կերպ), հույզերի կառավարում (հուզական դրսևորումների խմբի կողմից ընդունելի, անընդունելի լինելու հանգամանք և այլն [4]:

Կրթական միջավայրում բռնության դրսևորման հետևանքները հաճախ հանգեցնում են հոգեբանական և ֆիզիկական տրավմաների, ինչի արդյունքում կարող է խաթարվել երեխայի ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական զարգացումը. այս առումով բռնության դեպքերի, կանխարգելման, բացահայտման և վաղ միջամտության անհրաժեշտությունը խիստ կարևոր է:


Դպրոցում հոգեբանական բռնության իրականացման, դրա հիմքում ընկած պատճառների վերհանման նպատակով 2023-2024թթ ընթացքում, ՀՀ 40 դպրոցներում մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ինչպես հիմնական, այնպես էլ ավագ դպրոցներում: Հետազոտության իրականացման ընթացքում դպրոցների ընտրությունը պայմանավորված է եղել հիմնականում տարբեր տարիքային փուլերում գտնվող աշակերտների ծնողների՝ տեսչական մարմնին ուղղված բողոքներով, որոնցում ծնողը խնդրում էր իր երեխայի դասարանում կամ դպրոցում իրականացնել հոգեբանական հետազոտություն՝ պարզելու դպրոցի/ դասարանի հոգեբանական մթնոլորտի կայությունը, երեխային՝ ուսուցչի, դասընկերների կողմից բռնության ենթարկելու հանգամանքները:

Դպրոցում հոգեբանական բռնության փորձագիտական հետազոտման գործիքակազմի ընտրությունը հիմնականում պայմանավորված է հետազոտվողների տարիքային, մտավոր զարգացման առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցականների դեպքում աշակերտների՝ խմբում ինքնազգացողության, հարմարման մակարդակի ուսումնասիրության, ինչպես նաև բռնության ենթարկվելու /չենթարկվելու հանգամանքների ուսումնասիրության նպատակով հիմնականում կիրառվում է հոգեբանական զրույցի, հարցաթերթի մեթոդները: Տվյալ տարիքային խմբում հետազոտման արդյունավետ գործիքներ են նաև Ն. Շուրկովայի «Շրջաններ» մեթոդիկան, Լ. և Օ. Բելլակների կողմից առաջարկվող Կոնտրոլային CAT-H պրոյեկտիվ թեստը, մանկական սոցիոմետրիկ թեստերը: Դեռահասների դեպքում զրույցի, դիտման և հարցաթերթի մեթոդներին զուգահեռ առավել հաճախ կիրառվում է Դ. Մորենոյի կողմից առաջարկվող սոցիոմետրիկ մեթոդը, Դ. Օլվեուսի «Բուլլինգ» հարցարանը, Ե. Նորկինայի «Բուլլինգ կառույցներ» մեթոդիկան և այլն:

Դպրոցում հոգեբանական բռնության դեպքերի փորձագիտական հետազոտության ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում հոգեբանական հետազոտություն իրականացնել ոչ միայն աշակերտների, այլ նաև դպրոցի վարչակազմի, ուսուցիչների և ծնողների հետ, ինչի արդյունքում հնարավոր է լինում առավել օբյեկտիվ տվյալներ ստանալ:

Ընդհանրացնելով ստորև ներկայացված գործիքակազմի միջոցով 2023-24թթ ընթացքում ՀՀ 40 դպրոցներում իրականացված հոգեբանական փորձագիտական հետազոտության արդյունքները, կարող ենք ասել, որ կրտսեր դպրոցական տարիքում գտնվող աշակերտների շրջանում առավել տարածված են բռնության հետևյալ տեսակները՝ ֆիզիկական բռնություն, վերբալ ագրեսիա՝ վիրավորանք, ծաղր, պիտակավորում, դեռահասության փուլում առավել տարածված են ֆիզիկական, սոցիալական բռնության երևույթները՝ մեկուսացում, անտեսում, բամբասանք, ինչպես նաև կիբերբուլլինգը, տնտեսական բռնությունը, վերբալ ագրեսիան (տես՝ Դիագրամ 1.):



Այսպիսով, դեռահասության տարիքում ավելանում են բռնության որոշ տեսակներ, որոնք նախկին տարիքային փուլերում չեն դրսևորվել: Մասնավորապես սոցիալական բռնության տեսակներից մեկուսացումն ու անտեսումն այս տարիքային փուլում առավել տարածված են, ինչը հաճախ կարող է դրսևորվել ոչ միայն իրական, այլ նաև վիրտուալ աշխարհում. աշակերտների մեծ մասը, հետազոտությունների ընթացքում նշել է, որ հասակակիցների կողմից իրենց խմբից մեկուսացնելու, անտեսելու երևույթները դրսևորվում են վերջիններիս տարբեր վիրտուալ խմբերից հանելու միջոցով (Viber, Whats Up, Instagram): Բացի այդ, սոնտեսական բուլինգի երևույթը, որը կրտսեր դպրոցական տարիքում գրեթե չի հանդիպում, տարածված է հատկապես դեռահաս տղաների շրջանում. հետազոտությունների ընթացքում հաճախ բացահայտվում էին դեպքեր, երբ բռնության ենթարկված աշակերտները նշում էին, որ հասակակիցները միմյանցից հարկադրաբար գումար, իրեր են վերցնում: Ի տարբերություն կրտսեր դպրոցականների, դեռահասների, հատկապես աղջիկների շրջանում առավել տարածված էին պասիվ բռնության տեսակները, մասնավորապես՝ բամբասանքը և անտեսումը:

Ընդհանրացնելով տեսական գրականության և հետազոտական աշխատանքի ընթացքում իրականացված վերլուծությունները՝ կարող ենք ասել, որ հոգեբանական բռնությունն ընկած է բռնության հիմնական տեսակների հիմքում, տարիքային տարբեր փուլերում, ինչպես նաև կախված սեռային առանձնահատկություններից՝ դպրոցում հոգեբանական բռնության ձևերի դրսևորումները կարող են փոփոխվել: Հաշվի առնելով կրթական միջավայրում հոգեբանական բռնության դեպքերի աճի հանգամանքը՝ ներկա ժամանակաշրջանում երևույթի դրսևորումները կանխարգելող և

հաղթահարմանն ուղղված միջոցառումների կազմակերպման, իրականացման անհրաժեշտություն խիստ կարիք կա:

Գրականություն

1. Խուրդյան Ա.Ս. Հուզական գրագիտությունը՝ որպես բուլինգի կանխարգելման միջոց, Գյումրի, 2023. – 114 էջ:
2. Волкова Е.Н. Насилие и жестокое обращение с детьми. Санкт-Петербург: Книжный Дом, 2011. – 384 с.
3. Солодников В.В. Социология социально-дезадаптированной семьи, Санкт-Петербург 2007. – 378 с.
4. Хассен С.А. Освобождение от психологического насилия, СПб.: Прайм-Еврознак, 2002. – 396 с.

ЭКСПЕРТНОЕ ИССЛЕДОВАНИЕ СЛУЧАЕВ ПСИХОЛОГИЧЕСКОГО НАСИЛИЯ В ШКОЛЕ

Худоян А.С. (к.пс.н., АГПУ имени Х. Абовяна, Ереван, РА)
khudoyanani24@aspu.am

Аннотация. Работа посвящена особенностям экспертизы случаев психологического насилия в школе. Представлены ход и результаты психологической экспертизы, исследования, направленные на выявление случаев насилия, совершенных в начальных и старших школах. Описаны принципы выбора инструментария для психологических экспертных исследований, проводимых в образовательной среде с учащимися, родителями, учителями, а также обобщенный анализ результатов экспертных исследований. Обобщая анализ, проведенный в ходе исследовательской работы, мы можем сказать, что психологическое насилие лежит в основе основных видов насилия, на разных возрастных этапах, а также в зависимости от гендерных особенностей проявления форм психологического насилия в школе могут варьироваться. Полученные результаты позволяют использовать профессиональные, психологические знания и навыки для организации, проведения и анализа психологической экспертизы случаев насилия.

Ключевые слова: Психологическое насилие, пренебрежение, изоляция, словесная агрессия, физическое насилие, кибербуллинг, экономический буллинг, психологическая экспертиза.

EXPERT STUDY OF CASES OF PSYCHOLOGICAL VIOLENCE AT SCHOOL

Khudoyan A.S. (PhD, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)
khudoyanani24@aspu.am

Abstract: The work is devoted to the specifics of the expertise of cases of psychological violence at school. The course and results of psychological expertise, research aimed at identifying cases of violence committed in primary and high schools are presented. The principles of choosing tools for psychological expertise conducted in an educational environment with students, parents, teachers, as well as a generalized analysis of the results of expert research are described. Based on the analysis introduced in the course of investigative work, we can tell that psychological and pedagogical violence underlies the main types of violence, on different ascending routes, and depending on gender characteristics, manifestations of psychological and pedagogical violence in school can vary. The results obtained make it possible to use professional, psychological knowledge and skills for the organization, conduct and analysis of psychological expertise of cases of violence.

Keywords: Psychological violence, neglect, isolation, verbal aggression, physical violence, cyberbullying, economic bullying, psychological expertise.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 12.01.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 02.02.2024*

ԱՆՁԻ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՂԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Կաթունյան Ա.Ս. (h.g.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
hogeban62@gmail.com

Ամփոփագիր: Հռոկվածում փորձ է արվում ներկայացնել ստի դետեկտորի կամ պոլիգրաֆի ստեղծման, կիրառման վերաբերյալ միջազգային փորձը, կարևորվում է դատախիրավական ոլորտում վերջինիս կիրառման հնարավորությունները և վտանգները: Ցույց է տրվում, որ հոգեբանական գիտության դիրքերից պոլիգրաֆի կամ ստի դետեկտորի կիրառման վերաբերյալ դատադությունների հիմքում հույզերի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և դրանց դրսևորման վերաբերյալ հոգեբանական գիտության ձեռքբերումներն են: Այսօր ընդունված է հույզերը դիտարկել որպես ֆիզիոլոգիական գրգռիչի, վարքային (էքսպրեսիվ) դրսևորումների և գիտակցական փորձի համադրություն: Նշվում է, որ ստի դետեկտորը կամ պոլիգրաֆը, ըստ էության, չի բացահայտում ինքնին սուտը, այլ ավելի շուտ բացահայտում է այն գրգռման ռեակցիաները, որոնք ուղեկցում են հույզը: Մի կողմից պոլիգրաֆի հակառակորդները շեշտադրում են վերջինիս արդյունքների ոչ միանշանակ լինելը, սակայն մյուս կողմից կան հարուստ փաստացի տվյալներ՝ պոլիգրաֆի արդյունավետ կիրառման վերաբերյալ: Քննարկվում է պոլիգրաֆի հետ աշխատող մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը, հոգեբանության բաժինների հետ համագործակցության հարցը:

Հիմնաբառեր. գործիքային հետազոտություն, ստի դետեկտոր, պոլիգրաֆ, ֆիզիոլոգիական չափում, պոլիգրաֆիստ, գործնական հոգեֆիզիոլոգիա:

Հոգեբանական մտքի զարգացման ողջ ընթացքում անձի հետազոտման մեթոդների ու մեթոդիկանների խնդիրը եղել և մնում է գիտակարգի այցեքարտերից մեկը: Ասվածն էլ ավելի է կարևորվում դատախիրավական ոլորտի՝ մասնավորաբար դատահոգեբանական փորձաքննությունների առումով, քանի որ անձի իրավախախտ լինելու կամ չլինելու հարցը պայմավորված է նաև փորձագետի կողմից կիրառվող մեթոդաբանությունից: Փորձագիտական, հետախուզական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խիստ արդիական են հետազոտության իրականացման ոչ ավանդական մեթոդների հարցը:

20-րդ դարում, գիտատեխնիկական զարգացումը հնարավոր դարձրեց դատախիրավական ոլորտում գործիքային մեթոդներով ուսումնասիրություններ իրականացնելը, որը մեծապես հեշտացրեց անձի

համակողմանի հետազոտությունները: Անձի հետազոտման գործիքային մեթոդներից է ստի դետեկտորը կամ պոլիգրաֆը: Սակայն գործիքային հետազոտման, մասնավորապես քրեաբանության ոլորտում պոլիգրաֆի կիրառման վերաբերյալ մոտեցումները, միանշանակ չեն:

Պոլիգրաֆը կամ ստի դետեկտորը տեխնիկական միջոց է, որը գրանցում է հոգեֆիզիոլոգիական գործընթացների՝ շնչառության, սիրտ-անոթային ակտիվության, մաշկի էլեկտրոնային դիմադրության փոփոխությունները, մարդու կողմից ինֆորմացիայի հնարավոր աղավաղումը կամ սուտը բացահայտելու նպատակով՝ տրված հարցին պատասխանելիս [6]:

Անհարժեշտության դեպքում իրականացվում են նաև այլ ֆիզիոլոգիական չափումներ՝ թվային գրանցման միջոցով, որի վերջնական պատակը հաղորդված տեղեկատվության հավաստիության գնահատումն է:

Սկզբնական շրջանում կիրառելով հիմնականում քրեաբանության և ազգային անվտագության ոլորտում, այն ԱՄՆ-ում մեծ տարածում ստացավ անցյալ դարի 80-ականներից սկսած՝ մասնավոր ընկերություններում, որոնք թեստավորում էին իրենց աշխատակիցներին՝ սուտը կամ գողությունը բացահայտելու նպատակով:

Ստի գործիքային դետեկցիայի պատմությունը սկիզբ է առնում իտալացի ֆիզիոլոգ Ա. Մոսսոյի աշխատանքներից, որը 1877 թվականին արյունատար անոթների և զարկերակային ճնշման ստուգման համար ստեղծված սարքի՝ պլետիզմոգրաֆի օգտագործման արդյունքում բացահայտեց, որ փորձարկվողի սրտի զարկերը հաճախանում են վախ առաջացնող պատկերներ դիտելիս: Հետագայում այս գաղափարը գործնական կիրառում ստացավ իտալացի քրեաբան՝ Չ. Լոմբրոզոյի կողմից, որը հանցագործության մեջ կասկածվողներին հարցաքննելիս կիրառում է հիդրոսֆիզմոգրաֆ սարքը, որի օգնությամբ գրաֆիկի վրա ամրագրվում էին հարցաքննվողի զարկերակային ճնշման փոփոխությունները, որոնք հետո մանրամասն վերլուծվում էին: 1895 թվականին գրված «Հանցագործ մարդը» գրքում Չ. Լոմբրոզոն նկարագրում է հիդրոսֆիզրամայի կիրառման դրական փորձը՝ թալանի մեջ կասկածվողի քննության ընթացքում: 1902 թվականին Չ. Լոմբրոզոյին ներգրավեցին մի աղջկա բռնաբարության և սպանության քրեկան գործում, որի ընթացքում կիրառվեց հիդրոպլետիզմոգրաֆը: Քննության ընթացքում Լոմբրոզոն բացահայտեց կասկածյալի զարկերակի աննշան փոփոխություն, երբ կասկածյալը մտքում մաթեմատիկական հաշվարկ էր կատարում: Մինևույն ժամանակ ցուցադրելով այլանդակված երեխաների նկարները և անգամ սպանված աղջկա լուսանկարը՝ նա չգրանցեց զարկերակային ճնշման փոփոխություն: Հետագա հետաքննությունները վստահաբար ապացուցեցին, որ տվյալ կսկածյալը

իսկապես անմեղ էր: Հետագայում՝ 1914 թվականին իտալացի պրոֆեսոր՝ Վիտորիո Բեննուսին, որը ուսումնասիրում էր անձի հոգեֆիզիկայի հիմնախնդիրները՝ հրատարակեց իր հետազոտության արդյունքները՝ համաձային որի, շնչառական փուլերի խորությունը, հաճախությունը փոխվում են այն ժամանակ, երբ մարդը ստում է:

Այդուամենայնիվ, որոշ աղբյուրներում, պոլիգրաֆի հայտնագործման հեղինակ են համարում Վ. Մարստոնին: Վերջինս ընդունվելով Հարվարդի համասարանի ասպիրանտուրան՝ որոշում է զբաղվել մարդու վարքի և ֆիզիոլոգիական գործընթացների հետ վերջինիս կապի հետազոտմամբ: Մարդկանց վարքի ուսումնասիրման նպատակով նա մշակեց սուտը պարզելու թեստ՝ ըստ արյան ճնշման ցուցիչների և հետազոտությունը իրականացնելու սարքը, որը հետագայում կոչվեց պոլիգրաֆ: Մեկ այլ վարկածի համաձայն պոլիգրաֆի առաջին սարքը մշակվել է 1921 թվականին, Կալիֆորնիայի նահանգի ոստիկան՝ Ջ. Լեքսոնի կողմից: Վերջինիս սարքի օգնությամբ միաժամանակ գրանցում էր զարկերակային ճնշման, զարկերի և շնչառության փոփոխությունների դիսամիկան ու պարբերաբար կիրառվում էր հանցագործներին քննելիս [2]:

Արդեն 1925 թվականին, Ստենդֆորդի համալսարանի ուսանող՝ Լ. Կիլերը մի սարքի մեջ համատեղեց սովորական կարդիոգրաֆը (սրտի էլեկտրական հոսանքի ակտիվությունը գրանցող սարք), օֆիզմատոմետրը (զարկերակային ճնշումը որոշող սարք), պնևմոգրաֆը (շնչառության հաճախությունը գրանցող) և հալվանոմետրը (մաշկի անցելիության չափման սարքը): Նշենք, որ սկզբնական շրջանում Լ. Կիլերի այս հրաշք «հայտանգործությունը» կիրառվեց որպես սիրո ուժգնության չափման գործիք: Անտեղի չէ հիշեցնել, որ այդ շրջանի ամերիկյան գովազդներում երիտասարդներին խորհուրդ էր տրվում մինչև ամուսնանալը «ստուգել փոխադարձ զգացմունքների ուժը» պոլիգրաֆի օգնությամբ: Հետագայում Լ. Կիլերը կազմակերպում է նմանատիպ պոլիգրաֆների մասսայական արտադրությունը [5]:

Ռուսական իրականության մեջ, ստի դետեկտորի կիրառման անդրադարձը սկսվում է ԽՍՀՄ տարիներից՝ 30-ականներին՝ Ազգային անվտանգության ծառայություններին կից գործող լաբորատորիայում և նշվում է, որ այս սարքի գործարկման, մասնագիտական վերլուծությամբ զբաղվել են խիստ սակավաթիվ մարդիկ:

Մինչև վերջին ժամանակներս Հայաստանում քրեաբանության մեջ անձի գործիքային, մասնավորապես՝ ստի դետեկտորով հետազոտման փաստերի մասին տվյալներ չենք հայտնաբերել: Մակայն 2023 թվականի զարնանը, ՀՀ արդարադատության նախարարության հայտարարության համաձայն, նախարարությունը ձեռք է բերել գերժամանակակից սարքավորումներ, այդ թվում ստի դետեկտոր կամ պոլիգրաֆ՝

արդարադատության ոլորտի աշխատանքները ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով:

Հոգեբանական գիտության դիրքերից պոլիգրաֆի կամ ստի դետեկտրի կիրառման վերաբերյալ դատողությունների հիմքում հույզերի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և դրանց դրսևորման վերաբերյալ հոգեբանական գիտության ձեռքբերումներն են: Այսօր ընդունված է հույզերը դիտարկել որպես ֆիզիոլոգիական գրգռիչի, վարքային (էքսպրեսիվ) դրսևորումների և գիտակցական փորձի համադրություն [1, էջ 532]: Հույզերի հետազոտման պատմությունը ցույց է տալիս, որ գիտնականների համար վիճելի է եղել հենց այս մասերի՝ միմյանց հետ համադրման հարցը: Հույզերը ներառում են ֆիզիոլոգիական հակազդումներ, որը կարգավորվում է ավտոնոմ նյարդային համակարգի կողմից: Սակայն տարբեր հույզերի համար պատասխանատու են ուղեղի տարբեր բաժինները: Պարզվել է, որ երբ մարդիկ ունենում են բացասական հույզեր, օրինակ՝ զզվանք, գլխուղեղի աջ կիսագունդը դառնում է ավելի ակտիվ, իսկ ձախ կիսագունդը ակտիվանում է դրական հույզերը մշակելիս (Davidson & others, 1990): Որոշ երեխաների և հասուն մարդկանց ձախ ճակատային բաժինը ավելի ակտիվ է, քանի աջը: Այսպիսի մարդիկ սովորաբար ավելի ուրախ են և ավելի քիչ են դրսևորում դեպրեսիայի հակվածություն, քան աջ ճակատային բաժնի ակտիվություն գրանցած մարդիկ [1, էջ 534]:

Պոլիգրաֆի հակառակորդները ևս շեշտադրում են հույզերի ոչ միանշանակ մեկնաբանությունները: Պոլիգրաֆը, ըստ էության, չի բացահայտում ինքնին սուտը, այլ ավելի շուտ բացահայտում է այն գրգռման ռեակցիաները, որոնք ուղեկցում են հույզը: Հարցվողի պատասխանի անկեղծության եզրակացությունը կատարում է պոլիգրաֆոլոգը՝ համեմատելով պոլիգրաֆի կողմից ստացված ֆիզիոլոգիական ցուցիչները: Հետազոտությունը իրականացնելիս փորձարկողը կազմում է երկու տեսակի հարց, ստուգիչ և վերլուծող: Ստուգիչ հարցերը սովորաբար ընդհանրական են և միտված են լարվածության առաջացմանը: Օրինակ, փորձարկողը հարցնում է. «Վերջին տասը տարիների ընթացքում դուք վերցրել եք ինչ-որ իր, որը ձերը չէր»: Մարդկանց մեծամասնությունը կստի և կասի «ոչ», ունենալով նյարդային գրգռում, որը կբացահայտի պոլիգրաֆը: Եթե հաջորդ հարցին. «Դուք երբևէ գողացել եք ձեր նախկին ղեկավարից», փորձարկողի տրված ֆիզիոլոգիական ռեակցիան ավելի թույլ է, ապա փորձարկողը ենթադրում է, որ անձը չի ստում: Այս պնդման հիմքում այն ենթադրությունն է, որ միայն գողն է սկսում նյարդայնանալ, երբ ժխտում է գողության փաստը: Սակայն, գիտական տեսակետից, այս պնդումը խնդրահարույց է, քանի որ միանգամայն անմեղ մարդը ևս կարող է նյարդայնանալ և մեղադրանքներին արձագանքել բարձր լարվածությամբ: Բանն այն է, որ ֆիզիոլոգիական

մակարդակում վախը, որ ձեզ չեն հավատա, դրսևորվում են այնպես, ինչպես վախը՝ որ կբացահայտվի ձեր սուտը:

Հոգեբան Դ. Լիկկենը (D. Lykken, 1983) նշում է. «քանի որ տարբեր հույզերին տրվող ֆիզիոլոգիական ռեակացիանները միանման են, ապա պոլիգրաֆը չի կարող ճանաչել տագնապը, մեղավորությունը, վախը, քանի որ դրանք բոլորը դրսևորվում են նույնպիսի գրգռմամբ»: Ուստի, ըստ հոգեբանի, պոլիգրաֆի թեստերի մեկ երրորդը սխալ են և խորհուրդ է տալիս երբեք չհամաձայնել թեստավորվել պլիգրաֆի օգնությամբ՝ եթե դուք անմեղ եք: Ավելին, նրա կարծիքով, մի քանի հատուկ վարժանքներից հետո, մարդը կարող է բավարար չափով կառավարել իր ռեակցիաները և խաբել փորձարկողին [1, էջ 536]: Այդ է պատճառը, որ հաշվի առնելով պոլիգրաֆի նկատմամբ ոչ միանշանակ մոտեցումները և դրա կիրառման վերաբերյալ մի շարք վիճելի հարցերը Ամերիկյան հոգեբանական ասոցացիան և Բրիտանական հոգեբանական ընկերությունը, անցյալ դարի 90-ական թվականներին մի շարք որոշումներով խորհուրդ են տալիս զգուշությամբ վերաբերել պոլիգրաֆի օգտագործմանը՝ սուտը բացահայտելու նպատակով (1986):

Սակայն, մյուս կողմից, այժմ պոլիգրաֆի կիրառման ոլորտը բավականին ընդլայնվել է և հաճախ կիրառվում է ոչ այնքան ավանդական ոլորտներում. օրինակ՝ աշխատակիցների ընտրության, մասնագիտական պիտանելիության գնահատման, անձնայի որակների բացահայտման նպատակով:

Այս առումով, ստի դետեկտորի կատարելագործման, հոգեֆիզիոլոգիական չափումներ արձանագրող սարքերի ստեղծման և կիրառման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում Ռուսաստանում: Արդեն 1993 թվականին ՌԴ ներքին գործերի նախարարությունում ձևավորվեց նոր բաժին, որի գործունեությա հիմնական նպատակը ներքին գործերի աշխատանքներում ստի դետեկտորի ներդրուման, ինչպես նաև պլիգրաֆով հարցում անցկացնող մասնագետների պատրաստման հարցերն են [2]: Ավելին, վերջին տարիներին, Մոսկվայի պետական համալսարանի հոգեբանության ֆակուլտետի հենքի վրա կազմակերպվում են համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացներ, որի ավարտին տրվում է «Գործնական հոգեֆիզիոլոգիա» մասնագիտակցման վկայական: Ընդ որում նման որակավորմամբ մասնագետները կարող են աշխատել ինչպես մենեջմենթի, այնպես էլ քրեաբանության ոլորտում [4]: Ընդհանրապես, ՌԴ պոլիգրաֆի կիրառման աննախադեպ վերելք է գրանցվում. սկսած հեռուստահաղորդումներում պոլիգրաֆի կիրառման շուներից, վերջացրած եկամտահարկ վճարողների հոգեֆիզիոլոգիական վիճակի ստուգման վերաբերյալ հարկային ծառայությունների կողմից ընդունված որոշումից:

Ողջունելի համարելով ՀՀ ԱՆ նախաձեռնությունը պոլիգրաֆի ձեռքբերման հարցում, կարծում եմ, որ նախարարությունը պետք է հաշվի առնի այլ երկրների փորձը և մտածի պոլիգրաֆի կիրառման վերաբերյալ վերոհիշյալ խնդրահարույց հարցերի շուրջ: Նախ այսօր արդեն անվիճելի է, որ անձին հետազոտելը /ոչ միայն դատահոգեբանական փորձաքննության ընթացքում/ հենվելով միայն մեկ գործիքի՝ պոլիգրաֆի վրա, ինքնին սխալ է, քանի որ միայն համակցված, այլընտրանքային մեթոդների կիրառումը հնարավորություն կտա ամբողջացնել պատկերը, երկրորդը՝ խիստ կարևորվում է գործիքի՝ պոլիգրաֆի հետ աշխատողի ոչ միայն մասնագիտական, այլև բարոյական, անձնային նկարագիրը: Ուստի՝ նախարարությունը պետք է համագործակցի ՀՀ բուհերի հետ, հատկապես հոգեբանության ֆակուլտետների հետ, առաջարկելով կազմակերպել համապատասխան մագիստրոսական դասընթաց, այնուհետև իրականացնի վերջիններիս, միջազգային փորձի վրա հիմնված, վերապատրաստման ծրագրեր:

Եվ վերջում, հաշվի առնելով վերոհիշյալը, ավելորդ չէ նշել, որ նախարարությունը պատասխանատու է պոլիգրաֆի գործարկման աշխատանքների նկատմամբ մասնագիտական խիստ վերահսկման աշխատանքների կազմակերպման համար, որի արդյունքում կստանանք համապատասխան սարքի՝ մարդկանց համար անվնաս և օրենքի կայացմանը նպաստող գործիք:

Գրականություն

1. Майерс Д. Психология. /пер. с англ. И.А. Карпиков, В.А. Старовойтова. – 4-е изд. – Минск: "Попурри", 2009. – 848 с.
2. Холодный Ю.И. Применение полиграфа при профилактике, раскрытии и расследовании преступлений. (генезис и правовые аспекты): монография /Ю.И. Холодный. – М.: Мир безопасности, 2000. – 160 с.
3. Холодный Ю.И. Анализ физиологических реакций, регистрируемых в процессе опроса с использованием полиграфа: практическое пособие. – М.: 1999. – 52 с.
4. Детектор лжи или Что такое практическая психофизиология. Психологическая газета №4, апрель 2003. <http://www.psy.msu.ru/about/kaf/psychophysiology/detector/>
5. Орлов Ю.К., Холодный Ю.И. Судебно-психофизиологическая экспертиза с применением полиграфа: Проблема допустимости. <https://cyberleninka.ru/article/n/sudebno-psihofiziologicheskaya-ekspertiza-s-primeneniem-poligrafa-problema-dopustimosti>

6. Емельянова Н.В., Копылова О.П. Применение полиграфа в доказывании по уголовным делам. <https://cyberleninka.ru/article/n/primenenie-poligrafa-v-dokazyvanii-po-ugolovnym-delam>

ПРОБЛЕМА ИССЛЕДОВАНИЯ ЛИЧНОСТИ В СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ

Катунян А.С. (к.п.н., АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
hogeban62@gmail.com

Аннотация: В статье предпринята попытка представить международный опыт создания и использования детектора лжи или полиграфа, подчеркнуты возможности и опасности его использования в судебно-правовой системе. Показано, что с позиций психологической науки суждения о применении полиграфа или детектора лжи базируются на достижениях психологической науки относительно психофизиологических особенностей эмоций и их проявления. сочетание физиологического стимула, поведенческих (экспрессивных) проявлений и сознательного опыта. Подчеркивается, что детектор лжи или полиграф на самом деле выявляет не саму ложь, а реакции возбуждения, сопровождающие эмоцию. С одной стороны, противники полиграфа подчеркивают неоднозначность его результатов, но с другой стороны, имеется масса фактических данных об эффективном использовании полиграфа. Обсуждается необходимость подготовки специалистов, работающих с полиграфом, вопросы сотрудничества с кафедрами психологии.

Ключевые слова: инструментальные исследования, детектор лжи, полиграф, физиологические измерения, полиграфолог, практическая психофизиология.

THE PROBLEM OF PERSON RESEARCH IN FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATION

Katunyan A.S. (Ph.D in Psychology, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)
hogeban62@gmail.com

Abstract: The article makes an attempt to present international experience in the creation and use of a lie detector or polygraph, emphasizing the possibilities and dangers of its use in the judicial and legal system. It is shown that, from the standpoint of psychological science, judgments about the use of a polygraph or lie detector are based on the achievements of psychological science regarding the psychophysiological characteristics of emotions and their manifestation. a combination of physiological stimulus, behavioral (expressive) manifestations and conscious experience. It is emphasized that a lie detector or polygraph actually

detects not the lie itself, but the arousal reactions that accompany the emotion. On the one hand, opponents of the polygraph emphasize the ambiguity of its results, but on the other hand, there is a lot of factual data on the effective use of the polygraph. The need to train specialists working with the polygraph and forms of cooperation with psychology departments are discussed.

Keywords: instrumental research, lie detector, polygraph, physiological measurement, polygraphist, practical psychophysiology.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 12.01.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 16.02.2024

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՆՐԵՊ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ**

Հարությունյան Ն.Ս. (Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
harutyunyanaira@gmail.com

Ամփոփագիր. Բռնությունը՝ որպես իրական երևույթ և հոգեբանական ուսումնասիրության հիմնախնդիր, գործնականում բավական դժվար է հետազոտել, քանի որ գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք խոչընդոտում են այս հիմնախնդրի ուսումնասիրությանը:

Բռնություն ասելով նկատի են ունենում նաև միայն ֆիզիկական ներգործությունը երեխայի նկատմամբ: Բայց սա կազմում է վերոնշյալ հիմնահարցի միայն մի փոքր հատվածը: Արևմտյան հեղինակները նշում են, որ երեխաների նկատմամբ բռնությունների հետևանքները կարելի է պատկերավոր նկարագրել այսբերգի տեսքով: Ըստ նրանց՝ բռնության այն դեպքերը, որոնք ավարտվում են ուժեղ վնասվածքներով կամ երեխայի մահով, կազմում են խնդրի միայն վերին տեսանելի փոքր հատվածը: Գոյություն ունի նաև չափազանց մեծ անտեսանելի հատված, որում ներառվում են այն վնասվածքները, որոնք բժշկական միջամտություն չեն պահանջում կամ այսպես կոչված, «չկայացած վնասվածքները»: Մասնագետները կարծում են, որ այսբերգի միայն ամբողջական ուսումնասիրությունը հնարավորություն կտա ինչ - որ չափով լուծել երեխաների նկատմամբ բռնությունների հիմնախնդիրը:

Որպես կանոն, բռնության հիմնախնդրի փորձաքննությունը ուղղված է երկու հիմնական վեկտորներով՝ առաջին ուղղությունը վերաբերում է երեխայի նկատմամբ բռնության կամ բռնության փաստի բացահայտմանը (օրինակ՝ քրեական գործ հարուցելուն): Երկրորդ ուղղությունը կապված է երեխայի մտավոր, անձնական և սոցիալական զարգացման վրա բռնության հետևանքների ուսումնասիրության հետ: Սույն հոդվածում փորձ է կատարվել պատասխանել այս երկու ուղղությունների մեթոդական հարցերին և առաջարկել համապատասխան գործիքային ապարատ:

Հիմնաբառեր. երեխա, բռնություն, հոգետրավմա, գնահատում, մանկական տրավմա, հոգեախտորոշում:

Երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը, ընտանիքում նրանց հետաքրքրությունների անտեսումը հասարակության զարգացման ժամանակակից փուլում ձեռք են բերում սուր արդիականություն, քանի որ վնասում են ոչ միայն երեխայի հոգեկան առողջությանը, այլև դառնում են

երեխայի վարքի շեղման սոցիալ – հոգեբանական պատճառ: Բռնության ենթարկված երեխաների մեծամասնության մոտ նկատվում են լուրջ խնդիրներ հոգեկան, ֆիզիկական և սոցիալական զարգացման գործընթացում:

Ներկայումս տարբեր տեսությունների ներկայացուցիչներ համամիտ են երեխայի անձի, հոգեկանի և վարքագծի ձևավորման վրա ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունների ախտաբանական ներգործության հարցի շուրջ և կարծում են, որ երեխայի նկատմամբ կատարված բռնությունը իր հետևանքներով դասվում է ամենածանր հոգեբանական տրավմաների շարքը: Չնայած երեխայի անձի վրա բռնության ակնհայտ հետևանքներին, անհրաժեշտ է նշել, որ բռնության հետավոր հետևանքները միայն վերջերս են դարձել հոգեբանության էմպիրիկ հետազոտության օբյեկտներ: Դա մասամբ բացատրվում է նրանով, որ բացակայում է բռնության սահմանման և տարանջատման ունիվերսալ պատկերացումը, թե ինչը կարելի է համարել բռնություն, իսկ ինչը ըստ Ի.Ա. Ալեկսենայի՝ «երեխայի նկատմամբ ադեկվատ և սոցիալապես ընդունելի դաստիարակության միջոց» [2]:

Ցանկացած բռնության նկատմամբ առավել խոցելի են, իհարկե, երեխաները, մասավորապես, կրիտիկական են համարվում նախադպրոցական տարիքը և դեռահասությունը, որոնք ուսումնասիրողների մեծամասնության կողմից դիտարկվում են որպես բռնության նկատմամբ «ռիսկային տարիքներ»:

Որոշ ուսումնասիրություններում հայտնաբերված է, որ սովորական պոպուլյացիաներում երեխաների շրջանում մտավոր հետամնացությունը կազմում է 2–3%, իսկ բռնության ենթարկված երեխաների պոպուլյացիայում այդ ցուցանիշը կազմում է 20–40% [4, 20]:

Բռնությունը բավականին տարածված երևույթ է, քանի որ երեխաները գտվում են մեծահասակից կախվածության մեջ, և որպես կանոն, որքան դաժանորեն է պատժվում երեխան, այնքան ավելի քիչ են նրանք հակված խոսել այդ մասին: Այդպես ձևավորվում է «ծեծված երեխա» տեսակը: Արդյունքում երեխան կարող է ունենալ բավական հակասական զգացումներ՝ վախ, ցավ, ամոթ, վիրավորանք, ատելություն, նվաստացում, մեղքի զգացում և այլն:

Նմանապես ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ֆիզիկական բռնության հետևանքները (ծեծ, մարմնական պատիժներ) հանդիպում են սահմանային անձնային խաթարումներով անձանց անամնեզում ավելի հաճախ, քան այլ պայթյուցիաներով անձանց մոտ ներկայացնում է հետևյալ ցուցանիշները՝ 71% - ն ընդդեմ 30% - ի) [1]:

Երեխաների հանդեպ բռնության տեսկաները ընդհանուր առմամբ չորսն են՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական բռնություն և անտեսում,

սակայն նոր գրականության մեջ կարող ենք հանդիպել բռնության նոր տեսակների, որոնք իրենց բնույթով կարող ենք առաջին հայացքից բռնություն չհամարվել: Դրանցից են օրինակ՝ «թափահարված երեխայի համախտանիշը», «լռությամբ բռնությունը», «Մյունխաուզենի համախտանիշը» և այլն:

Մի շարք վարքային, հոգեբանական և սոցիալական ցուցիչներ պարտադիր են երեխայի հանդեպ բռնության հետևանքները բացահայտելու համար: Քանի որ հաճախ հոգեբանական փորձաքննության դիմում են ֆիզիկական և սեռական բռնության փաստն ու հետևանքները չափելու համար, ապա նպատակահարմար ենք համարել նշել միայն այդ տեսակների առանձնահատկությունները: Ստորև աղյուսակում ներկայացված է բռնության տարբեր տեսակների դեպքում երեխայի վարքային և հոգեբանական դրսևորումները:

Ֆիզիկական բռնության վարքագծային և հոգեբանական դրսևորումները տարբեր տարիքում ունեն հետևյալ տեսքը՝

0-6 ամսական:

- ✓ քիչ շարժունություն,
- ✓ անտարբերություն արտաքին աշխարհի նկատմամբ,
- ✓ բացակայություն կամ թույլ արձագանք արտաքին գրգռիչներին,
- ✓ հազվադեպ ժպիտ 3-6 ամսականում:

6 ամսական - 1,5 տարեկան՝

- ✓ վախ ծնողներից,
- ✓ մեծահասակների հետ ֆիզիկական շփման վախ,
- ✓ մշտական անհիմն զգոնություն,
- ✓ լալկանություն, անընդհատ նվնվոց,
- ✓ մեկուսացում, տխրություն,
- ✓ վախ կամ դեպրեսիա, երբ մեծահասակը փորձում է վերցնել նրան:

1,5-3 տարեկան՝

- ✓ վախ մեծահասակներից,
- ✓ ուրախության հազվագյուտ դրսևորումներ, լալկանություն,
- ✓ վախի արձագանք այլ երեխաների լացին,
- ✓ վարքի ծայրահեղություններ՝ չափազանց ագրեսիվությունից մինչև

անտարբերություն:

3-6 տարեկան՝

- ✓ տեղի ունեցածի հետ հաշտվելը, դիմադրության բացակայությունը,
- ✓ պասիվ ռեակցիա ցավին,
- ✓ սուր վերաբերմունք մեկնաբանությունների, քննադատության

նկատմամբ,

✓ գոհացուցիչ վարքագիծ, չափից ավելի համապատասխանություն մեծահասակների պահանջներին,

✓ կեղծ չափահասի վարքագիծ (կրկնօրինակում է մեծահասակների վարքը),

✓ նեգատիվություն, ագրեսիվություն,

✓ խաբեություն, գողություն,

✓ դաժանություն կենդանիների նկատմամբ,

✓ հրկիզման միտում,

✓ խաղում ագրեսիվ դրվագների առկայություն,

✓ սուր ռեակցիա կտրուկ շարժումներին,

✓ մշտական ապավենի փնտրտուք՝ քայլել պատերի տակ, նստել անկյունում, հենվել մշտապես իրերին կամ գրկել ինչ որ,

Կրտսեր դպրոցական տարիք,

✓ վնասի և վնասվածքի պատճառը թաքցնելու ցանկությունը,

✓ մենակություն, ընկերների բացակայություն,

✓ դասերից հետո տուն գնալու վախ,

Դեռահասություն:

✓ Տանից փախուստ,

✓ ինքնասպանության փորձեր (ինքնավնասման փորձեր),

✓ հանցավոր (ղեխանտ կամ ելիկվենտ) վարքագիծ,

✓ ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործումը:

Մինչդեռ սեռական բռնության դեպքում պատկերը հաճախ այլ է:

Նախադպրոցական տարիք՝

✓ մղձավանջներ,

✓ վախեր,

✓ ռեգրեսիվ վարք (ավելի երիտասարդ տարիքին բնորոշ գործողությունների կամ վարքի տեսք),

✓ կերպարին ոչ բնորոշ սեռական խաղեր իր, հասակակիցների կամ խաղալիքների հետ,

✓ բաց ձեռնաշարժություն,

✓ տարիքին համապատասխան գիտելիքներ սեռական վարքի մասին,

✓ գայթակղիչ վարքագիծ հակառակ սեռի և մեծահասակների նկատմամբ,

✓ սեռական գործողություններ այլ երեխայի հետ (նախադպրոցական տարիք),

✓ անպատճառ նյարդահոգեբանական խանգարումներ,

Կրտսեր դպրոցական տարիք՝

✓ ցածր ակադեմիական ակտիվություն,

✓ մեկուսացում, մենակության ցանկություն,

✓ դերային վարքագծի փոփոխություն (ստանձնում է ծնողի գործառույթները),

✓ հասակակիցների հետ հարաբերությունների վատթարացում,

✓ տարիքին անհամապատասխան սեռական երանգավորված վարքագիծ,

✓ մարմինը հագուստով ծածկելու ցանկություն, եթե անգամ դա հարկավոր չէ:

Ավագ դպրոցական տարիքի երեխաներ, դեռահասներ՝

✓ դեպրեսիա,

✓ տանից կամ ինստիտուցիոնալ հաստատություններից փախուստ,

✓ ցածր ինքնագնահատական,

✓ սպառնալիքներ կամ ինքնասպանության փորձեր,

✓ սեռական վարքագիծ,

✓ թմրամիջոցների կամ ալկոհոլի օգտագործումը,

✓ մարմնավաճառություն կամ անառակություն,

✓ բողոքներ որովայնի ցավից [2]:

Ֆիզիկական բռնության ենթարկված երեխաների վիճակը շատ դեպքերում ուղեկցվում է կոնկրետ ախտանիշների առկայությամբ, մինչդեռ սեռական բռնության ենթարկված երեխաների իրավիճակի առանձնահատկությունն այն է, որ 40%-ի դեպքում այն չի ուղեկցվում որևէ կոնկրետ ախտանիշի առկայությամբ: Այնուամենայնիվ, բռնության ենթարկված այլ երեխաներ կարող են ունենալ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ:

Գոյություն ունեն բազում մեթոդներ և մոտեցումներ երեխաների հանդեպ բռնության դեպքերը բացահայտելու և հետևանքները արձանագրելու համար:

Բռնության փաստի արձանագրման փորձաքննություն: Հաճախ անհրաժեշտ է լինում հաստատել կամ հերքել բռնության փաստը, քանի որ շատ դեպքերում երեխան գիտակցաբար կամ ենթագիտակցաբար կարող է հերքել, թաքցնել կամ արտամղել բռնության լինելու հանգամանքը կամ հակառակը, ուռճացնել, հորիսել կամ ստել բռնության փաստի վերաբերյալ:

Նախ ցանկացած փորձաքննություն անհրաժեշտ է սկսել հարցազրույցից: Այդ նպատակով հարմար է կիրառել Գուդման-Բոթթոմի եռափուլ զրույցի մեթոդը:

1-ին փուլը նախատեսված է երեխայի հետ վստահելի և հուսալի հարաբերությունների ստեղծման համար, որտեղ դեպքի հետ արտաքինից կապ չունեցող գործողությունների միջոցով (նկարչություն, ծեփակերտում, նկարի մեկնաբանում) ստեղծվում են հուզական կայուն հարաբերություններ: Այս փուլում գնահատվում է նաև երեխայի՝ դեպքերն ու իրադարձությունները վերհիշելու կարողությունը և կոգնիտիվ այլ գործընթացներ:

2-րդ փուլում նախ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք երեխան տարբերում է ճշմարտությունը և սուտ է, և եթե նա հասկանում է

տարբերությունները, ապա պետք է ստանալ նրա համաձայնությունը միայն ճշմարտությունն ասելու համար: Կարելի է խնդրել երեխային խոսել իր հետ պատահած մի վատ բանի մասին, որի համար ամոթ է զգում: Եթե երեխան լռում է, կարելի է խթանել լրացուցիչ հարցերով: Հարցերը պետք է տալ միայն այն բանից հետո, երբ երեխան պատմի այն ամենը, ինչ կարող էր: Հարցերի նպատակը մանրամասներ պարզաբանելն է՝ որտեղ և երբ է դա տեղի ունեցել, ինչ հաճախականությամբ է կրկնվել, ինչ է նա ասել, ինչ է հազել ագրեսորը (նրան անվանել այնպես, ինչպես երեխան է իրեն անվանել): Եթե երեխան դժվարանում է պատասխանել, կարելի է կիրառել հատուկ տիկնիկներ, որի վրա երեխան ցույց կտա դեպքի առանձնահատկությունները [4]:

Քանի որ հարցազրույցը երեխայի համար ցավոտ է ու հոգնեցուցիչ, ընթացքում կարելի է զրույցը շարունակել չեզոք թեմաներով և նրան հանգիստ տալ, բայց ավելի լավ է հարցազրույցը վերջացնել մեկ անգամից:

Ամփոփիչ երրորդ փուլում կարևոր է անցկացնել ռելաքսացիոն վարժություններ և շնորհակալություն հայտնել երեխային ազնվության և խիզախության համար:

Ավելի մեծ երեխաները պատրաստակամ են խոսել բռնության փորձի մասին: Նրանց հետ, ովքեր դժվարանում են ուղղակիորեն խոսել դրա մասին, օգտագործվում են պրոյեկտիվ տեխնիկաներ: Այս նպատակով կարելի է օգտագործել Լ. Մոլոմինի «Գունային փոխաբերությունների մեթոդիկայի» մեր կողմից հենց այս նպատակով մոդիֆիկացված տարբերակը, որտեղ բազային հասկացություններին ավելացվել են նոր հասկացություններ, ինչպիսիք են «ցավ», «պատժել», «ապտակ», «հպում» և այլն: Այստեղ երեխան ենթադիտակցաբար ինֆորմացիա է տալիս հետազոտողին բռնության փաստի առկայության վերաբերյալ, քանի որ նույն գույներով է նշում իրեն համար տրավմատիկ դեպքերն ու ապրումները և այն անձանց, ովքեր պատասխանատու են այդ ապրումների համար:

Եթե փորձագետին անհրաժեշտ է կատարել բռնության հետևանքների գնահատում, ապա այստեղ լավ արդյունքներ է գրանցել տրավմատիկ իրադարձությունների սքրինինիզ-հարցումը (TESI-C.), որը միաժամանակ անցկացվում է նաև ծնողի հետ: TESI-C հարցարանը ուղեցույց է կլինիկական և/կամ փորձագիտական հարցազրույցների համար՝ երեխայի պոստենցիալ տրավմատիկ փորձառություններին ենթարկվելու պատմության ստուգման համար: Հարցերը դասավորված են հիերարխիկ կերպով վերանայելու փորձառությունները այնպես, որ երեխային օգնի հանդուրժել տրավմատիկ փորձառությունների բացահայտման հնարավոր սթրեսը. երեխան հիշում է ոչ միայն ֆիզիկական վնասը/բռնությունը, այլև սպառնացող վնասի և տրավմայի ականատես լինելը:

Բռնության դեպքերից հետո հաջորդող հետտրավմատիկ սթրեսային խանգարման փաստը հաստատելու համար նախատեսված է հարցարանը կամ մանկական տրավմայի բացահայտման ստանդարտացված հարցարանի կարճ տարբերակը (CTQ-SF): Որպես բռնության հետևանքների ախտանշանների արագ հավաքագրման մեթոդներ օգտագործվում են Դ. Բրիերի «Տրավմայի ախտանիշների ստուգաթերթը» (Trauma Symptom Checklist (TSCC)), «Երեխայի սեռական վարքագծի գնահատման» հարցաթերթը ((The Child Sexual Behavior Inventory (CSBI) [5]:

Նկարչական և պրոյեկտիվ մեթոդները հրաշալի տարբերակներ են երեխայի հանդեպ բռնության ախտորոշման համար, մասնավորապես այն դեպքերում, երբ 1. դեպքը նոր է, և երեխան գտնվում է շոկային կամ տրավմայի ապրման այլ փուլերում, 2. երբ երեխան չունի զարգացած խոսք, 3. երբ երեխան չափազանց հոգեպես վնասված է և ուղղակի տրավմայի մասին խոսելը կրկնակի կվնասի երեխային, 4. երբ դեպքը արտամղվել է կամ գործում են այլ պաշտպանական մեխանիզմներ:

«Վարդի թուփ» պրոյեկտիվ մեթոդիկան և դրան հետո ուղեկցող պրոյեկտիվ գրույցը նախատեսված է որոշելու երեխայի հանդեպ հնարավոր բռնությունը՝ օգտագործելով վարդի թուփը: Այն նաև օգնում է բացահայտել զգացմունքային անբարենպաստությունը ցանկացած սեռի և տարիքի երեխաների մոտ:

Այն իրականացվում է երեք փուլով. սկզբում խնդրում ենք երեխային պատկերացնել իրեն վարդի թփի տեսքով, այնուհետև նկարել այն թղթի վրա: Նկարից հետո երեխային պետք է կայունացնել տարբեր ռելաքսացիոն վարժությունների միջոցով, որից հետո սկսել հարցազրույցը: Հարցերը 45-ն են, որոնք անուղղակիորեն մղում են երեխային տալ հուզող հարցի վերաբերյալ ճիշտ պատասխաններ [7]:

«Անավարտ նախադասությունների» մեթոդիկան անավարտ նախադասություններ են, որոնք բացահայտում են բռնության երևույթի մասին երեխայի պատկերացումների համակարգը: Այն մասնագետին թույլ է տալիս բացահայտել բռնության հոգեբանական, իմացական և վարքագծային ասպեկտները, դրսևորումները և երեխայի կառույցները այս երեք վեկտորներում [6]:

Ռենե Ժիլի կողմից մշակված հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան պրակտիկ մեծ հնարավորություններ ունի, մասնավորապես, եթե մասնագետին անհրաժեշտ է բազմապրոֆիլ հետազոտություն կատարել՝ պարզելու բռնության սոցիալական և հոգեբանական հետևանքները: Այս մեթոդիկայի օգնությամբ միանգամից հնարավոր է պարզել ծնողների, ընկերների, ընտանիքի այլ անդամների, դպրոցի և ուսուցչի հանդեպ երեխայի վերաբերմունքը, և եթե որևիցե մեկում կա բռնություն, ապա ամենայն հավանականությամբ երեխան այն ցույց կտա:

Երբ երեխան հրաժարվում է նկարել, ապա նման պարագայում կարելի է անցնել երեխայի հետ հոգեբանական աշխատանքի այլ մեթոդին՝ պատմություններ պատմելուն (կամ գրելուն, եթե երեխան համաձայնվում է): Պատմությունը կարող է լինել ըստ ստանդարտ թեստերի (նկարներ), կամ ըստ հատուկ մշակված թեստերի:

Մասնագետը երեխային խնդրում է այս նկարների հիման վրա պատմություններ պատմել՝ ուշադրություն դարձնելով պատկերված դեմքերի մեկնաբանություններին և երեխայի մտքերի ու զգացմունքների արտահայտմանը:

«Նամակ ընկերոջը» մեթոդիկան նախատեսված է միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների հանդեպ հոգեբանական և հուզական բռնության ախտորոշման համար: Երեխային կամ դեռահասին առաջարկվում է երևակայական բռնության իրավիճակ, որը կատարվել է երևակայական ընկերոջ հետ: Երեխան պետք է իր աջակցող նամակ-պատասխանով սփռփիչ խոսքեր հղի երևակայական ընկերոջը:

Բռնության դեպքերում փոքր երեխան ավելի ճշգրիտ և ավելի դյուրին կարտահայտի իր վարքը խաղի ընթացքում: Խաղալիքների ընտրությունը մասնագետին տեղեկատվություն կտա այն մասին, թե ինչ է կատարվում երեխայի հետ: Ագրեսիվ կամ պասիվ խաղալիքներով, կանացի կամ արական, կառուցողական կամ կործանարար խաղալիքների միջոցով կարելի է դրդել երեխային խոսել ու պատմել իր հետ կատարված ագրեսիվ գործողությունների մասին: Սեռական բռնության ավելի օբյեկտիվ ախտորոշման համար օգտագործվում են անատոմիականորեն ճիշտ տիկնիկներ: Տիկնիկների հավաքածուն ներառում է տղաներ և աղջիկներ, տղամարդիկ և կանայք, տատիկ-պապիկներ, որոնք ունեն բոլոր օրգանները, երկրորդական սեռական հատկանիշներ: Նման տիկնիկները շատ նատուրալիստական են, և անատոմիականորեն ճիշտ տիկնիկների միջոցով ստացված նյութը շատ տեղեկատվական է ինչպես իրավիճակը, այնպես էլ երեխայի վիճակը գնահատելու առումով: Կարելի է նշալ, որ երեխայի հանդեպ բռնության ախտորոշումը համալիր գործընթաց է, որը ունի մասնագիտական և մեթոդաբանական դժվորություններ, էթիկական խիստ կանոններ և մասնագետի անձնային և մասնագիտական կոմպետենտության վերաբերյալ հստակ պահանջներ:

Գրականություն

1. Ардашева С.В., Борозинец Н.М., Евмененко Е.В., Козловская Г.Ю. Психолого-педагогические проблемы насилия над детьми: Учебно-методическое пособие. — Ставрополь, 2003.
2. Козлова Г.Л., Мирейчик Л.Н., Пряхина М.В. Насилие над детьми. Его виды и возможности предупреждения. Мн.: 2003. – 76 с.

3. Проблемы насилия над детьми и пути их преодоления /Под ред. Е.Н. Волковой. — СПб.: Питер, 2008. — 240 с.
4. Цымбал Е.И. Жестокое обращение с детьми: причины, проявления, последствия 2007. — 272 с.
5. Berent R., Crusto C.A., Lotyczewski B.S., Greenberg S.R., Hightower A.D., & Kaufman J.S. (2008). Development and psychometric refinement of a measure assessing young children's exposure to violence. *Best Practices in Mental Health*, 4(1), 19-30.
6. Ford J. (2002). Traumatic Events Screening Inventory—Parent Report Revised (TESI). Unpublished manuscript. Storrs, CT: University of Connecticut.
7. Strand V.C., Sarmiento T.L., & Pasquale L.E. (2005). Assessment and screening tools for trauma in children and adolescents: A review. *Trauma, Violence, & Abuse*, 6(1), 55-78.

ХАРАКТЕРИСТИКА И МЕТОДИЧЕСКИЙ КОМПЛЕКС ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ НАСИЛИЯ НАД ДЕТЬМИ

Арутюнян Н.С. (АГПУ им. Х.Абовяна, Ереван, РА)
harutyunyanaira@gmail.com

Аннотация: Насилие как реальный феномен и проблема психологических исследований достаточно сложно изучать на практике, поскольку существует ряд объективных и субъективных причин, препятствующих изучению этой проблемы.

Под насилием мы также подразумеваем только физическое воздействие на ребенка. Но это лишь малая часть вышеизложенного вопроса. Западные авторы отмечают, что последствия насилия над детьми можно графически описать в виде айсберга. По их мнению, случаи насилия, повлекшие за собой серьезные травмы или смерть ребенка, — это лишь видимая малая часть проблемы. Существует также чрезвычайно большой невидимый сегмент, к которому относятся травмы, не требующие медицинского вмешательства, или так называемые «непроисходящие травмы». Эксперты полагают, что только полное изучение айсберга позволит в какой-то степени решить проблему насилия над детьми.

Как правило, рассмотрение проблемы насилия направлено по двум основным векторам: первое направление предполагает установление факта насилия или абьюза в отношении ребенка (например, возбуждение уголовного дела). Второе направление связано с изучением последствий насилия на интеллектуальное, личностное и социальное развитие ребенка. В данной статье предпринята попытка ответить на методологические вопросы этих двух направлений и предложить подходящий инструментарий.

Ключевые слова: ребенок, насилие, психотравма, оценка, детская травма, психодиагностика.

**CHARACTERISTICS AND METHODOLOGICAL COMPLEX OF
PSYCHOLOGICAL EXAMINATION OF CHILD ABUSE**

Harutyunyan N.S. (Kh. Abovyan ASPU, Yerevan, RA)

harutyunyanaira@gmail.com

Abstract: Child abuse as a real phenomenon and problem of psychological research is quite difficult to study in practice, since there are a number of objective and subjective reasons that prevent the study of this problem. By abuse we also mean not only physical impact on the child. But this is only a small part of the above question. Western authors note that the consequences of violence against children can be graphically described in the form of an iceberg. In their opinion, cases of violence that lead to serious injury or death of a child are only a visible small part of the problem. There is also an extremely large invisible segment that includes injuries that do not require medical intervention, or so-called “non-occurring injuries.” Experts believe that only a complete study of the iceberg will allow the problem of child abuse to be solved to some extent. As a rule, consideration of the problem of violence is directed along two main vectors: the first direction involves establishing the fact of violence or abuse against a child (for example, initiating a criminal case). The second direction is related to the study of the consequences of violence on the intellectual, personal and social development of a child. This article attempts to answer the methodological questions of these two directions and propose suitable tools.

Keywords: child, violence, psychotrauma, assessment, childhood trauma, psychodiagnostics.

*Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 10.03.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 18.03.2024*

**ՀՀ-ՈՒՄ ԶԻՆՍԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Համաբարձույան Մ.Վ. (ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ, Երևան, ՀՀ)
manuk6503@gmail.com

Ամփոփագիր. Հոդվածում անդրադարձ է կատարվում վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախում զինված ուժերում գրանցված զինձառայողների մահացության դեպքերին, դրանց պատճառականությանը, վիճակագրությանը: Քննարկվում են զինձառայողների կողմից իրականացված ինքնասպանության դեպքերն ու դրանց փորձերը, վերջիններիս առնչությամբ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում նշանակված և իրականացված դատահոգեբանական և համալիր փորձաքննությունների առանցքային ասպեկտները: Ներկայացված են սույն գործերով նշանակված փորձաքննությունների իրականացման խնդրահարույց կողմերը, հիմնական բարդությունները, յուրահատկությունները, որոնք տիպիկ են հենց այս բնույթի գործերով դատահոգեբանական փորձաքննություններին: Հոդվածում վերլուծության են ենթարկվում ինքնասպանության, ինքնասպանության փորձերի դեպքերով դատական փորձաքննություններում մասնագիտական-հոգեբանական հմտությունների կարևորությունը, դրանց առանձնահատկությունները: Հոդվածի վերջում ներառված են մասնագիտական որոշ առաջարկություններ, որոնք օգտակար կլինեն ինչպես ոլորտի փորձագետների մասնագիտական կարողությունների զարգացման, այնպես էլ՝ ՊՆ տարբեր ստորաբաժանումներում զինձառայողների հետ աշխատող սպայական կազմի կողմից գործերում ոչ կանոնադրային փոխհարաբերությունների բացահայտման, վերահսկման և կանխարգելման տեսանկյունից:

Հիմնաբառեր. զինված ուժեր, ոչ կանոնադրային փոխհարաբերություններ, ինքնասպանություն, ինքնասպանության փորձ, դատահոգեբանական փորձաքննություն, փորձագիտական եզրակացություն:

Վերջին տարիների ընթացքում, այդ թվում՝ արցախյան 44-օրյա պատերազմից հետո, ժամանակ առ ժամանակ ԶԱՄ-ներում հայտնվում են տեղեկություններ ՀՀ զինված ուժերում (այսուհետ՝ ԶՈՒ) նաև ոչ կանոնադրային փոխհարաբերությունների համատեքստում զինձառայողների միջև և նրանց կողմից արձանագրված տարատեսակ

միջադեպերի՝ որպես ինքնասպանություններ, ինքնասպանության փորձեր նախնական որակվող դեպքերի, ինքնավնասումների, մեկ այլ զինծառայողի հրազենային վիրավորում (այդ թվում՝ մահացու ելքով) պատճառելու մասին: Մասնավորապես, ըստ 10.03.2023թ.-ին ՋԼՄ-ներից մեկի հրապարակման, 2023թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ ՋՈՒ-ում արձանագրվել է 20 զինծառայողի մահ՝ ոչ հակառակորդի կրակոցի արդյունքում [8]:

Ըստ 14.09.2023թ.-ի մեկ այլ հրապարակման՝ ոչ հակառակորդի կրակոցից նախորդած 1,5 ամսվա ընթացքում ՀՀ ՋՈՒ-ում գրանցվել էր 9 զինծառայողի մահ, որոնցից 4-ը ինքնասպանության, 2-ը՝ սպանության, 3-ը՝ դժբախտ պատահարի արդյունքում: 18.01.2024թ.-ին ՀՀ ՄԻՊ պաշտոնյայի հրապարակած տվյալների համաձայն՝ ՀՀ ՋՈՒ-ում **2018թ.-ին** գրանցվել է զինծառայողների մահվան **63 դեպք, 2019թ.-ին՝ 49, 2020թ.-ին՝ 54, 2021-ին՝ 58, 2022-ին՝ 64** [10]:

Ըստ ս.թ.-ին հրապարակած տեղեկանքի՝ 2022թ.-ին ՀՀ-ում, ԱՀ/ԼՂ-ում (մինչ 2023թ.-ի հոկտեմբերը) ՋՈՒ-ում գրանցված 64 զինծառայողի մահվան դեպքերից 6-ը հանդիսացել է ինքնասպանություն, 6-ը՝ սպանություն: 2023թ.-ի ընթացքում ՀՀ-ում, ԱՀ/ԼՂ-ում (մինչ 2023 թ.-ի հոկտեմբերը) ՋՈՒ-ում գրանցվել է 83 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 10-ը հանդիսացել են ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 4-ը՝ սպանության դեպքեր [2]:

Ըստ ՋԼՄ-ներից մեկում շրջանառված տվյալների՝ 2018-2023թթ.-ի ընթացքում ոչ մարտական պայմաններում գրանցվել է 436 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 18%-ը որակվել է որպես ինքնասպանություն, 10%-ը՝ սպանություն: Այս տարեթվերին նախորդած 6 տարիների համեմատ ՋՈՒ-ում ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքերը շուրջ 29%-ով ավելի են եղել: Ս.թ.-ի հունվար ամսվա ընթացքում գրանցվել է 3 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 1-ը որակվել է որպես ինքնասպանություն, 1-ը՝ սպանություն, ևս 1-ը՝ դժբախտ պատահար:

24.02.2024թ.-ին հայտնվեց 19-ամյա զինծառայող Ա.Զաքարյանի՝ դեռևս չպարզված հանգամանքներում մահվան մասին, օրեր անց նրա սպանության մեղադրանքով կալանավորվեց նրա համաժառայակիցը: Նախաքննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ 24.02.2024թ.-ին մարտական դիրքում՝ խրամուղում, մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայողների միջև անձնական հարցերի շուրջ առաջացած վիճաբանության, քաշքշոցի արդյունքում զինծառայողը, լիցքավորելով իրեն ամրակցված գնդացիրը, թիրախավորելով Ա.Զաքարյանին, մենահատ կրակոց էր արձակել նրա ուղղությամբ՝ պատճառելով հրազենային միջանցիկ վիրավորում [11]:

44-օրյա պատերազմից հետո նմանատիպ դեպքերի պատճառականության շղթայում շեշտադրվում են նաև մարտական սթրեսը, զինձառայողների ստացած ռազմական տրավմաները:

ՀՀ ՁՈԻ-ում **զինձառայողների միջև փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների** խախտումների, զինձառայողների միջև ոչ կանոնադրային փոխհարաբերությունների հետևանքով անձին հարվածներ հասցնելու կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելու, զինձառայողի պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու, հրազենային մարմնական վիրավորում պատճառելու (այդ թվում՝ մահվան ելքով), զինձառայողին (անզգուշությամբ) ինքնասպանության հասցնելու դեպքերը հանրային և մասնագիտական խոսույթում, քննարկումներում առավել հաճախ կապվում են քրեական ենթամշակույթի տարրերի, սոցիումում առկա արատավոր որոշ բարքերի՝ զինվորական ենթամշակույթ փոխանցման, զինձառայողների միջև ոչ կանոնադրային փոխհարաբերությունների առկայության, զինձառայողների ֆինանսական պարտավորությունների, զինձառայողների կողմից թմրանյութերի օգտագործման, մոլախաղերով զբաղվելու, զորամասերում սպայական անձնակազմի, այդ թվում՝ սպա-հոգեբանների թվաքանակի պակասի, ՁՈԻ-ում սպա-հոգեբանի ինստիտուտի լիարժեք ներդրված չլինելու, վերջիններիս՝ մասնագիտական գործառույթների համարժեքության խնդրի հետ:

Ըստ շրջանառված տեսակետների՝ ՀՀ ՁՈԻ-ում հատկապես ինքնասպանության դեպքերը և դրա փորձերը պատճառականության առումով հիմնականում կապվում են զորակոչի ընթացքում բժշկական, հոգեբուժական, հոգեբանական գնումների թերի իրականացումների հետ, որոնց արդյունքում պարտադիր ժամկետային զինձառայության են զորակոչվում հոգեկան և ֆիզիկական առողջության (վերջինիս դեպքում օրինակ՝ գիշերամիզության) հետ կապված խնդիրներ ունեցող անձինք:

ՀՀ ՁՈԻ-ում իրականացված ինքնասպանության որոշ դեպքեր կապվում են նաև վատ վերաբերմունքի, հավանական խոշտանգումների, զինձառայողների արժանապատվությունը նվաստացնող գործողությունների հետ [9]:

Ըստ մեզ՝ նշված ընդգրկուն տվյալներով իսկ հիմնավորվում է հիմնախնդրի այժմեականությունը: Սույն հոդվածի հիմնական խնդիրն է հանդիսանում զինձառայողների կողմից իրականացված ինքնասպանությունների, դրանց փորձերի կապակցությամբ նշանակված և իրականացված փորձագիտական եզրակացությունների ուսումնասիրությունը, նպատակը՝ փորձագիտական տեսանկյունից դրանց վերլուծությունը և հավանական պատճառական գործոնների վերհանումը:

Զինճառայողների ինքնասպանության, դրանց փորձերի, զինճառայողին հրազենային վիրավորում պատճառելու և նման այլ դեպքերով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կազմակերպություն) վերջին տարիների ընթացքում նշանակված, իրականացված և իրականացվող դատահոգեբանական և համալիր՝ դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննությունների նշանակալի քանակի պայմաններում հարկ ենք համարում վերոնշյալ խնդիրներին անդրադառնալ նաև փորձագիտական տեսանկյունից և վերլուծել մասնավորապես զինճառայողների ինքնասպանության և դրա փորձերի հիման վրա նշանակված և իրականացված փորձագիտական եզրակացությունները:

Զինճառայողների ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի առնչությամբ՝ ըստ նախկին ՀՀ Քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 110-րդ հոդվածի 1-ին մասի, 358.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 360.1 հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի [5], ըստ գործող ՀՀ Քրեական օրենսգրքի՝ 522-րդ հոդվածի 1-ին մասի [6] հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով վարույթն իրականացնող մարմինների (հիմնականում՝ ՀՀ ՔԿ ՋԲԳՎ-ի համապատասխան քննչական բաժինների) կողմից Կազմակերպությունում նշանակված, իրականացված և իրականացվող վերոնշյալ համալիր փորձաքննությունների որոշումներում հոգեբանական մասով առաջադրված հարցադրումները հիմնականում հետևյալն են.

✓ Ինչպիսի՞ հոգեվիճակում է գտնվել զինճառայողն ինքնասպանությանը/ ինքնասպանության փորձին նախորդող ժամանակահատվածում;

✓ Համադրելով քրեական վարույթի նյութերում առկա տեղեկությունները, ինքնասպանությանը/ինքնասպանության փորձին նախորդող ժամանակահատվածում զինճառայողը գտնվել է արդյոք դրա կատարմանը հակված հոգեվիճակում;

✓ Ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարած զինճառայողը գտնվել է արդյոք հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, թե՞ ոչ;

✓ Ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարած զինճառայողն արդյո՞ք ունակ և հակված է եղել ինքնասպանություն գործելու, թե՞ ոչ;

✓ Գոյություն ունի՞ արդյոք պատճառահետևանքային կապ մեղադրյալի գործողություններին ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարած զինճառայողի մոտ դեպքին նախորդող ժամանակահատվածում ձևավորված հոգեվիճակի միջև;

✓ Հաշվի առնելով նախաքննությամբ փաստված՝ ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարած զինծառայողի վերջին շփումը/ները, դրա/դրանց բնույթն ու առանձնահատկությունները, դրանք ինչպիսի՞ ազդեցություն կարող էին ունենալ նրա հոգեվիճակի վրա, դրանք նպաստե՞լ են արդյոք վերջինիս կողմից նշված գործողությունը կատարելու որոշումն ընդունելուն, թե՞ ոչ:

✓ Կոնկրետ ի՞նչ հանգամանք/ներ/ կամ գործողություն /անգործություն/ կամ իրավիճակ/ներ/ է/են/ տվյալ զինծառայողին դրդել կամ նպաստել ինքնասպանություն/ ինքնասպանության փորձ կատարելուն:

✓ Ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարած զինծառայողի մոտ առաջացած և քրեական վարույթի նյութերում առկա տեղեկություններում նկարագրված առողջական խնդիրները (օրինակ՝ դեպքերից մեկով նշված էր զինծառայողի հաճախամիզության, հետանցքից հնարավոր արյունահոսության, դրանց հնարավոր անբարենպաստ հետևանքների՝ տհաճ հոտի մասին), դրանց մասին այլ զինծառայողների հնարավոր իրազեկվածությունը, տվյալ զինծառայողի հնարավոր կաշկանդվածությունը կարո՞ղ էին արդյոք վերջինիս հասցնել ինքնասպանության/ինքնասպանության փորձի կատարմանը հակված հոգեվիճակի, դրդել կամ նպաստել ինքնասպանություն/ինքնասպանության փորձ կատարելուն:

Նշենք, որ նշված հետմահու համալիր փորձաքննությունների պարագայում երբեմն հոգեբան փորձագետի պարզմանն են առաջադրվում հարցադրումներ, որոնց պարզումը գտնվում է իրավական գնահատման տիրույթում, ինչպիսին, օրինակ՝ որևէ անձի կամ անձանց գործողության/ների կամ անգործության և ինքնասպանություն /ինքնասպանության փորձ կատարած անձի (զինծառայողի) գործողությունների միջև պատճառահետևանքային կապի պարզումն է: Համալիր՝ դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության դեպքում այն իրականացվում է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդածի իրավակարգավորումներին համապատասխան [7]:

Զինծառայողների ինքնասպանությունների նշված դեպքերով հետմահու փորձաքննությունների իրականացման մեր փորձառությանն անդրադառնալով, նշենք, որ այդպիսիք իրականացվում են տրամադրված նյութերում առկա տվյալների հետազոտման, եզրակացության մեջ էլակետային տվյալների ներառման, նշվածների՝ դատահոգեբուժական մասի արդյունքների հետ համադրման և ձեռք բերված տվյալների ռեզյուսմենտի (հետհայաց) վերլուծության միջոցով: Առանձին դեպքով ինքնասպանություն գործած զինծառայողի ընտանիքի անդամի ցանկությամբ նրա հետ իրականացվել է համապատասխան փորձագիտական զրույց, հայտնված տվյալները ներառվել են

փորձագիտական եզրակացության մեջ, կիրառվել վերլուծության իրականացման ընթացքում:

Ըստ մեզ՝ նշված հետմահու փորձաքննությունների խնդրահարույց կետերից են համարվում հետազոտվող անձի բացակայությունը, փորձաքննության համար նշանակալի հանգամանքների պարզմանն ուղղված անմիջական աշխատանքներ իրականացնելու անհնարինությունը, ինքնասպանությանը (անմիջապես) նախորդած ժամանակահատվածում ինքնասպանի վարքային, հուզական դրսևորումների, արտահայտած մտքերի մասին տվյալների սակավությունը, անհամադրելիությունը, դրանցում որոշակի հակասականությունը և այլն:

Ձինձառայողների կողմից իրականացված ինքնասպանության փորձերի առնչությամբ նշանակվող փորձաքննությունների որոշումներում ներառված որոշ հարցադրումներ իրենց էությամբ կարող են նման լինել ինքնասպանության դեպքերով նշանակված փորձաքննությունների որոշումների հարցադրումներին: Ըստ մեզ՝ նշված երկու դեպքերում էլ փորձաքննությանն առաջադրվող հիմնական խնդիրը հանդիսանում է որևէ անձի գործողության/ների և/կամ անգործության և ինքնասպանությունն ինքնասպանության փորձ կատարած զինձառայողի՝ խնդրո առարկա իրավիճակում ունեցած հոգեվիճակի միջև պատճառահետևանքային կապի պարզումը:

Ձինձառայողի ինքնասպանության փորձով նշանակված համալիր դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության որոշման օրինակով նշենք, որ հոգեբանական մասով առաջադրվել են հարցադրումներ նրա կողմից խնդրո առարկա իրավիճակը ճիշտ ընկալելու և վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկությունները վերարտադրելու կարողության վերաբերյալ: Իրականացված համալիր դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության օրինակով նշենք, որ զինձառայողի՝ ինքն իրեն հասցված հրազենային վիրավորման արդյունքում գլխի շրջանում պատճառված մարմնական վնասվածքների և դրանց հետևանքների՝ հիշողության, կոգնիտիվ, ինտելեկտուալ, խոսքային և այլ ոլորտների փոփոխությունների, գրեթե բոլոր ոլորտներում հաջորդած կոպիտ ախտաբանական անդարձելի փոփոխությունների արդյունքում զարգացած «Թուլամտություն Գ/ՈԻ՝ ախտահարման հետևանքով» հոգեկան հիվանդության պայմաններում նշված հարցադրումների պարզումը պայմանավորվում է միմիայն դատահոգեբուժական փորձաքննության հետազոտության արդյունքներով, մասնավորապես՝ հիշողության և ինտելեկտուալ ոլորտներում պրոգրեսիվող անդարձելի փոփոխությունների արձանագրման արդյունքում:

Հաշվի առնելով վերոշարադրյալ տեղեկությունները, վերլուծելով զինձառայողների շրջանում մի շարք ինքնասպանության և դրա փորձերի

հիման վրա նշանակված և իրականացված փորձագիտական եզրակացությունները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

✓ քաղաքացիական անձանց կողմից կատարված ինքնասպանությունները, դրանց փորձերը, իրականացման ձևերը, սուիցիդյալ վարքը պայմանավորող պատճառական հավանական գործոնները տարբերվում են զինծառայողների կողմից իրականացված նմանատիպ դեպքերից;

✓ ի տարբերություն քաղաքացիական անձանց կողմից ինքնասպանությունից առաջ թողնված հետմահու նամակների, երկտողերի՝ այդպիսիք զինծառայողների ինքնասպանությունների դեպքերով իրականացված փորձաքննությունների շրջանակներում չեն վերհանվել, ինչը, ըստ մեզ, պայմանավորված է իրավիճակային գործոններով, այն կարող է նանվկայել կոնկրետ դեպքում զինծառայողի կողմից իմպուլսիվ սուիցիդի իրականացման մասին;

✓ զինծառայողի ֆիզիկական առողջության հետ կապված տարբեր գանգատները, առողջական խնդիրները, դրանց՝ համաձայնակիցների և վերադաս հրամանատարության կողմից որպես ձևացում (սիմուլյացիա) ընկալվելը, նշված հարցում աջակցություն չստանալը, զինծառայողների միջև ոչ կանոնադրային փոխհարաբերությունների դրսևորումները («աուտ երդվել», «ստել», ծառայակցի/ների կողմից զինծառայողին ծաղրել, խտրական մոտեցման ցուցաբերում, հայհոհանք, ծեծկոտուք, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու դեպքեր և այլն), մարտական հերթապահության պայմանների խախտումները (դիրքում քնելու հետ կապված դեպքերը, դրան հաջորդած հնարավոր վիճաբանությունները և այլն) և վերոնշյալներն ինչպես՝ առանձին-առանձին, այնպես էլ իրենց համակցության մեջ կարող են ձևավորել տվյալ զինծառայողի հանդեպ խտրական մոտեցումներ կամ՝ առավել արմատավորել դրանք, տվյալ զինծառայողի մոտ ձևավորել իրավիճակի սուբյեկտիվ անհաղթահարելիության և անլուծելիության ընկալում, հանդիսանալ անձի աուտոագրեսիվ և/կամ հետերոագրեսիվ վարքը պայմանավորող նշանակալի գործոն կամ գործոնների համակցություն;

✓ զինծառայողի կատարած ինքնասպանությանը կամ դրա փորձին որոշ դեպքերում նախորդում է տվյալ անձի՝ համաձայնակցին/ներին հրազենային վիրավորման պատճառումը;

✓ պայմանավորված զինծառայության, այդ թվում՝ մարտական հերթապահության որոշակի առանձնահատկություններով, զինծառայողների միջև միջանձնային փոխհարաբերություններում առկա խնդիրները կարող են արտահայտվել նորովի, համակցվել առաջ եկած այլ խնդրահարույց իրավիճակների հետ, ստանալ նոր սրություն՝ հանգեցնելով նաև լետալ ավարտով աուտոագրեսիվ գործողությունների;

✓ ինքնասպանություն գործած զինծառայողի ֆինանսական պարտավորությունները, դրանքմարելունուղղված պարբերական դժվարությունները, նախատեսված գործողությունների չկատարումը, սեփական ֆինանսական միջոցները տնօրինելու սահմանափակումները, դրանց ընդհանուր կամ առանձին համակցությունը կարող են տվյալ անձի մոտառաջացնել հուզական և նյարդային համակարգի բարձր լարվածություն (քողարկված որոշ վարքային դրսևորումներով), ձևավորել առկա իրավիճակի անհաղթահարելիության և անլուծելիության ոչ ադեկվատ ընկալում՝ հանգեցնելով կոնստրուկտիվ ելքեր որոնելու և գտնելու կարողության նվազմանը;

✓ զինծառայության առաջին 6 ամիսների ընթացքում զինծառայողների գործած որոշ ինքնասպանություններ հիմնականում կապվում են ծառայության պայմաններին դեզադապտացիայի (ապահարմարման) խնդիրների հետ;

✓ ռազմական գործողություններին (ըստ մեր դիտարկումների՝ մասնավորապես 44-օրյա պատերազմի) մասնակցությունից հետո զինծառայողի/ների մոտ գրանցված հոգեկան առողջության հետ կապված խնդիրները կամ խանգարումները և դրանց հետևանքները (օրինակ՝ ՀՏՄԽ, տագնապային, հարմարվողականության խանգարումներ և այլն) կոնկրետ դեպքում/երում բերել են զինծառայողի/ների կողմից սուիցիդալ փորձերի և ավարտված սուիցիդների իրականացմանը;

✓ տարաբնույթ հանգամանքների, իրողությունների, խնդիրների համակցությունը և զինծառայողի կողմից դրա՝ սուլբյեկտիվորեն սուր, անելանելի և անհաղթահարելի ընկալումը կարող է պայմանավորել անձի սուիցիդալ վարքագիծը:

Ամփոփելով իրականացված աշխատանքները և ելնելով վերոշարադրյալ վերլուծություններից՝ առաջարկում ենք.

✓ զինծառայողների ինքնասպանության, ինքնասպանության փորձերի հիման վրա նշանակված և իրականացված համապատասխան հիմնավորված փորձագիտական եզրակացությունները՝ որպես կոնկրետ դեպքում/երում որոշման պահանջների կատարում դիտարկելուց զատ, դիտարկել նաև որպես զորամասերում և զինվորական ենթամշակույթում առկա որոշ ոչ կանոնադրային փոխհարաբերությունների, միջանձնային շփումների մակարդակում կոնֆլիկտային իրավիճակների վերհանմանը, վերլուծությանը, դրանց վերանայմանը և կանխարգելմանը միտված իրականացված յուրատիպ հետազոտական աշխատանքներ;

✓ առանձնահատուկ ուշադրություն դարձնել հատկապես մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայողների ֆիզիկական վիճակին և պատրաստվածությանը, հոգեվիճակում, վարքում հնարավոր բացասական փոփոխություններին;

✓ համակարգային և համապարփակ աշխատանքներ իրականացնել գործառնաբերում համապատասխան սպա-հոգեբանների համալրվածության, տվյալ կառույցի գործառնությունների լավարկման և զինծառայողների կենսագործունեությանն ուղղված հոգեբանական ուղեկցման և այլ հարցերում, որոնք, ըստ մեզ, նկարագրված միջադեպերի առումով ապագայում կունենան նշանակալի կանխարգելիչ ազդեցություն:

Վերոնշյալ հարցերում անհրաժեշտ գործողությունների, բարեփոխումների իրականացումն առավել քան արդիական ենք համարում՝ նախորդած տարիներին և ներկայումս առկա հայտնի իրողությունների համապատկերում:

Գրականություն

1. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն, Եր., «Զանգակ 97», 2004. – 432 էջ:
2. Մովսեսյան Ն., Պետրոսյան Ա., Սաքունց Ա.Տեղեկանք 2023 թվականին ՀՀ և ԱՀ/ԼՂ/ զինված ուժերում մահացության դեպքերի մասին, Վ.: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2024. – 77 էջ:
3. Վարդանյան Կ. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում, «Դավիթ թագավոր» Եր., 2008. – 360 էջ:
4. Амбарцумян М.В. Особенности судебно-психологических экспертиз инцидентов в вооруженных силах Республики Армения, М.: Дискуссионные вопросы теории и практики судебной экспертизы: Материалы 5-й Международной научно-практической конференции, посвященной 100-летию профессора Г.Л. Грановского, 2023. стр. 34-41.
5. ՀՀ օրենքը ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=83394>
6. ՀՀ քրեական օրենսգրքը: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080>
7. ՀՀ քր դատավարության օրենսգրքը: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=154763>
8. <https://www.azatutyun.am/a/32311347.html>
9. <https://www.azatutyun.am/a/32590953.html>
10. <https://hy.armradio.am/archives/545193>
11. <https://www.azatutyun.am/a/32837356.html>

АНАЛИЗ ОСОБЕННОСТЕЙ ПРОВЕДЕНИЯ ЭКСПЕРТИЗ СЛУЧАЕВ СУИЦИДОВ, СУИЦИДАЛЬНЫХ ПОПЫТОК ВОЕННОСЛУЖАЩИХ В ВС РА

Амбарцумян М.В.(ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА, Ереван,
РА)
manuk6503@gmail.com

Аннотация: Статья посвящена исследованию зафиксированных летальных исходов военнослужащих в вооруженных силах РА и Арцаха за последние годы, их причинности и статистике. Выделяются и описываются характерные особенности и ключевые аспекты случаев суицидов, суицидальных попыток военнослужащих в контексте назначаемых и проводимых в ГНКО «Национальное бюро экспертиз» НАН РА комплексных судебно-психологических экспертиз. В статье предпринята попытка как раскрыть основные проблемные компоненты проведения экспертиз, назначаемых в аналогичных случаях, так и вскрыть основные сложности и особенности, которые характерны для судебно-психологических экспертиз в случаях суицидов и суицидальных попыток. В статье значительное внимание уделяется детальному изучению профессионально-психологических навыков и их особенностей при производстве судебных экспертиз по делам о самоубийствах и попытках самоубийства. В статье обобщен новый материал по исследуемой теме, позволяющий изложить некоторые профессиональные рекомендации, которые могут быть востребованы при развитии профессиональных способностей экспертов специализирующихся в данной области. Результаты исследований могут быть актуальны также для офицеров вооруженных сил, при выявлении, контроле и предотвращении неуставных отношений в вооруженных силах различных подразделений Минобороны РА.

Ключевые слова: вооруженные силы, неуставные отношения, суицид, попытка суицида, судебно-психологическая экспертиза, экспертное заключение.

**THE ANALISIS OF CHARACTERISTICS OF SUICIDE AND SUICIDE ATTEMPTS
OF
ARMY SERVICEMEN IN RA**

Hambarzumyan M.V. (“National Bureau of Expertises” of NAS SNPO RA, Yerevan,
RA)
manuk6503@gmail.com

Abstract: The article refers to the registered deaths of servicemen in the military forces of the Republic of Armenia and Artsakh in recent years, their causality, statistics. The cases of suicides and their attempts by servicemen are discussed, as well as the key aspects of the forensic psychological and complex expertises assigned and carried out in the "National Bureau of Expertise" SNPO. The

problematic aspects of the implementation of the expertises assigned in these cases, the main complications, the peculiarities, which are typical for the forensic psychological expertises in cases of this nature, are presented. The article analyzes the importance of professional-psychological skills and their characteristics in forensic expertises of cases of suicide and suicide attempts. At the end of the article, some professional recommendations are included, that will be useful both for the development of the professional abilities of experts of the field, and for the disclosure, control and prevention of non-statutory relations in the troops by officers working with servicemen in various units of the Ministry of Defense.

Keywords: military forces, non-statutory relationships, suicide, suicide attempt, forensic psychological expertise, expert conclusion.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 04.02.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 24.02.2024

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԴՏԱՆՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ղազարյան Գ.Հ. (հ.գ.թ., դրցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)

ghazaryan.psy@gmail.com

Հարությունյան Ն.Ա. (հ.գ.թ., դրցենտ, ԵՊՀ, Երևան, ՀՀ)

Narine.harutyunyan@ysu.com

Ամփոփագիր. Մեր հոդվածի ուսումնասիրության առարկան է հանդիսանում ընտանեկան բռնության հոգեբանական կողմերը, ինչպես նաև ընտանեկան բռնության հարցերը ուսումնասիրող փորձագետ հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական առանձնահատկությունները: Ուսումնասիրության բյեկտը ընտանեկան բռնությունն է՝ որպես ժամանակակից սուր սոցիալական խնդիր: Հոդվածում ներկայացված է ընտանիքում կատարված հանցագործությունների վիճակագրական համառոտ ակնարկ: Հիմնվելով գիտական աշխատանքների և մասնագիտական փորձի վրա հեղինակները առաջարկում են ընտանեկան բռնության հարցերով դատահոգեբանական փորձաքննության անցկացման առանձնահատկությունների նկարագրությունը՝ որպես փորձագետ հոգեբանի մասնագիտական գործունեության մաս և հիմնական հարցերի շրջանակը, որոնք կարող են դրվել այս տեսակի դատական հոգեբան-փորձագետների առջև: Հեղինակները ներկայացնում են ընտանեկան բռնության հոգեբանական ասպեկտների նկարագրությունը՝ ներառյալ բռնության տեսակները, ձևերը, ընտանեկան բռնությանը նպաստող, հրահրող հուզական վիճակները, հոգեկան տառապանքի գնահատումը և այլ:

Հիմնաբառեր. ընտանեկան բռնություն, դատահոգեբանական փորձաքննություն, հոգեկան վիճակ, հոգեբանական առանձնահատկություններ, հոգեկան տառապանք:

Ընտանեկան բռնության խնդիրն ժամանակակից ամենավտանգավոր սոցիալական խնդիրներից է: Հաճախ ընտանեկան բռնության զոհ են դառնում բնակչության ամենա խոցելի շերտերը՝ երեխաները, կանայք և տարեցները:

Ներկայացնենք ՀՀ-ում ընտանիքում կատարված հանցագործությունների վիճակագրական համառոտ ակնարկը, ըստ՝ Վիճակագրական կոմիտեի «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն, 2021 թ.» զեկույցի՝ հարցված կանանց (15-59 տարեկան՝ 2560 հոգի) 14.8%-ը (378 հոգի) ենթարկվել է ֆիզիկական բռնության, 6.6%-ը (168 հոգի)՝ սեռական բռնության, 31.8%-ը (814 մարդ)՝ հոգեբանական բռնության: Զեկույցի համաձայն՝ զուգընկերոջ կողմից ֆիզիկական կամ

սեռական բռնության ենթարկված կանանց 43.3%-ը լռում է բռնության մասին, 12%-ը դիմել է օգնության որևէ պատասխանատու կառույցի, 76.5%-ը շարունակում է ապրել բռնարարի հետ: 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ընտանեկան բռնության 391 քրեական գործի շրջանակներում, ըստ ՔԿ-ի, արձանագրվել է՝ սպանության 8 դեպք, անզգուշությամբ մահ պատճառելու 1 դեպք, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 33 դեպք, ծեծի 183 դեպք, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու 11 դեպք, մարդուն առևանգելու 3 դեպք, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի 51 դեպք, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների 1 դեպք, 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության 3 դեպք, ծնողներից երեխային ապօրինի բաժանելուն կամ երեխային փոխելու 2 դեպք, ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու 31 դեպք, խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առջին կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի 1 դեպք, ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու 9 դեպք: Ընտանիքում կատարված հանցագործություններից 94-ը կատարվել են տղամարդու կողմից, 10-ը՝ կնոջ կողմից, 4-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 3-ը՝ պապի/տատի կողմից, 9-ը՝ զավակի կողմից, 4-ը՝ թոռան կողմից, 4-ը՝ ամուսնու ծնողների կողմից [12, 13]:

391 քրեական գործից 53-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ, 123 քր. գործի վարույթ կարճվել է, որից 39-ը՝ արդարացնող, իսկ 84-ը՝ ոչ արդարացնող հիմքով, 8 քրեական գործի վարույթ կասեցվել է, 145 քրեական գործ դեռ ընթացքի մեջ է [12, 13]:

Այսպիսով, բռնությունները ընտանիքում ունեն տարաբնույթ դրսևորումներ և գրականության մեջ դասակարգվում են, որպես ֆիզիկական, նյութական, ֆինանսական, սոցիալական, սեռական, հոգեբանական բռնություն և արհամարում [4; 6, էջ 211–212]: Ընտանեկան բռնությունները կարող են հետևանք լինել ներընտանեկան միջանձնային հարաբերությունների, ինչպես նաև պատճառ՝ դրանց քայքայման կամ խզման: Եվ այս տեսանկյունից շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան բռնությունների հիմնական պատճառները, բռնության երկու կողմերի վարքի մոդելները, բացահայտել հոգեբանական հետևանքները, դրանց հաղթահարման հնարավորությունները, ինչպես նաև մշակել բռնությունների կանխարգելման մեխանիզմները:

Պետք է նշել, որ գրականության մեջ առանձնացվում են մի շարք գործոններ՝ ընտանեկան բռնությունը հրահրող անձնային և իրավիճակային, որոնցից առավել էական են համարվում. (Սոշնիկովա Ի.Վ., Բադրնով Ա.Մ., Չուպինա Գ.Ա., Ֆուրմանով Ի.Ա. և այլ):

✓ *երեխայի անձր.* Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ երեխայի անհատական առանձնահատկությունները և զարգացման մի շարք հատկանիշներ կարող են ծնողների մոտ առաջացնել ագրեսիա, դժգոհություն, դյուրագրգռություն, ինչն էլ արդյունքում կարող է վերածվել նեգատիվ վերաբերմունքի և արտահայտվել երեխայի կամ ընտանիքի որևէ անդամի նկատմամբ բռնի գործողությունների: Բռնության զոհ դառնալու բարձր ռիսկ կա մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների մոտ՝ բնածին կամ ձեռքբերովի հաշմանդամություն ունեցող, ցածր ինտելեկտով, առողջական խնդիրներ ունեցող երեխաներ, վարքային խնդիրներով՝ հիպերակտիվ, իմպուլսիվ, ագրեսիվ, տարբերվող արտաքինով և այլն: Երեխայի նկատմամբ բռնության ռիսկը մեծ է պայմանավորված նաև այն հանգամանքով, որ առավելապես ընտանիքներում, նրա անդամների կողմից թաքցվում է այդ նեգատիվ երևույթը, քողարկվում կամ մերժվում, դառնում ընտանեկան գաղտնիք՝ հող նախապատրաստելով հերթական բռնության համար:

✓ *ծնողի (մեծահասակի) անձր.* Բռնի վարքագիծ կարող են հրահրել նաև ծնողի ֆիզիկական և անհատական առանձնահատկությունները, անձնային որակները, արժեքները, դիրքորոշումներն ու կարծրատիպերը և այլն: Շատ հաճախ բռնի գործողությունների հիմքում (ուղղված երեխային) կարող են լինել ծնողական հմտությունների և զգացմունքների թերզարգացումը, այնպիսի կարծրատիպերի առկայությունը, համաձայն որոնց երեխան գոյություն ունի իրենց հուզական կարիքները բավարարելու համար, և որ նա պետք է լինի հնազանդ, զգայուն, սիրալիր, հասկացող, չտխրեցնի, չզայրացնի, այլ միայն սիրի ու ուրախացնի ծնողներին, ծնողների բարձր տազնապայանությունը, դյուրագրգռությունը, իշխելու միտումը, ցածր ինքնագնահատականը, կասկածամտությունը, երբեմն նաև նրա հոգեկան վիճակն ու առողջությունը (նկրտիզացիան, ընկճախտը, ինքնասպանության հակումը, անձի պսիխոպատիզացիան) նվազեցնում են անձի սոցիալական հմտությունների մակարդակ, անձը չի կարողանում շփվել սեփական երեխայի հետ, ընտանիքի մյուս անդամների հետ, չի կարողանում վարել բանակցություններ, լուծել ընտանիքում ծագած խնդիրները և այլն: Այս խմբի գործոններից է նաև մեծահասակի ասոցիալական վարքը արտահատված հարբեցողությամբ ու թմրամոլությամբ, որտեղ անձը ունի սեփական վարքագծի նկատմամբ վերահսկողության կորուստ, կոորդինացիայի խանգարում, քննադատության նվազում, ինչպես նաև երեխայի, ընտանիքի այլ անդամների հետ նորմալ ու բարիդրացիական հարաբերություններ կառուցելու անկարողություն:

✓ *ընտանիքի կառուցվածքը և հաղորդակցման մոդելը* դիտվում է, որպես ընտանեկան բռնությունների հաջորդ ռիսկի գործոնը: Այն է անլիարժեք կամ ոչ լիարժեք ընտանիքները, որը առավել հաճախ

ամուսնավուծության արդյունք է, և որտեղ բացակայում է հիմնականում հայրը: Նման ընտանիքներում շատ է պատահում, որ մոր վերաբերմունքը երեխաներին լի է վախերով, մեղադրանքներով, անհանգստություններով, որոնք կարող են հիմք հանդիսանալ բռնի գործողություններով հազեցած հարաբերությունների ու շփումների: Երբեմն ընտանիքները դառնում են լիարժեք խորթ հոր (կամ խորթ մոր) ներկայությամբ պայմանավորված, սակայն, ցավոք, ինչպես ցույց են տվել բազմաթիվ հետազոտություններ, օրինակ, աղջիկ երեխայի նկատմամբ սեռական բռնության վտանգը մեծ է խորթ հայր ունեցող ընտանիքներում: Ընտանիքի կառուցվածքի և բաղադրության տեսանկյունից, բռնությունների ռիսկը մեծացնող գործոն կարող են դառնալ նաև բազմազավակ ընտանիքը, ընդլայնված ընտանիքը, որոնց բնորոշ կարող է լինել ծանր նյութական վիճակը, տնային տնտեսության գերծանրաբեռնվածությունը որևէ անդամի համար, ժամանակի դեֆիցիտը ժամանցի և հանգստի կազմակերպման համար, դերային պարտականությունների քառասային բաշխումն ու իրագործումը, և այս ամենով պայմանավորված կոնֆլիկտները, անհամաձայնությունները ու հակասությունները կարող են բռնության համար նախապայման լինել [2]: Ամուսնական հարաբերությունները ևս ռիսկի գործոններ են համարվում ընտանեկան բռնությունների՝ հատկապես, երբ ընտանիքում տևական են ֆինանսական խնդիրները, դերային կոնֆլիկտները, միջանձնային սառը հարաբերությունները, հուզական աջակցության բացակայությունը, սիրո և սեռական անբավարարվածությունը և այլն: Հարկ է ավելացնել, որ ընտանիքներին բնորոշ է նաև փոխադրման մեխանիզմը՝ օրինակ կանայք, որոք բռնության են ենթարկվում ամուսնու կողմից, առավել հաճախ են բռնություն կատարում երեխաների նկատմամբ, «գերխնամակալության», «թերխնամակալության» միջոցով: Ի վերջո այս գործոնների խմբում առանձնանում է նաև սերունդների միջև հարաբերությունների բնույթն ու որակը, ինչպես նաև մինչսերնդային սցենարները, որտեղ, անձը, ով մանկության տարներին ենթարկվել է բռնության ծնողների կողմից, առավել հաճախ կիրառում են նմանատիպ վարք սեփական երեխաներին դաստիարակելու ընթացքում:

✓ *ընտանեկան բռնության սոցիալ-տնտեսական գործոններ.* ըստ մասնագիտական գրականության բռնության դրսևորումը հրահրող այս գործոնների թվին պատկանում են ընտանիքի ցածր եկամուտը և փողի մշտական սղությունը, գործազրկությունը կամ ժամանակավոր աշխատանքը, ծնողների ցածր աշխատանքային կարգավիճակը, վատ կենսապայմանները, սոցիալական աջակցության բացակայությունը և այլն [8, 9, 10]:

Չնայած ընտանեկան բռնության ձևերի փոփոխականությանը, ընդհանուր չափանիշն է հանդիսանում ընտանիքի մի անդամի կողմից

մյուսին դիտավորյալ վնաս պատճառելը՝ վերահսկելու, իշխելու կամ անձնական ազատությունը սահմանափակելու, սեփական ցանկությունները պարտադրելու նպատակով:

Մի շարք գիտնականներ ուսումնասիրել են ընտանեկան բռնության ժամանակ հաճախ հանդիպող հուզական վիճակները, և առանձնացրել՝ ֆիզիոլոգիական աֆեկտը, հուսախափության/ֆրուստրացիայի բարձր աստիճանը, հոգեկան լարվածության բարձր մակարդակը, սթրեսը, տագնապը, հոգեկան տառապանքը և այլ (Մոշնիկովա Ի.Վ., Բադոնով Ա.Մ., Մոշնիկովա Ի.Վ. և Չուպինա Գ.Ա., Ղազարյան Գ.Հ., Տեր-Ստեփանյան Ա.Հ., Եղիազարյան Ա.Ա.) [3, 4, 7, 8]: Անդրադառնանք ընտանեկան բռնության ամենատարածված հուզական բաղադրիչներից՝ հոգեկան տառապանքին, որը դրսևորվում է բացասական փորձառությունների տեսքով: Մովորաբար տառապանքն ուղեկցվում է վախով, հոգեկան լարվածությամբ, հետտրավմատիկ սթրեսային վիճակներով, իմպուլսիվությամբ, մեղքի զգացումով, ամոթով, ինչու չէ, նաև զայրույթով և այլ բացասական հոգե - հուզական վիճակներով: Մրանք կաթվածահար են անում սուբյեկտի կամքը, նրա դրդապատճառային ոլորտը, նպաստում են խիզախության, ինքնագնահատականի և ինքնավստահության կորստին, ակտիվության նվազմանը և, իր հերթին, հանգեցնում բարոյական վնասի [1, 4, 11]: Ըստ մասնագիտական գրականության բարոյական վնաս ասելով հասկանում ենք գործողություններով (կամ անգործությամբ) անձին հասցված բարոյական, հոգեբանական կամ ֆիզիկական տառապանքներ, կապված նրան օրենքի ուժով կամ ի ծնե տրված ոչ նյութական արժեքների՝ կյանքի, առողջության, արժանապատվության, գործարար համբավի, անձնական կյանքի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան գաղտնիքի նկատմամբ ոտնձգությունը: Ինչպես նաև, անձին տառապանք պատճառող է համարվում անձնական ոչ նյութական իրավունքների խախտումը՝ սեփական անունով օգտվելու իրավունքի, հեղինակային իրավունքների և ինտելեկտուալ գործունեության արդյունքների պահպանման իրավունքի խաղտումը: Ի վերջո, քաղաքացու ունեցվածքային իրավունքների խախտումը ևս հանդիսանում է տառապանքի աղբյուր: Բարոյական վնասի հիմնական նշաններն են՝ «ֆիզիկական տառապանքը», «հոգեբանական տառապանքը» և «բարոյական տառապանքը» [1, էջ 163-169; 4; 11]:

Գրականության վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ ընտանեկան բռնությունների ոչ միայն նախադրյալներն են տարաբնույթ, այլև դրսևորման օրինաչափությունները, ինչը ենթադրում է, որ այս հարցերով դատահոգեբանական փորձաքննությունը (ԴՀՓ) պետք է ունենա համալիր բնույթ: Հետևաբար, ընտանեկան բռնության յուրաքանչյուր դեպք կարող է դատահոգեբանական փորձաքննության ենթարկվել ոչ միայն տարբեր մասնագետների՝ հոգեբանների, հոգեբույժների, սեքսապաթոլոգներ կողմից,

այլն՝ համալիր՝ հոգեբանական-հոգեբուժական, հոգեբանա-սեքսուոլոգիական, հոգեբանական-սեքսուոլոգիական-հոգեբուժական փորձաքննության (տես՝ Աղյուսակ 1, Աղյուսակ 2), ինչպես Քրեական, այնպես էլ Քաղաքացիական Դատական վարույթների շրջանակներում:

Աղյուսակ 1. Ընտանեկան բռնության հարցերով քրեական գործընթացում անցկացվող ԴՀՓ



Աղյուսակ 2. Ընտանեկան բռնության հարցերով քաղաքացիական գործով անցկացվող ԴՀՓ



Ավելացնենք նաև, որ փորձագետ հոգեբանները ուշադրությունը պիտի սևեռեն մի շարք խնդիրների վրա, ինչպիսիք են անձի հոգեկան գործունեության բացասական փոփոխություններն ու դրանց դրսևորումները, հուզական վիճակի փոփոխություններն ու կապը գործողությունների հետ: Կարևոր է դուրս բերել անձի այն անհատական առանձնահատկությունները, որոնք նշանակալի ազդեցություն են թողել ուսումնասիրվող իրավիճակում

նրա հոգեկան գործունեության փոփոխության վրա: Ինչ վերաբերում է տուժողի հետ տարվող աշխատանքին, պետք է առանձնացնել կոգնիտիվ բաղադրիչի դերը, վերլուծելով, արդյոք տուժողը ի վիճակի է եղել հասկանալու, և արդյոք հասկացել է իր հետ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը: Հաշվի առնելով փորձաքննվողի հոգեվիճակը, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և հետազոտվող իրադրության բովանդակությունը՝ անհրաժեշտ է հասկանալ, արդյո՞ք կարող էր տուժողը ցուցաբերել գիտակցված դիմադրություն և այլն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ փորձագետ հոգեբանի մասնագիտական գործունեության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի ընտանեկան բռնություն առաջացնող ինչպես հատուկ հուզական վիճակների ընթացքի և առաջացման առանձնահատկությունների վերլուծությունը, այնպես էլ մեղադրյալի անհատական հոգեբանական առարձնահատկությունների, հուզական վիճակների և կատարված հանցագործության հետ կապված արտաքին հանգամանքների համալիր ուսումնասիրությունը: Դատահոգեբանական փորձաքննություն իրականացնող մասնագետի կոմպետենտության կարևոր տարրերից է նրա կարողությունը տարբերակելու հոգեկան տրավմայի և այլ հոգեկան վիճակների առկայությունը և ազդեցության աստիճանը, որը հանգեցրել է անձին հոգեկան տառապանքի, ինչպես նաև մեղադրյալի և տուժողի հուզական վիճակների գրագետ տարբերակելու կարողությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր քր. գործի առանձնահատկությունները:

Գրականություն

1. Ենգալիչև Վ.Ֆ., Ղազարյան Գ.Հ. Դատական հոգեբանական փորձաքննության պրակտիկում: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ - Եր.: ՀՀ ԱՆ ԱՍԻ, 2018 – 297 էջ:
2. Հարությունյան Ն.Ա. Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը: Մենագրություն –Եր.: Հեղ. Հրատ., 2018 – 284 էջ:
3. Бадонов А.М. Становление модели агрессивного поведения в условиях семейного насилия //Вестник БГУ. Образование. Личность. Общество. 2014. №5.
4. Казарян Г.А., Тер-Степанян А.Г., Егиазарян А.А. Вопросы дифференциации степени психических страданий в уголовном праве. Материалы 5-й Международной научно-практической конференции, посвященной столетию профессора Г.Л. Грановского «Дискуссионные вопросы теории и практики судебной экспертизы», принята к печати 13-14 апреля 2023.

5. Логинов С.А. Особенности проведения судебно-психологической экспертизы по вопросам насилия в семье /С.А. Логинов //Мир науки. 2018. Т. 6, № 3. С. 68 (1-6).
6. Малкина-Пых И.Г. Виктимология. СПб.: Питер, 2019. – 832 с.
7. Сафуанов Ф.С. Судебно-психологическая экспертиза в уголовном процессе. М.: 2007. – 192 с.
8. Сошникова И.В., Чупина Г.А. Насилие в семье: социальные предпосылки и факторы риска //Вестник ЧелГУ. 2010. №20.
9. Сошникова И.В., Шерпаев В.И. Насилие–социальная опасность семьи //Известия УрГЭУ. 2012. №5 (43).
10. Фурманов И.А. Социальная психология агрессии и насилия: учебн. пособие /И.А. Фурманов. – Минск: БГУ, 2016. – 392 с.
11. Ghazaryan G.H., Ter-Stepanyan A.H., Yeghiazaryan A.A. Some approaches to determining the depth of mental suffering during the expertise. WPA Regional Congress. Innovations in the Practice of Psychiatry in XXI Century. Congress book, accepted for publication June 08–10, 2023.
12. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: arlis.am
13. ՀՀ Քննչական կոմիտե: <https://investigative.am>

ОСОБЕННОСТИ ПРОВЕДЕНИЯ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРИМЕНТЫ ПО ВОПРОСАМ ДОМАШНЕГО НАСИЛИЯ

Казарян Г.Г. (к.пс.н., доцент, ЕГМУ им. М. Гераци, Ереван, РА)

ghazaryan.psy@gmail.com

Арутюнян Н.А. (к.пс.н., доцент, ЕГУ, Ереван, РА)

Нарине.harutyunyan@ysu.com

Аннотация: Предметом нашей статьи являются психологические аспекты домашнего насилия, а также основные особенности профессиональной деятельности психолога-эксперта, изучающего проблемы домашнего насилия. Объектом исследования является насилие в семье как современная острая социальная проблема. В статье представлен краткий статистический обзор преступлений, совершенных в семье. На основе научных трудов и профессионального опыта авторы предлагают описание особенностей проведения судебно-психологической экспертизы по фактам домашнего насилия в рамках профессиональной деятельности психолога-эксперта и круг основных вопросов, которые могут быть поставлены перед экспертами психологами при данном виде судебно-психологической экспертизы. Автор представляет описание психологических аспектов домашнего насилия, включая виды насилия, формы, эмоциональные состояния, провоцирующие насилие в семье, оценку психических страданий и многое другое.

Ключевые слова: домашнее насилие, судебно-психологическая экспертиза, психическое состояние, индивидуально-психологические особенности, психические страдания.

FEATURES OF CONDUCTING FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE ON DOMESTIC VIOLENCE ISSUES

Ghazaryan G.H. (Ph.D in Psychology, Associate Professor, ESMU after M. Heratsi, Yerevan, RA)

ghazaryan.psy@gmail.com

Harutyunyan N.A. (Ph.D in Psychology, Associate Professor, YSU, Yerevan, RA)

Narine.harutyunyan@ysu.com

Abstract: The subject of our article is the psychological aspects of domestic violence, as well as the main features of the professional activity of an expert psychologist who studies the problems of domestic violence. The object of the study is domestic violence as a modern acute social problem. The article presents a brief statistical review of crimes committed in the family. On the basis of scientific papers and professional experience, the authors offer a description of the features of conducting a forensic psychological examination on the facts of domestic violence as part of the professional activities of an expert psychologist and a range of basic questions that can be posed to expert psychologists in this type of forensic psychological expertise. The author presents a description of the psychological aspects of domestic violence, including types of violence, forms, emotional states that provoke domestic violence, an assessment of mental suffering, and much more.

Keywords: domestic violence, forensic psychological expertise, mental state, individual psychological characteristics, psychological suffering.

Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 23.01.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 06.02.2024

**ԱՎԻԱՊՍԱՀԱՐՆԵՐԻ ԴՍԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ղազարյան Գ.Հ. (հ.գ.թ., դոցենտ, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)
ghazaryan.psy@gmail.com

Տեր-Ստեփանյան Ա.Հ. (հ.գ.թ., Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)
anahitterstepanyan@gmail.com

Եղիազարյան Ա.Ա. (Մ. Հերացու անվան ԵՊԲՀ, Երևան, ՀՀ)
anipsy@gmail.com

Ամփոփագիր. Մեր օրերում արտակարգ իրավիճակների գործոններին ենթարկված մարդկանց առողջության և աշխատունակության պահպանման խնդիրները մեծ կարևորություն ունեն։ Խոշոր տեխնոլոգիական բազմաթիվ աղետները, որոնք հանդիսանում են մարդկանց գործողությունների արդյունք, կարող են լուրջ հետևանքներ ունենալ՝ ընդգրկելով մեր կյանքի տարբեր շերտերը՝ ազդելով արտակարգ իրավիճակներում ներգրավված մարդկանց հոգեկան և ֆիզիկական առողջության վրա:

Մեր հոդվածում անդրադարձել ենք ավիացիոն պատահարների դատահոգեբանական փորձաքննության հիմնահարցերին, որոնք ներառում են օդաչուների խոսակցությունների հնչյունագրերի, անձնակազմի անդամների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների, դեպքի պահին նրանց հոգեվիճակի, անձնակազմի անդամների փոխհարաբերությունների, արտակարգ իրավիճակում նրանց պատրաստ (վերապատրաստված) լինելու և մի շարք այլ գործոնների փորձաքննություն:

Մեր համոզմամբ ժամանակակից տեխնոլոգիաների կառավարման հետ կապված վթարների պատճառների հետաքննությունը չի կարող իրականացվել առանց պարզաբանելու դրանց առաջացման հոգեբանական գործոնի դերը: Ցավոք սրտի այս ոլորտում դժբախտ պատահարների փաստով դատահոգեբանական փորձաքննությունն իրականացվում է շատ հազվադեպ, իսկ ՀՀ-ում գրեթե չեն նշանակվում չնայած նման փորձաքննությունների մեծ անհրաժեշտությանը:

Հիմնաբառեր: ավիացիոն պատահար, օդաչու, դատահոգեբանական փորձաքննություն, արտակարգ իրավիճակներ, անձնակազմի անհատական առանձնահատկություններ մարդկային գործոն, անբարենպաստ հոգեվիճակ:

Բնական աղետները, տեխնածին դժբախտ պատահարները և վթարները, պատանդներ վերցնելը, ահաբեկչական գործողությունները ստեղծում են մարդու առողջության և բարեկեցության համար վտանգավոր իրավիճակներ: Դրանց հետևանքները դառնում են աղետալի, երբ հանգեցնում են մեծ ավերածությունների, առաջացնում մեծ թվով մարդկանց

մահ, վնասվածքներ ու տառապանքներ, և պահանջում են բազմակողմանի, համապարփակ ուսումնասիրություն: Վերջին ժամանակաշրջանում մեծ թվով հետազոտողների ուշադրությունն ուղղվում է արտակարգ իրավիճակների գործոններին ենթարկված մարդկանց առողջության և աշխատունակության պահպանման խնդիրներին: Պատճառները վերջին տարիներին տեղի ունեցած խոշոր տեխնոլոգիական բազմաթիվ աղետներն են, որոնք եղել են մարդկանց գործողությունների արդյունք (վտանգավոր տեխնոլոգիաների ներդրման կամ դրանց ոչ կոմպետենտ օգտագործման և այլն): Դրանց թվին կարելի է դասել Իտալիայի, Հնդկաստանի և Գերմանիայի քիմիական գործարաններում, Թրի Մայլ Այլենդի (ԱՄՆ) և Չեռնոբիլի (Ուկրանիա) ատոմակայաններում տեղի ունեցած վթարները, ինչպես նաև Բաշկիրիայում գտնվող գազատարի պայթյունը, Արգամասում տեղի ունեցած աղետը և ինչպես նաև մի շարք ավիապատահարներ, մասնավորապես 2006 թ. Մոչիում Արմավիայի Airbus A-320 ինքաթիռի կործանումը, որոնց վթարի պատճառները, ոչ այլ ինչ են, քան մարդկային գործոնը, որոնց վթարի պատճառները, ոչ այլ ինչ են, քան մարդկային գործոնը [2, 3, 12]:

Որոշ դեպքերում այսպիսի աղետները կարող են ավելի լուրջ հետևանքներ ունենալ, քան բնական վտանգները, որոնք պայմանավորված են բնության երևույթներով: Վերջիններս կարող են ընդգրկել մեր կյանքի տարբեր շերտերը՝ սոցիալական, բնության և անձնական ոլորտը՝ ազդելով արտակարգ իրավիճակներում ներգրավված մարդկանց (օդային ուղևոր, զինծառայողների, փրկարարների և նրանց ընտանիքների անդամների, աղետին ներկա վկաների, տուժածների և իրենց ընտանիքի անդամների և այլն) հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Աղետների առավել ծանր հետևանքները կանխելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել անձի հոգեկանի դրսևորման տարբեր առանձնահատկություններն արտակարգ իրավիճակներում՝ աղետից հետո հոգեկանի հավանական հակազդումները և հոգեկան վիճակների կանխատեսման մեթոդների մշակումը, արտակարգ պայմաններում անձի գործառական վիճակի արդյունավետ շտկման մեթոդների մշակումը (հաշվի առնելով անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները), հոգեկան վիճակների ինքնակարգավորման, հուզականային կայունության և սթրեսի հանդուրժողականության արդյունավետ մեթոդների փնտրումը, հոգեկանի և աշխատունակության վերականգնողական մոդելների մշակումը [8]:

Վթարների պատճառները բացահայտելու գործում անհրաժեշտ է հաշվի առնել անձնային գործոնը, ինչը դրսևորում է կոնկրետ մարդու, որը կատարում է մասնագիտական բարդ գործունեություն՝ գործողությունների գնահատման անհատականացված մոտեցմամբ:

Այսպիսով, ճանապարհատրանսպորտային պատահարների տեղի ունեցած աղետների թվի աճը, ինչպես նաև արդյունաբերական վթարների

գործոնները կյանքի են կոչել դատահոգեբանական փորձաքննությունների նոր տեսակ, որը նախատեսված է օգնելու քննիչներին և դատական ոլորտի աշխատողներին այդ վթարների պատճառների բացահայտմանը: Միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ դժբախտ պատահարների փաստով դատահոգեբանական փորձաքննությունն իրականացվում է շատ հազվադեպ, իսկ ՀՀ-ում գրեթե չեն նշանակվում՝ չնայած նման փորձաքննության մեծ անհրաժեշտությանը: Մա հատկապես վերաբերում է ճանապարհատրանսպորտային պատահարների քննությանը [6, 12]:

Ներկայումս առկա է պրակտիկա, երբ անձի՝ ճանապարհատրանսպորտային պատահարները կանխարգելելու կարողության որոշումն իրականացվում է ավտոտեխնիկական փորձաքննության ժամանակ: Կարծում ենք, տեխնոլոգիաների կառավարման հետ կապված վթարի պատճառների հետաքննությունը չի կարող իրականացվել առանց պարզաբանելու դրանց առաջացման հոգեբանական գործոնը, որը պայմանավորված է.

✓ տեխնիկական համակարգերի բարդության, տեղեկատվության հսկայական քանակի աճով, որն անձը պետք է ընկալի և վերամշակի մինչև որոշում կայացնելը և իրագործելը, ինչպես նաև համարժեք որոշում կայացնելու ժամանակի տրությամբ. այս ամենը նպաստել է մարդու առջև դրված պահանջների աճին,

✓ երթևեկության (օր.՝ ավտոմոբիլային) ինտենսիվության աճով,

✓ անհամեմատ աճել է սխալի գինը (ներառյալ նյութական տեսքով),

✓ վարորդների բավականին ցածր մասնագիտական պատրաստվածությամբ,

✓ մասնագիտական ընտրության համակարգի անկատարության պատճառով, որը հանգեցնում է բարդ տեխնիկական համակարգեր կառավարելու գործընթացում այնպիսի մարդկանց ընդգրկման, ովքեր իրենց անհատական-հոգեբանական հատկանիշներով պիտանի չեն այդ գործընթացն իրականացնելուն [6, 12]:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ սարքավորումները վերահսկող անձը ստիպված է գրեթե միշտ լինել հոգեկան լարվածության (սթրեսի) վիճակում: Այսպիսով, առկա են մասնագիտական սթրես առաջացնող գործոնների երկու խումբ՝ արտաքին և ներքին, և դրանց անհամապատասխանությունն արտակարգ պայմաններում կարող է բերել մասնագիտական գործառույթների որակի անկմանը:

Հաշվի առնելով անհատական գործոնը կոնկրետ մարդու մոտ, որը կատարում է մասնագիտական բարդ գործունություն՝ կիրառելով գործողությունների գնահատման անհատականացված մոտեցում, կարելի է հասկանալ վթարի, աղետի իրական պատճառները և մշակել մոդելներ՝ հետագայում նմանատիպ իրավիճակներից խուսափելու նպատակով:

Յուրաքանչյուր մասնագիտություն իր պահանջներն է ներկայացնում մարդուն՝ ձևավորելով մասնագիտական յուրահատուկ որակներ, անձնային և վարքային առանձնահատկություններ [1]:

Հայտնի է, որ ավիացիայում մարդկային գործոնը ավիացիոն գործունեության մեջ մարդկային բոլոր հատկությունների դրսևորումների շարք է, ներառյալ երեք հիմնական բաղադրիչ. մասնագիտական (մասնագիտական գիտելիքներ, հմտություններ, ունակություններ և փորձ), բժշկական (մարմնի համակարգերի ֆունկցիոնալություն), հոգեբանական (ինտելեկտի, բնավորության, մոտիվացիայի, աշխարհայացքի, ինքնագնահատականի դրսևորումներ):

Ինչպես ցույց է տալիս ավիացիոն պատահարների հետաքննության պրակտիկան, օդաչուների կողմից թռիչքի ժամանակ սխալների և խախտումների պատճառ է հանդիսանում մարդկային գործոնի հենց հոգեբանական բաղադրիչը, այլ ոչ թե մասնագիտական և բժշկական բաղադրիչները [12]:

Խոսելով վարորդի կամ օդաչուի գործունեության մասին՝ պետք է ընդգծել, որ դրա հաջողությունը մեծապես կախված է շարժողական կամ, ինչպես դրանք այլ կերպ են անվանվում, սենսոմոտոր ռեակցիաների՝ արտաքին խթաններին ճիշտ ժամանակին պատասխանելու դրսևորումից: Բուն այդ շարժումները կարող են ներկայացնել համեմատաբար պարզ գործողություններ, բայց դրանք հիմնված են բարդ մտավոր, հոգեկան բարդ գործընթացների վրա: Ի.Մ. Մեչենովը մկանային շարժումներն անվանում էր «հոգեկան գործունեության արտահայտում» [7]: Աշխատանքի հոգեբանության ոլորտում հետազոտությունները ցույց են տվել, որ մարդու հոգեկան վիճակը էապես ազդում է նրա մասնագիտական գործունեության արդյունքների վրա՝ առաջացնելով այնպիսի վտանգավոր իմացական դրսևորումներ, ինչպիսիք են տարածական կողմնորոշման կորուստը, ընկալման պատրանքի առաջացումը, տեղի ունեցածի կեղծ ըմբռնումը [12]:

Այնուամենայնիվ, օդաչու թեկնածուների մասնագիտական-հոգեբանական ընտրության ժամանակ հաշվի չի առնվում այն փաստը, որ մասնագիտական ընտրությունը կատարվում է բարենպաստ հոգեվիճակի ֆոնին և հաճախ՝ հոգեկան ռեսուրսների առավելագույն մոբիլիզացման վիճակում: Միննույն ժամանակ, հարցը, թե ինչպես է նրանց հոգեկանը աշխատելու անբարենպաստ հոգեվիճակներում, օրինակ՝ ծանր հոգնածության աճի դեպքում (10-12 ժամ թռիչքից հետո), սթրեսային վիճակում (ինքնաթիռի տեխնիկական անսարքություն), միապաղաղ վիճակում (ավտոպիլոտով երկար թռիչքի ժամանակ), մնում է ամբողջովին անհասկանալի:

Մինչդեռ ավիացիոն պատահարների հետաքննության պրակտիկան ցույց է տալիս, որ օդաչուների թույլ տված սխալները հիմնականում

անբարենպաստ հոգեվիճակի արդյունք են, երբ մարդու ուղեղն աշխատում է իր օրենքներով: Հետևաբար, չի կարելի անմիջապես մեղադրել օդաչուին սխալ թույլ տալու համար, այլ պետք է պարզել, թե ինչ վիճակի արդյունքում է թույլ տրվել սխալը (օգտագործելով հատուկ հոգեբանական գիտելիքներ օդային վթարների դեպքերը հետաքննելիս), ապա փնտրել այն անձանց, ովքեր ստեղծել են գործունեության համար այդ անբարենպաստ պայմանները [11]: Որպես օրինակ կարող ենք նշել Միջպետական Ավիացիոն Կոմիտեի (ՄԱԿ) եզրակացության հիման վրա 2006թ. կատարված է Սոչիում Արմավիայի Airbus A-320 ինքաթիռի կործանման ռեկոնստրուկցիան: Համաձայն ռեկոնստրուկցիայի, օդաչուների սխալ գործողությունները որոնք հանգեցրեցին ինքնաթիռի կործանմանը, պայմանավորված էին եղանակային վատ պայմաններով՝ օդաչուների հոգնածության և հոգեհուզական լարվածության ֆոնին: Օդաչուների հուզական արձագանքը դիսպետչերի կողմից հաղորդած տեղեկությանը եղանակային փոփոխությունների մասին, որոնք մետեոմինիմումից ցածր էին, բացասական էր, և կարող էր օդաչուների հոգեհուզական լարվածության պատճառ լինել թռիչքի եզրափակիչ փուլում:

Աշխատանքային գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարողությունների մակարդակով գործողությունների իրականացումը կամ հմտությունների անբավարար ձևավորումն անձից պահանջում են գործողությունների մշտական գիտակցված վերահսկում, աշխատանքի վրա ուշադրության կամաձին և երկարատև կենտրոնացում և այլն, որի հետևանքն են նյարդային և մկանային լարվածությունը, ընկալման ծավալի որոշակի նեղացումը և, որպես վերջնական արդյունք, հոգնածության համեմատաբար արագ զարգացումը:

Անդրադառնանք այն պատճառներին, որոնք կարող են հանդիսանալ վթարի փաստով դատահոգեբանական փորձաքննություններ նշանակելու հիմք, դրանք են՝

- ✓ առաջին հերթին, ենթադրությունը, որի դեպքում իրավիճակի պահանջները գերազանցում են տեխնիկական սարքավորումները կատարողի անհատական և մասնագիտական հնարավորությունները,
- ✓ ուսումնասիրվող իրավիճակում մարդու վրա ազդող ուժեղ միջամտող խթանների առկայությունը,
- ✓ անձի մոտ ծայրահեղ հոգեկան վիճակների առկայությունը, ինչպես նաև հոգնածություն, սոմատիկ/մարմնական ոչ բարվոք վիճակ,
- ✓ ի վերջո, ենթադրություն կամ տեղեկություններ այն մասին, որ անձն ունի ոչ բավարար ձևավորված մասնագիտական հմտություններ [2]:

Ինչպես ապացուցել է հոգեբանական գիտությունը, հոգեկան վիճակը, որում օդաչուն գտնվում է օդանավում, էական ազդեցություն ունի նրա մասնագիտական գործունեության տեմպի և որակի վրա: Նույնիսկ լավ պատրաստված և փորձառու օդաչուն կարող է սխալվել իր աշխատանքում և

դանդադկոտություն դրսևորել գործողություններում, եթե նա այդ պահին գտնվում է գործունեության համար անբարենպաստ վիճակում: Անբարենպաստ հոգեկան վիճակները ներառում են, առաջին հերթին, հոգեկան վիճակների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են.

- ✓ հոգնածություն (հատկապես վերջին երկու փուլերում, այսինքն՝ արտահայտված և ծանր հոգնածության փուլում);
- ✓ միապաղաղություն (քնկոտ վիճակ զգայական տեղեկատվության միօրինակության պատճառով);
- ✓ հոգեկան լարվածություն (իր բոլոր երեք ձևերով, ներառյալ գերիշխող, իմպուլսիվ և ընդհանրացված ձևերը);
- ✓ դիսթրես (բացասական սթրես, որը խաթարում է գործունեությունը և ուղեկցվում է խուճապով):

Գործունեության համար անբարենպաստ պայմանների ավելի ամբողջական ցանկը ներկայացված է Յակիմովիչ Ն.Վ., Բելյան Ա.Ս.-ի կողմից մշակված դասակարգման մեջ: Այն ներառում է հոգեկան վիճակների 14 տեսակ, որոնք, ըստ ավիացիոն հոգեբանների, առավել տարածված են անձնակազմի շրջանում թռիչքի ժամանակ: Վիճակները բաժանվում են երեք դասի. դա արվում է հոգեբանի աշխատանքը հեշտացնելու համար՝ հոգեվիճակների հնարավոր տեսակները վերլուծելիս, քանի որ նախ որոշելով այն դասը, որին պատկանում է ուսումնասիրվող վիճակը, այնուհետև միայն կարելի է հստակեցնել դրա տեսակը դասի ներսում [9, 10]:

Որպես հոգեվիճակների դասերի բաժանման հիմքում ընկած չափանիշ, օգտագործվել է կենտրոնական նյարդային համակարգում գրգռման և արգելակման գործընթացների հարաբերակցությունը, որը որոշում է որոշակի հոգեկան վիճակի առանձնահատկությունը: Պայմանները, որտեղ կա հավասարակշռություն երկու տեսակի նյարդային պրոցեսների միջև, վերագրվել են «նորմոստենիկ պայմանների» դասին: Մեկ այլ դաս միավորել է այն վիճակները, որտեղ գրգռման գործընթացները հստակորեն գերակշռում են արգելակման գործընթացներին, սա «հիպերսթենիկ վիճակների» դասն է: Հաջորդ արգելակող գործընթացները գերակշռում են գրգռման գործընթացներին. սա «հիպոստենիկ վիճակների» դասն է:

Այն դասի բնորոշումը, որին կարող է վերագրվել օդաչուի վիճակը, սկսվում է սև արկղի խոսքի ձայնագրությունների ուսումնասիրությունից: Նախ, սահմանվում է ձայնի տոնի բարձրության դինամիկայի ուղղությունը, որով օդաչուն խոսել է թռիչքի ժամանակ, այսինքն. պարզվում է՝ այս դինամիկան ուղղված է եղել ձայնի տոնայնությունը բարձրացնելուն, թե՛ իջեցնելուն: Դրա համար օգտագործվում է հատուկ համակարգչային ծրագիր (հեղինակ՝ Ա.Ս. Բելյան) [4]:

Եթե օդաչուի ձայնի տոնայնությունը բարձրացել է, ապա դա վկայում է օդաչուի հոգեկան գրգռման բարձրացման մասին, և, ընդհակառակը, ձայնի

տոնայնության նվազումը վկայում է հոգեկան գրգռման թուլացման մասին: Նշվածի հիման վրա թոփչքի ժամանակ ուսումնասիրված վիճակը կարելի է վերագրել վիճակների երեք դասերից մեկին, որից հետո հնարավոր է ճշգրտել վիճակն այս դասի շրջանակում:

Դրա համար անհրաժեշտ է կատարել թոփչքի ժամանակ օդաչուի ընթացիկ վիճակի առավել ամբողջական «պատկերը» և համադրել գիտությանը հայտնի վիճակների նույնականացման «պատկերների» հետ: Վիճակների նույնականացման «պատկերները» մշակվել են Յակիմովիչ Ն.Վ. և Բելան Ա.Ս. կողմից՝ այլ հետազոտողների կողմից հավաքված նյութերի ընդհանրացման հիման վրա՝ որոշակի վիճակների առանձնահատկություններն ուսումնասիրելու համար: Յուրաքանչյուր վիճակի նույնականացման «պատկերը» այս վիճակում հոգեկան գործընթացների ընթացքի ինքնատիպության նկարագրությունն է, այսինքն, այն ցույց է տալիս ընկալման, ուշադրության, հիշողության, մտածողության, մոտորիկայի, խոսքի, հույզերի և այլ գործընթացների գործունեության առանձնահատկությունները:

Թոփչքի ընթացքում հետազոտվողի «դիմանկար» կազմելու համար անհրաժեշտ է ձայնագրիչի ձայնագրությունների խորը ուսումնասիրություն հաշվի առնելով՝

- ✓ ակուստիկ (ձայնի տոնի հաճախության բարձրություն և ինտենսիվություն),
- ✓ իմաստային (արտահայտությունների իմաստային բովանդակություն և ինտոնացիաների տեսակներ),
- ✓ լեզվական (բառակապակցության քերականական և ոճական կառուցում) [10]:

Ըստ խոսքի այս բնութագրերի՝ կարելի է դատել, թե որքան լայն է եղել օդաչուի ուշադրության ծավալը և այն գործունեության տարբեր օբյեկտների վրա տեղափոխելու հնարավորությունը, որքան արագ և ճշգրիտ է հիշողությունը աշխատել՝ անհրաժեշտ տեղեկատվությունը պահպանելու և վերարտադրելու համար, ինչ մտավոր գործողություններ են կատարել օդաչուն որոշում կայացնելու ընթացքում, ինչպիսի շարժողական գործողություններ է հնչեցրել և կատարել, ինչպես նաև որքանով են արտահայտված եղել նրա հուզական ռեակցիաները և ընդհանուր հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ: Հոգեկան պրոցեսների այս բոլոր դրսևորումների մանրամասն նկարագրությունը դրանց գործունեության մեջ որոշակի թերությունների առանձնացմամբ, կազմում է թոփչքի ընթացքում օդաչուի ընթացիկ հոգեկան վիճակի «պատկերը» [4, 11]:

Ձևավորելով ընթացիկ վիճակի «պատկերը» և իմանալով հայտնի վիճակների «պատկերները» հոգեբանը հնարավորություն ունի նույնականացնել ստացված վիճակի «պատկերը» կոնկրետ տեսակի վիճակի

հետ: Հենց վիճակների «պատկերները» նույնականացնելու սկզբունքի վրա է հիմնված թռիչքի ընթացքում օդաչուների հոգեկան վիճակների տեսակները որոշելու հեղինակներ՝ Յակիմովիչ Ն.Վ. և Բելան Ա.Ս. կողմից մշակած մեթոդաբանության հիմնական գաղափարը: Հեղինակների կարծիքով, սա գիտականորեն ամենահիմնավորվածն է և օբյեկտիվ, քան փորձագիտական գնահատման մեթոդը, երբ վիճակի տեսակի ընտրությունը կատարվում է գնահատման ոչ ֆորմալացված և մշուշոտ չափանիշների հիման վրա:

Հաշվի առնելով իրավիճակների բազմազանությունը, որոնցում տեղի են ունենում սարքավորումների կիրառմամբ պատահարը, ակնհայտ է դառնում նմանատիպ դատահոգեբանական փորձաքննության նշանակումը:

Այս տեսակի դատահոգեբանական փորձաքննության միջոցով լուծվող հիմնական հարցերի շրջանակը պարզաբանելու համար առաջարկում ենք փորձագետների առջև դնել հետևյալ հիմնական հարցերը.

✓ Արդյո՞ք փորձաքննվողը վթարի պահին գտնվել է այնպիսի հուզական վիճակում, որը կարող էր էապես ազդել իր մասնագիտական գործունեության պարտականությունների կատարման որակի վրա:

✓ Հաշվի առնելով պատահարների մեխանիզմի վերաբերյալ օբյեկտիվ տվյալները, ինչպես նաև փորձաքննվողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները և հոգեկան վիճակը՝ արդյո՞ք կարող էր նա ճիշտ գնահատել վթարային իրավիճակը և համարժեքորեն ազդել դրա կանխարգելմանը:

✓ Ի՞նչ հոգեհուզական վիճակում են գտնվել անձնակազմի անդամները թռիչքի մեկնարկից առաջ: Ի՞նչն է դրան մատնանշում:

✓ Ի՞նչ հոգե-հուզական վիճակում են գտնվել անձնակազմի անդամները թռիչքի ժամանակ (նշել թռիչքի յուրաքանչյուր փուլի համար): Ի՞նչն է դրան մատնանշում:

✓ Ի՞նչով է պայմանավորված եղել այդպիսի հոգեկան վիճակը:

✓ Այդ հոգեհուզական վիճակն ազդել է արդյո՞ք անձնակազմի գործողությունների վրա, և եթե այո, ապա ի՞նչ կերպ:

✓ Ի՞նչ հարաբերություններ են եղել անձնակազմի անդամների միջև:

✓ Այդ հարաբերություններն ազդել են անձնակազմի գործողությունների վրա:

✓ Ի՞նչ է բացահայտում այն իրավիճակի հոգեբանական վերլուծությունը, որում հայտնվել է անձնակազմը մինչև ինքնաթիռի վթարը (կործանումը):

✓ Հոգեբանական տեսանկյունից որքանո՞վ էր անսպասելի հատուկ իրավիճակը անձնակազմի անդամների համար և որքանո՞վ էին նրանք պատրաստ (վերապատրաստված) հատուկ իրավիճակում գործելու համար:

✓ Արդյո՞ք հոգեբանական վերլուծությունը բացահայտում է անձնակազմի հրամանատարի՝ իր գործողությունների համար

պատասխանատվություն կրելու և հատուկ իրավիճակում դրանք վերահսկելու կարողությունը:

✓ Արդյո՞ք անձնակազմը ադեկվատ է արձագանքել ցամաքից ստացված հրահանգներին: Ի՞նչն է դրան մատնանշում:

Այս տեսակի հոգեբանական փորձաքննության առարկա են հանդիսանում քրեական գործի բոլոր նյութերը, այդ թվում օդաչուների խոսակցությունների հնչյունագիրը (սև արկղը վերծանելուց հետո) խցիկում և ցամաքի հետ, օդաչուների բժշկական գրքույկները, փորձաքննության տվյալները (եթե կան), հարազատների, գործընկերների և իրադարձության մասնակիցների հարցաքննության ցուցմունքներն ու արձանագրությունները, տեխնիկական փորձաքննության տվյալները:

Գրականություն

1. Աղուզումցյան Ռ.Վ., Ամիրյան Ա.Ս., Պապոյան Վ.Ռ. և ուր., Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը. Կոլեկտիվ մենագրություն: ԵՊՀ, 2009. – 164 էջ:
2. Ղազարյան Գ.Հ. Արտադրությունում, ճանապարհատրանսպորտային և ավիացիոն վթարի փաստի վերաբերյալ դատահոգեբանական փորձաքննություն: Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, Երևան 2020. № 1 (16), էջ 79-84, ISBN 1829-2984
3. Александровский Ю.А., Лобастов О.С., Спивак Л.И., Щукин Б.П. Психогения в экстремальных условиях. М.: 1991. – 115 с.
4. Белан А.С., Якимович Н.В. Определение видов психофизиологических состояний пилотов по акустическим и семантическим характеристикам речи. //Тезисы докладов Шестого Международного Аэрокосмического Конгресса. М.: 2009.
5. Венда В.Ф., Ротенберг Р.В., Улиханян Г.С. Психологические факторы надежности управления автомобилями и проблемы общения между водителями. //ПЖ. 1983. - Т.4. - № 4. - с. 75-87.
6. Енгальчев В.Ф., Шипшин С.С. Судебно-психологическая экспертиза. Методическое руководство. Калуга, 1997. – 190 с.
7. Сеченов И.М. Рефлексы головного мозга. Изд-во академии наук СССР. М.: 1961.
8. Сидоров П.И., Мосягин И.Г., Маруняк С.В. Психология катастроф: Учебник для вузов /под ред. П.И. Сидорова. – Архангельск: Изд. СГМУ, 2007. – 656 с.
9. Якимович Н.В. Оценка мыслительной деятельности пилота при расследовании авиационных происшествий посредством психосемантики и психолингвистики // Материалы 4-го научно-

- практического Конгресса «Медико-экологические проблемы лиц экстремальных профессий: работоспособность, здоровье, реабилитация и экспертиза профессиональной пригодности». М.: 2004.
10. Якимович Н.В., Белан А.С. Практическое применение комплексного метода оценки состояний у членов экипажа в полете. Труды Общества расследователей авиационных происшествий (ОРАП). М.: № 18, 2006.
 11. Якимович Н.В., Белан А.С. Методы анализа речевых переговоров членов экипажа в полете для оценки их функционального состояния //Труды Института психологии РАН «Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики». Под ред. В. Бодрова, А. Журавлева. Вып.1. М., 2009.
 12. Ghazaryan G.H., Engalychev V.F. The role of the human factor in air accidents. WCP 2023 Abstract book.

ОСОБЕННОСТИ АВИАЦИОННОЙ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Казарян Г.А. (к.пс.н., доцент, ЕГМУ им. М. Гераци, Ереван, РА)

ghazaryan.psy@gmail.com

Тер-Степанян А.Г. (к.пс.н., ЕГМУ им. М. Гераци, Ереван, РА)

anahitterstepanyan@gmail.com

Егиазарян А. А. (ЕГМУ им. М. Гераци, РА, Ереван)

anipsy@gmail.com

Аннотация: В настоящее время большое значение имеют проблемы сохранения здоровья и работоспособности людей, подвергающихся воздействию факторов чрезвычайных ситуаций. Крупные техногенные катастрофы, ставшим результатом деятельности человека, могут иметь более серьезные последствия, охватывающие разные слои нашей жизни влияющие на психическое и физическое здоровье людей, вовлеченных в чрезвычайные ситуации.

В нашей статье мы рассмотрели вопросы судебно-психологической экспертизы авиационных происшествий, к которым относятся экспертизы аудиозаписи разговоров пилотов, индивидуально-психологические характеристики членов экипажа, их душевное состояние в момент происшествия, отношения между членами экипажа, их готовность (подготовка) в чрезвычайной ситуации и ряд других факторов. Мы считаем, что исследование причин несчастных случаев, связанных с управлением современными технологиями, невозможно проводить без выяснения роли психологического фактора в их возникновении. К сожалению, судебно-психологическая экспертиза несчастных случаев в этой сфере проводится

очень редко, а в РА их почти не назначают, несмотря на большую потребность в таких экспертизах.

Ключевые слова: авиационные происшествия, судебно-психологическая экспертиза, чрезвычайные ситуации, человеческий фактор, летчик, неблагоприятное психическое состояние, индивидуальные особенности экипажа.

FEATURES OF FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATION OF AIRCRAFT ACCIDENTS

Ghazaryan G.H. (Ph.D in Psychology, Associate Professor, M. Heratsi ESMU, Yerevan, RA)

ghazaryan.psy@gmail.com

Ter-Stepanyan A.H. (Ph.D in Psychology, M. Heratsi ESMU, Yerevan, RA)

anahitterstepanyan@gmail.com

Yeghiazaryan A.A. (M. Heratsi ESMU, RA, Yerevan)

anipsy@gmail.com

Abstract: Nowadays, the problems of maintaining the health and working capacity of people exposed to the factors of emergency situations are of great importance. Major technological disasters that are the result of human actions can have serious consequences, covering different layers of our lives affecting the mental and physical health of people involved in emergency situations.

In our article, we addressed the issues of forensic psychological expertise of aviation accidents, which include expertises of audio recordings of pilots' conversations, individual-psychological characteristics of crew members, their state of mind at the time of the incident, relationships among crew members, their readiness (training) in an emergency situation and a number of other factors. We believe that the investigation of the causes of accidents related to the management of modern technologies cannot be carried out without clarifying the role of the psychological factor in their occurrence. Unfortunately, forensic psychological expertise of accidents in this field is carried out very rarely, and in RA they are almost never appointed, despite the great need for that.

Keywords: aviation accidents, forensic psychological expertise, emergency situations, human factor, pilot, adverse mental state, individual characteristics of the crew.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 24.01.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 08.02.2024*

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ
ՎԱՐՔԱԳԾԻ ԶԵՎԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Մկրտումյան Մ.Պ. (հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան,
ՀՀ)

mkrtumyanmels24@aspu.am

Համառոտագիր. Հոդվածում ուսումնասիրվում են սոցիալական լարվածության պայմաններում դեռահասների վարքի հավանական ձևափոխությունների սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, անձի կառուցվածքային փոփոխությունների յուրահատուկ առանձնահատկությունները: Բացահայտվել են նաև ընտանեկան պայմաններից դուրս ապրելակերպի պայմաններում գտնվող դեռահասների հոգեբանական օտարացման, հոգեբանական անվտանգության կորստի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց սեռային տարբերությունները: Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս հոգեբանական փորձաքննությունների ընթացքում ճշգրիտ կերպով հասկանալու դեռահասների ասոցիալ վարքի ձևավորման մեխանիզմները, ապահովել նրանց հոգեբանական բնութագրերի ձևակերպման գիտական պահանջները:

Հիմնաբառեր. հոգեբանական օտարացում, ֆրուստրացիա, հոգեբանական անվտանգություն, ասոցիալ վարք, ապահարմարում, հուզական անկայունություն, հոգեբանական փորձաքննություն:

Ժամանակակից կյանքի սրընթաց զարգացումներն ու սոցիալ-տնտեսական, անբարենպաստ փոփոխությունները հաճախ դեռահասների համար մեծ դժվարություններ են ստեղծում միջավայրում իրենց տեղն ունենալու, հասարակության մեջ բնականոն ինքնադրսևորման, ինքնահաստատման համար: Հատկապես ուշադրությունից դուրս մնացած դեռահասները հաճախ հայտնվում են կասկածելի վարքագիծ ունեցող հասակակիցների, մեծերի անբարենպաստ ազդեցության տակ: Կայացած խմբերում իրենց տեղն ունենալու պայքարում նրանք դառնում են անպաշտպան, բացասական գործոնների նկատմամբ զգայուն, էժանագին, առօրեական արժեքների նկատմամբ հակվածության դրսևորումներով, հոգեբանական անվտանգության, ապահովության կորստի ակնառու և միջնորավորված զգացումներով [5, 6, 8, 13]: Մասնագիտական գրականության վերլուծությունները ցույց են տալիս, որ այսպիսի երեխաները ի տարբերություն նորմալ ապրելակերպ ունեցող իրենց հասակակիցների, աչքի են ընկնում իրենց ակնառու և քողարկված

հոգեբանական խոցելիությամբ, գոյություն ունեցող իրականության, արժեքների, մարդկանց նկատմամբ անտարբերությամբ, օտարվածությամբ [4, 5, 9]: «Հոգեբանության բնագավառում առաջին անգամ «օտարացում» հասկացությունն օգտագործվել է Ջ. Ֆրոյդի կողմից՝ թշնամական բնույթ ունեցող միջավայրում անձի պաթոլոգիական զարգացումը բացատրելու համար: Օտարացումը ներփակվելու մշտական գործընթաց է» [10 էջ 52]: Ջ. Ֆրոյդից հետո հիմնահարցին անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ [5, 8, 9]: Բազմաթիվ հեղինակների կողմից նշվում է, որ դեպրիվացիան մարդու համար կենսական նշանակություն ունեցող պահանջմունքներից ու կարիքներից զրկվելն է:

Երբեմն դեպրիվացիա և ֆրուստրացիա հասկացությունները նույնականացվում են, սակայն դրանք տարբերվում են: Ֆրուստրացիան հոգեկան վիճակ է, որը ծագում է պահանջմունքի բավարարման ժամանակ խոչընդոտների հանդիպելիս, այն կապված է տվյալ պահին ակտուալ պահանջմունքի հետ և դրա բավարարման անհնարինությունը սուբյեկտի կողմից գիտակցվում է: Դեպրիվացիայի ժամանակ պահանջմունքի անհնարինությունը կարող է չգիտակցվել, կարող են չընկալվել նաև պատճառները [6, 11, 12, 13]: Ե. Ալեկսեենկովան առանձնացնում է հոգեբանական օտարացման կամ դեպրիվացիայի հետևյալ տեսակները՝ զգայական (ստիմուլային), կոգնիտիվ, շարժողական, հուզական, սոցիալական, էկզիստենցիալ, կրթական և այլն [4, էջ 77]: Հեղինակը առանձնացրել է նաև օտարացման կառուցվածքի կոգնիտիվ, հուզական-զնահատողական, սոցիալ-հոգեբանական, հաղորդակցական, վարքային բաղադրիչները [4, էջ 80]:

Հոգեբանական օտարացման հիմնահարցի հետազոտման նպատակով մեր աշխատանքում կարևորել ենք սոցիալական լարվածության պայմաններում դեռահասների համար մի շարք նշանակալի դժվարություններ՝ հաղորդակցման, կոնֆլիկտների, չհասկացված լինելու, սոցիալական մեկուսացվածության, ինքնագնահատականի նկատմամբ սպառնալիքների, լքվածության, ամենատարբեր սահմանափակումների, ապահովության, հոգեբանական անվտանգության կորստի զգացման և այլն:

Մասնագիտական գրականության վերլուծություններն ու մեր դիտարկումները հնարավորություն են տալիս առաջադրելու այն վարկածը, որ նշված անբարենպաստ գործոնների ազդեցության պայմաններում դեռահասների վարքագծում ձևավորվում են մի շարք սոցիալ-հոգեբանական նորագոյացություններ, որոնք դրսևորվում են անձի «Ես»-կառուցվածքի, արժեհամակարգի, միջանձնային հարաբերությունների խեղման, դրանց նկատմամբ անհանդուրժողականության, թշնամանքի, ատելության վերաբերմունքի ձևավորման բնութագրերով:

Հետազոտության նպատակն է՝ 13-17 տարեկան դեռահասների հոգեբանական օտարացման առանձնահատկությունների, վարքային փոփոխության ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց սոցիալ-հոգեբանական բնութագրերի գիտական հիմնավորումները:

Ուսումնասիրության օբյեկտը 13-17 տարեկան դեռահասների սոցիալ-հոգեբանական վարքագծի փոփոխություններն են, իսկ առարկան՝ հոգեբանական օտարացման առանձնահատկությունները:

Առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ծնողական խնամքից զրկված դեռահասների անհատական առանձնահատկությունների, հաղորդակցման խնդիրների, կոնֆլիկտների առկայության, սոցիալական մեկուսացվածության ուսումնասիրություններ, ցածր տրամադրության նկատմամբ հակվածության, ինչպես նաև հոգեբանական անվտանգության, ապահովության սուբեկտիվ զգացման, ինքնագնահատականի ուսումնասիրություններ և այլն:

Հետազոտության համար կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Կետտելի անձնային առանձնահատկությունների 16 գործոնային թեստի մանկական տարբերակը [1, էջ 154-166],

2. Անձի սոցիալական մեկուսացվածության մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի թեստը [12, էջ 95],

3. Դեռահասների հաղորդակցական հակումների մակարդակը որոշող մեթոդիկան [6, էջ 45],

4. Դեռահասների հոգեբանական անվտանգության զգացման ինքնագնահատականի մակարդակի էքսպրես-դիագնոստիկա [3, էջ 102],

5. Դեռահասների՝ ցածր տրամադրության հակվածության էքսպրես-դիագնոստիկայի թեստը [8, էջ 32]:

Հետազոտության սկզբնական փուլում աշխատանքներն իրականացվել են Երևանի Դանիել Վարուժանի անվ. թիվ 89 հիմնական և թիվ 118 ավագ դպրոցներում: Հոգեբանական օտարացման երևույթի ուսումնասիրման համար դպրոցի 7-9-րդ երեք դասարաններից և ավագ դպրոցի 10-11-րդ 2 դասարաններից առանձնացրել ենք 13-17 տարեկան 40 դեռահասներ: Այնուհետև որպես ստուգիչ խումբ, դրանցից առանձնացրել 20 աշակերտներ (10 աղջիկ, 10 տղա յուր. դպրոցից), որոնց վարքագծում դիտարկվել են հոգեբանական օտարացման երևույթի դրսևորումներ: Որպես հետազոտական հիմնական խումբ, առանձնացվել են Իջևանի «ՍՕՍ» մանկական գյուղի ծնողական խնամքից զրկված 20 դեռահասներ (10 աղջիկ, 10 տղա): Ընդհանուր՝ 60 դեռահասներ: Հետազոտությունն իրականացվել է ուսումնական հաստատություններում՝ թեստավորման և զրույցների ձևով:

«Հոգեբանական օտարացումը» հանդիսանում է անձի կյանքում իրական հարաբերություններից «խորթացման», «հեռացման» յուրահատուկ վիճակ, որում անձը տևական ժամանակաշրջան հնարավորություն չունի


անհրաժեշտ չափով բավարարելու իր համար կենսական կարևորագույն պահանջմունքներ [9, էջ 10]: Այս տեսանկյունից՝ ուսումնասիրվել են «ՍՕՍ» մանկական գյուղի ծնողական խնամքից զրկված դեռահասների անձնային առանձնահատկությունների որոշ բնութագրեր: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկական գյուղի աղջիկների խմբում դիտարկվում է արտահայտված տազնապայնությամբ ինքնավստահության, ինքնուրույնության դրսևորման ցածր մակարդակ: Դրսևորվում են նաև ցածր շփվողականության ու հաղորդակցման հնարավորություններ: 33% աղջիկների ցուցանիշներում բարձր է արտահայտված հուզական կայունությունը: Քիչ թե շատ նրանք կարողանում են կառավարել սեփական հույզերը, ցուցաբերում են համեմատաբար հանգիստ, անվրդով վարքագիծ: Խմբի 100% աղջիկների մոտ դիտարկվում է ինքնուրույնության, անկախության ցածր մակարդակ: 66%-ի մոտ արտահայտված է ցածր խոհեմության մակարդակ (ենթադրվում է, որ դեռահասների անզուսպ, անկառավարելի բնութագրերը պայմանավորված են մանկատան պարտադիր պահանջներից դուրս, դեռահասների շփումներում միջանձային հարաբերությունների նրբություններին չտիրապետելու, նրանց ֆրուստրացվածության մակարդակով, իրենց վիճակի, դրանց պատճառների նկատմամբ դրսևորվող ներքին ցամամբ, ագրեսիվ վարքագծով: Տղաների 77%-ի մոտ դիտարկվում է հանդգնությամբ հագեցած, անբռնազբոսիկ վարքագծի էքստրավերտության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է նրանց տարիքին բնորոշ ցուցադրական վարքագծով, որը հանդես է գալիս որպես պաշտպանական, փոխհատուցող վարքի հակազդեցություն:

Ստուգիչ խմբի (ընտանիքում ապրող) դեռահասների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջիններիս մոտ համանուն բնութագրերում ընդհանուր առմամբ ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների խմբերում միջին տվյալներ են գրանցվել: Դիտարկվում են բարձր չափավոր շփվողականության և ինքնազնահատականի միջին մակարդակներ: Էքստրավերտության մակարդակը աղջիկների խմբում 73% է, իսկ տղաների խմբում այն կազմում է 45%: Անձի սոցիալական մեկուսացվածության մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի արդյունքների համաձայն «ՍՕՍ»-ի խմբում ընդգրկված տղաների 53%-ի մոտ դիտարկվում է սոցիալական մեկուսացվածության բարձր, 16%-ի շրջանում՝ ցածր, և միայն 33%-ի մոտ միջին մակարդակ: Աղջիկների 33%-ի մոտ դիտարկվում է սոցիալական մեկուսացվածության բարձր, 50%-ի մոտ՝ միջին և 33%-ի մոտ՝ ցածր մակարդակ: Հաղորդակցական հակումների մակարդակը որոշող մեթոդիկայի ցուցանիշներում «ՍՕՍ»-ի տղաների 77%-ը դրսևորում է հաղորդակցական ցածր մակարդակ, 22%-ը՝ միջին մակարդակ: Հաղորդակցական հակումների 10% միջին և 90% ցածր մակարդակ է

գրանցվել ընտանեկան պայմաններում ապրող աղջիկների խմբում: Հաղորդակցական հակումների բացակայություն է դիտարկվում նաև «ՍՕՍ»-ի գրեթե բոլոր աղջիկների շրջանում: Մոցիալականացման, միջավայրում սահուն ներգրավվելու, արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցության առումով, նրանք դրսևորում են ժամանակակից հասարակության դինամիկ սոցիալական հարաբերություններին անհամապատասխան կաշկանդվածության, լարվածության, ներս կամ դուրս ուղղված մեղքի, անարդարության ագրեսիվության վարքագիծ:

Հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ գզացման ինքնագնահատականի մակարդակի էքսպրես-դիագնոստիկայի արդյունքների համաձայն՝ «ՍՕՍ» գյուղի տղաների 33%-ն ունի ցածր ինքնագնահատական, 33%-ը՝ բարձր, 33%-ը՝ միջին: Աղջիկների միայն 33%-ն ունի բարձր ինքնագնահատական, 66%-ի մոտ՝ միջին մակարդակ:

Գծ. 1. Հարմարման և հոգեբանական անվտանգության բնութագրերն արտացոլող գործոնների ինքնագնահատականները




«ՍՕՍ»-ի տղաների 96%-ի մոտ առկա է ցածր տրամադրության հակվածություն: Աղջիկների մոտ՝ 80%: Ընտանեկան պայմաններում ապրող աղջիկների խմբում 30%-ի մոտ առկա է ցածր տրամադրության հակվածություն, 70%-ի մոտ՝ այն բացակայում է: Տղաների միայն 46%-ի մոտ է դիտարկվում ցածր տրամադրության հակվածություն:

Դիտարկումներն ու մեր նախկին հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հաղորդակցման դժվարություններն ու դրա պայմանների բացակայությունը դեռահասներին դարձնում է մեկուսի, սահմանափակում հասակակիցների հետ նրանց շփման ակտիվությունը, ձևավորում ինքնուրույնության, ապահովվածության և ապագայի նկատմամբ վստահության ցածր ինքնագնահատական [2, 3]: Այն դիտարկվում է նաև որպես ֆրոստրացվածության վիճակ: Հաղորդակցական, խմբային հարաբերություններում համագործակցության ընդհանուր արժեքների արժևորման, ինքնագնահատականի ցածր մակարդակի

արտահայտվածությունը, հանրօգուտ աշխատանքից խուսափումն ու հասակակիցների հետ շփման դեֆիցիտները, դեռահասի օտարացումն է, իր բնական միջավայրից, որը հաճախ արտահայտվում է նաև անձնական հարաբերությունների ճգնաժամով [9, էջ 220]:

ԳՃ. 2. Ընտանեկան պայմաններում զարգացող դեռահասների՝ ցածր տրամադրության նկատմամբ հակվածությունը




Ըստ Ի. Գուսևայի, հոգեբանական օտարացումը դեռահասների շրջանում արտահայտվում է նաև հասակակիցների և մեծերի նկատմամբ ապրումակցման, համագործակցության դեֆիցիտով: Դրանց հիմքում ընկած են իր ու հարազատների առողջությանը, անվտանգությանն ուղղված հավանական վտանգների, սպառնալիքների վերաբերյալ երեխայի ունեցած իրական և քողարկված վախերը [8, էջ 157]: Հոգեբանական անվտանգության, ապահովվածության առումով՝ դեռահասների սոցիալականացման դժվարություններն ու անպաշտպան վիճակը նրանց դարձնում է զգայուն, ագրեսիվ: Նրանք կորցնում են ապահովության, հոգեբանական անվտանգության զգացումը: Այստեղ դեռահասների հոգեբանական անվտանգության կորստի զգացումն ու հոգեբանական օտարացման գործընթացը պարունակում են ընդհանրական սոցիալ-հոգեբանական հիմքեր [2, էջ 61]: Դ. Մաերսը դեռահասների ագրեսիվության, անհանդուրժողականության, ասոցիալ վարքի ձևավորման պատճառների շարքում կարևորում է հոգեբանական օտարացվածության գործոնը: Ապահովության, տեղի, դիրքի ամրապնդման նպատակով նրանք միավորվում, խմբեր են կազմում (նաև հանցագործության նպատակով): Կարծում ենք, որ այս գաղափարը տարածվում է նաև մեր համակազմի վրա, քանզի ինչպես ֆրոստրացման, այնպես էլ հոգեբանական օտարացման գործընթացների արտահայտվածությունն ու հակասական բնութագրերի բազմազանությունը վարքային բնութագրերի վեկտորներն ուղղված են դեպի ասոցիալ բնութագրերը: Դեռահասների երկու խմբերում հաղորդակցական հակումների և սոցիալական մեկուսացվածության մակարդակների

ցուցանիշներում առկա է նշանակալի բացասական համահարաբերակցային կապ՝ $r = -0,6$:

Դեռահասների սոցիալական մեկուսացվածության և հոգեբանական անվտանգության զգացման ինքնագնահատականի մակարդակների միջև դիտվում է նշանակալի ուղղագիծ բացասական համահարաբերակցային կապ՝ $r = -0,6$: Դեռահասների՝ ցածր տրամադրության հակվածության ցուցանիշների և ինքնամփոփության գործոնի միջև դիտարկվել է ուղիղ դրական ուժեղ կապ $r = 0,9$:

Ընտանիքը մարդու համար հանդիսանում է յուրայինների, գենետիկ կապերով ամրակայվող, «մենք»-ի սոցիալ-հոգեբանական բովանդակության գիտակցության, դրա լիարժեք ձևավորման հիմնական միջավայրն ու պայմանը: Այն դեռահասի բազմակողմանի պաշտպանվածության, ֆիզիկական և հոգեբանական անվտանգության զգացման հիմնական պատվարն է [2, էջ 61]:

ՊՃ. 3. UOU-ի դեռահասների՝ ցածր տրամադրության նկատմամբ հակվածությունը



«UOU» գյուղի և համապատասխան հաստատություններում ապրող երեխաների համար «մենք» հասկացությունը կրում է յուրայինի շատ խոր իմաստ: Առօրյայում նրանք ամենուր իրար պաշտպանում են «օտարներից»: Հանգամանքների բերումով նրանք իրենց հաստատության սահմաններից դուրս գրեթե կապեր չունեն, կամ դրանց նկատմամբ գոյություն ունի երկյուղ, կասկած անվստահություն: Մեծահասակի հետ շփման խանգարումը դեպրիվացիայի նշան է: «Երեխա-նշանակալի հեղինակավոր մեծահասակ» շրջանակներում գոյություն ունեցող թույլ կապերը, նրանց հետ շփման, հաղորդակցման կապերի խանգարումներն իրենց հերթին բացասական ազդեցություն են թողնում նաև ուրիշների հետ շփվելու, հաղորդակցվելու գործընթացում [4, էջ 220]: Արդյունքների համաձայն «UOU» գյուղի դեռահասների շրջանում դիտարկվում է դեպրիվացիայի և ֆրուստրացիայի արտահայտված երևույթներ, որոնց մշտական առկայությունը հանգեցնում են հոգեբանական անվտանգության և ապահովության զգացման կորստի:

Այսպիսով, հոգեբանական անվտանգության կորստի պայմաններում դեռահասների հոգեբանական օտարացմանը բնորոշ է անձի կառուցվածքի համալիր փոփոխություններ՝ որպես ասոցիալ վարքի ձևավորման նախադրյալներ: Դրանցում առաջնային տեղ են զբաղեցնում դեռահասի անձնային ձևափոխված առանձնահատկությունները, կյանքի տրավմատիկ փորձությունները, ընտանիքից դուրս ապրելակերպի պայմանները, ինչպես նաև հոգեբանական անվտանգության կորստի զգացման սուբյեկտիվ գնահատականը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Ընտանիքի բացակայության պայմաններում դեռահասների հոգեբանական օտարացման գործընթացը դրսևորվում է ապահովության կորստի, անբարենպաստ սոցիալականացման, ինքնիրացման դեֆիցիտի, անվստահության ձևերով: Նրանց հոգեբանական օտարացման, խորթացման գործընթացը հանդիսանում է յուրօրինակ պաշտպանական վարքագիծ որպես երեխայի սոցիալական հմտությունների, հաղորդակցման դժվարությունների, անձնային ցածր տրամադրության, հոգեբանական անվտանգության զգացման կորստի վիճակ:

2. Դեռահասների օտարացման գործընթացը հանդիսանում է օբյեկտիվ իրականությունից հեռանալու, ֆրուստրացվածության վիճակում հայտնվելու հոգեբանական հարթակ: Մանկատան կադապարված պայմանները, սոցիալական հմտությունների դեֆիցիտը, կադապարված դերային վարքագծի ընթրօրինակումները հանգեցնում են սոցիալական կոմֆորմիզմի: Հոգեբանական օտարացման արդյունքում ձևավորվող ասոցիալ վարքի հիմքում ընկած են նաև հոգեբանական անվտանգության ապահովման դժվարությունները, իրականության աղճատված, պատրանքներով հագեցած սուբյեկտիվ պատկերացումների դետերմինանտները:

3. Դեռահասների ասոցիալ վարքի հոգեբանական փորձագիտական բնութագրերի ձևակերպման գործում հարկ է հաշվի առնել նրանց հոգեբանական օտարացման, ֆրուստրացվածության, հոգեբանական անվտանգության կորստի ձևավորման սոցիալ-հոգեբանական պայմանները: Դրանցում պետք է կարևորվեն կարգազանցության, անձնային բնութագրերի փոփոխության դետերմինանտները, որոնք ամբողջականացվում են մեծերի կողմից դեռահասների միջանձնային հարաբերությունների համահարթեցման մոտեցումներում, ինքնադրսևորման, ինքնահաստատման գործընթացին տրվող ոչ օբյեկտիվ գնահատականներում:

4. Դեռահասների անկարողություններն ու կյանքի հմտությունների դեֆիցիտը հասարակության մեջ ներգրավվելու ճանապարհին հանդիսանում են հավանական կարգազանցության, ասոցիալ վարքագծի ձևավորման

նպաստավոր պայման, ինչի հաշվառումը հնարավորություն կտա հոգեբանական փորձաքննություններում հոգեբանական համարժեք բնութագրերի ձևավորմանը, ինչպես նաև դեռահասների ասոցիալ վարքի վաղ ձևավորման գործընթացի կանխարգելմանը:

Գրականություն

1. Կիրառական հոգեբանության պրակտիկում /Ս. Արզումանյան, Ս. Մկրտչյան, Վ. Սարգսյան. – Եր.: Ջանգալ-97, 2002, էջ 154-166:
2. Մկրտումյան Մ.Պ. Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Եր. «Ջանգալ-97», 2008. – 320 էջ:
3. Մկրտումյան Մ.Պ. Դեռահասների հոգեբանական անվտանգության կորստի սպառնալիքների պայմաններում հոգեբանական օտարացման առանձնահատկությունները: Արդի հոգեբանություն: Եր.: 2020. էջ 100-106:
4. Алексеевкова Е. Личность в условиях психической депривации. СПб.: 2009. 96 с.
5. Алмазов Б.Н. Психология социального отчуждения. Екатеринбург: Уральская гос. юрид. Академия, 2007. – 222 с.
6. Байбородова Л.В. Преодоление трудностей социализации детей-сирот. Ярославль, 1997. – 287 с.
7. Бойко В.В., Барканова О.В. Методики диагностики эмоциональной сферы. - Вып.2. – Красноярск: Литера-принт, 2009. – 237 с.
8. Гусева И.С., Прядеин В.П. Психологическая структура отчуждения личности. – М.: Педагогическое образование в России, №2, 2012. – 4 с.
9. Лангмейер Й., Матейчик З. Психическая депривация в детском возрасте. „Авеценум“, Прага, 1984. – 334 с.
10. Силяева А. Феномен отчуждения подростков: генезис виды. М.: 2009.
11. Славина Л.С. Трудные дети. – М.: Воронеж, 1998. – 448 с.
12. Фетискин Н.П. и др. Социально-психологическая диагностика развития личности и малых групп – М.: 2002. – 344 с.
13. Шульга Т.И., Татаренко Д.Д. //Психологические особенности подростков-сирот, не имеющих опыта социализации в семье. «Психологическая наука и образование – 2013, №2, - 11 с.

ПРОБЛЕМА ИЗМЕНЕНИЙ ПОВЕДЕНИЯ ПОДРОДСКОВ В УСЛОВИЯХ СОЦИАЛЬНОГО НАПРЯЖЕНИЯ В КОНТЕКСТЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

Մկրտումյան Մ.Պ. (դ.պ.ս.ն., պրոֆեսոր, ԱԳՍՄ իմ. Խ. Աբովյան, Երևան, ԲԱ)
mkrtumyanmels24@aspu.am

Аннотация: В данной статье исследуются социально-психологические детерминанты возможных изменений в поведении подростков в условиях социального напряжения, а также специфические особенности структурных изменений личности.

Основное внимание уделяется анализу социально-психологических механизмов предполагаемых деформаций поведения подростков в условиях социального напряжения. Были выявлены особенности психологического отчуждения и потери чувства психологической безопасности у подростков, проживающих вне семьи, а также особенности гендерных различий. Результаты исследований позволяют лучше понимать механизмы формирования асоциального поведения подростков и обеспечивают научные основы для их психологической характеристики во время психологической экспертизы.

Ключевые слова: психологическое отчуждение, фрустрация, психологическая безопасность, асоциальное поведение, дезадаптация, эмоциональная неустойчивость, психологическая экспертиза.

SOCIO-PSYCHOLOGICAL DETERMINANTS OF BEHAVIORAL CHANGES IN ADOLESCENTS DURING SOCIAL TENSION

Mkrtumyan M.P. (Doctor of Psychology, Professor, Khachatur Abovian ASPU, RA)
mkrtumyanmels24@aspu.am

Abstract: This article explores the socio-psychological determinants of potential behavioral changes among adolescents in conditions of social tension, as well as specific features of structural personality changes. The study focuses on analyzing the socio-psychological mechanisms of presumed behavioral distortions among adolescents in situations of social tension. The peculiarities of psychological alienation and loss of the sense of psychological security among adolescents living without family, as well as the specifics of their gender differences, are identified. The research findings contribute to a better understanding of the mechanisms shaping antisocial behavior in adolescents and provide scientific grounds for their psychological characterization during psychological expertise.

Keywords: psychological alienation, frustration, psychological safety, antisocial behavior, maladjustment, emotional instability, psychological vulnerability.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 29.01.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 13.02.2024*

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԱՆՁՆԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Մկրտումյան Լ.Յու. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
mkrtumyan07@mail.ru

Ամփոփագիր: Հողվածում քննարկվում է ընտանիքում կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրը, հիմնավորվում է դրա հետազոտության կարևորությունը հայ իրականության մեջ: Վերլուծվում են բռնության ենթարկված և ստուգիչ խմբում ընդգրկված կանանց բնավորության շեշտվածությունները, ագրեսիայի մակարդակը և տիպերը, ինքնագնահատականի բնութագրերը, էմպաթիայի մակարդակը և դրանց միջև դրսևորվող համահարաբերակցային կապերը: Ընտանիքում բռնության ենթարկված կանանց բնորոշ են բնավորության կոնկրետ շեշտվածություններ, ագրեսիայի բարձր և ինքնագնահատականի ցածր մակարդակ: Հետազոտության արդյունքները կարող են ուղենիշ լինել դատահոգեբանական փորձաքննությունների համար: Կատարված եզրակացությունները կարևոր հիմք են հայ ընտանիքներում կանանց նկատմամբ բռնության դեպքերի փորձագիտական գնահատման, դրանց կանխարգելման և հոգեթերապիայի ռազմավարության կառուցման համար:

Հիմնաբառեր. ընտանեկան բռնություն, հոգեկան վնասվածք, բնավորության շեշտվածություն, ագրեսիա, ինքնագնահատական, էմպաթիա, փորձագիտական գնահատում:

Կանանց նկատմամբ բռնությունը տարածված և թույլատրելի է եղել մարդկության ողջ պատմության ընթացքում: Գիտական գրականության մեջ երկար ժամանակ սուղ էին կանանց նկատմամբ բռնության ուսումնասիրությունները՝ մասամբ այն պատճառով, որ սոցիալական նորմերի, տաբուների, խարանների և այս խնդրի նուրբ բնույթի պատճառով չեն գրանցվել բռնությունների բազմաթիվ տեսակներ (մասնավորապես՝ բռնաբարություն, սեռական ոտնձգություն և ընտանեկան բռնություն), և դրանց վիճակագրությունը թերի է: Կանանց նկատմամբ բռնության խնդիրը հաղթահարելու համար հարկավոր են բոլոր շահագրգիռ կողմերի այդ թվում՝ պետության, օրենսդրական փոփոխության ինչպես նաև օրենքների վերանայման համաձայնեցված ջանքերը: Այս խնդիրը ակտուալ է նաև հոգեբանական, սոցիալ-մանկավարժական հետազոտությունների և հաղթահարման մշակման առումով:

Հոգեբանական գիտության բնագավառում ուսումնասիրված են կանանց նկատմամբ բռնության տեսակները, պատճառները և հետևանքները

[3, 9, 10]: Բռնությունը սահմանվում է որպես ագրեսիայի, ֆիզիկական ուժի կամ իշխանության դիտավորյալ կիրառում կամ կիրառման սպառնալիք որևէ անձի, անձանց խմբի կամ հանրության նկատմամբ, որը բերում է կամ մեծ հավանականությամբ կարող է բերել մարմնական վնասվածքների, մահվան, հոգեբանական վնասի, թերզարգացման կամ զրկման [1, 3]: Այս սահմանումը կապում է կանխամտադրությունը գործողության իրականացման հետ՝ անկախ գործողության հետևանքներից:

Բռնությունը ենթադրում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողություններ, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում, նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում [1, 4, 7]: Ն.Մ. Պլատոնովան նշում է, որ բռնությունը ոչ միայն գործողություն է, այլև վերահսկողություն մեկ այլ անձի վարքի, մտքերի, էմոցիաների վրա [7]:

Վ.Յու. Մենովշչիկովի հետազոտությունները փաստում են, որ կանանց նկատմամբ բռնությունն ընտանիքում, չնայած յուրաքանչյուր դեպքի անկրկնելիությանը, ունի փուլային բնույթ [4]: Փուլերի տևողությունը և բովանդակությունը տարբեր ընտանիքների և հարաբերությունների պատմության մեջ տարբեր են, բայց, միևնույն է, կրկնվում են: Այդ փուլերը երեքն են՝ լարվածության աճի փուլ և բռնության կարճատև էպիզոդներ, իրավիճակի կրկնության, էլ ավելի դաժան էպիզոդների և վերահսկողության կորստի և փուլ և «մեղայականի» ու մեղրամսի փուլ, որից հետո փուլերը սովորաբար կրկնվում են [3, 4]:

Հոգեբանության մեջ կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք վերաբերում են բռնացողի անձնային որակներին, դրանց զարգացման դինամիկայի դետերմինացիային և այլն [3, 4]: Բռնացողի անձնային որակների իմացությունը կարևոր է ինչպես իր, այնպես էլ զոհի հոգեձանձաման առումներով, ինչպես նաև ընտանեկան և անհատական հոգեթերապիայի արդյունավետ կազմակերպման համար: Մենովշչիկովն առանձնացնում է բռնացողի անձի բնորոշ հիմնական որակներ և զույգի հետ հարաբերությունների կառուցման բնորոշ հանգամանքներ. խանդ, վերահսկողություն, կարճատև մինչամուսնական կապ, անիրական ակնկալիքներ, ուրիշներին սեփական խնդիրների, զգացումների համար մեղադրելու հակվածություն, զերզայունություն, կոպտություն, ուժի «անլուրջ» կիրառում, վիրավորանք (խոսքով, կամ այլ), ռիզիկ սեքսուալ դերեր, բնավորության ծայրահեղ երկակիություն, ֆիզիկական ագրեսիայի կիրառում անցյալում, բռնության սպառնալիք, իրերի վնասում, ուժի և արգելքների կիրառում:

Մասնագիտական գրականության մեջ համեմատաբար ավելի սուղ են բռնության զոհի անձնային որակների հետազոտությունները:

Մասնավորապես զոհաբանության բնագավառում քննարկվում են ուսումնասիրություններ բռնության ենթարկված կանանց վարքագծի, անձնային որակների և բռնության իրադրության փոխհարաբերությունները, երբ, պարբերաբար կրկնվող բռնությունը առաջացնում է անձի բարոյական, ֆիզիկական, կամ նյութական վնաս ստանալու նախատրամադրվածություն [2, 3, 10]: Ընտանեկան բռնության ամերիկացի հետազոտող Լ. Մակ-Կլոսկու բնութագրմամբ բռնությունը հանդուրժող կնոջը բնորոշ է անվստահություն և ցածր ինքնագնահատական, մեղքի զգացում, նրանք պասիվ են և ենթարկվող: Այս որակները կարող են նպաստել ընտանեկան բռնության առաջացմանը, կամ խորացմանը (մեջբերվում է ըստ՝ Малкина-Пых, 2006): Հաճախ ընտանիքներում բռնության կիրառումը դիտարկվում է որպես մշակութային նորմա, ինչը խիստ վտանգավոր է և բնացոլի և զոհի անձնային որակների ձևավորման տեսանկյունից: Եվ հակառակը. բարենպաստ և կոնֆլիկտային ընտանեկան հարաբերությունների հետազոտությունները վկայում են, որ ծնողների լավ հարաբերությունները, երջանիկ մանկությունը նպաստում են հետագայում ամուսինների միջև ներդաշնակ հարաբերությունների կառուցմանը [8]:

Թեև բռնության ենթարկված կանանց և ընտանեկան բռնության հիմնահարցերը բավականաչափ ուսումնասիրված են, այնուամենայնիվ դեռևս կա հայ իրականության մեջ այս հիմնահարցի համակողմանի հետազոտությունների կարիք:

Մեր հետազոտության օբյեկտը կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն է, առարկան՝ բռնության ենթարկված կանանց անձնային առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը բռնության ենթարկված կանանց անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումն է և բռնությունների կանխարգելմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակումը:

Ենթադրվում է, որ ընտանեկան բռնության ենթարկված կանանց բնորոշ են հուզական անկայունությունը, ցածր ինքնագնահատականը և աուտոագրեսիան: Հետազոտության մեթոդիկաներն են՝


- ✓ Բասս-Դարկիի՝ ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա
- ✓ Կ. Լեոնհարդի՝ բնավորության շեշտվածությունների որոշման մեթոդիկա
- ✓ Դեմբո-Ռուբինշտեյնի՝ ինքնագնահատականի բացահայտման սանդղակ
- ✓ Վ.Վ Բոյկոյի՝ էմպաթիայի որոշման մեթոդիկա:

Հետազոտությանը մասնակցել են 25-40 տարեկան թվով 50 բռնության ենթարկված կանայք և նույն քանակությամբ բռնության չենթարկված կանայք, որոնք հետազոտության ստուգիչ խումբն են:

Ագրեսիայի վերաբերյալ ստացվել են հետևյալ ցուցանիշները. թշնամության (7) և ագրեսիվության (22) ինդեքսները ստուգիչ խմբի կանանց համեմատ ավելի բարձր են բռնության ենթարկված կանանց շրջանում (ագրեսիա՝ 24 և թշնամանք՝ 9): Թշնամանքը դրսևորվում է որպես ընդհանուր բացասական, անվստահ վերաբերմունք շրջապատողների նկատմամբ, իսկ ագրեսիան՝ որպես ակտիվ արտաքին հակազդումներ կոնկրետ անձանց, հաճախ երեխաների նկատմամբ:


Բացառությամբ վիրավորանքի՝ բռնության ենթարկված կանանց շրջանում զգալիորեն ավելի բարձր են նաև ագրեսիայի տիպերի ցուցանիշները: Ամենանշանակալի կոնտրաստը դիտվում է կասկածամտության և մեղքի զգացման դեպքում (տես՝ գծ. 1):

Գծ. 1. Ագրեսիայի տիպերի ցուցանիշները ստուգիչ և հիմնական խմբերում



Բնավորության շեշտվածությունների վերաբերյալ ստացվել են հետևյալ արդյունքները՝ բռնության ենթարկված կանանց շրջանում ստուգիչ խմբի կանանց համեմատ գերակշռող են դիսթիմ, դրդվող, դեմոնստրատիվ, տազնապալի, բծախնդիր, հուզական և կապ ընկնող շեշտվածությունները (տես՝ գծ. 2):


Գծ. 2. Բնավորության շեշտվածությունը ստուգիչ և հիմնական խմբերում



Ստուգիչ խմբի կանանց շրջանում գերակշռող են բնավորության էկզալտացված, ցիկլոտիմ և հիպերթիմ շեշտվածությունները: Հատկանշական է, որ էկզալտացված տիպի ցուցանիշները ընդհանուր առմամբ գերակշռող են երկու խմբերում:

Դեմք-Ռուբինշտեյնի մեթոդիկայի կիրառմամբ որոշել ենք հետազոտվողների առողջության, հասակակիցների շրջանում հեղինակության, բնավորության, ինքնավստահության, ունակությունների, արտաքին տեսքի, ձեռքերով ինչ-որ բան պատրաստելու կարողության ինքնագնահատականները:

Գծ. 3. Դեմք-Ռուբինշտեյնի մեթոդիկայի արդյունքները երկու խմբերում



Հետազոտության արդյունքների համաձայն, բացառությամբ հմուտ ձեռքերի, որի դեպքում ինքնագնահատակը ունի հավասար արտահայտվածություն, մյուս բոլոր ինքնագնահատումներում ակնառու է ստուգիչ խմբի կանանց ինքնագնահատման բարձր արտահայտվածությունը բոնության ենթարկվող կանանց համեմատ:

Մեր կողմից հետազոտվել է նաև էմպաթիայի մակարդակը ստուգիչ և հիմնական խմբերում: Երկու խմբերում ընդգրկված կանանց շրջանում դիտվում են էմպաթիայի մակարդակի արտահայտվածության գրեթե նույն ցուցանիշները: Հատկանշական է, որ համահարաբերակցային կապերի դեպքում ևս դրսևորվել են գրեթե նույն նշանակությունները: Բացառություն է կազմում միայն բոնության ենթարկված կանանց էմպաթիայի մակարդակի և բնավորության տագնապալի շեշտվածության միջև համահարաբերակցային կապը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ագրեսիայի, էմպաթիայի և բնավորության շեշտվածությունների կոռելյացիայի գործակցի (r) ցուցանիշները

Հետազոտվողներ	Բնավորության շեշտվածություններ	Ագրեսիվության միջին ցուցանիշ	Ինքնագնահատականի միջին ցուցանիշ	Էմպաթիայի միջին ցուց.
Ստուգիչ խումբ	Հիպերթիմ	0,1	0,5	0,1
	Կապ ընկնող	0,1	0,3	0,3
	Հուզական	0,2	0,4	0,1
	Բժախնդիր	0,3	0,3	0,1
	Տազնապալի	0,2	0,3	0,1
	Ցիկլոտիմ	0,2	0,5	0,2
	Դեմոնստրատիվ	0,1	0,4	0,1
	Դրովող	0,2	0,3	0,2
	Դիսթիմ	0,1	0,4	0,0
Էկզայտագված	0,4	0,3	0,2	
Հիմնական խումբ	Հիպերթիմ	0,4	0,1	0,1
	Կապ ընկնող	0,3	-0,1	0,2
	Հուզական	0,6	0,2	-0,1
	Բժախնդիր	0,5	0,2	0,3
	Տազնապալի	0,6	0,1	0,4
	Ցիկլոտիմ	0,4	0,3	0,2
	Դեմոնստրատիվ	0,2	0,2	0,2
	Դրովող	0,5	-0,1	0,3
	Դիսթիմ	0,3	-0,2	0,1
Էկզայտագված	0,4	0,1	0,3	

Հետազոտվող հիմնական և ստուգիչ խմբերում դիտվում է բնավորության էկզայտագված շեշտվածության և ագրեսիայի մակարդակի միջև միջին նշանակալիության ուղիղ գծային համահարաբերակցային կապ ($r=0,4$): Ստուգիչ խմբում այս երկու ցուցանիշների միջև այլ նշանակալի կապեր չեն գրանցվել: Բռնության ենթարկվող կանանց խմբում նշանակալի համահարաբերակցային կապեր են դրսևորվել ագրեսիայի մակարդակի և բնավորության հուզական ($r=0,6$), տազնապալի ($r=0,6$), բժախնդիր ($r=0,5$) և դրովող ($r=0,5$) շեշտվածությունների միջև:

Ի տարբերություն ստուգիչ խմբի, բռնության ենթարկված կանանց խմբում բնավորության շեշտվածությունների և ինքնագնահատականի ցուցանիշների միջև նշանակալի համահարաբերակցային կապեր չկան:

Այսպիսով, հիմնախնդրի տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին՝

1. Կանանց նկատմամբ բռնությունը հաճախ հիմնավորվում և արդարացվում է սոցիալականության գործոններով:

2. Բռնության ենթարկված կանանց շրջանում ագրեսիայի տիպերից գերակշռում են կասկածամտության և մեղքի գագսման դրսևորումները: Ստուգիչ խմբի համեմատ բարձր են ագրեսիվության և թշնամանքի ինդեքսները:

3. Բռնության ենթարկված կանանց անձնային առանձնահատկությունները պայմանավորված են հետևյալ հիմնական

գործոններով՝ հոգեբանական և սոցիալ-մանկավարժական՝ ընտանիքի, դպրոցի, հասարակական ներգործության յուրահատկություններ և սոցիալ-տնտեսական՝ սոցիալական անապահովություն, գործազրկություն:

4. Բնության ենթարկված կանանց բնորոշ է ինքնագնահատականի և ապրումակցման ցածր մակարդակը:

5. Պարբերաբար կրկնվող հոգեվնասվածքային իրավիճակների ազդեցությամբ բնության ենթարկված կանանց շրջանում դրսևորվում է բնավորության առանձին շեշտվածությունների ընդգծված արտահայտվածություն, ագրեսիայի և թշնամանքի աճ: Նրանք զգայուն են, խոցելի, բնութագրվում են ամենատարբեր իրավիճակներին հուզականությամբ և տազնապալի հակազդումներով արձագանքելու բնորոշ առանձնահատկությամբ:

Գրականություն

1. Միքայելյան Մ.Ս. Բնության և զոհի հոգեբանություն: Ուսումնասմեթոդական ձեռնարկ ՀԱՊՀ. – Եր.: 2016. – 164 էջ:
2. Арт-терапия жертв насилия /Сост. А.И. Копытин. – М.: Психотерапия, 2009. 144 с.
3. Малкина-Пых И.Г. Экстремальные ситуации. М.: Эксмо. 2006. – 960 с.
4. Меновщиков В.Ю. Психологическое консультирование. Работа с кризисными и проблемными ситуациями. М.: Смысл, 2005. – 182 с.
5. Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие. /ред.-сост. Д. Я. Райгородский – Самара: Издательский Дом «БАХРАХ», 1998. – 672 с.
6. Психология и психоанализ характера. Хрестоматия по психологии и типологии характеров. /Ред.-сост. Д.Я. Райгородский. – Самара: Издательский Дом «БАХРАХ», 1997. – 640 с.
7. Насилие в семье: особенности психологической реабилитации. Учебное пособие /Н.М. Платоновой и Ю.П. Платонова. – СПб.: Речь, 2004. – 154 с.
8. Шнейдер Л.Б. Семейная психология: Учебное пособие для вузов. 2-ое изд. – М.: Академический проект; Екатеринбург, 2006. – 768 с.
9. Dutton D.G. 1994. Patriarchy and wife assault: The ecological fallacy. Violence and Victims, 9, 125-140.
10. Dorpat, T.L. 1994 «On the double whammy and gaslighting» Psychoanalysis & Psychotherapy, Vol 11(1), 1994, 91-96.

ОЦЕНКА ЛИЧНОСТНЫХ ХАРАКТЕРИСТИК ЖЕНЩИН, ПОДВЕРГШИХСЯ СЕМЕЙНОМУ НАСИЛИЮ В СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ

Мкртумян Л.Ю. (к.п.с.н., доцент, АГПУ имени Х. Абовяна, Ереван, РА)
mkrtumyan07@mail.ru

Аннотация: В статье рассматривается проблема насилия над женщинами в семейной среде и обосновывает важность её исследования в контексте армянской действительности. Проводится анализ акцентуаций характера, уровней и форм агрессии, особенностей самооценки, уровня эмпатии и корреляций между ними у женщин, подвергшихся насилию, и женщин в контрольной группе. Женщинам, подвергшимся насилию в семье, характерны определенные акцентуации характера, высокий уровень агрессии и низкая самооценка. Результаты исследования могут служить ориентиром для проведения судебно-психологической экспертизы. Полученные выводы являются важным базисом для экспертной оценки случаев насилия над женщинами в армянских семьях, их профилактики и разработки стратегии психотерапии.

Ключевые слова: домашнее насилие, психическая травма, акцентуации характера, агрессия, самооценка, эмпатия, экспертная оценка.

ASSESSMENT OF PERSONAL CHARACTERISTICS OF WOMEN EXPERIENCING DOMESTIC VIOLENCE IN FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATION.

Mkrtumyan L. Yu. (Ph.D in Psychology, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)
mkrtumyan07@mail.ru

Abstract: This article addresses the issue of violence against women within the family environment and argues for the importance of its exploration within the context of Armenian society. An analysis is conducted on character accentuations, levels and forms of aggression, self-esteem characteristics, empathy levels, and correlations among them in women who have experienced violence compared to those in a control group. Women who have experienced violence in the family exhibit certain character accentuations, high levels of aggression, and low self-esteem. The research findings can serve as a guideline for conducting forensic-psychological expertise. The conclusions drawn provide a significant basis for the expert assessment of cases of violence against women in Armenian families, their prevention, and the development of psychotherapeutic strategies.

Keywords: domestic violence, psychological trauma, character accentuations, aggression, self-esteem, empathy, expert assessment.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 17.02.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 02.03.2024*

**ՀՀ-ՈՒՄ ԵՐԵՒԱՅԻ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մեկիքբեկյան Վ.Ա. (ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն, արդարադատության մայրո, Երևան, ՀՀ)
Vguyq-pet@harkadir.am

Ամփոփագիր. Հողվածը նվիրված է ՀՀ-ում դատահոգեբանական փորձաքննության ժամանակակից հիմնախնդիրներին և հատկություններին: Հողվածում ընդգծվում են դատահոգեբանական փորձաքննության հիմնական խնդիրներն ու նպատակները, ինչպես նաև ընդգծվում են հոգեբանական և հոգեբուժական փորձաքննությունների տարբերությունները և դրանց նշանակման առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում փորձագետ-հոգեբանի դերին երեխաների գործերով դատավարության գործընթացում և դատավարության մյուս մասնակիցների հետ փոխգործակցությանը: Հողվածում շեշտում է նաև դատահոգեբանական փորձաքննության արդիականությունը ժամանակակից հասարակության մեջ, որտեղ գործունեության ցանկացած ոլորտում կարևոր է անհատի վարքի հոգեբանական ասպեկտների ըմբռնումը: Քննարկվում են նաև փորձագետ հոգեբանի աշխատանքի էթիկական ասպեկտները դատական ընթացակարգերի և երեխայի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Հողվածն ուղղված է իրավաբանության, հոգեբանության և հարակից առարկաների ոլորտի մասնագետներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են դատական հոգեբանության խնդիրներով և դրա դերով դատական գործընթացում:

Հիմնաբառեր՝ հոգեբանական փորձաքննություն, փորձագետ, հոգեբուժական փորձաքննություն, քաղաքացիական գործ, ինամականություն, լավագույն շահ:

Ներկայում դատահոգեբանական փորձաքննության ինստիտուտը Հայաստանում ապրում է իր ձևավորման և զարգացման կարևոր ընթացքը: Դատական փորձաքննության ժամանակ հոգեբանական գիտելիքների առանձին դրվագների օգտագործումն իրականացվել է դեռ հարյուր տարի առաջ: Սկզբնական շրջանում փորձարարական հոգեբանության կիրառումը հանգում էր հիմնականում քրեական գործընթացի մասնակիցների ցուցմունքների հավաստիության որոշման մեթոդիկաների մշակմանը: Այդ շրջանի աշխատանքներում ակտիվորեն հետազոտվում էր իրավախախտի անձը: Այն ուներ իր դրական կողմերը, քանի որ հնարավորություն էր ընձեռում հստակ և ճիշդորոշ որակավորել կատարված հանցագործությունը՝

օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով: Մակայն մեկ այլ կողմից, հավակնելով պարզել դատաքննության գործընթացի մասնակիցների ցուցմունքների հավաստիությունը, փորձագետն իր վրա էր վերցնում այդ ցուցմունքների ճշմարտացի կամ ոչ ճշմարտացի լինելու որոշման պատասխանատվությունը: Օրինակ, հիմնվելով հետաքննվողի պատմածի և հարցերի պատասխանների վրա, փորձագետ-հոգեբանը եզրակացություն էր կայացնում փորձաքննվողի մոտ առկա կամ բացակա «ստի ախտանիշի» վերաբերյալ: Ենթադրվում էր, որ այն անձինք, ում բնորոշ է սառնասրտությունը, մոայլությունը, ցինիզմը, պատրաստ են նախապես մտացածին ստի, փաստերի խեղաթյուրման: Ուստի նմանատիպ անձանց ցուցմունքների հավաստիությունը կասկածելի էր համարվում [5]:

Անհավաստի էին նաև համարվում այն անձանց ցուցմունքները, որոնք ունեն չիրականացված ցանկությունների բարդույթ: Հոգեբանական գիտելիքների ակտիվ կիրառումը փորձաքննության և դատական պրակտիկայում սկիզբ է առել 1963թ. «Անչափահասների հանցագործության դատական պրակտիկայի գործով» թիվ 6 որոշումով, որտեղ կարգադրվում էր դատահոգեբանական փորձաքննություն անցկացնել հայտնաբերելու համար, թե արդյոք անչափահասներն ընդունակ են ամբողջովին գիտակցել իրենց իրականացրած գործողությունների նշանակությունը, և որոշել՝ որքանով կարող են ղեկավարել դրանք: 1980թ. դատահոգեբանական փորձաքննություն նշանակման և անցկացմանն էր ուղղված ԽՍՀՄ Դատախազության մեթոդական նամակը, որտեղ նշվում էր, որ փորձաքննությունը նշանակվում է, երբ հետաքննություն, նախնական քննություն և դատաքննություն անցկացնելու ժամանակ անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի ոլորտից, և ի դեմս եզրակացության՝ փորձագետի առջև դրված խնդիրները չեն կարող դուրս գալ փորձագետի մասնագիտական գիտելիքների շրջանակից:

Այսպիսով, դատահոգեբանական փորձաքննությունն ինքնուրույն փորձագիտական հետազոտության տեսակ է: Որպես այդպիսին՝ իր զարգացման ընթացքում այն անցել է բարդ ճանապարհ՝ սկսած փորձարարական հոգեբանության տվյալները իրավական խնդիրներին հարմարեցնելուց մինչև հոգեբանական փորձաքննության տեսության ստեղծումը:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ փորձագետին առաջադրվող պահանջները, ի տարբերություն մի շարք այլ երկրների օրենսդրության, բավականին սեղմ են ամրագրված: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ (քրեական դատավարության օրենսգիրք) 85-րդ հոդվածի 1, 2, 3-րդ մասերը սահմանում են. «Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ

փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով՝ գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից»: Այլ երկրների օրենսդրություններն (օրինակ՝ ՌԴ Պետական դատական-փորձագիտական գործունեության 13 հոդված) ունեն մի շարք մասնագիտական և ոչ մասնագիտական պահանջներ, այն է՝ փորձագետը պետք է լինի տվյալ երկրի քաղաքացի, ունենա համապատասխան բարձրագույն կրթություն, մասնագիտական վերապատրաստումների և որակավորման փաստաթղթեր [2]:

Դատահոգեբանական փորձագետների պատրաստման հարցը ՀՀ-ում պայմանավորված է մի շարք խնդիրներով: Ժամանակակից սոցիալ-քաղաքական գործընթացների զարգացումը նոր պահանջներ է առաջ բերում հոգեբանության, նրա կարողությունների և պատրաստականության առջև՝ արձագանքելու ժամանակի մարտահրավերներին հավուր պատշաճի: ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ դատական փորձաքննությունը նշանակվում է դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի, արբիտրաժային տրիբունալի որոշմամբ (հիմք՝ ՀՀ քաղ. դատ. օր. 60-րդ հդ., ՀՀ քր. դատ. օր. 55-րդ, 57-րդ, 331-րդ, 243-րդ հդ., ՀՀ վարչ. դատ. օր. 37-րդ հդ., «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հդ.): Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանում գործեր քննելու ժամանակ փորձաքննություն նշանակում է նաև դատարանը (հիմք՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված):

Նկատի ունենալով վերը նշվածը՝ Տ.Վ. Սախնովան դատահոգեբանական փորձաքննությունը սահմանում է որպես հատուկ հոգեբանական հետազոտություն, որն անցկացվում է բանիմաց փորձագետի կողմից մարդու կամ իրավիճակի նկատմամբ, ընդհանուր (դատավարական) և հատուկ (հոգեբանական) հիմքերի առկայությամբ, գործի վերաբերյալ դատական ապացույց ստանալու համար, այսինքն թե՛ փորձագետ-հոգեբանի եզրակացություն: ՀՀ դատարանում որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող և օրենսգրքով նախատեսված դեպքերում ու կարգով դատարանի կողմից նշանակվող մասնագետը: Այսինքն՝ օրենսդիրը միայն բավարարվում է փորձագետի՝ համապատասխան որակավորման փաստաթղթի առկայությամբ: Ինչ վերաբերում է դատական հոգեբան-փորձագետներին ներկայացվող պահանջներին, ապա դրանք հստակեցված չեն: Սակայն հստակ է այն, որ դատահոգեբանական փորձագետը պետք է ստացած լինի բարձրագույն կրթություն հոգեբանության մասնագիտությամբ: Մինևույն ժամանակ

բարձրագույն կրթությունը դեռ չի ապահովում «հատուկ գիտելիքների» առկայությունը: Հատուկ գիտելիքների մասին պատկերացումը բացում է Վ.Ֆ. Սաֆուանովը՝ դրանք բաժանելով՝ 1) ընդհանուրին վերաբերվող (ունիվերսալ), 2) հատուկ-առարկայական (մասնագիտական) [4]:

Հաշվի առնելով, որ դատական փորձաքննությունը բնութագրում են. 1) որպես հատուկ գիտելիքների հիման վրա փորձագետի կողմից իրականացվող հետազոտություն, 2) որպես առանձնահատուկ ընթացակարգային գործունեություն, 3) որպես դատավարական իրավունքի ինստիտուտ, կարելի է նկատել, որ դատահոգեբանական փորձագետը միայն «հատուկ գիտելիքների» տիրապետող անձը չէ. դատական փորձագետը կարող է կրել քրեական պատասխանատվություն.

- ✓ կեղծ ցուցմունքի համար եզրակացություն ներկայացնելու համար,
- ✓ նախաքննության տվյալների հրապարակման համար:

Հոգեբանական փորձաքննության ընթացքում փորձագետը, օգտագործելով հատուկ մեթոդներ, սահմանում է հոգեբանական բնույթի տարբեր փաստեր (անձնական հատկություններ, վերաբերմունք, վարքագծային դրմինանտներ, ճանաչողական գործընթացների առանձնահատկություններ և այլն): Նման փաստերը միջանկյալ են և ինքնին՝ ի տարբերություն փորձագետի եզրակացության, դատաքննության ընթացքում ապացուցողական նշանակություն չունեն: Դատարանն իրավասու չէ, օրինակ, հղում կատարելով փորձագետի կողմից բացահայտված ենթադրելիության հատկությանը, եզրակացնելու, որ սուբյեկտն ի վիճակի չէ ազատորեն որոշում կայացնել տվյալ իրավիճակում: Սա պահանջում է հատուկ փաստերի մասնագիտական գնահատում իրենց ամբողջության մեջ: Միջանկյալ փաստերի բացահայտումը հատուկ ուսումնասիրության անհրաժեշտ փուլ է, որը փորձագետին թույլ է տալիս վերջնական եզրակացություն անել առաջադրված հարցի վերաբերյալ:

Պետք է տարբերել իրավունքի նորմերում պարունակվող հոգեբուժական խնդիրները հոգեբանականից: Հոգեբուժական չափանիշի մասին կարելի է խոսել բառի ճիշտ իմաստով միայն այն դեպքում, երբ իրավական հետևանքները կապված են հենց հոգեկան խանգարման հետ (ինչպես դա տեղի է ունենում ՌԴ Քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածում), և ոչ միայն գիտակցության և կամքի արտահայտման ամբողջական արժեքը:

Սակայն կամքի դրսևորման իրազեկման չափանիշներն ինքնին հոգեբանական բնույթ են կրում, և եթե օրենսդիրը դրանց պատճառը չի նշում որպես ցավոտ հոգեվիճակ, ապա անընդունելի է դրանք կապել միայն այդպիսի վիճակի հետ:

Բացատրենք օրինակով. Քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է դատարանի կողմից ընդունակ քաղաքացու կողմից

կատարված գործարքն անվավեր ճանաչելու հնարավորությունը, բայց այնպիսի վիճակում, որը բացառում է նրա գործողությունների իմաստը հասկանալու կամ դրանք կառավարելու հնարավորությունը (Քաղաքացիական օրենսգրքի 177-րդ հոդված): Այստեղ իրավական նշանակություն ունի հոգեբանական չափանիշը, որը բաղկացած է գիտակցության դեֆորմացիայից և/կամ կամքի արտահայտումից: Նման դեֆորմացիայի պատճառները կարող են լինել ինչպես զուտ հոգեբանական (կրքի վիճակ), այնպես էլ հոգեբուժական (հոգեկան հիվանդություն, այլ հիվանդագին վիճակ): Քաղաքացիական օրենսգրքի 177-հոդվածը, գործարքի կնքման պահին պահանջվում է վարքի հոգեբանական վերլուծություն: Եթե դատարանը կասկածներ ունի գործող սուբյեկտի մտավոր օգտակարության վերաբերյալ, ապա անհրաժեշտություն կառաջանար համակողմանի հոգեբանական և հոգեբուժական վերլուծության: Մեկ հոգեբուժական հետազոտությունը բավարար չէ, քանի որ, բացի պաթոլոգիական փոփոխությունները բացահայտելուց, անհրաժեշտ է որոշել, թե ինչպես են դրանք ազդել վարքի հոգեբանական մեխանիզմի վրա, ինչը հոգեբանական վերլուծության ոլորտն է:

Այսպիսով, հոգեբուժական փորձաքննությունն իր «մաքուր ձևով» կիրառվում է միայն քաղաքացիական գործերով, երբ դրանց նկատմամբ կիրառվող նյութական իրավունքը պարունակում է հոգեբուժական չափանիշ՝ որոշակի իրավական հետևանքներ կապելով հոգեկան առողջության վիճակի հետ:

Մեր կարծիքով, հոգեբուժական փորձաքննություն կարող է կիրառվել անհատական և ընտանեկան այլ կատեգորիաների դեպքում, որոնց դեպքում դատարանը պետք է կիրառի գնահատման բնույթի նորմը: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ կան նման փորձաքննություն նշանակելու պատճառներ և ընդհանուր հիմքեր, ապացուցողական տեղեկատվություն: Օր.՝ երբ ընտանիքը պահպանելու անհնարինությունը պայմանավորված է ամուսիններից մեկի հոգեկան հիվանդությամբ [1]: Այս հանգամանքի հաստատումը, որը գնահատվում է այլ ապացույցների հետ միասին, կարող է ապացուցողական նշանակություն ունենալ պարզելու համար, թե արդյոք հոգեկան խանգարումը խոչընդոտում է ընտանեկան առողջ հարաբերությունների շարունակմանը, թե ոչ:

Այսպիսով, հոգեբանական փորձաքննությունը փորձաքննության անկախ տեսակ է, որը բաղկացած է հոգեբանական գիտելիքների կիրառումից՝ քրեական և քաղաքացիական գործով ապացուցման գործում ներառված հանգամանքները պարզելու համար:

Երեխայի լավագույն շահի խնդիրը ՀՀ-ում. 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում երեխայի իրավունքների պաշտպանության մասով ՀՀ Սահմանադրությունը կատարեց երեխայի իրավունքների

սահմանադրական ամրագրման միջազգային ժամանակակից միտումներին, ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային համահունչ կարևոր առաջընթաց քայլ: Մասնավորապես Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրվեցին երեխայի հիմնական իրավունքները: Հատկանշական է, որ 37-րդ հոդվածի կառուցվածքի ու բովանդակության համար ելակետ է հանդիսացել ԵՄ Հիմնական իրավունքների մասին խարտիայի 24-րդ հոդվածը, որն էլ իր հերթին հիմնականում հիմնվել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի (երեխայի լավագույն շահ), 9-րդ (ծնողների հետ կանոնավոր փոխհարաբերություններ ունենալու իրավունք), 12-րդ և 13-րդ հոդվածների վրա (կարծիքի ազատ արտահայտումը և այն հաշվի առնելը): Երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրումը նոր միտում է, որը ելնում է այն մոտեցումից, որ երեխան ոչ միայն պաշտպանության օբյեկտ է, այլև իրավունքների կրող և իրեն վերաբերող հարցերում որոշումներ կայացնելուն մասնակից: Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքում ընկած է երեխայի տարիքի հետ զարգացող ինքնուրույնությունը խթանելու իրավական գաղափարը և ամրագրված է իրեն վերաբերող հարցերում կարծիք արտահայտելու իրավունքը, իսկ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում տեղ գտած «երեխայի լավագույն շահի» սկզբունքը [2]: Այս սկզբունքը արտացոլված է նաև 37-րդ հոդվածի 3-րդ մասում որպես չափանիշ՝ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու երեխայի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելու համար: 37-րդ հոդվածի 4-րդ մասը սուբյեկտիվ իրավապահանջի հատուկ հիմք է նախատեսել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար: Այս հոդվածով նախատեսված իրավունքները նախ և առաջ պաշտպանիչ դեր ունեն: Բայց միևնույն ժամանակ դրանք, նկատի ունենալով այս իրավունքների վերացական բնույթը, բնականաբար որոշակի մեխանիզմների կարիք ունեն և դրանով պայմանավորված՝ առաջացնում են պետության պոզիտիվ պարտականություններ հատկապես օրենսդրական կարգավորման բնագավառում: Երեխայի իրավունքների հետ կապված հարցերում «երեխայի լավագույն շահը» սահմանադրական մակարդակով կարգավորված է միայն մի քանի երկրներում /Օրինակ՝ Ալբանիա, Իռլանդիա/:

«Երեխայի լավագույն շահ» հասկացությանը սահմանադրաիրավական կարգավիճակ հաղորդելը խոսում է այս սկզբունքի և դրա հիմքում ընկած իրավունքի օրենքներում ու պրակտիկայում կիրառելու նպատակի մասին: ՄԴ այս իրավական դիրքորոշումն ինքնին խոսում է այն մասին, որ Սահմանադրության 37-րդ հոդվածում «երեխայի

շահ» հասկացությունը պետք է մեկնաբանվի երեխայի լավագույն շահ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային համահունչ [2]:

Այս տեսանկյունից խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Երևանում խնամակալության և հոգաբարձության մարմինն վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները, իսկ նշված պաշտոնատար անձանց համար համապատասխան մասնագիտացում ունենալու օրենսդրական որևէ պահանջ չկա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնամակալության մարմինները և հանձնաժողովի անդամները հիմնականում չունեն համապատասխան մասնագիտացում ու փորձ, չեն տիրապետում ուղղորդման մեխանիզմներին, չունեն մեթոդական գրականություն, օրինակ՝ ուղեցույցներ, որոշելու համար երեխայի լավագույն շահերը տվյալ հանգամանքների ներքո, կամ ձևաթղթեր, հարցաթերթիկներ, որոնք անհրաժեշտ են խնամակալության հանձնաժողովի անդամի կողմից հետազոտություն կատարելիս: 2017 թվականի հունվարի 31-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաստատել է «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որը սահմանում է ուղեցույցներ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ կապված մի շարք գործողությունների իրականացման վերաբերյալ, օրինակ՝ նրանց հայտնաբերման, հաշվառման, տեղավորման, խնամակալության և հոգաբարձության, և այլ գործառույթների մասին: Այդուհանդերձ, ուղեցույցը թեև նշում է, որ երեխայի վերաբերյալ ցանկացած հարց քննելիս կամ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի լավագույն շահը, սակայն չի տրամադրում մեթոդական ցուցումներ, թե ինչպես որոշել այն: Թեև Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են ՀՀ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից, սակայն միննույն ժամանակ պետք է հաշվի առնել բազմաթիվ այլ գործոններ, որոնք ազդում են խնամակալության մարմինների աշխատանքի որակի վրա՝ դրանք որպես կանոն Մարդու իրավունքների պաշտպանի Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թվականի

արտահերթ հրապարակային զեկույցը: Հարկ է նաև նշել, որ թե օրենքի և թե Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված է, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը մասնագիտական-խորհրդատվական բնույթ ունեցող ապացույց է, սակայն դատարանները հիմնականում վեճը լուծում են հիմք ընդունելով նշված եզրակացությունը:

2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում, ամուսնալուծությունից հետո ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում (տվյալ դեպքում տարբեր պետություններում) Դատարանն իրավունք ուներ երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ [3]: Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը: Հատկանշական է, որ նշված գործով Վճռաբեկ դատարանը «երեխայի լավագույն շահերը» որոշելիս առանձնացրել է հետևյալ հանգամանքները՝

- ✓ ծնողների կողմից որոշված երեխայի բնակության վայրը,
- ✓ երեխայի տարիքը, կրթության վայրը,
- ✓ տվյալ երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապերը,
- ✓ երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները նրա հոգեկան, հոգևոր, բարոյական զարգացման վրա:

Իսկ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵՄԴ/0124/02/12 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը անդրադառնալով է այն հարցին, թե իրավաչափ է արդյո՞ք ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ քաղաքացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից երեխայի՝ ծնողներից մեկի հետ ունեցած կապվածությունը որպես երեխայի լավագույն շահերի բացահայտման միակ չափանիշ դիտարկելը [3]: Արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն

գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

- ✓ երեխայի կապերը ծնողների, քույրերի ու եղբայրների հետ,
- ✓ երեխայի տարիքը,
- ✓ ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,
- ✓ ծնողների և երեխայի միջև առկա հարաբերությունները,
- ✓ երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելը (ծնողների աշխատանքի բնույթը, գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի մյուս բոլոր պայմանները [2; 3]:

Ինչ վերաբերվում է երեխաներին վերաբերող դատական վարույթների լուսաբանմանը, նշենք, որ սովորաբար դատական գործընթացների լուսաբանման ընթացքում անձնական տեղեկատվությունը այլ կերպ է մեկնաբանվում, քան դա արվում է անձնական տվյալների պաշտպանության պետական օրենքով: Այս դեպքում անձնական տվյալ է համարվում ոչ թե ցանկացած տեղեկատվություն տվյալ անձի մասին, այլ այն, ինչը թույլ կտա նրան նույնականացնել, ճանաչելի դարձնել որոշակի մարդկանց շրջանում: Լրագրողը երեխայի խնդիրները լուսաբանելիս պետք է առաջնորդվի երեխայի լավագույն շահով, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքով: Երեխաների խնդիրները լուսաբանելիս լրատվամիջոցները հակված են կենտրոնանալու սենսացիաների վրա՝ արհամարհելով բոլոր այն խնդիրները, որոնց բախվում են երեխաները, և որոնց մասին խոսվում է երեխաների իրավունքների մասին Կոնվենցիայում:

Այսօր տարբեր կազմակերպություններ պարբերաբար հրապարակում են երեխաների հիմնախնդիրները ներկայացնող նյութեր, որոնք հիմնականում կենտրոնանում են ամենաձայրահեղ, ամենաճանր դեպքերի վրա: Դա հասկանալի է, և հաճախ օգնում է որոշակի խնդիր լուծելու համար հավաքագրել հասարակության ուժերը: Սակայն ՋԼՄ-ն, իրականացնելով հանրային իրազեկում, կարող է ավելի մեծ դեր խաղալ այս հարցում՝ հասարակությանը բացատրելով երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանության արդի խնդիրները և ներկայացնելով այդ ուղղությամբ արդեն իրականացված գործողությունների դրական արդյունքները: ՋԼՄ-ն էական դեր ունի հասարակության արժեհամակարգի ձևավորման հարցում, քանի որ դրա գործառույթներն անպայմանորեն ներառում են ոչ միայն

տեղեկատվություն փոխանցելու, այլև որոշակի գաղափարներ, նորմեր և վարվելակերպ ընդունելու և յուրացնելու գործընթաց: Հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ յուրովի են ընկալում իրենց ներկայացվող տեղեկությունները և հաճախ թեկուզև մեկնաբանությունների միջոցով արտահայտում են տարբեր կարծիքներ և մարդկանց անձնական խնդիրները վերածում քննարկումների: Նշվածի արդյունքում արդեն իսկ խոցելի անձինք ավելի են կաշկանդվում ինչն էլ հանգեցնում է հետագայում հասարակության մեջ իրենց կարևորությունը կորցրած լինելու համոզմունք ունենալուն: Նշված անձինք հետագայում ավելի վտանգավոր են դառնում հենց հասարակության համար:

Գրականություն

1. Եզեկյան Ա. և ուրիշներ. Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում: Ուսումնական ձեռնարկ: ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո: Եր.: 2014. – 299 էջ:
2. Երեխայի լավագույն շահերի վերաբերյալ ուղեցույց ձեռնարկ՝ ստեղծված ՀՀ փաստաբանների պալատի և ՅՈՒՆԻՄԵՖ-ի կողմից:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=71013>
4. Алексанян М.С. Назначение и производство экспертизы в Республике Армения. Журнал Известия Иркутской государственной экономической академии. № 5, 2011, с. 39 – 44.
5. Сафуанов Ф.С. История развития судебно-психологической экспертизы. //Психология и право. 2014. Том 4. № 3. С. 125–141.

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ДЕТЕЙ В РА

Меликбекян В.А. (Министерство юстиции РА, Служба обеспечения принудительного исполнения особый отдел исполнительных производств неимущественного характера, майор юстиции, Ереван, РА)

Vguyq-pet@harkadir.am

Аннотация: Статья посвящена современным проблемам и особенностям судебно-психологической экспертизы в Республике Армения. В статье выделены основные проблемы и цели судебно-психологической экспертизы, а также отмечены различия психологической и психиатрической экспертиз и специфика их назначения. Особое внимание уделено роли эксперта-психолога в судебном процессе и взаимодействии с другими участниками судебного разбирательства. В статье также подчеркивается актуальность судебно-

психологической экспертизы в современном обществе, где понимание психологических аспектов поведения личности важно в любой сфере деятельности. Также обсуждаются этические аспекты работы эксперта-психолога в контексте судебного процесса и защиты прав человека.

Статья адресована специалистам в области права, психологии и смежных дисциплин, а также всем, кто интересуется проблемами судебной психологии и ее ролью в судебном процессе.

Ключевые слова: судебно-психологическая экспертиза, эксперт, психиатрическая экспертиза, гражданское дело.

CURRENT ISSUES OF FORENSIC AND PSYCHOLOGICAL EXAMINATION OF CHILDREN IN THE REPUBLIC OF ARMENIA

Meliqbekyan V.A. (Ministry of justice of the RA Compulsory enforcement service special department of non-property enforcement proceedings, Major of Justice, Yerevan, RA)
Vguyq-pet@harkadir.am

Abstract: The article is devoted to modern problems and features of forensic psychological examination in the Republic of Armenia. The article highlights the main problems and goals of forensic psychological expertise, as well as the differences between psychological and psychiatric expertise and the specifics of their purpose. Special attention is paid to the role of the expert-psychologist in the trial and interaction with other participants in the trial. The article also emphasizes the relevance of forensic-psychological expertise in modern society, where understanding the psychological aspects of a person's behavior is important in any field of activity. Ethical aspects of the work of an expert-psychologist in the context of the judicial process and protection of human rights are also discussed.

The article is addressed to specialists in the field of law, psychology and related disciplines, as well as to everyone who is interested in the problems of forensic psychology and its role in the judicial process.

Keywords: forensic-psychological examination, expert, civil case, psychiatric examination.

*Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 06.02.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 17.02.2024*

**ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԴՍԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պետրոսյան Ռ.Հ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
petrosyanruzanna23@aspu.am

Խաչիկյան Գ.Ա. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
khachikyangayane23@aspu.am

Ամփոփագիր. Դատական փորձաքննություններում հոգեբանական փորձաքննությունները որպես առանձին, ինքնուրույն բնագավառ վերջին շրջանում մեծ կարևորություն է ստացել մեր երկրում: Քրեադատավարական պրակտիկայում մեծացել են հանցակազմի ուսումնասիրության և բացահայտման դժվարությունները՝ պայմանավորված հանցարարքներում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների, իրավապահ համակարգին հաճախ անհայտ մեթոդների ու միջոցների կիրառությամբ: Այս տեսանկյունից հոգեբանական փորձաքննություննության ոլորտի գիտելիքներն ու հմտությունները կարող են օգտակար լինել հանցակազմի ուսումնասիրության և բացահայտման գործում: Փորձագիտական հետազոտությունների արդյունքում ձեռք բերված տվյալները թույլ են տալիս առանձնացնել նոր մոտեցումներ ինչպես իրավապահ մարմինների մասնագիտական գործունեության հոգեբանական աջակցության, այնպես էլ հանցակազմի բացահայտման տեսանկյունից: Եթե իրավական տեսանկյունից կարևոր են փաստերը, իրեղեն ապացույցները, ապա հոգեբանական մոտեցման մեջ կարևորում ենք հանցանքը կատարողի անձը, մոտիվները, անձնային առանձնահատկությունները, հանցանքի կատարման պահին անձի հուզական վիճակը և այլն: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում հանցագործության քրեաիրավական առանձնահատկություններով պայմանավորված հանցակազմի հոգեբանական բնութագրերի բացահայտումը որպես հոգեբանական փորձաքննության նոր մեթոդաբանական մոտեցում: Հետազոտության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տարբեր հանցագործությունների հանցակազմին բնորոշ է իրավաբանական և հոգեբանական տարբերություններ և նմանություններ՝ հիմքում ունենալով կասկածյալի անձնային հատկությունները որպես հոգեբանական պրոֆիլի կազմման հիմք:

Հիմնաբառեր. հանցակազմ, հանցագործություն, դատահոգեբանական փորձաքննություն, պրոֆայլինգ, դրդապատճառ, հանցագործ, վարք:

Հասարակական կյանքում անընդհատ տեղի ունեցող փոփոխությունները կարծես մարտահրավեր լինի սոցիալական տարբեր ինստիտուտների նկատմամբ: Հանցավորության դեմ պայքարող տարբեր

կառույցներում ևս ենթադրվում են հանցարարքների կանխարգելման նոր մեթոդների ու տեխնիկաների մշակման անհրաժեշտություն: Հանցագործությունների ուսումնասիրության մեջ կարևոր բաղադրատարր է համարվում հանցակազմի երևույթը (լատ. Corpus delicti): Հանցակազմի մասին առաջին հիշատակումների հանդիպում ենք 16-րդ դարից, սակայն մինչ 19-րդ դարի վերջը (և որոշ երկրներում մինչ այժմ), հանցակազմը դիտարկում են որպես հանցագործության իրեղեն ապացույց, օրինակ՝ սպանության ժամանակ դեպքի վայրում դիակի առկայությունը, կողոպուտի համար տարածք մուտք գործելու մատնահետքերը և այլն: Աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերը չեն օգտագործում այս իրավաբանական հասկացությունը: Անգլո-ամերիկյան դատական պրակտիկայում օգտագործվում են «արարք» և «հանցագործություն» կատեգորիաները, որոնք նույնպես բաժանված են օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի: Հանցակազմը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում դիտարկվում է որպես քրեական պատասխանատվության հիմք, իսկ դրա բացակայությունը՝ անձին քրեական հետապնդումից ազատում: Քրեական օրենսգրքում հանրորեն վտանգավոր արարքի հատկանիշների համակցությունը մեկնաբանվում է որպես հանցակազմ [1]: Վերջինս իրենից ենթադրում է կատարված հանցագործության «կմախքը»՝ որպես հետաքննության ուղի [4, էջ 25]:

Իրավաբանական հոգեբանության մեջ հանցակազմը դիտարկվում է այլ տեսանկյունից: Եթե իրավական դաշտում կարևոր են փաստական տվյալները, իրեղեն ապացույցները, ապա հոգեբանական տեսանկյունից կարևորում ենք հանցանքը կատարողի անձը, մտիվները, անձնային առանձնահատկությունները, հանցանքի կատարման պահին հուզական ոլորտի առանձնահատկությունները և այլն: Այս տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել հանցագործության քրեաիրավական առանձնահատկություններով պայմանավորված հանցակազմի հոգեբանական բնութագրերի մեկնաբանումը որպես հոգեբանական փորձաքննության նոր մեթոդաբանություն:

Մեր կողմից առաջադրված հիմնախնդրի հետազոտության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տարբեր հանցագործությունների հանցակազմի բնորոշ են իրավաբանական և հոգեբանական տարբերություններ և նմանություններ՝ հիմքում ունենալով կասկածյալի անձնային առանձնահատկությունները որպես հոգեբանական պրոֆիլի կազմման հիմք:

Հանցակազմի ուսումնասիրության համար հետաքրքրական է հռոմեացի մտածողների մոտեցումը, ովքեր օգտագործում էին յոթ կետեր ներառող սխեմա՝ ՈՎ է կատարել հանցանքը, ինչպիսի հանցագործություն է, որտեղ է տեղի ունեցել, երբ, ինչի միջոցով, ինչ եղանակով, ում օգնությամբ

(«Quis, quid, ubi, quando, cur, quomodo, quibus auxiliis», «Ո՞վ, ինչ, որտեղ, երբ, ինչու, ինչպես, ինչ ձևերով») [11, էջ 153–154]:

Իտալացի հայտնի փաստաբան Պոսպեր Ֆարինացիուսն իր՝ «Variae quaestiones et communes opiniones» (1581) աշխատության մեջ առաջադրեց հետևյալ հասկացությունը՝ «Primum inquisitionis requisitum est probato corporis delicti» (դատական քննության առաջին պահանջը՝ հանցակազմի առկայությունը ստուգելն է): Հետագայում «corpus delicti» /հանցակազմ/ տերմինը ներդրվեց Եվրոպայում և օգտագործվեց մինչև 18-րդ դարի երկրորդ կեսը հանցագործությունների հետաքննության կամ որոնման գործընթացում: Նախ «corpus delicti» տերմինը նշանակում էր սպանվածի դիակ, որտեղ դիակի գնումը հանցագործության փաստի հաստատման կամ հերքման միջոցն էր: Հետագայում, այս հայեցակարգը սկսեց դիտվել ավելի լայն իմաստով և մատնանշեց հանցագործության արտաքին, իրեղեն հետքերի հավաքագրումը, այնուհետև՝ բոլոր տեսակի ապացույցները, որը վկայում էր հանցագործության կատարման մասին [2, էջ 67]:

Հանցակազմն, իրենում ամփոփելով հանցագործության արտաքին՝ օբյեկտիվ և ներքին՝ սուբյեկտիվ կողմը, ամբողջացնում է հանցագործության պատկերը: Օր. սպանության դեպքում մարմնական վնասվածքը էական փաստ է, իսկ հանգամանքը, թե դա արվել է դանակով, կացնով, փայտով գռիի գլխին, թե մարմնի այլ հատվածներին, սրանք հանցագործության երկրորդական հատկանիշներ են [9, էջ 90]:

Հանցակազմի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրական է իտալացի հոգեբույժ Չեզարե Լոմբրոզոյի կողմից առաջադրված «բնածին հանցագործ» գաղափարը: Լոմբրոզոն էր, որ առաջին անգամ հակասոցիալական վարքը և անձի կենսաբանական առանձնահատկությունները փորձեց դիտարկել միասնության մեջ: Իրականացրած լայնածավալ աշխատանքներում չափեց, արձանագրեց և համակարգեց բնատուր պատիժ կրող անձանց մարդաբանական բնութագրերը՝ անսովոր փոքր կամ մեծ հասակ, փոքր գլուխ և մեծ դեմք, նեղ և խոնարհ ճակատ, նոսր մազածածկույթ, խոշոր քթածակ, մեծ, դուրս ցցված ականջներ, բարձր այտոսկր, փարթամ հոնքեր և փոս ընկած աչքեր, խախտված ծնոտ, փոքր կզակ, երկար ձեռքեր, հաստ մատներ և այլն: Համաձայն հեղինակի անձի արտաքին որոշակի առանձնահատկություններով պայմանավորված կարելի է տարբերակել հանցավոր վարքի առանձնահատկությունները [6]:

Հոգեբանական փորձաքննության տեսանկյունից հանցակազմի բացահայտման համար կարևորում ենք հանցագործի անձին բնորոշ առանձնահատկությունների ուսումնասիրությունը, ինչը քրեագիտության մեջ բաժանվում են մի քանի ենթահամակարգերի.

✓ Կենսաֆիզիոլոգիական – անձի առողջական վիճակը, մարդաբանական չափանիշները (հասակը, քաշը), նյարդային համակարգի և այլ օրգանների բնածին հատկությունները և անոմալիաները:

✓ Սոցիալ-ժողովրդագրական - սեռը, տարիքը, կրթությունը, զբաղմունքը, ընտանեկան կարգավիճակը, աշխատանքը, բնակության վայրը և այլն:

✓ Հասարակական դեր - անձի սոցիալական գործառույթները՝ կապված հասարակության մեջ նրա դիրքի և որոշակի սոցիալական խմբերի անդամակցության հետ:

✓ Բարոյական և հոգեբանական - մտավոր հատկություններ, նպատակներ, արժեքային կողմնորոշում, օրենքի և բարոյական նորմերի նկատմամբ վերաբերմունք, կարիքների և դրանց բավարարման նախընտրելի ուղիներ [5]:

Հանցարարքի մասին նախնական տեղեկությունների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է անդրադառնալ նաև դատահոգեբուժական մոտեցմանը, որտեղ շեշտը դրվում է հանցագործությունների կատարման ընթացքում անձի հոգեախտաբանական նախադրյալների վրա: Հանցագործությունների քննության ընթացքում հոգեբուժական ոլորտի գիտելիքները կարող են զգալիորեն ընդլայնել հանցավոր իրադրության բացահայտումը՝ նպաստելով գործին ուղղված լրացուցիչ տեղեկությունների ստացմանը, հանցավոր մեխանիզմի բացահայտմանը [8]:

Հանցակազմի բացահայտման համար կարևոր է հաշվի առնել հանցավոր ցանկության ձևավորման գործընթացը: Դրանք են.

- ✓ որոշակի արարքի անհրաժեշտության զգացում.
- ✓ այն գործողության դրդման, այսինքն՝ դրդապատճառի վերածելը.
- ✓ նպատակ դնելը, որի ձեռքբերումը պետք է ուղղակիորեն բավարարի ընկալվող անհրաժեշտությունը կամ որպես դրա բավարարման միջոց ծառայի.

✓ նպատակին հասնելու ցանկությունը [8]:

Այս փուլերի շարքում հստակ երևում է հանցագործության սուբյեկտիվ նշանների միջև փոխհարաբերությունները՝ շարժառիթը ծնվում է կարիքից և ինչ-որ չափով նպաստում նպատակների ձևավորմանը, իսկ նպատակը շարժառիթի հետ միասին առաջացնում է ցանկալի արդյունքի հասնելու ցանկություն: Հանցավոր վարքի շարժառիթը միայն դրանից հետո դառնում է հանցագործության դրդապատճառ, ընդգրկելով հանցարարքի էական հատկությունները: Այստեղ ամբողջական պատկեր կազմելու համար անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել հանցարարքների հիմքում ընկած դրդապատճառները, դրանց առանձնացնելով հետևյալ տեսակների՝

1. Ինքնահաստատվող տիպ – նրանք այն անձինք են, որոնց համար հանցանք կատարելը սոցիալ-հոգեբանական հարաբերություններում հանգեցնում է ինքնահաստատման: Շատ կարևոր փաստ է նաև, որ այս տիպի մարդկանց մոտ ինքնավստահությունն էլ ավելի բարձր մակարդակի է, երբ նրանք օրինակ՝ առևանգում են որևէ մեկին: Այս երևույթը հասկապես դրսևորվում է երիտասարդների մոտ, ովքեր ձգտում են ոչ ֆորմալ խմբերում հեղինակության:

2. Չհարմարվող կամ աղապատացիայի ցածր մակարդակ ունեցող մարդիկ – այս մարդիկ ունեն սոցիալական հարմարվողականության խնդիրներ: Նրանք վարում են հակասոցիալական վարքագիծ, չունեն առողջ փոխհարաբերություններ, նրանցից շատերը թափառաշրջիկներ են, հարբեցողներ: Հանցագործության միջոցով ձեռք բերված գույքն ու գումարն օգտագործում են սեփական գոյության համար: Նրանցից շատերը նախկինում դատապարտված են եղել, չունեն մշտական բնակության վայր, սովորաբար չեն աշխատում, չունեն ընտանիք, հարազատների, ընկերների հետ կապեր: Նրանք, կարծես անտարբեր են իրենց ճակատագրի նկատմամբ, չեն մտածում ապագայի մասին: Դեզադապտիվ վարքի հիմքում ընկած է անորոշությունը:

3. Հարբեցողներ - այս տեսակին տարբերակման չափանիշը շահադիտական հանցագործությունների կատարումն է՝ հանուն ավլոհոլային խմիչք գնելու, ձեռք բերելու: Այս տիպին բնորոշ է անձի մոտիվացիոն ոլորտի փոփոխությունները, ավլոհոլի ձգտումը դառնում է նրանց վարքի նշանակալի դրդապատճառը: Քանի որ ավլոհոլից կախվածությունը մեծանում է, այս դրդապատճառն ավելի ու ավելի գերիշխող տեղ է գրավում անձի կառուցվածքում:

4. Շահադիտական հանցագործներ – այս տեսակը հաճախ հանդիպում ենք կաշառքի և պետական միջոցների շահագործման գործերով, նպատակ ունենալով ապահովելու և բարելավելու ընտանեկան կարիքները: Օրինակ՝ կանայք կարող են կատարել մանր գողություններ՝ երեխաների սոված լինելու դրդապատճառով, կամ նույն սկզբունքով մարմնավաճառությամբ զբաղվել [8, էջ 10-12]:

Դատահոգեբանական փորձաքննություններում հանցակազմի ուսումնասիրությունը թույլ է տալիս պրոֆիլավորելու մի շարք հանցարարքներ (սպանություններ, բռնաբարություններ, ահաբեկչական հարձակումներ, ընտանեկան բռնություններ և այլն) կատարած ամբաստանյալների: Ենթադրյալ հանցագործի պրոֆիլը կազմելու համար պրոֆայլորը կարող է օգտագործել տեղեկատվության այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են.

✓ հանցագործության վերակառուցում – մեղադրյալի և զոհի գործողությունները վերականգնելը նախքան արարքի կատարումը, դրա

ընթացքում և դրանից հետո: Վերակառուցումն իրականացվում է վկաների և տուժողների ցուցմունքների, հանցագործի խոստովանության, հայտնաբերված ապացույցների և փաստական սովալների, տեսագրությունների արդյունքների հիման վրա:

✓ վնասների վերլուծություն – բնութագրում է հանցագործին, տեղեկություններ է տալիս տուժողի հետ հարաբերությունների և դրդապատճառների մասին [2]:

Այս դեպքում փորձագիտական ուսումնասիրությունը կարող է հնարավորություն տալ նկարագրելու տուժողի պրոֆիլը՝ մանրամասնելով անձի առանձնահատկությունները, գոհի վարքի առանձնահատկությունները, անձի շեշտվածությունը, հանցարարքի դրդապատճառները, հանցանքի «ձեռագիրը» և այլն:

Ք. Հարթմանը, Ջ. Դուզլասը առաջադրում են պրոֆիլային աշխատանքի ալգորիթմ, որը ներառում է հինգ քայլ.

1. Կատարված արարքի մասին տեղեկատվության հավաքում՝ ապացույցներ, դեպքի վայրի լուսանկար, բժշկական եզրակացություն, ցուցմունքներ, հաղորդում:

2. Հանցագործության տեսակը և հանգամանքները, հանցագործի դրդապատճառները, տուժողի ռիսկերի որոշումը:

3. Անօրինական գործողություն կատարելու մեթոդի, դատական հետապնդման ռազմավարության, մեղադրյալի անձի դրդապատճառների, վնասվածքների առանձնահատկությունների, սպանության մեթոդի ուսումնասիրություն:

4. Հանցագործի պրոֆիլի ձևավորում, ներառյալ տեղեկատվություն՝ սեռի, տարիքի, ազգության, ընտանեկան դրության, սոցիալական կարգավիճակի, անձնային առանձնահատկությունների, արժեքների և հանոզմունքների համակարգի, քրեական գործով անցնող նյութերի վերաբերյալ:

5. Մեղադրյալի պատրաստի պրոֆիլը փոխանցելը քննչական մարմիններին՝ հանցագործին խուզարկելու և պահելու համար [10]:

Հանցակազմի բացահայտման գործում կարևորում ենք հաշվի առնել հանցագործի «ձեռագրաբանության» մի քանի տիպաբանական կողմեր, որոնք հանցարարքների պատճառականության հիմքն են: Դրանք են.

✓ Անձի ամենակարևոր առավելությունների անտեսումը. կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը և այլն, որոնց անտեսումը անձին դրդում է դիտավորյալ բռնի հանցագործությունների՝ սպանություն, մարմնական վնաս, բռնություն, բռնաբարություն, խուլիդանություն և այլն:

✓ Էգոիստական մղումներ մասնավոր սեփականության նկատմամբ, ինչն արտահայտվում է այլոց ունեցվածքի սեփականության անտեսմամբ, քաղաքացիների սեփականության և անձնական ունեցվածքի նկատմամբ

նունձգությամբ: Սա բնորոշ է գողություն, խարդախություն, կաշառք, շահարկումներ և այլ շահաղիտական հանցագործություններ կատարողներին:

✓ Սուբյեկտիվ վերաբերմունք տարբեր սոցիալական նորմերի և կանոնակարգերի նկատմամբ, քաղաքացիական, ծառայողական, ընտանեկան և այլ պարտականությունների հանդեպ: Նման հակասոցիալական հատկությունների արդյունքում անձը միտված է մի շարք սոստեսական ու ռազմական հանցագործությունների կատարմանը:

✓ Թեթևամիտ և անպատասխանատու վարքագիծ սոցիալական արժեքների և դրանից բխող պարտականությունների նկատմամբ, որն իր դրսևորումն է գտնում տարատեսակ հանցագործությունների մեջ [8, էջ 14-15]:

Այսպիսով, ամփոփելով աշխատանքի հիմնական խնդիրները, կարող ենք ասել, որ հանցագործության հիմքում գոյություն ունեցող հակասոցիալական շարժառիթների առկայության դեպքում ձևավորվում է հանցագործության նպատակը, համապատասխանաբար, կանխամտածված ձևով կատարված հանցագործություններում միշտ առկա են լինում սուբյեկտիվ կողմի կամայական մոտեցումները: Քրեադատավարական պրակտիկայում հանցակազմի որոշ տարրեր հոգեբանական տեսանկյունից հաճախ կարելի է դիտարկել որպես քրեական գործի փորձաքննության օբյեկտիվ հիմք: Նշենք նաև, որ քրեական գործում հանցակազմի բացակայությունը չի կարող բացառել հոգեբանական փորձաքննություններում և դրա միջոցով հանցավոր արարքի նպատակի, դրդապատճառների, վարքի և գործողության, մեղքի և մեղավորության սուբյեկտիվ զգացողության ուսումնասիրության և բացահայտման հնարավորությունները:

Գրականություն

1. ՀՀ քրեական օրենսգիրք: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015>
2. Афиногенов А.И. Психологический портрет преступника, его разработка в процессе расследования преступления. Дисс. канд. психол. наук. – М.: 1997.
3. Анфиногенов А.И. Психологическое портретирование неустановленного преступника. М.; МВД: 2002. – 133 с.
4. Еникеев М.И. Основы общей и юридической психологии. – М.: 1996. – 321 с.
5. Криминология: Общая часть: учебник /под общей редакцией Ф.К. Зиннурова. – Казань: КЮИ МВД России, 2019. – 358 с.

6. Ломброзо Ч. Преступление. Новейшие успехи науки о преступнике. Анархисты /Ломброзо Ч.; Сост. и предисл.: Овчинский В.С. – М.: Инфра-М, 2004. – 320 с.
7. Образцов В.А., Богомолова С.Н. Криминалистическая психология: Учеб. пособие для вузов. – М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2002. – 447 с.
8. Психология преступника и расследования преступлений /Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. - М.: Юристъ, 1996. – 336 с.
9. Пионтковский А.А. Преступление //Курс советского уголовного права: в 6 Т. /А.А. Пионтковский, П.С. Ромашкин, В.М. Чхиквадзе. Иркутск, 1970. Т. 2.
10. Столяренко А.М. Прикладная юридическая психология. М.: 2001. – 473 с.
11. Черкасова Е.С. Профайлинг как метод создания психологического портрета потенциального преступника на этапе организации предварительного расследования. Вестник НГУ, серия: Право, 2013, т. 9, выпуск 1.

ВАЖНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ ПРЕСТУПНОГО ПОВЕДЕНИЯ В СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОМ ЭКСПЕРТИЗЕ

Петросян Р.А. (к.пс.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

petrosyanruzanna23@aspu.am

Хачикян Г.А. (к.пс.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

khachikyangayane23@aspu.am

Аннотация: В нашей стране в последнее время важным компонентом судебной экспертизы стала психологическая экспертиза. Благодаря развитию современных технологий преступники используют методы и средства, неизвестные правоохранительным органам, что создает проблемы в расследовании и выявлении преступлений. Следовательно, знания в области психологии становятся все более ценными в уголовном процессе, помогая в тщательном расследовании и выявлении незаконной деятельности. Данные экспертных исследований позволяют выявить новые подходы как в психологическом сопровождении специалистов правоохранительных органов, так и в раскрытии преступлений. Хотя факты и вещественные доказательства остаются решающими с юридической точки зрения, психологический подход подчеркивает личность человека, мотивы, личные качества и эмоциональное состояние на момент совершения преступления. Следовательно, становится обязательным тщательное изучение уголовно-правовых признаков преступления, особенно в отношении выявления психологических особенностей, присущих преступному поведению. преступная группа, как

новый методологический подход. Исследование основано на предпосылке, что различные преступления имеют как юридические, так и психологические различия и параллели.

Ключевые слова: преступление, уголовное право, судебная психология, профилирование, мотив, преступник, поведение.

THE IMPORTANCE OF EXAMINING CRIMINAL BEHAVIOR WITHIN FORENSIC PSYCHOLOGICAL CONTEXTS

Petrosyan R.H. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan
ASPU, Yerevan, RA)

petrosyanruzanna23@aspu.am

Khachikyan G.A. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan
ASPU, Yerevan, RA)

khachikyangayne23@aspu.am

Abstract: In our country, psychological examinations have recently emerged as a significant component in judicial assessments. With advancements in modern technologies, criminals employ methods and means unfamiliar to law enforcement, presenting challenges in investigating and identifying crimes. Consequently, expertise in psychology has become increasingly valuable in criminal procedure, aiding in the thorough examination and detection of unlawful activities. The data obtained from expert research enable the identification of novel approaches in both psychological support for law enforcement professionals and criminal detection. While facts and material evidence remain crucial from a legal standpoint, the psychological approach underscores the individual's personality, motives, personal traits, and emotional state at the time of the crime. This perspective delves deeper into understanding the human aspect behind criminal behavior, offering valuable insights for effective intervention and investigation strategies. Hence, it becomes imperative to scrutinize the criminal-legal attributes of the offense, particularly concerning the discernment of the psychological traits inherent in the criminal group, as a novel methodological approach. The study operates under the premise that different crimes exhibit both legal and psychological distinctions and parallels.

Keywords: crime, criminal law, forensic psychology, profiling, motive, perpetrator, behavior.

*Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 23.01.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 10.02.2024*

**ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՀԱՆՐԻՊՈՂ
ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ԴԵՊՔԵՐԻ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՂՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սարգսյան Լ. Կ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
sargsyanlevon23@aspu.am

Ստեփանյան Ա.Ս. (Հայաստանի Հանրապետության Ազգային
անվտանգության ծառայություն, Երևան, ՀՀ)
arthur-stepanyan89@mail.ru

Ամփոփագիր. Հոդվածում ներկայացվում է քրեադատավարական պրակտիկայում հանդիպող դաժանությամբ իրականացված դեպքերի դատահոգեբանական փորձաքննության յուրահատկությունները, սույն գործով փորձաքննության մասնագիտական-հոգեբանական խնդիրները: Ինչպես գիտենք քրեադատավարական պրակտիկայում առանձնակի նշանակություն է տրվում դաժանության երևույթին (տանջանք, խոշտանգումներ, ահաբեկում, սադիզմ, բռնություն) դրանով իսկ տարբերակում հանցարարքի հետևանքով մարդու առողջությանը պատճառված վնասը, ֆիզիկական և հոգեկան տառապանքը, կյանքի և առողջության դեմ ուղղված ոտնձգությունները: Քրեաբանական ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնելու հանցարարքներում դաժանությանը նպաստող անձնային հետևյալ գծերն ու հատկանիշները՝ հուզական կամ ինտելեկտուալ վերաբերման անկարողություն, էզոցենտրիզմ, ինտելեկտուալ թուլություն, ներշնչվողականություն, մանիակալ աֆեկտիվ խանգարումներ, դեպրեսիա, մասնագիտական դեֆորմացիաներ և այլն: Առանձին անդրադարձ է արվում ագրեսիայի հիմնախնդրին, դրա դրսևորումներին, ինչն առավելապես պայմանավորում է հանցարարքներում դաժանության դրսևորումները: Հոդվածում առավելապես քննարկվում են անձի կյանքի, առողջության դեմ ուղղված հանցարարքները, որտեղ բացի կանխամտածված, պլանավորված հանցագործությունները, առանձնակի նշանակություն են ստանում իրադրային դեպքերը՝ առանձնանալով հանցարարքի բարդության և ծանրության հատկանիշներով: Բացի քրեադատավարական պրակտիկայից, դաժանությամբ իրականացված դեպքերն առանձնակի նշանակություն են ստանում դատահոգեբանական փորձաքննություններում ևս, փորձաքննությամբ դրանց հոգեբանական վերլուծության, մեկնաբանման, հիմնավորման տեսանկյունից:

Հիմնաբառեր. Հանցագործություն, դաժանություն, խոշտանգում, բռնություն, դատահոգեբանական փորձաքննություն, ագրեսիա, սպանություն:

Քրեադատավարական պրակտիկայում առանձնակի նշանակություն է տրվում դաժանության երևույթին (տանջանք, խոշտանգումներ, ահաբեկում, սադիզմ, բռնություն) դրանով իսկ տարբերակվում հանցարարքի հետևանքով մարդու առողջությանը պատճառված վնասը, ֆիզիկական և հոգեկան տառապանքը, կյանքի և առողջության դեմ ուղղված ոտնձգությունները: Հանցարարքի ժամանակ դրսևորվող դաժանության հիմքը ագրեսիայի դրսևորումն է, որի վերաբերյալ գիտական մեկնաբանություններում հանդիպում ենք երկու մոտեցման [10]:

Առաջին՝ էթիկական-մարդասիրական մոտեցում, որի ժամանակ ագրեսիան որպես վարքային չարիք՝ հակասում է մարդու էությանը (մարդուն ուսումնասիրող գիտությունների մեջ այս մոտեցումը ներկայացված է հումանիստական և էկզիստենցիալ հոգեբանության, փիլիսոփայության մեջ):

Երկրորդ՝ ագրեսիայի վերաբերյալ էվոյուցիոն-գենետիկական մոտեցումը, որի ժամանակ ագրեսիան ոչ մի դեպքում չի դիտարկվում որպես չարիք, այլ մեկնաբանվում է որպես բնագո, որն այլ բնագոյների հետ միասին նպաստում է տեսակի գոյության պահպանմանը [6]: Այս մոտեցման շրջանակներում ագրեսիայի ֆենոմենն անձի գոյատևման և հարմարման պայման է համարվում: Ագրեսիան դիտարկվում է որպես էվոյուցիայի ընթացքում ձևավորված և ամրապնդված նպատակահարմար վարքային դրսևորում, բնագո: Որոշ հեղինակներ (Ջ. Ֆրոյդ, Կ. Լորենց) այն կարծիքի են, որ ագրեսիան բնագոյային հակում է, ուրիշները (Ա. Բանդուրա, Մ. Կուլդրյավցև, Ա. Ռեան)՝ որպես սոցիալական փորձի արդյունք: Որպես գոյության պայքարի բնագո, ագրեսիան ոչ թե մահվան, այլ կյանքի և տեսակի պահպանման բնագո է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրինակ՝ ընտանիքում երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը հանգեցնում է ոչ միայն տարեկիցների նկատմամբ ագրեսիվ վարքի դրսևորմանը (Ռ. Բերջերս), այլ հասուն տարիքում ագրեսիան կարող է դառնալ որպես կենսառձ (Ռ. Հիթչոք) [9]:

Ի վերջո, ագրեսիայի էությունն ու աղբյուրները հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, առաջին հերթին այն ուղին, որով յուրացվել է վարքի ագրեսիվ ընդօրինակումը, երկրորդ հերթին՝ գործոնները, որոնք հրահրել են դրա ի հայտ գալուն և երրորդը՝ տվյալ վարքի ընդօրինակման ամրապնդմանը, խորացմանը նպաստող պայմանները: Ագրեսիվ հակազդումները յուրացվում և պահպանվում են նմանատիպ իրավիճակների դրսևորման անմիջական մասնակցությամբ: Նշենք նաև, որ ագրեսիան կարող է ընդունել ոչ միայն հակաիրավական, այլև սոցիալապես ընդունելի և հավանության արժանի բնույթ: Խոսքը վերաբերվում է քրեական գործերում հանդիպող այն դեպքերին, որտեղ ագրեսիան մեկնաբանվում է հանցավոր իրադրությունում որպես ինքնապաշտպանության դրսևորում:

Օրինակ՝ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցարարքների ժամանակ ինքնապաշտպանության նպատակով տուժողի հակազդումը, պաշտպանությունը կամ ագրեսիվ հակազդումը (դիմադրել, պաշտպանվել, հարվածել, վնասել և այլն): Հավելենք, որ բերված օրինակում խոսքը չի վերաբերվում պաշտպանության սահմանազանցմանը (դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը) [2]:

Դաժանություն, բռնություն, ագրեսիա հասկացությունները հոգեբանության, քրեագիտության մեջ հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Իրավաբանական հոգեբանության մեջ դաժանություն հասկացությունն օգտագործվում է որպես՝

✓ հանցագործության իրագործման առավել կոպիտ մեթոդների բնութագրում.

✓ հանցագործի բնավորության որոշակի հատկությունների բնութագրում.

✓ հանցագործության օբեկտիվ և սուբեկտիվ գործոնների բնութագրում:

Այս պրոբլեմի մասնագիտական որակմանը դատահոգեբանական փորձաքննություններում հիմնականում հանդիպում ենք անձի կյանքի, առողջության դեմ ուղղված հանցարարքների, սպանության, ֆիզիկական և սեռական բռնությունների գործերով, որոնք քրեական դատավարության օրենսգրքում սահմանվում են որպես ծանր, առանձնակի ծանր հանցարարքներ: Ինչպես նաև տարբերում են կանխամտածված և չկանխամտածված դաժանության տիպերը, որոնք կարող են դրսևորվել անձի որոշակի գործողություններում, վարքում: Որպես վարքային դեստրուկցիայի արդյունք դաժանությունը կարող է լինել գիտակցված և չգիտակցված: Առանձնացնում են դաժանության դրսևորման հետևյալ տեսակները.

✓ կանխամտածված

✓ իմպուլսիվ

✓ գիտակցված կամ չգիտակցված

✓ օրինական կամ անօրինական [4]:

Որպես հանցարարքի հիմք, ագրեսիան և դրա արդյունքում արարքի բնույթը քրեադատավարական վարույթներում առանձնակի ուշադրության է արժանանում: Այսպես Գերմանիայի դատական համակարգում քրեական օրենսգրքով սահմանված են սպանությունը ծանրացնող արարքի հետևյալ հանգամանքները՝

1) սադիստական (բռնարարքային) մղումներով,

2) սեռական հակումը բավարարելու մղումը,

3) շահադիտական կամ բացասական դրդումներով,

4) արյունարբու, դաժան կամ հանրավտանգ միջոցներով,

5) այլ հանցանքի կատարումը հեշտացնելու կամ թաքցնելու նպատակով [1]:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալում, քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումներում մեծ նշանակություն է տրվում հանցարարքներում անձի վարքի դաժանությանը և դրա հետևանքներին: Ուստի, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ դաժանությամբ կատարված հանցարարքներում դրսևորվող անձնային գծերին ու հատկանիշներին:

Քրեադատավարական պրակտիկայում նշանակված դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում տեսնում ենք, որ դաժանության դրսևորումներին նպաստում են անձնային այնպիսի գծեր ու հատկանիշներ, ինչպիսին են՝ իրողության հուզական կամ ինտելեկտուալ վերապրման անկարողությունը, նյարդահոգեկան անկայունությունը, եսակենտրոնությունը, զարգացման հապաղումները կամ իմացական ոլորտի թուլամտությունը, բարձր ներշնչվողությունը, մասնագիտական ձևախեղումները, անձի գերակտիվ խանգարումները, մանիակալ դեպրեսիան, աֆեկտը, նրոտիկ խանգարումները, վարքի դեպրեսիվ խանգարումը, վարքի և հույզերի խառը խանգարումները և այլն:

Հաճախ, հատուկ դաժանությամբ ուղղեկցվում են այն հանցարարքները, որոնց դեպքում հանցագործը գոհին գերագնահատում է և ոչնչացնելով նրան՝ հաղթահարում ներքին ցասումը: Ինչ վերաբերվում է սադիստական (բռնարարքային) դաժանությանը, քրեական դեպքերում տեսնում ենք, որ վերջիններս հիմնականում հանդիպում են սեռական խանգարումներով ընթացող հանցարարքների ժամանակ, որոնց բնորոշ են մտավոր հետամնացության հատկանիշները, իսկ գոհի կարգավիճակում հայտնվում են երեխաները, կանայք, ծերերը, ֆիզիկական կամ մտավոր հետամնացության խնդիրներ ունեցող անձինք:

Բացի ֆիզիկական բռնության հետևանքներից, ինչպես Է. Ֆրոմմն է առանձնացնում, կարևորվում է հոգեբանական սադիզմը, որն առաջանում է դիմացինին ստորացնելու անձի պահանջմունքից [11]:

Դատական հոգեախտաբանության ներկայացուցիչներից՝ Լ. Բալաբանովան [4] դաժանությունը չի դիտարկում որպես հոգեբանական խանգարում, վերոնշյալը հիմնավորում այն փաստերով, որ դաժանություն կատարած հանցագործների մեծ մասը հոգեպես առողջ մարդիկ են: Հեղինակն առանձնացնում է վարքի որոշակի դրսևորումներ, որոնք նպաստում են ծանր, առանձնակի դաժանությամբ հանցարարքների կատարմանը: Դրանք են.

- ✓ անբարենպաստ պայմաններն ու իրադրությունն ընդհանրապես.
- ✓ վաղ հասակում վարքի հակասոցիալական ձևերի յուրացումը.

✓ վաղ տարիքում դաժանության նկատմամբ արգելքի բացակայությունը [4]:

Եթե ագրեսիան իրականում ունենար խորը և բացարձակ հիմքեր բնագոյային մակարդակում, ապա այն մարդու օնտոգենեզի բոլոր փուլերում պետք է հավասարաչափ արտահայտված լիներ: Փորձը ցույց է տալիս, որ տարիքի հետ զուգընթաց ագրեսիվության դրսևորումները նահանջում կամ առավել քիչ են արտահայտվում: Մարդու օնտոգենետիկական զարգացման ընդհանուր միտումը կայանում է նաև ագրեսիվության գերակայության նվազման, ինչպես նաև մրցակցային փոխազդեցության մոտիվացիայի թուլացման մեջ: Կարելի է ասել, որ այդ միտումը Էվոյուցիայի արդյունքում ամրապնդվել է: Ուշադրություն դարձնելով վերոնշյալին, պիտի հետևություն անենք, որ մարդկության պատմության ընթացքում ագրեսիայի և համապատասխանաբար դաժանության դրսևորումները պետք է նահանջեին հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, սակայն հանցարարքների վիճակագրական տվյալները մեզ հակառակն են ասում. դաժանությամբ կատարված հանցարարքների թվաքանակը տարեցտարի միտում ունի աճման [7]:

Հանցարարքներում դաժանության դրսևորման հարցի շուրջ կարևորում ենք անդրադառնալ հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Է. Ֆրոմմի մոտեցմանը, ով ագրեսիան բացատրում է մարդու վարքի, գործողությունների այն դրսևորումներում, որոնք վնաս են հասցնում կամ մտադիր են վնաս հասցնել այլ մարդու, մարդկանց խմբի [11]:

Ագրեսիվությունը որպես անձի հատկություն, արտահայտվում է ուրիշին վնաս պատճառող վարքի ագրեսիվ գործողությունների մշտական պատրաստակամությամբ (հակվածությամբ): Ագրեսիվության հիմքում ընկած է այս կամ այն կոնֆլիկտը՝ գիտակցված կամ չգիտակցված, կարճատև կամ երկարատև [8]: Լ. Բերկովիցը համարում է, որ թշնամական ագրեսիայի հիմնական մեխանիզմն ավելի շուտ ավերսիվ խթանումն է, քան ֆրուստրացիան: Ցանկացած ավերսիվ իրադարձություն, լինի դա չիրականացված երազանք, անձնական վարկաբեկում կամ ֆիզիկական ցավ, կարող է հանգցնել հուզական պայթյունի [5]: Խոսքը վերաբերվում է հատկապես առանձնակի դաժանությամբ դեպքերում դրսևորվող հոգեկան խիստ հուզմունքի վիճակին՝ աֆեկտի դրսևորմանը:

Ագրեսիվությունն ըստ Յու. Անտոնյանի և Վ. Գուլդանի՝ անձի հակազդումն է պահանջումների և կոնֆլիկտի ֆրուստրացիային, վարքի թշնամական անհատական հակումն ուղղված այլ մարդու կամ մարդկանց ամբողջությամբ կամ մասնակի ենթարկելու, նրանց գործողությունները սահամանափակելու, կառավարելու, վնասելու կամ տառապանք պատճառելու համար [3]: Ագրեսիայի ցածր արտահայտվածություն ունեցող անձի վարքի ագրեսիվ գործողությունների պատճառականության հիմքում

ընկած է իրադրային գործոնը, իսկ ագրեսիվ անձի վարքի ագրեսիվ գործողությունների հիմքում անհրաժեշտ է դիտարկել անձնային առանձնահատկությունները:

Ամփոփելով, նշենք, որ դատահոգեբանական փորձաքննություններում հանցագործությունների իրավական և վիճակագրական տվյալները հնարավորություն չեն տալիս ամբողջական հասկանալու դաժանությամբ կատարված հանցարարքների քրեահոգեախտաբանական պատճառականությունը՝ բռնի հանցագործությունների ձևերն ու իրադրային գործոնները: Այդպիսի հանցագործությունների սուբյեկտիվ պատճառների, մոտիվացիայի, այդ թվում նաև հոգեկան ախտաբանական խնդիրներով անձանց կողմից իրականացրած հանցագործությունների վերաբերյալ քիչ են հետազոտությունները: Ագրեսիվ հանցավոր վարքը հասկանալու համար, ագրեսիայով ընթացող հանցարարքը պետք է դիտարկենք անձի կառուցվածքում: Որպես անձնային գիծ, ագրեսիվությունը կարող է սեղմ կապ ունենալ դաժանության հետ, բայց չհամընկնել դրա հետ: Եթե մարդու կողմից դրսևորվող դաժանությունը միշտ դատապարտելի է, ապա ագրեսիվությունը կարող է նաև սոցիալապես «ընդունելի» ձև համարվել, օրինակ՝ սպորտում: Ագրեսիվությունը որպես հոգեբանական երևույթ բարոյական տեսանկյունից չեզոք է այն իմաստով, որ կարող է հանգեցնել ինչպես սոցիալապես ընդունելի, այնպես էլ հակաիրավական վարքի: Ագրեսիա դրսևորող մարդը կարող է և դաժան չլինել, եթե չկա անձնական շահագրգռվածություն դիմացինին տառապանք ու ցավ հասցնելու համար: Սակայն պետք է նշենք, որ, դաժանությամբ կատարված հանցարարքների դեպքում մեղադրյալի անձին միշտ բնութագրական է ագրեսիան, դրա տարբեր դրսևորումները:

Այսպիսով, դաժանության դեպքերի փորձաքննությունների արդյունքում կարող ենք առանձնացնել դրա հետևյալ դրսևորումներն ու գործոնները՝

- ✓ ֆիզիկական ագրեսիայի դրսևորում՝ բռնություն, սպանություն, խոշտանգում,
- ✓ խոսքային ագրեսիայի դրսևորումները՝ վեճ, բղավոց, սպառնալիք, հայհոյանք,
- ✓ անուղղակի ագրեսիայի դրսևորում՝ կապված հանցավոր իրադրությունով,
- ✓ հոգեկան խիստ հուզմունքի վիճակը, աֆեկտը, հուզական գրգռումը,
- ✓ վիրավորանքի հետևանքով առաջացած վարքի բացասական հակազդումը,
- ✓ կասկածամտությունը, զգուշավորության դրսևորումը և վտանգի սպասումը,

✓ հոգեկանի սահմանային վիճակները, հետտրավմատիկ սթրեսային խանգարումները:

Ագրեսիվ և ոչ ագրեսիվ բնորոշումով անձանց միջև առավել արտահայտված տարբերությունը պայմանավորված է ոչ թե ագրեսիվ վարքաձևեր նախընտրելու, այլ կառուցողական լուծումներին չտիրապետելու մեջ: Անձի վարքի ագրեսիվ դրսևորումներն արտահայտվում է բարձր տագնապայամբ, կոնֆլիկտայնությամբ, անվստահությամբ, արտաքին միջավայրից սպառնալիքի անընդհատ սպասումներով: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս փորձառությունը, բարձրացնելով անձնային պատասխանատվության մակարդակը, կարող ենք իջեցնել ագրեսիվության դրսևորումը նույնիսկ ագրեսիայի խմբակային ձևերում:

Գրականություն

1. ՀՀ Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: ԵՄ, 2022. – 497 էջ:
2. Ոսկերչյան Ա.Ս. Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան: Քրեական իրավունք, քրեադատավարական իրավունք, Երևան, «ԵԳԵԱ», 2004 — 184 էջ:
3. Антонян Ю.М. Теория человеческой агрессии: почему жестоки люди: монография. – Москва: ЮНИТИ-ДАНА, 2017. – 312 с.
4. Балабанова Л.М. Судебная патопсихология (вопросы определения нормы и отклонений). – Д.: Сталкер, 1998. – 432 с.
5. Берковиц Л. Агрессия: причины, последствия и контроль: учебник /Л. Берковиц. – Санкт-Петербург: Прайм-Еврознак; Москва: Нева: Олма-Пресс, 2002. – 512 с.
6. Лоренц К. Агрессия (так называемое "зло"): Пер. с нем. М.: Издательская группа "Прогресс", "Универс", 1994. – 272 с.
7. Лунеев В. В. Юридическая статистика. – Москва: - Юристь, 1999. – 400 с.
8. Мельникова М.Л. Граница тела и агрессивность: монография /М.Л. Мельникова. – Ижевск: Удмуртский университет, 2003. – 126 с.
9. Налчаджян А.А. Агрессивность человека. Монография. СПб.: Питер, 2007. – 736 с.
10. Реан А.А. Психология личности. – СПб.: Питер, 2013. – 288 с.
11. Фромм Э. Анатомия человеческой деструктивности: Перевод /Авт. вступ. ст. П.С. Гуревич. – М.: Республика, 1994. – 447 с.

ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОПЫТА РАЗРЕШЕНИЯ ЖЕСТОКИХ СЛУЧАЕВ, ВСТРЕЧАЮЩИХСЯ В УГОЛОВНОЙ ПРАКТИКЕ

Саргсян Л.К. (к.п.с.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)

sargsyanlevon23@aspu.am

Степанян А.С. (Службы национальной безопасности Республики Армения,
Ереван, РА)
arthur-stepanyan89@mail.ru

Аннотация: В статье представлены особенности судебно-психологической экспертизы жестоких преступлений встречающиеся в уголовно-процессуальной практике, профессионально-психологические проблемы при проведении экспертизы.. Подчеркиваются профессиональные и психологические проблемы, присущие таким обследованиям, особенно при оценке психического здоровья, последствия насилия на людей, угроз жизни и благополучию. Криминологические исследования позволяют выявить ряд личностных черт и характеристик, способствующих жестокости преступлений: к ним относятся эмоциональная и интеллектуальная неспособность справиться с ситуацией, эгоцентризм, интеллектуальная слабость, импульсивность, маниакально-аффективные расстройства, депрессия, профессиональные деформации и т.д. В статье также рассматривается проблема агрессии и ее различные проявления, которые преимущественно влияют на жестокость, наблюдаемую в преступлениях. Особое внимание уделяется преступлениям против жизни и благополучия отдельных лиц. Дискуссия выходит за рамки умышленных и преднамеренных преступлений и охватывает фактические уголовные дела, характеризующиеся своей сложностью и серьезностью. Помимо своего значения в уголовном процессе, дела о жестоком обращении приобретают особое значение в судебно-психологической экспертизе в связи с необходимостью комплексного психологического анализа, интерпретации и обоснования.

Ключевые слова: преступление, жестокость, пытки, насилие, судебно-психологическая экспертиза, агрессия, убийство.

THE PECULIARITIES OF FORENSIC PSYCHOLOGICAL EXPERIENCES IN HANDLING BRUTAL CASES ENCOUNTERED IN CRIMINAL PRACTICE

Sargsyan L.K. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan ASPU,
Yerevan, RA)

sargsyanlevon23@aspu.am

Stepanyan A.S. (National Security Service of the Republic of Armenia, Yerevan, RA)
arthur-stepanyan89@mail.ru

Abstract: The article delves into the intricacies of forensic psychological evaluations in cases involving brutality within criminal proceedings. It highlights the professional and psychological challenges inherent in such examinations,

particularly when assessing mental health, the impact of violence on individuals, and threats to life and well-being. Criminological studies enable the identification of several personal traits and characteristics that contribute to brutality in crimes. These include emotional and intellectual inability to cope, egocentrism, intellectual weaknesses, impulsivity, manic affective disorders, depression, professional deformities, and so forth. The article also addresses the issue of aggression and its various manifestations, which predominantly influence the brutality observed in crimes. Specifically focusing on crimes against individuals' lives and well-being, the discussion extends beyond deliberate and premeditated offenses to encompass factual cases characterized by their complexity and severity. Apart from their relevance within the criminal procedure, cases involving brutality assume particular significance in forensic psychological examinations due to the necessity for comprehensive psychological analysis, interpretation, and justification.

Keywords: crime, cruelty, torture, violence, forensic psychology, aggression, and murder.

Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 31.01.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 15.02.2024

**ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՄԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սարգսյան Լ. Կ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
sargsyanlevon23@aspu.am

Չիթախյան Կ. Դ. (Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ)
kchitakhyan@gmail.com

Ամփոփագիր. Աշխատանքը վերաբերվում է անչափահասների նկատմամբ սեռական հանցագործությունների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցարարքների դատահոգեբանական փորձաքննությանը: Սեռական ազատության և անձեռնամխելիության հասկացությունների բովանդակությունը ցույց է տալիս, որ սեռական անձեռնամխելիությամբ օժտված անձը միաժամանակ օժտված չէ սեռական ազատությամբ: Քրեական իրավունքի տեսությունում գերակա է այն կարծիքը, որ սեռական անձեռնամխելիությամբ օժտված են անչափահասները, ինչպես նաև այն անձինք, ովքեր զրկված են իրենց նկատմամբ կատարված սեքսուալ գործողությունների բնույթը գիտակցելու հնարավորությունից: Անչափահասի նկատմամբ սեռական բնույթի հանցագործությանը քրեաիրավական գնահատական տալու գործընթացում գերակա նշանակություն ունի դատահոգեբանական փորձաքննության նշանակումը: Քրեադատավարական գործընթացում ձեռք բերված փաստական տվյալները լրացվում են դատահոգեբանական փորձաքննության եզրակացությամբ, ինչը հնարավորություն է տալիս տիրապետելու անչափահասի տարիքային տեղեկացվածության, անհատական-հոգեբանական զարգացվածության, վարքի առանձնահատկությունների, հոգեվիճակի, ինչպես նաև իր հետ կատարված գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու, գիտակցելու կարողության մասին:

Վերջում անդրադարձ է արվում սեռական բռնության ենթարկված անչափահասի հետ դատահոգեբանական փորձաքննության անցկացման մասնագիտական-հոգեբանական պայմաններին, փորձաքննության անցկացման հոգեբանական հմտություններին:

Հիմնաբառեր. Սեռական բռնություն, անչափահաս, զոհ, տարիք, տրավմա, անօգնական վիճակ, հանցանքի գիտակցում, հոգեբանական փորձաքննություն:

Սեռական հանցագործությունների (մասնավորապես՝ բռնաբարություն և ինցեստ՝ արյունապղծություն) համար պատասխանատվությունը նախատեսված է իրավունքի ամենափին սկզբնաղբյուրներում: Աշխարհի

կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության, իսլամի տարածման հիմքում սեռական հանցագործությունները դիտվում էին որպես մեղք, կրոնական նորմերի խախտում:

Մի շարք երկրներում (Վիետնամ, Հնդկաստան, Ղազախստան, Չինաստան, Սլովակիա) սեռական հանցագործությունները չեն առանձնանում օրենսդրության ինքնուրույն բաժնում: Որպես կանոն, դրանք դիտարկվում են որպես անձի նկատմամբ իրականացվող ոտնձգություն [10]:

Սեռական հանցագործություններ են համարվում սեռական ազատության և սեռական անձեռնամխելիության դեմ ուղղված հանցարարքները: Հարկ է նշել, որ սեռական ազատության և սեռական անձեռնամխելիության հասկացություններն օրենսդրորեն ամրագրված չեն, բայց դրանց սահմանումները տրվում են քրեական իրավունքի տեսության մեջ:

Սեռական ազատությունը 16 տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու, թե ում հետ և ինչ ձևով բավարարել սեփական սեռական պահանջները, իսկ սեռական անձեռնամխելիությունը բարոյաիրավական արգելք է սեռական շփման մեջ մտնել այնպիսի անձանց հետ, ովքեր օժտված չեն սեռական ազատությամբ, քանի որ ունակ չեն հասկանալու իրենց նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի գործողությունների նշանակությունը և հետևանքները կամ դեկլարելու իրենց գործողությունները սեռական շփման ընթացքում [6]:

Սեռական ազատության և անձեռնամխելիության հասկացությունների բովանդակությունից բխում է, որ սեռական անձեռնամխելիությամբ օժտված անձը միաժամանակ օժտված չէ սեռական ազատությամբ: Քրեական իրավունքի տեսությունում գերակա է այն կարծիքը, որ սեռական անձեռնամխելիությամբ օժտված են անչափահասները, ինչպես նաև այն անձինք, ովքեր զրկված են իրենց նկատմամբ կատարված սեքսուալ գործողությունների բնույթը գիտակցելու հնարավորությունից [1]:

Սեռական անձեռնամխելիության ապահովումն իրականացվում է երեխայի բարոյական, ֆիզիկական և հոգեբանական նորմալ զարգացման նպատակով: Այս տեսանկյունից Ա.Ե. Յակուբովն առաջարկում է սեռական որոշ հանցագործությունների դեպքում օբյեկտ դիտարկել տուժողի պատիվն ու արժանապատվությունը: Նույն պատճառաբանությամբ տարբեր հեղինակներ կարծում են, որ նման մանրամասնումն ավելորդ է, քանի որ ցանկացած (և ոչ միայն սեռական) հանցագործություն ոտնձգություն է տուժողի պատվի ու արժանապատվության դեմ [9]:

Սեռական հանցագործությունները դասակարգվում են տարբեր հիմքերով: Ս.Ի. Նիկուլինն առաջարկում է հետևյալ դասակարգումը՝

✓ գործողություններ, որոնք ուղեկցվում են բացահայտ սեռական բռնությամբ,

✓ սեռական բարոյականության կոպիտ խախտումներով ուղեկցվող գործողություններ, որոնք չափահաս անձանց կողմից իրականացվում են 16 տարին չլրացած անձանց նկատմամբ:

Հեղինակների մեծ մասը սեռական հանցագործությունները դասակարգում են՝ ելնելով անմիջական օբյեկտից: Այսպես՝ Ա.Վ. Կորնենան և մի շարք այլ հեղինակներ սեռական հանցագործությունները բաժանել են երկու խմբի՝

✓ անձի սեռական ազատության և սեռական անձեռնամխելիության դեմ ուղղված ոտնձգություններ՝ բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը,

✓ անչափահասների սեռական ազատության, սեռական անձեռնամխելիության, բարոյական և ֆիզիկական առողջության դեմ ուղղված ոտնձգություններ՝ սեռական հարաբերություններ և սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ և անառակաբարո գործողությունները [4]:

Հաշվի առնելով անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների առանձնահատկությունները՝ այս հանցագործությունների դասակարգումը հնարավոր է իրականացնել ըստ տուժող երեխայի նկատմամբ կատարված գործողությունների բնույթի՝

✓ ֆիզիկական բռնություն գործադրելով,
✓ հոգեբանական բռնություն գործադրելով,
✓ անօգնական վիճակն օգտագործելով (մինչև 12 տարեկան երեխայի նկատմամբ կատարված ցանկացած սեռական գործողությունները) [1]:

Ավելին, երեխայի անօգնական վիճակն օգտագործելով կատարված սեռական հանցագործության դեպքում՝ առանձին պետք է ուսումնասիրել երեխայի նկատմամբ խնամք ու դաստիարակության իրականացնող անձի պարտականությունների կատարման/ չկատարման հանգամանքը, ինչպես նաև տարիքը և դրանով պայմանավորված հոգեբանական առանձնահատկությունները:

Ի.Վ. Պոտապովան նշում է, որ տուժող երեխաների տարիքի ու սեռական ոտնձգության հետևանքով նրանց պատճառված վնասի չափի ու բնույթի միջև բացակայում են պատճառահետևանքային կապեր, հետևաբար՝ տարիքային տարբերակման համար կարևորվում է ոչ թե վնասի չափը, այլ նրա արտահայտվածության աստիճանը: Սեռական ոտնձգությունների ֆիզիկական ու հոգեբանական հետևանքներն իրենց բնույթով ու առանձնահատկություններով անչափահասների մոտ կարող են կրել առավել ընդգծված ու ծանր բնույթ, քան մանկահասակների մոտ: Այս հանգամանքը

պայմանավորված է մանկահասակի, մասնավորապես՝ մինչև 7-8 տարեկան երեխայի, ընկալման ու գիտակցման հատկանիշներով: Մեռական բռնության ենթարկված՝ այս տարիքի երեխաները հաճախ կատարվածարարքը մեկնաբանում են որպես խաղ՝ հատկապես այն դեպքում, երբ դա տեղի է ունեցել առանց սեռական հարաբերության: Հակառակ դրան՝ սեռական հատունացման փուլում գտնվող երեխան, ով նկատելով իր օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական և անատոմիական փոփոխությունները, արդեն առավել ծանր է ընկալում կիրառված բռնությունը, գիտակցում իր նկատմամբ կատարված արարքի ծանրությունը, ինչը հանգեցնում է ծանր հոգեբանական և սոցիալական հետևանքների նույնպես՝ ընդհուպ մինչև հանցագործ կամ մարմնավաճառ դառնալը, ընտանիք կազմելու ցանկության ի սպառ բացակայությունը [2]:

Մեռական բռնության ենթարկված անչափահաս զոհերի հետ փորձաքննություն անցկացնելիս պետք է հաշվի առնել բազմաթիվ գործոններ: Ինչպիսիք են՝ երեխայի զարգացման մակարդակը, սեռական բռնության ծանրությունը և ծնողների կամ խնամակալների կողմից տրված տեղեկատվությունը:

Մեռական բռնության վերաբերյալ տուժողից տեղեկատվություն հավաքելիս անհրաժեշտ է պահպանել այս ընթացակարգի էթիկական և բարոյական կողմերը՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կիրառելով անհատական մոտեցում: Այն ընթացակարգերը, որոնց ենթարկվում է երեխան դատաքննության ընթացքում (հարցաքննություններ, առերեսումներ, բժշկական զննումներ և այլն) երեխայի վրա լրացուցիչ հոգեբանական տրավմատիկ ազդեցություն են ունենում, քանի որ անընդհատ հիշեցնում են կատարվածի մասին: Շատ հաճախ երեխաները իրենք չեն խոսում ոտնձգությունների, բռնության կամ բռնության փորձի մասին: Նրանք հաճախ ամաչում են իրենց հետ կատարվածից, իրենց մեղավոր են զգում, վախենում են, որ իրենց կմեղադրեն, ինչպես նաև վախենում են ուրիշների հետ անկեղծ խոսելու հետևանքներից: Հաճախ զոհերը խոսքային կամ ոչ խոսքային ազդանշաններ են տալիս, որոնք կարող են դրդել ծնողներին կամ նրանց ամենամոտ մարդկանց հարցեր տալ երեխային սեռական ոլորտում հնարավոր բացասական փորձառությունների մասին: Փորձաքննության ընթացքում պարզ է դառնում, որ երեխայի՝ սեռական բռնության մասին պատմությունները, մեծահասակների մոտ ուժեղ հույզեր են առաջացնում: Մասնավորապես՝ վախ, որովհետև իրենք չեն սպասում, որ դա կարող է պատահել հենց իրենց երեխայի հետ, մեղքի զգացում, քանի որ կարծում են, որ պետք է ավելի վաղ քայլեր ձեռնարկելին, զայրույթ՝ բռնությունը կատարողի նկատմամբ, անգորության և շփոթության զգացում [8]:

Հոգեկան զարգացման մակարդակից և դրա այս կամ այն առանձնահատկություններից կախված տուժողը՝

1. Կարող է չհասկանալ իր հետ կատարվածի իմաստն ու նշանակությունը,

2. Կարող է հասկանալ՝ ինչ է կատարվել՝ չհասկանալով տվյալ գործողության իմաստը,

3. Կարող է հասկանալ և՛ կատարվածը, և՛ կատարվածի նշանակությունը [3]:

Առաջին երկու եզրակացությունները վկայում են տուժողի դիմադրելու անկարողության մասին, վերջին դեպքում դիմադրելու ունակության հարցը հատուկ ուսումնասիրություն է պահանջում:

Հանցավոր իրավիճակում տուժածի վարքագիծը որոշող կարևոր բաղադրիչներից մեկը նրա հոգեսեռական զարգացման մակարդակն է: Ինչպես գիտենք, մինչև 7 տարեկանը համապատասխանում է հոգեսեռական զարգացման առաջին փուլին: Այս ընթացքում տեղի է ունենում սեռական ինքնության ձևավորումը: Առաջին հերթին ձևավորվում է ճիշտ պատկերացում սեռի մասին: 3-4 տարեկանում երեխաները կարող են տարբերել շրջապատողներին արտաքին զենդերային հատկանիշների հիման վրա (հագուստ, արտաքին տեսք, մարմնի և սեռական օրգանների կառուցվածք, ձայնի տեմբր և այլն): Այնուհետև հայտնվում է հետաքրքրասիրություն՝ ուղղված սեռական օրգաններին, կենդանիների և մարդկանց վարքագծին՝ սեռական փոխազդեցության տարրերի հետ կապված: Այս տարիքի երեխաները կարող են հանցավոր իրավիճակը գնահատել որպես խաղ կամ պատիժ: Հայտնվելով տուժածի դերում՝ նրանք կարողանում են ընկալել իրադարձությունների միայն արտաքին, ֆորմալ կողմը և չեն հասկանում իրենց նկատմամբ կատարված գործողությունների ո՛չ բնույթը, ո՛չ իմաստը:

7-14 տարեկան տարիքային շրջանը համապատասխանում է հոգեսեռական զարգացման երկրորդ փուլին, որի հիմնական բնութագիրը երեխայի զենդերային վարքագծի կարծրատիպի ձևավորումն է՝ հիմնված նրա հոգեֆիզիոլոգիական բնութագրերի, առնականության և կանացիության կարծրատիպերի վրա, որոնք գերակշռում են այն միկրոմիջավայրում, որտեղ նա մեծանում է:

Հոգեսեռական զարգացման երրորդ փուլը (14-16 տարեկան) բնութագրվում է հոգեսեռական կողմնորոշման ձևավորմամբ և ուղեկցվում է պլատոնական, էրոտիկ և ֆիզիկական գրավչության փուլերի փոփոխությամբ:

Տուժողի հոգեսեռական զարգացման առաջին երկու փուլերի հասունությունը և երրորդ փուլին անցումն ամենից հաճախ ցույց են տալիս նրա պոտենցիալ կարողությունը՝ հասկանալու իր նկատմամբ կատարված

գործողությունների ն'բնույթը, ն' իմաստը: Եթեանչափահասը բավականաչափ ընդունակ է հասկանալու իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը, ապա հարց է ծագում դիմադրելու ունակության մասին, որը մեծապես կախված է տուժածի անհատական-հոգեբանական առանձնահատկություններից, բնավորության գծերից և բնութագրերից [3]:

Այժմ անդրադառնանք փորձաքննության ժամանակ սեռական բռնության ենթարկված երեխայի հետ շփմանը, ինչպե՞ս է պետք կառուցել փորձագիտական հարաբերությունները, որպեսզի չվնասենք երեխային:

✓ Կեցվածք ընդունել՝ առանց սպառնալիքի զգացում առաջացնելու որը կնպաստի երեխայի խոսելուն: Բռնաբարության մեջ կասկածվող երեխաների հետ գործ ունենալիս շատ կարևոր է նրանց վրա սպառնալից տպավորություն չստեղծելը: Երեխային օգնելիս կարևոր է ոչ միայն շփվել նրա հետ, այլև պահպանել նրա սահմանած հեռավորությունը:

✓ Կարևոր է ստեղծել վստահության մթնոլորտ, որպեսզի երեխան հավատա, որ իրեն հավատում են: Փորձաքննության ժամանակ երեխայի նկատմամբ պետք է լինել էմպատիկ: Կարելի է նշել, որ հասկանում ու շատ վատ ենք զգում նրա հանդեպ կատարվածի համար, և որ ինքը մեղավոր չէ:

✓ Որպեսզի պարզեք, թե կոնկրետ ինչ է տեղի ունեցել, պետք է օգնենք երեխային խոսել այդ մասին իր բառերով: Երեխայի համար դժվար է խոսել իր հետ կատարվածի մասին, քանի որ նա պատասխանատվություն է զգում կատարվածի համար: Եթե ինչ-որ բան անհասկանալի է, պետք է պարզաբանում խնդրել: Օրինակ՝ տալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են. «Կարո՞ղ եք ինձ ավելին ասել այդ մասին», «Կարո՞ղ եք օրինակ բերել»: Եթե երեխան անմիջապես չի պատասխանում, անհրաժեշտ է դադար տալ, կարիք չկա ճնշում գործադրել:

✓ Առաջին հանդիպման ժամանակ հարցեր չտալ սեռական բռնության մանրամասների մասին, հարցերն կարող են ընդհանրական լինել:

✓ Հարցնել այլ միջադեպերի մասին: Այն բանից հետո, երբ երեխան սկսել է պատմել բռնության մասին, կարող է պարզվել, որ այլ միջադեպեր ևս պատահել են:

✓ Որպեսզի երեխային հնարավորություն ընձեռվի անձամբ պատմել կատարվածի մասին և չազդել իր պատմության վրա՝ նրա փոխարեն մտածելով, հնարավորության դեպքում նրան «բաց» հարցեր տալ, որոնք պարունակում են ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ բառերը: Օգտագործելով բաց հարցեր՝ կարելի է նախ ընդհանուր պատկերացում կազմել դեպքի վերաբերյալ, ապա ավելի շատ մանրամասներ իմանալ: Բաց հարցերի օրինակներ են՝ «Ի՞նչ եղավ հետո» կամ «Ի՞նչ է եղել դրանից առաջ» արտահայտությունները: Եթե երեխայի համար չափազանց դժվար է պատասխանել «բաց» հարցերին,

կարելի է օգտագործել «փակ» հարցեր, որոնց կարելի է պատասխանել միայն «այո» կամ «ոչ» [7, 8]:

✓ Հարցերը չպետք է լինեն անորոշ, օր.՝ «Երբևէ որևէ տհաճ բանի ենթարկվել էք», «Երբևէ ունեցել էք սարսափելի փորձ սեռական հարաբերությունների պատճառով»:

✓ Անհրաժեշտ է խուսափել հարցերից, որոնք սկսվում են «ինչո՞ւ» բառով, օրինակ՝ «Ինչո՞ւ նա պառկեց ձեր անկողնում»: Հոգեբան-փորձագետի խոսքը պետք է լինի թերապևտիկ, որ երեխայի մեջ մեղքի զգացում կամ այլ զգացումներ չառաջացնի:

✓ Կարելի է օգտագործել տարբեր իրավիճակների նկարագրություններ, որոնցում երեխան կարող է ենթարկվել սեռական բռնության: Եթե կասկածում ենք, որ երեխան ենթարկվել է սեռական բռնության, և երեխան ինքը չի ասում, կարող ենք նրան հարցեր տալ ենթադրյալ սեռական փորձի մասին՝ օգտագործելով տարբեր իրավիճակներ: Երեխային հարցնել հաճելի անակնկալների և տհաճ գաղտնիքների մասին: Հարցնել արդյո՞ք երեխան ինչ-որ բան լսել է սեռական հարաբերությունների մասին և ումի՞ց, «Որևէ մեկը Ձեզ դիպչո՞ւմ է Ձեր կամքին հակառակ», «Արդյո՞ք որևէ մեկը Ձեզ այնպես է դիպչում, որ անհարմար եք զգում», «Արդյո՞ք նախկինում նմանատիպ դեպք եղել է»:

✓ Կարևոր է ժամանակ առ ժամանակ ամփոփել անչափահասի պատմությունը՝ ստուգելու համար, թե արդյոք այն ճիշտ ենք հասկանում: Եթե երեխան զգացմունքներ է ցուցաբերում, կարող ենք անվանել նրա զգացմունքները և հարցնել երեխային՝ արդյո՞ք դա ճիշտ է: Բռնության զոհերից ոմանք տեղի ունեցածի մասին խոսելիս ոչ մի զգացմունք չեն արտահայտում: Բայց չպետք է երեխային ասել, թե նա ինչպե՞ս պետք է իրեն զգա: Պետք է ուշադրություն դարձնել երեխայի խոսքերին՝ չանտեսելով դրանք: Նույնիսկ եթե այս փաստերը տեղի չեն ունեցել, շատ կարևոր է հասկանալ նրա ֆանտազիայի ծագումը» [5]:

Այսպիսով՝ սեռական բռնության ենթարկված անչափահասների հետ փորձաքննության ժամանակ հոգեբան-փորձագետի կողմից կարևոր է ասել երեխային, որ ցանկանում ենք օգնել իրեն: Անհրաժեշտ է անչափահասի հետ քննարկել տարբեր հնարավորություններ, առաջարկել խորհրդակցել բանիմաց մարդկանց հետ ու նրանցից օգնություն խնդրել: Երեխային չխոստանալ, որ ոչ մեկին չենք պատմի մեր լսածի մասին, ազնիվ լինենք նրա հետ, բայց վստահեցնենք նրան, որ մեր գործողությունները կհամաձայնեցնենք իր հետ և միշտ կաջակցեք իրեն: Հանդիպման վերջում երեխային պետք է գովել բռնության մասին խոսելու համար և ասել, որ նա ճիշտ է վարվել պատմելով իր հետ կատարվածի մասին: Քանի որ երեխայի նկատմամբ ցանկացած բռնություն բացասաբար է անդրադարձնում նրա մտավոր զարգացման վրա, խաթարում սոցիալականացմանը, ծնում՝

սոցիալ-հոգեբանական, իրավական մի շարք խնդիրներ: Հետևաբար, հոգեբանական փորձաքննության ընթացքում անհրաժեշտ է խուսափել կրկնվող հոգեբանական տրավմատիկ իրավիճակներից:

Գրականություն

1. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները: Եր.: «Սկետչ-Մթալլ» ՍՊԸ, 2015. – 144 էջ:
2. Байбарин А.А. Половые преступления: учебное пособие. Уголовное право. Общая и особенная части. /Под ред. Н.Г. Кадникова. М.: 2006. – 409 с.
3. Васильев В.Л. Юридическая психология. 6-е изд., перераб. и доп. – СПб.: 2009. – 608 с.
4. Корнева. А.В. Уголовное право Российской Федерации. Особенная часть. М.: 1996. 795 с.
5. Кравцова О.А. О психологических последствиях сексуального насилия. Вестник МГУ. – 1999., № 2, С. 80-94.
6. Кудрявцев В.Н., Лунеев. В.В. О криминологической классификации преступлений. //Государство и право, 2005, №6 - С. 54-66
7. Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы: справочник практического психолога. М.: Эксмо, 2010. – 1008 с.
8. Малкина-Пых И.Г. Экстремальные ситуации: справочник практического психолога. – М.: Эксмо, 2005. – 960 с.
9. Подройкина И.А., Серегина Е.В., Ульзекко. С.И, Уголовное право. Том 2. Особенная часть 2012. – 706 с.
10. Щербы С.П. Сравнительное уголовное право. Особенная часть: Монография. – М.: Юрлитинформ, 2010. – 544 с.

ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ СЕКСУАЛЬНОГО НАСИЛИЯ НАД НЕСОВЕРШЕННОЛЕТНИМИ

Саргсян Л.К. (к.п.с.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
sargsyanlevon23@aspu.am

Читахян К.Д. (ВГУ им. О. Туманяна, Ванадзор, РА)
kchitakhyan@gmail.com

Аннотация: В работе речь идет о судебно-психологической экспертизе сексуальных преступлений против несовершеннолетних, преступлений против половой свободы и половой неприкосновенностью. Содержание понятий сексуальной свободы и неприкосновенности показывает, что человек,

наделенный половым неприкосновенностью, не наделен одновременно сексуальной свободой. В теории уголовного права преобладает мнение, что половой неприкосновенностью наделены несовершеннолетние, а также те лица, которые лишены возможности осознавать характер совершенных в отношении них действий сексуального характера. В процессе криминальной оценки преступления сексуального характера в отношении несовершеннолетнего первостепенное значение имеет назначение судебно-психологической экспертизы. Фактические данные, полученные в уголовном процессе, дополняются заключением судебно-психологической экспертизы, которая дает возможность узнать о возрастном сознании несовершеннолетнего, индивидуально-психическом развитии, особенностях поведения, психическом состоянии, а также о способности понимать и осознавать характер и значение совершаемых с ним действий.

В конце указываются профессионально-психологические условия проведения судебно-психологической экспертизы несовершеннолетнего, подвергшегося сексуальному насилию, психологические навыки проведения экспертизы.

Ключевые слова: Сексуальное насилие, несовершеннолетний, потерпевший, возраст, травма, беспомощность, осознание преступления, психологическая экспертиза.

FEATURES OF FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE OF SEXUAL VIOLENCE OF JUVENILE'S

Sargsyan L.K. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)

sargsyanlevon23@aspu.am

Chitakhyan K.D. (VSU after H. Tumanyan, Vanadzor, RA)

kchitakhyan@gmail.com

Abstract: The work concerns the forensic psychological study of sexual crimes against juvenile's, crimes against sexual freedom and sexual integrity. The content of the concepts of sexual freedom and immunity shows that a person endowed with sexual immunity is not simultaneously endowed with sexual freedom. In the theory of criminal law, the prevailing opinion is that not only juvenile's are endowed with sexual immunity, but also those people who are deprived of the opportunity to realize the nature of sexual acts committed against them. In the process of making a criminal judgement of a sexual crime against a juvenile's, the appointment of a forensic psychological expertise is of paramount importance. The factual data during in the criminal procedure are supplemented by the conclusion of the forensic psychological examination, which gives an

opportunity to learn about the juvenile's age awareness, individual-psychological development, behavior characteristics, mental state, as well as the ability to understand and realize the meaning nature of the actions performed against him.

At the end, we refer to the professional-psychological conditions of conducting a forensic psychological expertise with a sexually abused juvenile's, as well as to the psychological skills of conducting the expertise.

Keywords: Sexual violence, juvenile, victim, age, trauma, helplessness, awareness of crime, psychological expertise.

Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 15.01.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 03.02.2024

**ՍՈՒԻՑԻԴՆԵՐԻ ԴՍՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Վարդանյան Կ.Ե. (հ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան,
ՀՀ)

kamo.vardanyan@mail.ru

Ամփոփագիր. Հողվածում քննարկվում են ինքնասպանությունների դատահոգեբանական փորձաքննությունների ժամանակակից արդյունավետ ձևաչափերի մասին որոշակի նկատառումներ: Հետմահու և ինքնասպանության փորձի փորձաքննության խնդիրն է բացահայտել ինքնասպանության (ինքնասպանության փորձին) նախորդող ժամանակահատվածում անձի հոգեվիճակը, ինչպես նաև նրա հոգեվիճակի և այլ անձանց (կասկածյալի, մեղադրյալի) գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը: Ինքնասպանության հիմնահարցի ուսումնասիրությունը ունի յուրահատկություններ, քանզի հետազոտության օբյեկտը տվյալ դեպքում բացակայում է: Այդ հիմնախնդրի լուծման նպատակով դատահոգեբանական փորձաքննություն իրականացնողները կիրառում են տարբեր մոտեցումներ, մի դեպքում՝ ռետրոսպեկտիվ աուտոպսիան, ռետրոսպեկտիվ անալիզը, իսկ երբեմն էլ ինքնասպանության փորձ կատարած անձանց ուսումնասիրումը և արդյունքների ընդհանրացումը: Դատահոգեբանական փորձաքննության արդյունքները պետք է կրեն ոչ թե հավանական բնույթ, այլ ձգտեն հաստատական գիտական հիմնավորված վերջնարդյունքի:

Հիմնաբառեր. ինքնասպանություն, ինքնասպանության փորձ, դատահոգեբանական փորձաքննություն, ռետրոսպեկտիվ վերլուծություն, ռետրոսպեկտիվ աուտոպսիա, դեստրուկտիվ հակում:

21-րդ դարում շեշտակի արժևորվեց բազմաթիվ գիտությունների զարգացման նշանակալիությունը: Դա կապված էր նախ և առաջ գիտական նոր հայտնագործությունների անհրաժեշտությամբ, գերձշգրիտ և գերժամանակակից սարքավորումների առկայությամբ: Հատկապես մեծ զարգացում ապրեցին կիրառական և բնական գիտությունները, այդ գործընթացից անմասն չմնաց նաև հոգեբանական գիտությունը, քանի որ հոգեկանը ուղեղի հատկությունն է, իսկ հոգեկան մեխանիզմների հիմքում ընկած են նեյրոֆիզիոլոգիական, կենսաքիմիական գործընթացները, որոնք կարելի է ուսումնասիրել արդի սարքավորումներով: Այստեղ չպետք է անտեսել նաև մաթեմատիկական գիտության դերը, որպես հետազոտության արդյունքների մշակման և հոգեկանի կոնկրետ գործընթացների մոդելավորման գործիքակազմ: Վերոնշյալի հիման վրա կարևորվեց նաև

հոգեբանական մեխանիզմների հիմնախնդիրը: Հետևաբար, ելնելով ներկայիս գիտությանը վերագրվող կարևոր պահանջներից, գիտական հոգեբանության տարբեր ճյուղերում կատարված ուսումնասիրությունները պետք է ունենան մեծ արժանահավատություն և ապացուցողականություն, առավել ևս, երբ նկատի ենք ունենում դատահոգեբանական փորձաքննությունները՝ ընդհանրապես և ինքնասպանությունների փորձաքննությունները մասնավորապես:

Սույն գիտական հոդվածում նպատակ ենք դրել սուիցիդների օբյեկտիվ փորձաքննությունների վերաբերյալ գիտական ժամանակակից նկատառումներ ներկայացնել, որտեղ առավել ընդգծված կլինի ապացուցողական գործոնը: Հետազոտությունն ընդգրկել է 1995-ից մինչև 2023 թվականները ընկած ժամանակահատվածը, այն իրականացվել է 4 փուլով՝ նախապատրաստական, փորձարարական, ստացված տվյալների մշակման և մեկնաբանման: Ուսումնասիրության գործիքակազմը ընդգրկել է ռետրոսպեկտիվ վերլուծության, ռետրոսպեկտիվ աուտոպսիայի, փորձագիտական գրույցի, կոնտենտ և անհրաժեշտ այլ մեթոդներ, ինչպես նաև հատուկ մասնագիտական գրականության վերլուծություն, բացի այդ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ երկրներում ինքնասպանության փորձ և ինքնասպանություն կատարած 58 քրեական գործերի վերլուծություններ:

Դատահոգեբանական փորձաքննությունը, փորձագիտական հետազոտության ինքնուրույն տեսակ է, որն իր զարգացման ընթացքում անցել է բարդ ճանապարհ՝ սկսած փորձարարական հոգեբանության տվյալները իրավաբանական գիտություն ներմուծելուց, մինչև դատահոգեբանական փորձաքննության տեսության ստեղծումը, որն իրականացվում է 1960-ականներից մինչ օրս: Արժանին մատուցելով եվրոպական հոգեբաններ Է. Կլապարեդին, Մ. Մարրենին, Վ. Շտեռնին, ովքեր ձեռնամուխ եղան ոչ միայն դատահոգեբանական փորձաքննությունների ստեղծման գործին, այլ նաև իրականացրեցին առաջին դատահոգեբանական փորձաքննություններ կոնկրետ քրեական գործերով, որոնք արժևորվում էին ոչ միայն գործնական այլ նաև գիտահետազոտական տեսանկյունից: Առավել նշանակալից են ներկայումս այդ բնագավառում Ի. Գորկովոյայի, Պ. Դագելի, Ի. Ռեզնիչենկոյի, Վ. Ենգալիչևի, Մ. Կոչերկովի, Ի. Կուդրյավցևի և այլոց աշխատանքները, որտեղ անձի դատահոգեբանական և հատկապես սուիցիդենտների հոգեվիճակների փորձաքննություններին առավել նեղ մասնագիտական պահանջներ են ներկայացնում: Հետմահու և ինքնասպանության փորձի փորձաքննության խնդիրն է բացահայտել ինքնասպանության /ինքնասպանության փորձին/ նախորդող ժամանակահատվածում անձի հոգեվիճակը, ինչպես նաև նրա հոգեվիճակի և այլ անձանց /կասկածյալի, մեղադրյալի/ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ

բացակայությունը: Պետք է նշել, որ բոլոր տեսակի դատահոգեբանական փորձաքննություններից սուիցիդների հետազոտումը բավականին բարդ բնույթ է կրում [1, էջ 20]:

Ինքնասպանությունն ունի տարբեր դրսևորումներ, այն սոցիալ հոգեբանական դեստրուկտիվ դեզադապտացիա է, որի դեպքում անձի մոտ նկատվում է հոգեկան վիճակի սահմանային բնույթի դրսևորումներ, դեպրեսիայով և աուտոագրեսիայով հղի գիտակցության զգայական նեղացում, հիշողության, մտածողության, կամային որակների խաթարում, որն ըստ էության նախասուիցիդալ շրջան է, և որի ժամանակ սուիցիդալ մտքերը վերածվում են սուիցիդալ որոշման: Ինքնասպանության հիմնահարցի ուսումնասիրությունը ունի յուրահատկություններ, քանզի հետազոտության օբյեկտը տվյալ դեպքում բացակայում է: Այդ հիմնախնդրի լուծման նպատակով դատահոգեբանական փորձաքննություն իրականացնողները կիրառում են տարբեր մոտեցումներ: Մի դեպքում օգտագործվում է ռետրոսպեկտիվ աուտոպսիայի և ռետրոսպեկտիվ վերլուծությանը մեթոդները [4], որի ժամանակ ուսումնասիրվում է ինքնասպանի անցյալը՝ նրա օրագրերի, նախքան մահը գրված երկտողերի, հարազատներից և բարեկամներից ստացված տվյալների վերլուծությունները (Roberts, 1995; Jacobs and Klein, 1993): Որոշակի կարևորություն ունի ռետրոսպեկտիվ աուտոպսիան՝ յուրաքանչյուր ինքնասպանության երկտող հանդիսանում է անձնական փաստաթուղթ, որը բացահայտում է ինքնասպանի էությունը, նրան ուղեկցող դրդապատճառները, առիթը, պայմանները...: Որոշ երկտողեր բաղկացած են ընդամենը մեկ նախադասությունից, կան նաև էջեր կազմող խոստովանություններ: Մարդիկ, գրելով այդպիսի երկտողեր, անկասկած ցանկանում են թողնել ազդեցիկ տեղեկատվություն նրանց համար, ում ցանկանում են հրաժեշտ տալ, լինի այն մահվանը նախորդող օգնության մասին ուղերձ կամ էլ վերջին ցանկություն: Երկտողերի մեծամասնությունն ուղղված է որոշակի անձանց: Հարազատների և ընկերների վերաբերմունքն այդպիսի երկտողերի նկատմամբ կախված է կոնկրետ իրավիճակից: Երկտողի բովանդակությունն օգնում է գտնելու մահվան պատճառը, դրանով իսկ ազատելով հարազատներին քրեական պատասխանատվությունից: Ինքնասպանի հարազատները թեթևություն են զգում, երբ երկտողերից իմանում են այդպիսի ծայրահեղ քայլի իսկական պատճառները: Երբեմն էլ դրանք պատճառ են հանդիսանում հարազատների տառապանքի ուժգնացման համար, երբ նշվում են, որ սուիցիդի պատճառականության շղթայում իրենց դերը միակն է կամ դոմինանտողը: Փորձագետները երկտողերի միջոցով ցանկանում էին գտնել ինքնասպանության երևույթի բանալին, հաշվի առնելով, երկտողի իսկությունը, այն գրողի սեռը, երկտողի քերականական կառուցվածքը, կոնկրետ բառերի օգտագործման հաճախականությունը,

գիտակցական և անգիտակցական բովանդակությունը, իմացական և դրդապատճառային ոլորտները, ինչպես նաև հեղինակի ձեռագիրը:

Ստացված տվյալների հիման վրա կարելի է կատարել կարևոր ընդհանրացում՝ գրված երկտողերի բովանդակության վրա մեծ ազդեցություն է գործում ինքնասպանի տարիքը: Այսպես, օրինակ.

1. Երիտասարդ տարիքի մարդիկ մինչև մահը կատարած գրառումներում դրսևորում են մեծ թշնամանք հենց իրենց նկատմամբ և հաճախակի են նշում ունեցած հիմնախնդիրները միջանձնային հարաբերություններում:

2. 40-49 տարեկանները հաճախ են բողոքում, որ չեն կարողանում կողմնորոշվել կյանքի դժվարություններում:

3. 50-59 տարեկանները նախընտրում են ընդհանրապես չհիշատակել ինքնասպանության պատճառների մասին:

4. 60 և ավելի տարիքի դեպքում իրենց հեռացումը կյանքից բացատրում են այնպիսի դրդապատճառներով, ինչպիսիք են ծանր հիվանդությունը, ֆիզիկական անհամապատասխանությունը, միայնությունը:

Ինքնասպանների երկտողերի ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ երկտողերի բովանդակությունը չի փոխվում, եթե համեմատում ենք մոտ տաս տարի առաջ գրված երկտողերի հետ:

Սակայն ինչպես գտնում էր Է. Շնեյդմանը, որ մինչև մահը կատարած գրառումները «չեն հանդիսանում թագավորական ճանապարհ, որը հանգեցնում է հեշտությամբ հասկանալու սուիցիդի ֆենոմենը» [5, էջ 81], սակայն արդյունքների ստացման այլ ձևերի հետ միասին այն հոգեբաններին, հոգեբույժներին կարող է ճիշտ ուղղություն ցույց տալ: Հետազոտությունները փաստում են, որ իգական սեռի ներկայացուցիչները ավելի են հակված նմանատիպ երկտողեր թողնելուն /61%/: Բոլոր տարիքի անձիք էլ ինքնասպանությունից առաջ փորձում են երկտողեր գրել, սակայն առավել հաճախ նման քայլի դիմում են հասուն անձիք /53%/: Երկտողերի մշակույթը առավել հասանելի է դանդաղ ընթացքով քրոնիկական սուիցիդենտներին /65%/: Սակայն ոչ բոլոր ինքնասպանության դեպքերն է հնարավոր ուսումնասիրել այս տարբերակով, քանի որ ինքնասպանների մոտ 12-34%-ն է նախքան ինքնասպանությունը երկտողեր թողնում [4]: Այդ է պատճառը, որ երբեմն կիրառվում է երկրորդ մոտեցումը ինքնասպանության փորձ կատարած անձանց ուսումնասիրումը, արդյունքների ընդհանրացումը, քանի որ նրանք նույնպես գտնվել են նման հոգեվիճակներում [6]: Այս ոլորտում տեսական ուսումնասիրություններն իրականացվում են վերացարկման, կոնկրետացման, մակաձման և արտաձման (ինդուկցիա և դեդուկցիա), վերլուծության և համադրման, համեմատության, դասակարգման, ընդհանրացման և համանմանության (անալոգիա)

մեթոդներով:

Սուիցիդների փորձաքննության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քննության արդյունքում երևույթի սուիցիդին արտաքին նմանությունը կոնկրետ դեռևս չի նշանակում նրա պարտադիր հաստատում, քանի որ նման մահը իրականում ունի հետևյալ տարբերակներ՝

1. Իրական ինքնասպանություն

✓ Ինքնասպանություն կամքի ազատության արդյունքում

✓ Տրամաբանական/կանխամտածված/ ինքնասպանություն

✓ Տրամաբանական աֆեկտիվ ինքնասպանություն

✓ Տրամաբանական ոչ աֆեկտիվ/ կրոնական կամ փիլիսոփայական

հիմքերով/ ինքնասպանություն

✓ Իմպուլսիվ աֆեկտիվ ինքնասպանություն

✓ Անզգույշ ինքնասպանություն

2. Ինքնասպանության ընդօրինակում

✓ Ինքնասպանության ընդօրինակում/անուղղակի սպանություն/

✓ Ստիպողական ինքնասպանություն

✓ Ինքնասպանության հասցնել

✓ Ինքնասպանության ընդօրինակում/ցուցադրում պրովոկացիայի

կամ շանտաժի նպատակով/

3. Բնական մահ, որն ունի ինքնասպանության դրսևորում մահամերձից անկախ պատճառով

✓ Դժբախտ պատահարի արդյունքում առաջացած մահ

✓ Այլ պատճառներով բնական մահ/ ծերություն, հիվանդություն.../

4. Իրական սպանություն

✓ Սպանություն ինքնասպանության նմանակմամբ

✓ Սպանություն, որն ունի ինքնասպանության նախանշաններ:

Սակայն այս դեպքում պետք է ընդգծել, որ դատահոգեբանական փորձաքննությունը չի կարող լուծել այն հարցը, արդյոք տեղի է ունեցել ինքնասպանություն, սպանություն, թե դժբախտ պատահար, սակայն հենվելով հոգեբանական գիտելիքների վրա, այն կարող է օգնել ճիշտ գնահատելու իրադրությունը՝ բնութագրելով ինքնասպանի անձը: Նման իրադրությանն է վերաբերվում ինքնասպանի անհատական հոգեբանական առանձնահատկությունների, հոգեկան վիճակների մասին տվյալները նախասուիցիդալ փուլում, նախասուիցիդալ և սուիցիդալ վարքի նախանշանները:

Արդյունավետ դատահոգեբանական փորձաքննությանը կնպաստի նաև քննիչների կողմից սուիցիդների դեպքերին առնչվող քրեական գործերի ճիշտ կազմումը: Ներկա ժամանակներում վկաների և կասկածյալների հարցաքննման ժամանակ օգտագործում են տեղեկատվական տեխնոլոգիաների տարբեր հնարավորություններ և շատ դեպքերում

վկաների ցուցմունքներում մի շարք գործին վերաբերվող դրվագներ բոլորի մոտ բացարձակապես նույն բովանդակությունն են ունենում, քանի որ քննիչի կողմից իրականացվում է ցուցմունքների շարադրման «նկարել-տեղադրել» ձևաչափը: Սա դատահոգեբան փորձագետին հնարավորություն չի տալիս անմիջական իրադրությունը անհատական պրոյեկտիվ վերլուծության ենթարկել, որն էլ խաթարում է օբյեկտիվ փորձաքննության գործընթացը:

Մի շարք դեպքերում դատահոգեբանական փորձաքննության արդյունքում ինքնասպանության դրդապատճառների բացահայտման հիմնախնդիրը լիարժեք չի ներկայացվում՝ փորձագետները գտնում են, որ ինքնասպանության դրդապատճառները բացահայտված են, քանզի նախապատրաստական գործիքակազմի միջոցով հաստատվել է, որ ոչ մեկը տվյալ անձին չի հասցրել ինքնասպանության: Տվյալ դեպքում ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու դրդապատճառները տարբեր իմաստի հասկացություններ են:

Յուրահատուկ մասնագիտական մոտեցում է պահանջում երեխաների, անչափահասների և ծերերի ինքնասպանությունների փորձաքննությունները, որոնք մեր կողմից խորությամբ ուսումնասիրվել են և արդյունքները հրատարակվել մի շարք գիտական հոդվածներում [2; 3]: Մանկական սուիցիդներին բնորոշ է այն, որ երեխանները նախքան սուիցիդը չեն ըմբռնում մահվան անդարձելիությունը. արդյունքում նրանց մոտ բացակայում է մահվան գիտակցված վախը, որն էլ հանգեցնում է չկանխամտածված, դիպվածային և իմպուլսիվ սուիցիդների: Նախասուիցիդալ փուլում բացակայում է սուիցիդալ հակման շարժը՝ սուիցիդալ մտքերից մինչև սուիցիդալ որոշում, սուիցիդի իմաստի տիպաբանությունը և սուիցիդի գործոնները:

Դեռահասների սուիցիդների հիմքում ընկած է «դեստրուկտիվ հակումը», որի պատճառով նրանց սուիցիդի դիմելու հավանականությունը մեծանում է, նախասուիցիդի տևողությունը կարճանում, մինչև անզամ փոքր սթրեսորների և ֆրուստրատորների ազդեցությամբ չափազանցեցված սուիցիդի հակազդման հավանականությունը մեծանում [2]:

Ծերերի ինքնասպանություններին բնորոշ է սուիցիդ-դժբախտ պատահար ձևաչափը, որը տարիքային թուլամտության արդյունք է: Տերմինալ և չարորակ հիվանդությունների հետևանքով տարեցների իրականացված ինքնասպանությունները նպատակ ունեն դադարեցնելու սեփական տառապանքները: Առավել մեծ թիվ են կազմում այն ծերերի ինքնասպանությունները, որոնք կորցրել են իրենց երկրորդ կեսին և գտնվում են անօգնական, հուսալքված վիճակում: Երբեմն ծերերը ծանր սթրեսի արդյունքում ընդօրինակում են իրենց նման ինքնասպանությունների դեստրուկտիվ վարքը: Ինքնասպանությունների մոդելավորումը հիմնականում հանդիպում է անչափահասների մոտ, սակայն տվյալ դեպքում

ընդօրինակման օբյեկտը հայտնի, մեծ հեղինակություն և ճանաչում ունեցող անձն է, իսկ ծերերի մոտ ընդօրինակման օբյեկտը կողակիցը կամ հասակակիցն է: Այս տարիքում կարևորվում են նաև տարաբնույթ հոգեկան խանգարումները՝ տասը ինքնասպանություններից իննի դեպքում անձը ինքնասպանություն իրականացրելու պահին տառապել է կոնկրետ հոգեկան հիվանդությամբ: Ծերության պատճառով որպես քաղաքացու, մասնագետի սոցիալական դերերը արժեզրկվում է, որպես ծնողի սոցիալական նշանակությունը՝ նվազում, ամուսնական կյանքում թուլանում է ամուսնու/կնոջ/ և սեռական գուզրնկերոջ ակտիվությունը: Կենսաթոշակի անցման հետ կապված սոցիալական միջավայրը փոփոխվում է, կյանքի ռիթմը, որակը և ոճը նույնպես ձևափոխվում են, ընտանիքի անդամների կորստի հետ կապված առաջանում են միայնության զգացում և մեկուսացում, մահվան անխուսափելիության հետ կապված դրսևորվում է մահվան նկատմամբ հիվանդագին վախ: Տարեցները սեփական անձի ներսում և սոցիալական միջավայրում կատարվող փոփոխությունների նկատմամբ դրսևորում են մեծ գերզգայունակություն: Արդյունքում, ինքնասպանության պատճառները, զուգակցվելով ինքնասպանությունների պայմանների հետ, համապատասխան առիթի դեպքում, անձի կարճատև հուզական խանգարման հետևանքով հանգեցնում են սուիցիդալ գործողության [3]:

Ելնելով վերոնշյալից գտնում ենք, որ ներկայումս դատահոգեբանական փորձագետներին պետք է ներկայացվեն նոր պահանջներ, շեշտելով հատկապես այն հանգամանքը, որ նրանք պետք է լինեն խիստ փորձառու և նեղ մասնագետներ: Դատահոգեբանական փորձագետը անհրաժեշտ է, որ միայն կոնկրետ մասնագիտացման և բարձրագույն կրթության արդյունքում ստանա իր մասնագիտական ուղղվածությունը: Այստեղից բխում է հաջորդ նախապայմանը՝ տրված փորձաքննության արդյունքները պետք է կրեն ոչ թե հավանական բնույթ, այլ ձգտեն հաստատական գիտական հիմնավորված վերջնարդյունքի: Սա արդեն նոր որակ է սուիցիդների դատահոգեբանական փորձաքննության մեջ, այլապես հավանական մտահանգում կարող են իրականացնել և՛ քննիչը, և՛ դատախազը, և՛ դատավորը, և՛ փաստաբանը, ինչպես նաև ցանկացած քաղաքացի:

Գրականություն

1. Վարդանյանի Կ.Ե. Սուիցիդների դատահոգեբանական փորձաքննությունների արդյունավետության բարձրացման շուրջ: Դատահոգեբանական փորձաքննություն, տեսություն և պրակտիկա, հոդվածների ժողովածու, Երևան, 2022. – 114 էջ: էջ 20-42:
2. Վարդանյանի Կ.Ե. Երեխաների, դեռահասների սուիցիդալ և ոչ սուիցիդալ ինքնավնասման վարքաձևերի առանձնահատկությունները: Եր.: 2022. – 12 էջ:

3. Վարդանյանի Կ.Ե. Ծերունական տարիքի անձանց ինքնասպանությունների համաճարակաբանությունը և յուրահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: Վեմ համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր թիվ 4/84/, Երևան, 2023. – 17 էջ:
4. Jacobs D. & Klein M.E. The expanding role of psychological autopsies. In A.A. Leenaars /Ed./, Suicidology. Northvale, NJ: Jason Aronson. 1993.
5. Shneidman E.S. Suicide as psychache: A clinical approach to self-destructive behaviour. Northvale, NJ: Jason Aronson. 1993.
6. Leenaars A.A. Suicide in the young adult. In A.A. Leenaars /Ed./ Life span perspectives of suicide: Timelines in the suicide process. New York: Plenum Press. 1991.

ОСОБЕННОСТИ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ ПО СУИЦИДАМ

Варданян К.Е. (д.пс.н., профессор, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
kamo.vardanyan@mail.ru

Аннотация: В статье представлены некоторые соображения о современных эффективных форматах судебно-психологической экспертизы суицидов. Задачей патологоанатомической экспертизы и экспертизы попыток суицида является выявление психического состояния лица в период, предшествующий суициду/попытке самоубийства, а также наличие или отсутствие причинно-следственной связи между его психическим состоянием и действия других лиц /подозреваемых, обвиняемых/. Исследование проблемы суицида имеет особенности, поскольку объект исследования в данном случае отсутствует. С целью решения этой проблемы лица, проводящие судебно-психологическую экспертизу, применяют различные подходы, в одном случае ретроспективную аутопсию, ретроспективный анализ, а иногда и изучение лиц, совершивших попытку самоубийства, и обобщение результатов. Результаты судебно-психологической экспертизы должны носить не вероятностный характер, а стремиться к научно обоснованному конечному результату.

Ключевые слова: самоубийство, попытка суицида, судебно-психологическая экспертиза, ретроспективный анализ, ретроспективное вскрытие, деструктивная тенденция.

ON THE SPECIFICITIES OF FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATIONS OF SUICIDES

Vardanyan K.E. (Doctor in Psychology, Professor, Khachatur Abovyan ASPU,
Yerevan, RA)
kamo.vardanyan@mail.ru

Abstract: The article discusses some considerations about modern effective ways of forensic psychological examinations of suicides. The task of the postmortem or suicide attempt examination is to reveal the mental state of the person in the suicide or suicide attempt preceding period, as well as the presence or absence of a cause-and-effect relationship between their mental state and the actions of other persons /suspect, accused/. The study of the issue of suicide has specificities as the object of research in this case is missing.

Hence, to solve this problem, forensic psychologists use different approaches, such as retrospective autopsy, retrospective analysis, or sometimes the study of people who have attempted suicide and then generalize the results. The results of the forensic psychological examination should not be based on probability, but rather should strive for an affirmative scientifically based conclusion.

Keywords: suicide, suicide attempt, forensic psychological examination, retrospective analysis, retrospective autopsy, destructive tendency.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 08.02.2024
Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 01.03.2024

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ
ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Վարդանյան Լ.Թ. (հ.գ.թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
vardanyanlilit23@aspu.am

Սարգսյան Վ.Ժ. (հ.գ.թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, ՀՀ)
sargsyanvahan@aspu.am

Ամփոփագիր: Հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայում ծնողների ամուսնալուծությունների, դատական վեճերի իրավիճակների հետ կապված երեխաների դատահոգեբանական փորձաքննությունների առանձնահատկությունները, դրանց ընթացքում կիրառվող մեթոդական գործիքակազմի ընտրության հիմնախնդիրները: Որպեսզի հոգեբանը դատարանին տրամադրի համակողմանի և արժանահավատ եզրակացություն, պետք է ընտրի մեթոդական այնպիսի կուռ համալիր, որը վեր կհանի երեխա-ծնող իրական միջանձնային հարաբերությունները: Փորձարկվողների սոցիալապես ցանկալի պատասխաններից խուսափելու համար կիրառելի է նաև հոգեսեմանտիկայի մեթոդաբանական զինանոցի գործիքակազմը, որոնք կարող են արդյունավետորեն օգտագործվել տարբեր տեսակի դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայում:

Դատահոգեբանական փորձաքննությունների ժամանակ նպատակահարմար ենք համարում ստանդարտացված մեթոդներին զուգահեռ, ըստ անհրաժեշտության, կիրառել նաև «այլընտրանքային» հոգեախտորոշիչ մեթոդները, որոնք թույլ են տալիս հայտորոշել երեխայի նկատմամբ ծնողական վերաբերմունքի, ընտանիքի անդամների կողմից ընտանեկան իրավիճակի նկատմամբ ունեցած անհատական վերաբերմունքի, երեխայի անհատական հոգեբանական զարգացման, երեխայի ինքնավերաբերմունքի թաքնված կողմերը: Դա թույլ կտա համարժեքորեն լուծել ոչ միայն փորձաքննությունների արժանահավատության, այլև նոր մակարդակի վրա կրթարձրացնի հոգեբան-մասնագետի գործունեության որակը: Մեթոդաբանական հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում նաև փորձագետներին առաջադրվող հարցերի հոգեբանական ճիշտ մեկնաբանությունը և փորձագետի իրավասության ու կարողունակության շրջանակի հստակեցումը:

Հիմնաբառեր. դատահոգեբանական փորձաքննության պրակտիկա, երեխա-ծնող հարաբերություն, սթրեսածին իրավիճակ, հարցարան, հոգեախտորոշիչ մեթոդ:

Ժամանակակից կյանքում ծնողների փոխհարաբերությունները հաճախ են երեխային ենթարկում սթրեսածին իրավիճակների՝ հատկապես ձգձգվող դատավարությունները և ծնողների դատական վեճերը երեխայի համար դառնում են տհաճ և անցանկալի իրողություններ: Այս համատեքստում դատահոգեբանական փորձաքննությունների իրականացման պրակտիկայում արդիական է դառնում հոգեբանական մեթոդների ընտրության հարցը, հատկապես ծնող-երեխա միջանձնային հարաբերությունների հայտորոշման տիրույթում:

Հետազոտությունները վկայում են, որ ամուսնալուծությունների և դատական վեճերի ընթացքում երեխաներն ենթարկվում են ծնողական մանիպուլյացիաների ու ճնշումների, հայտնվում են ծնողների վեճերի ու բարդ փոխհարաբերությունների կիզակետում [1, էջ 82]: Կարծում ենք, որ նման իրավիճակն ազդում է երեխայի ինքնուրույն որոշումներ կայացնելու գործընթացի վրա: Այդ իսկ պատճառով ընտանեկան վեճերի ու ամուսնալուծությունների դեպքերում կարևորում ենք երեխաների հետ անցկացվող դատահոգեբանական փորձաքննությունների մեթոդական համակազմի ընտրությունը:

Ժամանակակից դատահոգեբանական փորձաքննություններով զբաղվող հոգեբաններն առանձնացնում են ընտանեկան փոխհարաբերությունների հարցերով դատահոգեբանական փորձաքննությունների հետազոտությունների երեք փուլ.

1. ընտանիքի անդամների անհատական հայտորոշում,
2. երեխայի անհատական հոգեբանական զարգացման մակարդակի հայտորոշում,
3. երեխայի ինքնուրույնության, ինքնագնահատականի հայտորոշում [8, էջ 57-59]:

Ծնողական վերաբերմունքն ուսումնասիրելու համար հաճախ կիրառվում են թեստ-հարցարաններ, ծնողների համար նախատեսված անկետաներ, որոնք փորձաքննությունների պրակտիկայում չեն պաշտպանում փորձարկվողին սոցիալապես ընդունելի, ցանկալի պատասխաններից և կարող են թաքցնել երեխա-ծնող իրական միջանձնային հարաբերությունները, ինչպես նաև կարող են գրանցվել դիրքորոշված պատասխաններ [7, էջ 24-36]:

Ֆ. Սաֆուանովը և Օ. Ռուսակովսկայան առաջարկում են ամուսնալուծությունների փորձաքննություններում կիրառել իրավական հասկացությունների հոգեբանական համարժեքության մոտեցումը, ինչը զգալիորեն կարող է նպաստել հոգեբան-փորձագետների իրավասությունների շրջանակի հստակեցմանը: Մասնավորապես, նրանք

առաջարկում են իրավական հասկացությունները համադրել հոգեբանական հասացությունների հետ [8, էջ 57-59]:

Օրինակ՝ ծնողների բարոյական և այլ անձնային որակների մասին դատաիրավական մարմինների կողմից առաջադրված հարցերի դեպքում հոգեբան փորձագետը պետք է հատուկ ուշադրություն դարձնի յուրաքանչյուրի անհատական հոգեբանական հատկությունների և հոգեբանական շեղումներին՝ կիրարկելով համապատասխան գործիքակազմ: Իսկ երեխայի հոգեբանական զարգացման հարցը համադրվում է երեխայի անհատական հոգեբանական առանձնահատկությունների և երեխայի հոգեկան զարգացման մակարդակի հետ: Որոշ դեպքերում խնդիր է առաջանում պարզել ծնողներից յուրաքանչյուրի կողմից երեխայի համար դաստիարակության և զարգացման պայմանների ստեղծումը, ինչի համար անհրաժեշտ է վերհանել ծնողների կողմից երեխայի դաստիարակության և հոգեկան զարգացման նկատմամբ ունեցած դիրքորոշումները: Հաճախ հանդիպող դեպքերից է նաև երեխայի հոգեկան առողջությանը չվնասելու, նրա բարոյական զարգացմանը նպաստելուն առնչվող հարցերը, որոնց համարժեք պատասխանելու համար հարկ է պարզել ծնողներից յուրաքանչյուրի՝ երեխայի հուզական վիճակի և անհատական հոգեբանական առանձնահատկությունների նկատմամբ նեգատիվ ազդեցության հոգեախտորոշիչ տեղեկատվությունը: Սակայն այս խնդիրները կապված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ մեթոդաբանական դժվարությունների հետ:

1. ՀՀ-ում խիստ սակավաթիվ են ստանդարտացված փսիխոմետրիկ պահանջներին համապատասխանող հոգեախտորոշիչ խոսքային մեթոդները կամ ինքնահաշվետվությունները:

2. Հոգեախտորոշիչ մեթոդները հաճախ դժվարություններ են առաջ բերում՝ կապված տեղեկատվության գիտակցված և չգիտակցված աղճատման, սոցիալապես ցանկալի պատասխանների կամ առկա խնդիրներին ավելի ողբերգական երանգ հաղորդելու միտումների հետ:

Նշված խնդիրների լուծման համար մենք առաջարկել ենք կիրառել պրոյեկտիվ հոգեախտորոշիչ մեթոդներ [1, էջ 83-84], որոնք ունեն մի շարք առավելություններ և ահմանափակումներ:

Սոցիալապես ցանկալի պատասխանների հաղթահարման համար կիրառելի են նաև հոգեսեմանտիկայի մեթոդաբանական զինանոցի գործիքակազմը, որոնք կարող են արդյունավետորեն օգտագործվել տարբեր տեսակի հոգեբանական պրակտիկաներում, ներառյալ դատահոգեբանական փորձաքննությունների անցկացումը երեխաների դաստիարակության վերաբերյալ վճճերի հետ կապված դեպքերում [4, էջ 14-16]:

Կոգնիտիվիստական մոտեցման տեսանկյունից, հիմնվելով Ջ. Քելլիի կառուցողական այլընտրանքային գաղափարների վրա [5], ենթադրվում է, որ

ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի խնդրի վերաբերյալ իր տեսակետը՝ հիմնված կառուցվածքների անհատական համակարգի և ուսումնասիրության վրա: Ընտանեկան կոնստրուկցիաները մեզ թույլ են տալիս ուսումնասիրել դրանց հիմքում ընկած իմաստային համակարգը [4, էջ 25-26]:

Անհատականացված, գիտականությանը համապատասխան իդեոգրաֆիկ մոտեցման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ինչպես փաստում են մասնագետները [3] համալիր հոգեբանական և հոգեբուժական փորձաքննության ժամանակ երեխայի կարծիքին վերաբերող հարցերին պատասխանելիս խորհուրդ է տրվում հաշվի առնել այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, ինչպիսիք են խնդրահարույց իրավիճակների թաքնված բարոյական իմաստը հասկանալու կարողությունը, եսակենտրոնությունը, ռեֆլեքսիայի ունակությունը և այլն:

Հոգեսեմանտիկ ախտորոշման դասական մեթոդներին զուգահեռ հետաքրքիր մոտեցումներ են մշակվել նաև Ֆ.Ս. Սաֆուանովի կողմից: Նա մոդիֆիկացրել է «Հարաբերությունների գունային թեստը» [10, էջ 221-227], որտեղ գույների փոխարեն օգտագործվել են «ընկալման ունիվերսալների թեստի» երկրաչափական ձևերի ութ պատկերներ [9]:

Պատկերների սկզբնական հավաքածուն դրված էր առջևում և նրան խնդրեցին դասակարգել պատկերները ամենանախընտրելիից մինչև ամենաքիչ նախընտրելի: Այնուհետև երկրաչափական պատկերների նույն պատկերները պետք է դասակարգվեին այս կամ այն գրգռիչ հայեցակարգին համապատասխանելու կարգով՝ «ամենաման, հարմար, համապատասխան»ից մինչև «ամենաման, անպատշաճ, անտեղի»: Առաջարկվել են խթանման հետևյալ հասկացությունները.

- ✓ «Ձեր երեխան»,
- ✓ «Ձեր ամուսինը»,
- ✓ «Ես ինքս»:

Երկրորդ փուլում հետազոտվողները պետք է գնահատեն 8 երկրաչափական պատկերներ սեմանտիկ դիֆերենցիալի սանդղակով [9]:

Դատահոգեբանական փորձաքննությունների ժամանակ հոգեախտորոշիչ «այլընտրանքային» մեթոդներից մեկը Ստոլիսի «Ծնողական շարադրություններ»-ի մեթոդն է, որը հոգեբանին թույլ է տալիս բավականին ճշգրիտ և հուսալի կերպով լուծել ծնողական դիրքի, երեխայի նկատմամբ վերաբերմունքի և ընտանիքի տեսակի բնութագրերի ախտորոշման խնդիրը: Ծնողական շարադրության մեթոդի կիրառությունը արդյունավետ կերպով բացահայտում է ծնողների բնավորության, միջանձնային ընկալման, կրթության և կենսական դիրքորոշումների առանձնահատկությունները [6, էջ 39-51]:

Երեխայի նշանակալի միջավայրում հարաբերությունների բնույթը որոշելու համար կիրառելի են «ընտանեկան տախտակ», աշխատանք տիկնիկային արձանիկների հետ, ընտանեկան նկարչություն, տրամադրության նկարչություն հայտորոշիչ մեթոդները [2, էջ 111-112]:

Մենք դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայում կիրառել ենք «Տնակներ» մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակը, որը գունային փոխաբերությունների մեթոդիկա է, բացահայտում է հուզական վերաբերմունքը երեխա-ծնող միջանձնային հարաբերությունների նկատմամբ [11]:

Վերլուծելով տնակներ մեթոդիկայից ստացված արդյունքները՝ եզրակացնում ենք, որ 7 տ. տղան ուրախության ապրումներ ունի երբ խաղում է քույրիկի հետ և երբ խոսում է հայրիկի հետ: Մայրիկի նկատմամբ դրական հույզերը այն է ուրախության, բերկրանքի հույզերը ճնշված են, որի հետևանքով երեխան զայրանում է:

Մեկ այլ դեպքում «Տնակներ» մեթոդիկայով ստացված արդյունքները ցույց են տալիս, որ 9 տարեկան աղջիկը երջանկություն, հիացմունք է զգում, երբ ինքը խաղում է եղբոր հետ, և երբ տանն է գտնվում: Հոգեբանական անհարմարավետություն, կոնֆլիկտային իրավիճակ է զգում, երբ խոսում է հայրիկի հետ: Մոր կողմից զգում է բարություն և ընկերություն, հոր նկատմամբ ունի հակասական զգացմունքներ:

Մեկ այլ ամուսնալուծության դեպքի երեխայի դատահոգեբանական փորձաքննության ժամանակ կիրառել ենք «Մարդն անձրևի տակ» նկարային մեթոդիկան [12]: «Մարդն անձրևի տակ» նկարի հոգեբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ ստեղծված իրավիճակն անբարենպաստ է երեխայի համար: Երեխան չի ուզում ոչինչ լսել, տեղի ուենցածը երեխայի համար ցավոտ է և անընդունելի, երեխան դարձել է անտարբեր կամ անտարբեր է ձևանում իր հետ կատարվածի նկատմամբ: Երեխան կիրառում է արտաքին բացասական ներգործություններից պաշտպանվելու հոգեբանական մեխանիզմներ: Երեխան իրեն անպաշտպան է զգում և ունի վստահելի հարաբերությունների կարիք: Ներկայիս ստեղծված անբարենպաստությունից պաշտպանվելու համար երեխան ապավինում է մորը:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ հարցաքննության ստացված հոգեախտորոշիչ տվյալները լրացնելու ու հիմնավորված դատահոգեբանական փորձագիտական եզրակացություն տալու համար որպես կիրառական գործիքներ կարող են պիտանի լինել պրոյեկտիվ նկարային մեթոդները, երեխաների խաղի դիտումները, ծնող-երեխա փոխհարաբերությունների դիտումը: Վերջինիս կիրառության համար ներկայումս մշակվել են որոշ հետաքրքիր տեսանկարահանման և հուզական դրսևորումների գրանցման տեխնոլոգիական գործիքներ: Նմանօրինակ

գործիքներից են «Noldus Technology» (<https://www.noldus.com>) ընկերության կողմից մշակված մի շարք և զարգացած երկրների համալսարաններում հաջողությամբ կիրառվող «Face reader», «Observer XT» և այլ գործիքները: Դրանք թույլ են տալիս գնահատել, գրանցել և մանրամասնորեն օբյեկտիվացնել մարդկանց հուզական արտահայտչամիջոցների արտաքին նշանները, փոխհարաբերություններում կապվածության, մերժման ամենափոքր դրսևորումները: Վերջիններիս կիրառությունը կարող է զգալիորեն է բարձրացնել հատկապես ընտանեկան փոխհարաբերությունների հացերով դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում հոգեախտորոշիչ հետազոտության արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ ներկա իրողությունների պայմաններում օրախնդիր է դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում կիրառվող մեթոդաբանական գործիքակազմի արժանահավատության և խնդիրների լուծման համար համապատասխանության հիմնախնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ է ներդնել նոր տեխնոլոգիական և գիտամեթոդաբանական լուծումներ: Ներկայացված մեթոդները թույլ են տալիս վեր հանել ճնող-երեխա փոխհարաբերությունների թաքնված, գիտակցության կողմից հաճախ չվերահսկվող տեղեկատվությունը:

Գրականություն

1. Վարդանյան Լ.Թ. Պրոյեկտիվ մեթոդների դերը հոգեբանական փորձաքննության անցկացման պրակտիկայում: Դատահոգեբանական փորձաքննություն /տեսություն և պրակտիկա, ուսումնասովանողական ձեռնարկ; Եր.: 2022. – 114 էջ:
2. Гульдан В.В., Сулим О.Н., Сухотин А.А. Правовые аспекты участия специалиста-психолога в исполнительном производстве, связанном с воспитанием детей (Часть II). [Электронный ресурс] //Психология и право. 2018(8). No3. С. 111-122.
3. Ильина О.Ю., Русаковская О.А., Туманова Л.В., Чубарова О.Е. Некоторые пси-холого-юридические вопросы обязательного учета мнения ребенка, достигшего возраста де-сяти лет, при рассмотрении судами споров о его воспитании [Электронный ресурс] //Психо-логия и право. 2022. Том 12. № 3. С. 27–38. DOI:10.17759/psylaw.2022120303
4. Кулаков С.С. Судебно-психологическая экспертная диагностика семейных взаимоотношений: возможности психосемантического подхода [Электронный ресурс] //Психология и право. 2022. Том 12. № 3. С. 14–26. DOI:10.17759/psylaw.2022120302

5. Келли Дж. Теория личности: психология личных конструктов. СПб: Речь, 2000. 249 с.
6. Полкунова Е.В. Применение методики «Родительское сочинение» в целях установления родительского отношения при проведении судебной психологической экспертизы по спорам, связанным с воспитанием детей [Электронный ресурс] //Психология и право. 2022. Том 12. No 3. С. 39–51
7. Русаковская О.А., Калашникова А.С., Харитоновна Н.К., Сафуанов Ф.С. Актуальное состояние и проблемы комплексной психолого-психиатрической экспертизы по спорам о воспитании [Электронный ресурс] //Российский психиатрический журнал. 2021. № 1. С. 24–36. doi:10.47877/1560-957X-2021-10103
8. Сафуанов Ф.С., Русаковская О.А. Методологические проблемы комплексной судебной психологопсихиатрической экспертизы по делам воспитания детей при раздельном проживании родителей; Психологическая наука и образование, М.- 2010, № 2 , с. 57-59]:
9. Сафуанов Ф.С., Харитоновна Н.К., Русаковская О.А., Психолого-психиатрическая экспертиза по судебным спорам между родителями о воспитании и месте жительства ребенка. М.: Генезис, 2011. 192 с.; Артемьева Е.Ю. Психология субъективной семантики. М.: Изд-во Моск. ун-та, 1980. – 128 с.
10. Эткин А.М. Цветовой тест отношений //Общая психодиагностика /А.А. Бодалева, В.В. Столина. – М.: Изд. Моск. ун-та. 1987. С. 221–227.
11. Проективная методика "Домики" О.А.Ореховой <https://infourok.ru/proektivnaya-metodika-domiki-oaorehovou-3157297.html>
12. Проективная методика «Человек под дождем» <https://psychojournal.ru/tests/947-proektivnaya-metodika-chelovek-pod-dozhdem.html>

АНАЛИЗ МЕТОДОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ ПО ВОПРОСАМ СЕМЕЙНЫХ ОТНОШЕНИЙ

Варданыан Л.Т. (к.пс.н., АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
vardanyanlilit23@aspu.am

Саргсян В.Дж. (к.пс.н., доцент, АГПУ им. Х. Абовяна, Ереван, РА)
sargsyanvahan@aspu.am

Аннотация: Проанализировать и представить особенности судебно-психологической экспертизы детей, в ситуациях развода родителей и

правовыми спорами, а также проблемы выбора методического инструментария, используемого при их проведении. Чтобы психолог дал исчерпывающее и достоверное заключение, он должен подобрать методический комплекс, который будет освещать реальные межличностные отношения в семье. Во избежание социально желательных ответов испытуемых применим и инструментарий методического арсенала психосемантики, который может эффективно использоваться в практике различных видов судебно-психологических экспертиз.

При проведении судебно-психологической экспертизы мы считаем целесообразным наряду со стандартизированными методами при необходимости использовать и «альтернативные» психодиагностические методы, позволяющие выявить скрытые стороны родительского отношения к ребенку, взаимоотношений членов семьи, индивидуально-психологического развития ребенка, его самоотношения и т.д.. Это позволит адекватно решить не только проблему достоверности применяемых методов диагностики, но и повысить качество деятельности психолога-специалиста. Среди методологических проблем особое значение приобретают также правильная психологическая интерпретация вопросов, поставленных перед экспертом, определение рамок компетенций психолога-эксперта.

Ключевые слова: практика судебно-психологической экспертизы, детско-родительские отношения, стрессовые ситуация, анкета, психодиагностические метод.

ANALYSIS OF METHODOLOGICAL PROBLEMS OF FORENSIC PSYCHOLOGICAL EXAMINATIONS ON FAMILY RELATIONS ISSUES

Vardanyan L.T. (Ph.D in Psychology, Khachatur Abovyan ASPU, Yerevan, RA)
vardanyanlilit23@aspu.am

Sargsyan V.Zh. (Ph.D in Psychology, Associate Professor, Khachatur Abovyan
ASPU, Yerevan, RA)
sargsyanvahan@aspu.am

Abstract: The aim of this study is to analyze and present the characteristics of forensic psychological examinations of children amidst parental divorce and legal disputes, alongside the challenges in selecting appropriate methodological tools. For a psychologist to offer a comprehensive and reliable conclusion, it is essential to employ a methodological framework that effectively captures genuine interpersonal dynamics within the family. Additionally, to mitigate socially desirable responses, the psychosemantic tools within the methodological arsenal are invaluable and can be adeptly utilized in various forensic psychological examinations.

In conducting forensic psychological examinations, it is prudent to supplement standardized methods, when necessary, with "alternative" psychodiagnostic approaches. These alternatives help uncover concealed facets of parental attitudes towards the child, family member relationships, the child's individual psychological development, and self-perception. This not only enhances the reliability of diagnostic methods but also elevates the efficacy of a psychologist's practice. Notably, among methodological challenges, the accurate psychological interpretation of posed questions to the expert and delineating the expert psychologist's scope of competence are of paramount importance.

Keywords: forensic psychological examination practice, child-parent relationships, stressful situations, questionnaires, psychodiagnostic methods.

Հոդվածը ներկայացվել է ուղարկվել է գրախոսման՝ 02.03.2024

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 16.03.2024

ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՊՐԱԿՏԻԿԱ

II ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ЭКСПЕРТИЗА: ТЕОРИЯ И ПРАКТИКА
II РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ КОНФЕРЕНЦИЯ

FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE: THEORY AND PRACTICE
THE 2nd REPUBLICAN SCIENTIFIC-PRACTICAL CONFERENCE

25 ապրիլ 2024 թ.

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
МАТЕРИАЛЫ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ
MATERIALS OF INTERNATIONAL CONFERENCE

Հանձնվել է շարվածքի 01.04.2024
Ստորագրվել է տպագրության 10.04.2024

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 70X100/16
Ծավալը՝ 15,1 պայմ. տպ. մամուլ
Տառատեսակները՝ Sylfaen, Times New Roman
Տպագրության եղանակը՝ լազերային
Տպաքանակը՝ 100



ISBN 978-99941-69-83-2

www.aspu.am



9 789994 169832